

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ

**ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ – 17-ՐԴ
ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2020**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ
КАФЕДРА ИСТОРИИ АРМЕНИИ**

**YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY
CHAIR OF HISTORY OF ARMENIA**

МИКАЭЛ МАЛХАСЯН

MIKAYEL MALKHASYAN

**ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В АРМЕНИИ
В XVI ВЕКЕ И В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ
XVII ВЕКА**

**DEMOGRAPHIC PROCESSES IN ARMENIA
IN THE 16TH CENTURY
AND IN THE FIRST HALF OF THE 17TH CENTURY**

**ЕРЕВАН – YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ – YSU PRESS**

2020

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 163

Տպագրվում է
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհրդի երաշխավորությամբ

Գիտական խմբագիրներ՝
պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյան
պ.գ.թ., ասիստ. Գեղամ Բադալյան

Գրախոսներ՝
պ.գ.դ., պրոֆ. Վահան Բայբուրդյան
պ.գ.թ. Արման Մալոյան

Խմբագիր՝ Լենա Ասրյան

Մալխասյան Միքայել

Մ 163 Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում – 17-րդ դարի առաջին կեսին/ Մ. Մալխասյան.– Եր.: ԵՊՀ հրատարակչություն, 2020. - 300 էջ:

Մենագրության մեջ համալիր ուսումնասիրությամբ ներկայացված են ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին՝ կանգ առնելով առանձնահատկությունների, միտումների և դրանք պայմանավորող առանցքային իրադարձությունների վրա: Աշխատանքում վեր են հանված թուրք-պարսկական պատերազմների և ջալալիական շարժումների, Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի էթնոկրոնական քաղաքականության, բնական աղետների, համաճարակների և սովի ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների վրա, ինչպես նաև ընտանիքի միջին մեծության գործակիցը՝ ծնելիության և մահացության մակարդակի մասնակի գնահատմամբ, միգրացիայի (արտագաղթի, բռնագաղթի, ներքին միգրացիայի և օտար էթնիկական ներթափանցումների) հիմնական ալիքները, բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը:

Գիրքը կարող է օգտակար լինել պատմաբանների, պատմական ժողովրդագրության հետազոտողների, ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2445-6

© Մալխասյան Մ., 2020 թ.

© ԵՊՀ հրատարակչություն, 2020 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	5
Գլուխ Ա. Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում	
16-րդ դարում.....	28
1.1. Ժողովրդագրական գործընթացների միությունները	
և առանձնահատկությունները.....	28
1.2. Էթնոժողովրդագրական գործընթացները.....	68
1.2.1. Օտար էթնիկական ներթափանցումներն	
ու տեղաշարժերը.....	68
1.2.2. Օսմանյան կայսրության էթնոկրոնական քաղաքականության առանձնահատկությունները Հայաստանում.....	85
1.3. Բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը (առանձին վարչամիավորների օրինակով).....	101
Գլուխ Բ. Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում	
17-րդ դարի առաջին կեսին.....	113
2.1. Ժողովրդագրական գործընթացների միությունները	
և առանձնահատկությունները.....	113
2.2. Շահ Աբաս Ա-ի բռնագաղթի ժողովրդագրական հետևանքները.....	129
2.3. Մեծ սովը (1606-1609 թթ.).....	176
2.4. 1610-1630-ական թթ. ռազմաքաղաքական իրադրության ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների վրա.....	208
2.5. Էթնոժողովրդագրական գործընթացները և բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը (առանձին վարչամիավորների օրինակով).....	230
Եզրակացություն.....	270
Резюме.....	277
Summary.....	280
Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ.....	283

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին Հայաստանը վերածվել է Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև շարունակական պատերազմների թատերաբեմի: 16-րդ դարի սկզբին Սեֆյանները ժամանակավորապես տիրել են ամբողջ Հայաստանին, սակայն թուրք-պարսկական պատերազմների (1514-1639 թթ.) ընթացքում Հայաստանի տարածքը քանիցս բաժանումների է ենթարկվել երկու տերությունների միջև՝ որոշակի կայուն սահմանազատում ստանալով միայն 1639 թ. Կասրե-Շիրիհի պայմանագրով: Ինչպես նշում է 17-րդ դարի հայ պատմագիր Առաքել Դավրիժեցին, երկու տերությունների բախումներից տուժում էր հայոց աշխարհը՝ ծանր հարկապահանջություն, ունեցվածքի թալան կամ բռնագրավում, բնակավայրերի վերածում բանակի ձմեռանոցի, տների, արտերի և այգիների ավերում, հացահատիկի ամբարված պաշարների յուրացում, զանգվածային սպանություններ ու բռնագաղթեր¹:

16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացները, ի տարբերություն նախորդող ժամանակաշրջանների, Հայաստանի տարբեր հատվածներում սկիզբ են դրել այնպիսի անդառնալի միտումների, որոնք էթնոժողովրդագրական պատկերի մեջ փոփոխությունների առաջացման և հետագայում էթնիկ միատարրության դիմախեղման պատճառ են դարձել: Ամբողջ միջնադարի և նոր դարաշրջանի սկզբնափուլի (17-րդ դար – 18-րդ դարի առաջին կես) հայ հեղինակները, բացառությամբ Հակոբ Կարնեցու (17-րդ դարի կեսեր), գրեթե անտեսել են ժողովրդագրության հիմնահար-

¹ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխ.¹ Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 102-103:

ցերը²: Տեղի ունեցած գործընթացները փոփոխություն են մտցրել ժամանակի հեղինակների մտածողության մեջ, և այդ գործընթացների ականատես Հակոբ Կարնեցին հանձն է առել իր երկում հայրենի Էրզրումի (Կարինի) նահանգի վարչամիավորների բնակչության էթնոկրոնական պատկերի ներկայացումը:

Սույն ուսումնասիրության թեման կարևոր և արդիական է Արևմտյան Հայաստանում Օսմանյան կայսրության ժողովրդագրական քաղաքականության ակունքները ցույց տալու և Արևելյան Հայաստանում ոչ նպաստավոր գործընթացների հաջորդականությունը տեսնելու համար: Գաղտնիք չէ, որ թուրքական պատմագիտական շրջանակներում գերիշխող է այն տեսակետը, որ Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ շրջաններում ժողովրդագրական քաղաքականության բացասական միտումներ քրիստոնյաների, այդ թվում՝ հայերի նկատմամբ երբևէ չեն արձանագրվել: Մինչդեռ սույն աշխատանքում ցույց է տրվում, որ այդ քաղաքականության առաջին դրսևորումներն ակնհայտ են նույնիսկ 16-րդ դարում: Միաժամանակ աղբյուրանական պատմագիտական շրջանակները քանիցս հրատարակել են աշխատանքներ՝ մատնացույց անելով Ռուսական կայսրության կազմում Հայկական մարզի էթնոժողովրդագրական նկարագիրը Ի. Շոպենի վիճակագրության համաձայն՝ անտեսելով Արևելյան Հայաստանում տեղի ունեցած էթնոգործընթացները դրանից դեռևս երկու հարյուրամյակ առաջ, օրինակ՝ շահ Աբաս Ա-ի (1587-1629) կողմից կազմակերպված բռնագաղթը: Փաստորեն, անհրաժեշտ է համալիր ուսումնասիրությամբ ներկայացնել 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին Հայաստանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացները, որոնք հան-

² Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Հայաստանի ժողովրդագրության հիմնահարցերը հայագետ Հակովբոս Տաշյանի աշխատություններում, «Բանբեր հայագիտության», 2013, թ. 1, էջ 135-136:

գեցրին բացասական հետևանքների: Հետևապես, սույն աշխատանքը ձեռք է բերում ոչ միայն գիտական, այլև գիտաքաղաքական նշանակություն:

Քննարկվող ժամանակահատվածն աչքի է ընկնում ժողովրդագրական զգալի առանձնահատկություններով, ուստիև մեր աշխատանքի **նպատակն է համալիր ուսումնասիրությամբ ներկայացնել 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին ժողովրդագրական գործընթացները Հայաստանում՝ կանգ առնելով առանձնահատկությունների, միտումների և դրանք պայմանավորող առանցքային իրադարձությունների վրա: Հետևաբար, ուսումնասիրության **խնդիրներն են** վերհանել ու ներկայացնել 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին Հայաստանում՝**

- ռազմաքաղաքական իրադրության (թուրք-պարսկական պատերազմներ, ջալալիական շարժումներ և այլն) ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների վրա,

- Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի ժողովրդագրական (էթնոկրոնական) քաղաքականության առանցքային դրսևորումները,

- բնակլիմայական պայմանների, դրանցում տեղի ունեցած փոփոխությունների և բնական աղետների ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների վրա,

- համաճարակների և սովի ազդեցությունը բնակչության վերարտադրության վրա,

- ընտանիքի միջին մեծության գործակիցը՝ ծնելիության և մահացության մակարդակի մասնակի գնահատմամբ,

- բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը և էթնոժողովրդագրական նկարագիրը (էթնիկական կազմը և կրոնադավանական այլափոխումները՝ որոշ վարչամիավորների օրինակով),

- միգրացիայի (արտագաղթի, բռնագաղթի, ներքին միգրացիայի և օտար էթնիկական ներթափանցումների) հիմնական ալիքները, ուղղություններն ու հետևանքները,

- Ժողովրդագրական գործընթացների համալիր նկարագրությունն ու ամփոփ վերլուծությունը՝ շարադրված որպես ուսումնասիրության հիմնական եզրակացությունները:

Քանի որ ուսումնասիրության նպատակն է ժողովրդագրական գործընթացների և դրանց միտումների ընդհանուր ներկայացումը, հետևապես մենք Հայաստանի յուրաքանչյուր բնակավայրի բնակչության թվաքանակը, էթնիկական կազմը և բնակչության վերարտադրության ամբողջական պատկերը ներկայացնելու խնդիր չենք դրել, քանի որ բնակչության մանրակրկիտ քննությունը (միկրոանալիզը) հնարավոր չէ տվյալների ամբողջական հենքի բացակայության պատճառով: Այդուհանդերձ, Ժողովրդագրական գործընթացների առանձնահատկություններին անդրադառնալիս, ըստ տվյալների հասանելիության, փորձել ենք ներկայացնել նաև առանձին վարչամիավորներում տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժերը:

Ժողովրդագրական գործընթացներին անդրադառնալիս փորձել ենք դիտարկել պատմական Հայաստանի գրեթե ամբողջ տարածքը, քանի որ Հայաստանի քաղաքական բաժանումների շարունակական փոփոխությունները հնարավորություն չեն տալիս 1639 թ. նախորդող ժամանակահատվածի համար հստակ սահմանաքաժանմամբ կիրառել «Արևելյան Հայաստան» և «Արևմտյան Հայաստան» եզրույթներն այն իմաստով, որ մենք այսօր ընկալում ենք: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում գրիչների՝ հայրենիքի քաղաքական ընկալման հարցում դեռևս նկատելի չէ օտար նվաճողների կողմից ստեղծված միջ-

պետական քաղաքական սահմանաբաժանումը³: Առաքել Դավրիժեցին միայն իր երկը շարադրելիս (17-րդ դարի կեսին) որոշակիորեն տարբերակում է Արևելյան և Արևմտյան Հայաստանը, երբ Մովսես Տաթևացուն անվանում է «լուսատրիչ արևելեայ մասին աշխարհիս»⁴: Այդուհանդերձ, հաշվի առնելով Ամասիայի և Կասրե-Շիրինի պայմանագրերի սահմանաբաժանումների հիման վրա ներկայումս պատմագիտական շրջանակներում «Արևելյան Հայաստան» և «Արևմտյան Հայաստան» եզրույթների կիրառումը, արդի ընկալման տեսանկյունից նյութը հասու դարձնելու համար երբեմն օգտագործել ենք նշված հասկացություններն այն իմաստով, որով դրանք կիրառվել են 17-րդ դարի կեսից:

Ե՛վ Օսմանյան կայսրությունը, և՛ Սեֆյան Պարսկաստանը սկզբից ևեթ աշխատել են ներմուծել իրենց վարչաքաղաքական համակարգը՝ ներդնելով վարչատարածքային բաժանման իրենց սկզբունքները: Այսպես, Արևելյան Հայաստանի տարածքի մեծ մասն ընդգրկված էր Չուխուր-Սաադի (Արարատյան կամ Երևանի), Ղարաբաղի (Արցախի), Շիրվանի, Ատրպատականի բեկլարբեկությունների (կուսակալությունների), իսկ Արևմտյան Հայաստանը՝ Վանի, Էրզրումի, Չըլդըրի (Ախալցխայի), Կարսի, Դիարբեքիրի, Սեբաստիայի էյալեթների (նահանգների) մեջ⁵:

³ Տե՛ս օրինակ՝ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 448-450:

⁴ **Առաքել Դավրիժեցի**, էջ 60:

⁵ 16-17-րդ դարերում Հայաստանի տարածքում Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի կողմից կատարված վարչատարածքային բաժանումները և դրանց փոփոխությունները մանրամասն տե՛ս՝ «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» (այսուհետ՝ «Թուրքական աղբյուրներ»), կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, հ. Ա, Բ, Գ, Երևան, 1961, 1964, 1967; **Սաֆրաստյան Ա.**, Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դարում (պատմական ակնարկ), «Արևելագիտական ժողովածու», հ. 1, Երևան, 1960, էջ 285-302; **Անասյան Հ.**, XVII դարի ազատագրական շար-

ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին, այսինքն՝ թուրք-պարսկական պատերազմների ժամանակաշրջանում և դրանց հաջորդող մի քանի տարիներին ներկայացնելիս կարևոր է ժամանակագրական փուլաբաժանման որոշակի ճշգրտումը: Հ. Փափազյանը թուրք-պարսկական պատերազմների շրջանը ներառում է պատմական երկու ժամանակահատվածի՝ Վաղ (պարսկա-օսմանյան փոփոխակի իշխանության, 1501-1603 թթ.) և Նոր (1603-1724 թթ.) Սեֆյան շրջանների մեջ⁶: Քաղաքական և ռազմական պատմության տեսանկյունից համաձայնվելով ժամանակագրական այս փուլաբաժանման հետ, այդուհանդերձ, ժողովրդագրական գործընթացների առանձնահատկությունների տեսանկյունից ժամանակաշրջանն ավելի նպատակահարմար է բաժանել 16-րդ դարի և 17-րդ դարի առաջին կեսի երկու փուլերի, որոնց առանձնահատկություններին և ենթափուլերին անդրադառնալու ենք աշխատանքի համապատասխան գլուխներում: Ընդ որում՝ պետք է նկատել, որ 1639 թ. պայմանագրին հաջորդող տարիներին (մինչև 17-րդ դարի կեսերը) ժողովրդագրական գործընթացների միտումները կրել են պատերազմների հետևանքների խոր կնիքը, և պատահական չէ, որ Հ. Փափազյանը 17-րդ դարում Արարատյան կուսակալության առնչվող իր հոդվածում հանգում է հետևյալ ուշագրավ եզրակացությանը. «...Եթե հարյուրամյակի

ժամներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961; **Զուլպյան Մ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980; «Հայոց պատմություն», հ. III, գ. I, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստ., 2010; **Саркисян Е.**, Административная и демографическая политика османского правительства в Западной Армении, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 5, Երևան, 1970, էջ 357-380; «Аграрный строй Османской империи XV-XVII вв.: документы и материалы», сост., пер. и ком. А. Тверитиновой, Москва, 1963.

⁶ Տե՛ս **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետ՝ «ԼՀԳ»), 1977, թ. 1, էջ 29:

առաջին կեսին բնորոշ էր երկրի պարբերական վերաբնակեցումը, մեծ գաղթից խուսափած և մոտակա շրջաններում ապաստանած, իսկ առավել ևս Արևմտյան Հայաստանից բռնի քշված հայ ռայաթներով, ապա 50-60-ական թվականներից սկսած Արարատյան երկրում նկատվող սոցիալ-տնտեսական և էթնիկական նոր տեղաշարժերն իրենց բնույթով արմատապես տարբերվում էին նախորդներից և կոչված էին շրջադարձային դեր խաղալու երկրի հետագա քաղաքական կյանքում»⁷: Նույն միտումներն առկա էին Արևմտյան Հայաստանում, որտեղ հարկային քաղաքականության և կրոնական հալածանքների միջոցով մահմեդականացումը դարձավ պետական ժողովրդագրական քաղաքականության քաղաքիչներից մեկը:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրման համար առաջնային նշանակություն ունեն պաշտոնական վիճակագրության տվյալները, սակայն 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին պետականություն չունեցող Հայաստանի պարագայում հանդիպում ենք դժվարությունների: Սեֆյանների կողմից որևէ մարդահամարի մասին տվյալ չունենք, իսկ Օսմանյան կայսրության կողմից կազմված հարկացուցակները մի քանի վարչամիավորներով են տպագրվել: Այդպիսիք են Էրզրումի նահանգի մի քանի վարչամիավորների (16-րդ դար), Չըլդըրի նահանգի (16-րդ դարի վերջ), Խարբերդի սանջակի (16-րդ դար), Համշենի (1530-ական թթ.) հարկացուցակները⁸, որոնց կազմման հիմքում դրված է

⁷ **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 41-42:

⁸ Տե՛ս **Miroğlu İ.**, XVI. Yüzyılda Bayburt sancağı, Üçler Matbaası, İstanbul, 1975; **Նույնի**, Kemah Sancağı ve Erzincan Kazası (1520-1566), Türk Tarih Kurumu basımevi, Ankara, 1990; **Ünal M.**, XVI. Yüzyılda Harput Sancağı (1518-1566), Türk Tarih Kurumu

եղել կրոնական տարանջատման սկզբունքը, ուստի դրանց միջոցով հնարավոր է միայն ընդհանուր պատկերացում կազմել նշված վարչամիավորներում էթնոկրոնական կազմի և ժողովրդագրական գործընթացների միտումների վերաբերյալ:

Պաշտոնական համընդհանուր վիճակագրության անհասանելիության պայմաններում կարևոր նշանակություն են ձեռք բերում քննարկվող ժամանակաշրջանի հեղինակների երկերը: Նրանց խմբում նախևառաջ հարկ է առանձնացնել տեղական սկզբնաղբյուրները՝ ժամանակակից հայ պատմիչների երկերը, մանր ժամանակագրությունները և ձեռագիր մատյանների հիշատակարանները: Այս համատեքստում, անշուշտ, մեծ կարևորություն ունի 17-րդ դարի հայ պատմիչ Առաքել Դավրիժեցու երկը: Այստեղ առանձնակի նշանակություն ունեն շահ Աբաս Ա-ի կողմից կազմակերպված բռնագաղթին և ջալալիական շարժումներին հաջորդող սովին առնչվող մանրամասները:

Նույն ժամանակահատվածի վերաբերյալ կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև 17-րդ դարի հայ պատմիչներ Գրիգոր Դարանաղցին⁹ և Զաքարիա Քանաքեռցին¹⁰: Նրանցից

basımevi, Ankara, 1989 (վիճակագրությունից օգտվել ենք միջնորդավորված ձևով՝ տե՛ս **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007, այսուհետ՝ **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի...): Տե՛ս նաև **Մելքոնյան Ա.**, Ախալցխայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը ըստ թուրքական հարկացուցակների (16-րդ դ. վերջ – 18-րդ դ. սկիզբ), «Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր», Երևան, 2011, էջ 134-149; **Gökbilgin M.**, XVI Yüzyıl Başlarında Trabzon Livası ve Doğu Karadeniz Bölgesi, Türk Tarih Kurumu Belleten, 26, № 101-104, Ankara, 1962, s. 293-337 (տե՛ս **Սահակյան Լ.**, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. IV, Երևան, 2006, էջ 212-218):

⁹ Տե՛ս «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ» (այսուհետ՝ **Գրիգոր Դարանաղցի**), հրատ.՝ Մ. վրդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915:

առաջինի տեղեկություններն ավելի շատ վերաբերում են Հայաստանի՝ Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող տարածքներում ջալալիական շարժման հետևանքներին (սով, ժանտախտ, արտագաղթ), իսկ երկրորդինը՝ շահ Աբաս Ա-ի կազմակերպած բռնագաղթին և Արարատյան կուսակալության ներքին կյանքին: Զաքարիա Քանաքեռցու տվյալները հետաքրքրական են նրանով, որ դրանցով հնարավոր է դառնում տեսնել Ամիրգունա խանի ժողովրդագրական քաղաքականության փոփոխությունը զանգվածային բռնագաղթից մոտ մեկ տասնամյակ անց: Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի մասին ուշագրավ տեղեկություններ են զետեղված նաև հայ կաթոլիկ հոգևորական Օգոստինոս Բաջեցու ուղեգրական երկում¹¹:

Հայկական սկզբնաղբյուրներից շատ կարևոր են նաև 16-17-րդ դարերի մանր ժամանակագրությունները¹² և 17-րդ դարի առաջին կեսի հայերեն ձեռագրերի հիշատակարանները¹³: Այստեղ հարկավոր է առանձնացնել ոչ միայն կոնկրետ դեպքերի (բռնագաղթեր, ժանտախտ, սով և այլն) շարադրումը, այլև գրիչների, ստացողների և կազմ պատրաստողների ընտանիքների կազմի ներկայացումը: Դրանց հիման վրա հաշվարկել ենք 17-րդ դարում Հայաստանի տարբեր բնակավայրերում հայկական ընտանիքի միջին մեծության գործակիցը: Ցավալի է, որ մինչ օրս առանձին գրքով չեն հրատարակվել 16-րդ դարի հայերեն ձեռա-

¹⁰ Տե՛ս **Զաքարիա Քանաքեռցի**, Պատմութիւն, աշխ.՝ Ա. Վիրաբյանի, Երևան, 2015:

¹¹ Տե՛ս «Աւգոստինոս Բաջեցոյ ճանապարհորդութիւն Յերուսալ» (այսուհետ՝ **Օգոստինոս Բաջեցի**), «Նշխարք մատենագրութեան հայոց», ի լոյս եած՝ Բ. Պատկանեան, Ս.-Պետերբուրգ, 1884, էջ 5-26:

¹² Տե՛ս «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)», հ. 1, 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, 1956:

¹³ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա (1601-1620 թթ.), հ. Բ (1621-1640 թթ.), կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, 1978; հ. Գ (1641-1660 թթ.), կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1984:

գրերի հիշատակարանները, ինչը հնարավորություն կտար մեզ նույնպիսի հաշվարկ կատարել նաև 16-րդ դարի համար: Այդ բացը հնարավոր է լրացնել Մատենադարանի՝ 16-րդ դարի ձեռագրերի ուսումնասիրությամբ, ինչը, սակայն, լուրջ ու երկարատև հետազոտության նյութ է: Հետևապես, բացը լրացնելու համար առանձնացրել և ուսումնասիրել ենք մի խումբ ձեռագիր մատյաններ¹⁴, Մաշտոցի անվան Մատենադարանի և հայագիտական այլ կենտրոնների կողմից հրատարակված ընդարձակ («մայր») ձեռագրացուցակներում¹⁵ նկարագրված հիշատակարանները: Ուսումնասիրել ենք մոտ 4 000 հիշատակարաններ, դուրս բերել աղբյուրագիտական տեսանկյունից մեզ համար կարևոր մոտ 700 հիշատակարաններում ներկայացված ընտանիքների մասին տվյալները, որոնց հիման վրա «Microsoft Excel» համակարգչային ծրագրով կազմել ենք ընտանեկան աղյուսակներ:

¹⁴ Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռագրեր № 4216, 5520 և այլն:

¹⁵ Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ա, խմբ.՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1984; հ. Ե, կազմեց՝ Օ. Եգանեան, Երեւան, 2009; հ. Է, Ը, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2012, 2013: Տե՛ս նաև «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Ա, Բ, կազմեց՝ Բ. վրդ. Սարգիսեան, Վենետիկ - Ս. Ղազար, 1914, 1924; հ. Գ, կազմեցին՝ Բ. վրդ. Սարգիսեան և Գ. վրդ. Սարգիսեան, Վենետիկ - Ս. Ղազար, 1966; հ. Դ, Ե, Զ, Է, Ը, կազմեց՝ Ս. վրդ. Ճեմճեմյան, Վենետիկ - Ս. Ղազար, 1993, 1995, 1996, 1996, 1998: «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալեպի եւ Անթիլիասի ու մասնաւորաց», հ. Բ, կազմեց՝ Ա. արք. Սիրմէեան, Հալեպ, 1936: «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սըրբոց Յակոբեանց վանքի», հ. Ա, կազմեց՝ Ա. արք. Սիրմէեան, Ս. Ղազար, 1948: «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղայի մասնաւոր հաւաքումներու», հ. Ա, կազմեց՝ Ա. արք. Սիրմէեան, Փարիզ, 1950: «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան», կազմեց՝ Ա. վրդ. Դանիէլեան, Անթիլիաս, 1984: «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Ն. եպս. Պողարեան, հ. Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, ԺԱ, Երուսաղէմ, 1966, 1967, 1968, 1969, 1971, 1972, 1974, 1977, 1979, 1990, 1991:

Հետագա բոլոր հաշվարկները կատարել ենք այդ ծրագրի գործիքների կիրառմամբ:

Եթե ձեռագրերի հիշատակարանները ծնելիության և ընտանիքի միջին մեծության գործակիցների հաշվարկման հիմք կարող են հանդիսանալ, ապա դրանց կողքին մահացության զանգվածային դեպքերի (ժանտախտի, սովի կամ պատերազմների պատճառով) լուռ վկաներն են այդ տարիների տապանագրերը և կանգնեցված խաչքար-մահարձանների վիմագրերը¹⁶: Այստեղ ևս «Microsoft Excel» համակարգչային ծրագրի կիրառմամբ կազմել ենք մահվան դեպքերի ժամանակագրական և տեղագրական աղյուսակ, որով կատարել ենք մահացության գնահատման տարաբնույթ հաշվարկներ: Խնդրի ուսումնասիրման համար ևս կարևոր են ձեռագրերի հիշատակարաններում ներկայացված տեղային (լոկալ) տեղեկությունները¹⁷: Ձեռագրական սկզբնաղբյուրներից ստացված տեղեկությունները կոնկրետ տարածքային միավորում համադրելով՝ հնարավոր է դարձել մասնակի գնահատել ժողովրդագրական աղետների ծավալները:

Հետպատերազմյան շրջանում էրզրումի նահանգում էթնո-ժողովրդագրական իրավիճակի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում 17-րդ դարի կեսի հայ հեղինակ Հակոբ Կարնեցին¹⁸: Նրա հիշատակությունները փաստում են, որ, չնայած տեղի ունեցած միգրացիոն (հայերի բռնագաղթ, քրդական տարրի ներհոսք) և կրոնադավանական (քաղկեդոնականների

¹⁶ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. II, III, IV, V, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, 1967, 1973, 1982, պր. VI, կազմեցին՝ Ս. Ավագյան, Հ. Ջանփուլադյան, Երևան, 1977, պր. IX, կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, 2012:

¹⁷ Տե՛ս օրինակ՝ ՄՄ, ձեռ. № 4786, 5520, 5967:

¹⁸ Տե՛ս **Յակովբ Կարնեցի**, Տեղագիր Վերին Հայոց, աշխ.՝ Կ. Կոստանեանցի, Վաղարշապատ, 1903: Հմմտ. «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)», հ. 2, էջ 541-586:

մահմեդականացում) վերակերպումներին, հայ բնակչությունը շարունակում էր կազմել նահանգի բնակչության գերակշիռ մեծամասնությունը:

16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին Հայաստանում տեղ գտած ժողովրդագրական գործընթացների մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև օտար հեղինակները, մասնավորապես՝ իրադարձությունների հիմնական գործող քաղաքական ուժերը ներկայացնող պետությունների՝ Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի պատմագրության ներկայացուցիչները: Թուրք հեղինակներից զգալի տեղեկություններ են հաղորդում հատկապես Իբրահիմ Փեչևին (16-17-րդ դարեր), Քյաթիբ Չելեբին (17-րդ դար), Էվլիյա Չելեբին (17-րդ դար) և ուրիշներ¹⁹: Թեև թուրք հեղինակների շարադրանքը միակողմանի բնույթ է կրում՝ ներկայացնելով նախևառաջ մահմեդականներին առնչվող տեղեկությունները (օսմանյան զորքերի արշավանքներ և քրդական ցեղախմբերի տեղաշարժեր), սակայն նույնիսկ այդօրինակ գործերից հնարավոր է վերհանել ժողովրդագրական իրավիճակը բնութագրող տվյալներ և ներկայացնել հայերի դրությունը: Ինչ վերաբերում է պարսիկ (իրանալեզու) հեղինակներին, ապա նրանցից հարկավոր է առանձնացնել շահ Աբաս Ա-ի գրագիր Իսքանդար բեգ Մունշին²⁰, որի աշխատանքում հետաքրքիր տեղեկություններ կան հայ բնակչության բռնագաղթի վերաբերյալ: Պարսիկ հեղինակի տեղեկությունները հաստատում են հայ հեղինակների այն պնդումը, որ բռնագաղթը կրել է նպատակային-պլանավորված բնույթ:

¹⁹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Ա-Գ:

²⁰ Տե՛ս **Eskandar Beg Monshi**, Tarikh-e Alamara-ye Abbasi (The History of Shah Abbas the Great), translated by Roger M. Savory, vol. II, Persian Heritage Series, N 28, Colorado: Wetview Press, Boulder CO, 1978: Օգտվել ենք նաև Հ. Փափազյանի կողմից կատարված հատվածական թարգմանություններից՝ տե՛ս **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 29-44:

Արժանահավատ տվյալներ են պարունակում եվրոպացի ճանապարհորդների և դիվանագիտական ծառայություն իրականացրած անձանց ուղեգրությունները²¹: Կարևոր նշանակություն ունեն բնակավայրերի նկարագրությունը և հատկապես շահ Աբասի բռնագաղթի վերաբերյալ տեղեկությունները: Վերջիններս իրենց արտացոլումն են գտել, օրինակ՝ պորտուգալացի կաթոլիկ միսիոներ Անտոնիո դե Գուվեայի (պորտ.՝ Գոուվեայի) վկայություններում²²: Թեև ուղեգրությունների հեղինակները պաշտոնական վիճակագրությանը չէին կարող լիովին տիրապետել, սակայն նրանց տեղեկությունների արժանահավատության աստիճանը բարձր է այն առումով, որ դրանք, ըստ էության, մասամբ նաև հետախուզական նշանակություն են ունեցել:

Թեպետ 16-րդ դարին և 17-րդ դարի առաջին կեսին առնչվող տարբեր աշխատանքներում ուսումնասիրողները ուշադրություն դարձրել են Հայաստանի ժողովրդագրության տարաբնույթ հիմնախնդիրներին, այդուհանդերձ նշված ժամանակաշրջանի ժողովրդագրական գործընթացները Հայաստանում հայագիտության մեջ **համալիր ուսումնասիրության** առարկա չեն եղել: Պատմաժողովրդագրական անդրադարձներ առկա են Ղ. Ինճիճյանի²³, Ղ. Ալիշանի²⁴, Հ. Տաշյանի²⁵ աշխատություններում: Եթե Ղ. Ինճիճյանի և Հ. Տաշյանի տվյալները կարևոր են

²¹ Տե՛ս «Ուղեգրություններ», կազմեց՝ Հ. Հակոբյան, Կ. Ա, 2, Երևան, 1932, 1934: Տե՛ս նաև **Զուլալյան Մ.**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գ. Ա, Երևան, 1990:

²² Տե՛ս **Эзовъ Г.**, Сношения Петра Великого съ Армянскимъ народомъ (документы), СПб., 1898, էջ 463-479:

²³ Տե՛ս **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա. Ասիա, Կ. Ա, Վէնէտիկ, 1806:

²⁴ Տե՛ս օրինակ՝ **Ալիշան Ղ.**, Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893:

²⁵ Տե՛ս **Տաշեան Յ.**, Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին. պատմական-ազգագրական հարեանցի ակնարկ մը, Վիեննա, 1921:

Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների էությունը հասկանալու համար, ապա Ղ. Ալիշանի վերհանած տեղեկությունները նպաստում են Արևելյան Հայաստանի պատմաժողովրդագրական ուսումնասիրության համար: Որոշ դեպքերում նրանց տեղեկությունները ձեռք են բերում սկզբնաղբյուրի նշանակություն, քանի որ մեջքերում են որևէ սկզբնաղբյուրից վերցված նյութեր: Այդուհանդերձ, նրանց տվյալները կրում են 18-19-րդ դարերի էթնոժողովրդագրական գործընթացների կնիքը, ուստի զանգվածային մահմեդականացման միտումների և օտար էթնիկական տարրի ստվարացման մասին նրանց հաղորդումները պետք է դիտարկել նախևառաջ 19-րդ դարի համատեքստից:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում ժողովրդագրական գործընթացներից հայագիտության մեջ համեմատաբար խորապես է ուսումնասիրված պարսից շահ Աբաս Ա-ի կողմից կազմակերպված բռնագաղթը: Վերջինիս ենթարկված հայերի թվաքանակի վերաբերյալ հետաքրքիր տվյալներ է հաշվարկել Հ. Առաքելյանը²⁶: Նրա հաշվարկները հիմնված են Առաքել Դավրիժեցու, Նոր Զուղայի մի քանի ձեռագրերի հիշատակարանների և եվրոպացի հեղինակների տվյալների վրա: Քանի որ վերջիններս, այդուհանդերձ, ամբողջական հաշվարկի համար բավարար չեն եղել, բռնագաղթյալների թվաքանակի մասին եզրահանգումն ուսումնասիրողը, ի վերջո, մոտավոր գնահատմամբ է ներկայացրել: Բռնագաղթի մասին երկու աշխատություն է գրել Հ. Նաջարյանը²⁷՝ սկզբնաղբյուրներում առկա տեղեկությունների

²⁶ Տե՛ս **Առաքելյան Հ.**, Պարսկաստանի հայերը. նրանց անցեալը, ներկան եւ ապագան, մաս Ա, Վիեննա, 1911:

²⁷ Տե՛ս **Նաջարյան Հ.**, XVII դարի սկզբի թուրք-իրանական պատերազմը և հայերի տարագրությունը, Երևան, 1959; **Նույնի**, Թուրք-իրանական հարաբերությունները XVI դ. ու XVII դ. առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961: Ի դեպ,

համադրմամբ անդրադառնալով բռնագաղթի մանրամասներին: Պետք է շեշտել, սակայն, որ Հ. Նաջարյանի աշխատանքը հիմնված է գերազանցապես Առաքել Դավրիժեցու տվյալների վրա: Նույն մոտեցումն է առկա Լ. Դանեղյանի հրատարակած հոդվածում²⁸: Բռնագաղթի տարածքային ընդգրկման ուսումնասիրության արդյունք է Գ. Բադալյանի կողմից հրատարակված քարտեզը²⁹, որտեղ մատնանշվում է ոչ միայն տարածքը, այլև ներկայացվում են բռնագաղթի ենթարկվածների և Երասխի գետանցման զոհ գնացածների թվաքանակի վերաբերյալ հետազոտողի հաշվարկները: Գ. Բադալյանի մեկ այլ քարտեզում³⁰ ներկայացված են թուրք-պարսկական պատերազմների արհավիրքները և 1555 թ. Ամասիայի պայմանագրով ամայացված Կարսի չեզոք գոտու սահմանները:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում ժողովրդագրական գործընթացների առանձին խնդիրների իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են Հ. Փափազյանը և Մ. Զուլպյանը: Հ. Փափազյանի հրատարակած աշխատանքներում մեծ հետաքրքրություն են ներկայացնում պարսկերեն սկզբնաղբյուրների տեղեկություններով համեմված ուսումնասիրությունները: Արժեքավոր է հատկապես Արարատյան կուսակա-

առաջին աշխատանքը որոշ լրամշակումներով տպագրվել է երկրորդի մեջ՝ իբրև մենագրության մեկ գլուխ, ուստիև նախընտրել ենք օգտվել երկրորդ աշխատանքից:

²⁸ Տե՛ս **Դանեղյան Լ.**, Հայերի բռնագաղթն Իրան 17-րդ դարում (Ա. Դավրիժեցու տվյալներով), «ԼՀԳ», 1969, թ. 8, էջ 63-75:

²⁹ Տե՛ս «Հայերի բռնագաղթը Շահ-Աբաս 1-ինի կողմից Պարսկաստան 17-րդ դ. սկզբին», հեղինակ՝ Գ. Բադալյան, մասշտաբ՝ 1:4 000 000, «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, Երևան, 2008, էջ 51:

³⁰ Տե՛ս «Հայաստանը 16-րդ դ.: Պարսկա-օսմանյան պատերազմները», հեղինակ՝ Գ. Բադալյան, մասշտաբ՝ 1:3 600 000, «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, էջ 49:

լության պատմությանը նվիրված հոդվածների շարքը³¹, որտեղ քննարկվում են մեծ բռնագաղթին և Ամիրգունա խանի ժողովրդագրական քաղաքականությանն առնչվող հարցեր, ինչպես նաև ներկայացվում են օտար էթնիկական ներթափանցումները Արևելյան Հայաստան: Արևմտյան Հայաստանում այդօրինակ խնդիրների ուսումնասիրման տեսանկյունից կարևոր է Մ. Զուլայանի «Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ.» մենագրությունը³², որտեղ խոսք է գնում Հայաստանի՝ Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող հատվածում 16-18-րդ դարերում տեղի ունեցած էթնոժողովրդագրական գործընթացների, ինչպես նաև սովի և ժանտախտի համաճարակի մասին: Զալալիական շարժումների՝ ժողովրդագրական սոսկալի հետևանքների մասին կարևոր վերլուծություններ են ներկայացված Մ. Զուլայանի մեկ այլ մենագրության³³ մեջ: Նույն խնդիրը կլիմայական փոփոխությունների տեսանկյունից դիտարկելու և վերլուծելու համար մեծ նշանակություն ունի բրիտանացի հետազոտող Ս. Ուայթի մենագրությունը³⁴, որտեղ, ի դեպ, գնահատանքի ու դրվատանքի խոսքեր են շոյվված Առաքել Դավրիժեցու երկի աղբյուրագիտական նշանակության համար:

Վերջին տարիներին ուսումնասիրողների ուշադրությունը գրավել են խնդրո առարկա ժամանակաշրջանում Հայաստանի տարբեր վարչամիավորներում էթնոժողովրդագրական իրավի-

³¹ Տե՛ս **Փափագյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դ.), «ՀՍՄԻ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների», 1960, թ. 7-8, էջ 21-40; **Նույնի**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԶ դ.), «ԼՀԳ», 1973, թ. 6, էջ 23-34; **Նույնի**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 29-44:

³² Տե՛ս **Զուլայան Մ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ.:

³³ Տե՛ս **Զուլայան Մ.**, Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII դարեր), Երևան, 1966:

³⁴ Տե՛ս **White S.**, The Climate of Rebellion in the Early Modern Ottoman Empire, New York: Cambridge University Press, 2013:

ճակին վերաբերող հարցերը: Արժեքավոր ուսումնասիրություններ են հրատարակել Ա. Մելքոնյանը³⁵, Լ. Սահակյանը³⁶, Վ. Բայբորոյանը³⁷, Գ. Բադալյանը³⁸, Պ. Չոբանյանը³⁹, Մ. Կարապետյանը⁴⁰: Հարկ է շեշտել, որ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից պատրաստված «Հայոց պատմության» բազմահատորյակի նոր հրատարակությունում Ա. Մելքոնյանը⁴¹ ի մի է բերել 16-17-րդ դարերում Հայաստանում տեղի ունեցած էթնո-ժողովրդագրական գործընթացների վերաբերյալ իր կատարած ուսումնասիրություններն ու հրատարակած հոդվածների եզրակացությունները: Սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների լայն շրջանակի համադրությամբ նա նորովի է մեկնաբանել Հայաստանում բնակչության էթնոժողովրդագրական նկարագրի

³⁵ Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Երևան, 2011; **Նույնի**, Օսմանյան կայսրության ժողովրդագրական քաղաքականությունը որպես ցեղասպանության դրսևորում ըստ Էրզրումի և Ախալցխայի նահանգների օրինակների, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. I, Երևան, 2002, էջ 39-47:

³⁶ Տե՛ս **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի...; **Նույնի**, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, էջ 207-228:

³⁷ Տե՛ս **Բայբորոյան Վ.**, Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի «քրդականացման» քաղաքականությունը 16-րդ դ., «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետ՝ «ՊԲՀ»), 2006, թ. 3, էջ 67-84:

³⁸ Տե՛ս **Բադալյան Գ.**, Տայքի կենտրոնական և արևելյան գավառների ազգային նկարագիրը XVI դ. վերջին. ըստ «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ հարկացուցակ»-ի, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2017, թ. 4, էջ 40-70:

³⁹ Տե՛ս **Չոբանյան Պ.**, Քարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 20, Երևան, 2001, էջ 204-232; **Նույնի**, Этноконфессиональные процессы в Закавказье XVII-XVIII вв., «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 18, Երևան, 1999, էջ 151-161:

⁴⁰ Տե՛ս **Կարապետյան Մ.**, Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ., «ՊԲՀ», 1986, թ. 2, էջ 95-109; **Նույնի**, Հայ կաթողիկե թեմը և էթնոդաւանական գործընթացները Նախիջեւանում XVII-XVIII դարերում, «Նախիջևանի Հայոց վարժարանը և Հոռմը», Վենետիկ, 2000, էջ 1-14 (տե՛ս <http://www.digilib.am/book/1478/1782>):

⁴¹ Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, գ. II, Երևան, 2014, էջ 625-631:

դիմախեղման փորձերը՝ առանձնակի շեշտադրում կատարելով քրդական վերաբնակեցումների և շահ Աբաս Ա-ի կողմից կազմակերպված բռնագաղթի հետևանքների վրա: Լ. Սահակյանի ուսումնասիրություններն էլ 16-րդ դարի օսմանյան աշխարհագիր մատյանների հետազոտման հիման վրա բնակչության էթնոկրոնական կազմի վերհանման հաջողված աշխատանքներ են: Վ. Բայբուրդյանը քննել է Արևմտյան Հայաստանում Օսմանյան կայսրության կողմից քրդական ցեղերի վերաբնակեցման քաղաքականությանը՝ ցույց տալով նրանց բնակության հիմնական օջախները: Գ. Բադալյանը մանրամասն վերլուծել է Տայքի էթնոժողովրդագրական պատկերը 16-րդ դարավերջի դրությամբ՝ ըստ օսմանյան ընդարձակ հարկացուցակի տվյալների: Ինչ վերաբերում է Պ. Չոբանյանի ուսումնասիրություններին, ապա դրանց միջոցով հնարավոր է հաստատել Քարվաճառի հայեցի էթնիկ նկարագիրը քննարկվող ժամանակաշրջանում, ինչպես նաև այն, որ որոշ քաղաքներում տեղակայված կայազորների հաշվին մահմեդական բնակչությունը խորհրդանշական մեծամասնություն էր կազմում: Մ. Կարապետյանի ուսումնասիրությունները եվրոպական սկզբնաղբյուրների լայն հիմքի վրա լուսաբանում են Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ., ինչպես նաև հայ կաթողիկե համայնքի վերակերպումների և բնակչության էթնոդավանական պատկերի փոփոխությունները Նախիջևանում:

Քանի որ մեր աշխատանքը ժողովրդագրական գործընթացների համալիր ուսումնասիրության փորձ է, ուստի այն կատարելու ուղղությունների և մեթոդական մոտեցումների մատնանշման համար անհրաժեշտ է եղել տեսական գրականության կիրառությունը: Այստեղ առաջնությունը տվել ենք պատմական ժողովրդագրության դասականներից մեկի՝ Թ. Հոլլինգստորթի

աշխատությանը⁴²: Որպես պատմաժողովրդագրական համալիր ուսումնասիրության օրինակելի նմուշ՝ օգտագործվել է երկրորդ հազարամյակում Եվրոպայի ժողովրդագրության վերաբերյալ իտալացի հետազոտող Մ. Բաչիի ուսումնասիրությունը⁴³:

Վերը նշված սկզբնաղբյուրների, ուսումնասիրությունների և տեսական գրականության, ինչպես նաև զգալի թվով այլ աղբյուրների ու գրականության տեղեկությունների համադրմամբ և վերլուծությամբ կատարված ներկա ուսումնասիրությունը ժամանակագրական պարբերացման սկզբունքով շարադրված է երկու գլուխներում:

Մեթոդական տեսանկյունից առաջնորդվել ենք պատմահամեմատական մեթոդի վրա հիմնված պատմաժողովրդագրական մակրոանալիզով, այսինքն՝ ժողովրդագրական իրադարձությունների վերլուծությամբ և բնակչության թվաքանակի շարժընթացի ընդհանուր միտումների գնահատմամբ:

Փաստորեն, սույն աշխատանքում առաջին անգամ կատարվել է 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին Հայաստանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների համալիր ուսումնասիրություն: Վերջինս ոչ թե սահմանափակվում է լոկ էթնոժողովրդագրական գործընթացների (էթնիկական տեղաշարժերի ու դրանց պատճառահետևանքային կապի) կամ էթնոկրոնական այլափոխումների (մահմեդականացման և կաթոլիկացման գործընթացների) վերհանմամբ, այլ ուսումնասիրում է ժողովրդագրական բոլոր բնութագրիչները (ծնելիությունը, մահացությունը, ընտանիքի միջին մեծությունը, բնակչության էթնիկական և կրոնական կազմը, միգրացիոն գործընթացները և այլն)՝ դրանք դիտարկելով ռազմաքաղաքական իրադրության,

⁴² Տե՛ս **Hollingsworth T.**, *Historical Demography*, London: Cambridge University Press, 1976:

⁴³ Տե՛ս **Бачи М.**, *Демографическая история Европы (II тысячелетие)*, СПб., 2010:

պետական ժողովրդագրական քաղաքականության, սոցիալական և բնական միջավայրի ազդեցության պայմաններում: Նման ուսումնասիրության արդյունքում գիտական շրջանառության մեջ է դրվում «Մեծ սով» եզրույթը 1606-1609 թթ. սովի համար, քանի որ այն աննախադեպ էր իր ժողովրդագրական հետևանքներով:

Մենագրության մեջ նորովի են դիտարկվում նաև շահ Աբաս Ա-ի կողմից կազմակերպված բռնագաղթի ժողովրդագրական հետևանքները: Պարսից շահի ժողովրդագրական քաղաքականության խորքային վերլուծության համար օգտագործել ենք նրա մասին վերջին տասնամյակներում Արևմուտքում հրատարակված ուսումնասիրությունները, որոնցից առավել արժեքավոր են Է. Հերցիգի⁴⁴ և Դ. Բլուի⁴⁵ աշխատությունները:

Կարևոր է այն, որ, հետևելով Մ. Ֆլերիի և Լ. Անրիի կողմից 1956-1965 թթ. ներմուծված Ֆլերի-Անրիի մեթոդին, որ լրամշակվել ու կատարելագործվել է Գ. Ֆրանցի (1961 թ.) և այլոց կողմից, հիմք ընդունելով նրանց հետազոտությունների մեթոդաբանական սկզբունքները⁴⁶, ձեռագիր մատյանների հիշատակարաններում գրչի, ստացողի կամ կազմը պատրաստողի ընտանիքի անդամների թվարկման շնորհիվ հաշվարկել ենք ընտանիքի միջին մեծության գործակիցը⁴⁷:

⁴⁴ Տե՛ս **Herzig E.**, The Deportation of the Armenians in 1604-1605 and Europe's Myth of Shah 'Abbas I, "Pembroke Papers", 1990, N 1, էջ 59-71:

⁴⁵ Տե՛ս **Blow D.**, Shah Abbas: The Ruthless King Who Became an Iranian Legend, London-New York: I.B. Tauris, 2009:

⁴⁶ Թվարկված մեթոդաբանական սկզբունքների մասին առավել մանրամասն տե՛ս **Hollingsworth T.**, նշվ. աշխ., էջ 156-159, 181-189:

⁴⁷ Էրզրումի նահանգի համար նշված սկզբունքով հաշվարկման առաջին փորձ կարելի է համարել Հակոբ Կարնեցու ընտանիքի 4 անդամների մասին իր և այլ հեղինակների հիշատակագրությունների մեկտեղման օրինակը (տե՛ս **Մալխասյան Մ.**, Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկը՝ որպես պատմաաշխարհագրական հետազոտությունների աղբյուր (Էրզրումի նահանգը 17-րդ դարում), Ս. Էջմիածին, 2009, էջ 11-15):

Հատկանշական է, որ ոչ բոլոր ձեռագիր մատյաններում են ամբողջությամբ թվարկված ընտանիքի անդամները. երբեմն նրանց մասին հիշատակությունն առհասարակ բացակայում է, իսկ երբեմն էլ առկա են միայն ողջ կամ մահացած անդամների մասին տվյալներ՝ կախված ձեռագրի պատվիրման հանգամանքների առանձնահատկություններից: Այս պայմանները օբյեկտիվորեն դժվարացնում է Ֆլերի-Անրիի մեթոդի կիրառումը հայագիտության մեջ: Այդուհանդերձ, մեթոդի տեղայնացումը ձեռագիր մատյանների հիշատակարանների աղբյուրագիտական նշանակության վերարժևորման ևս մեկ կարևոր հիմք է դարձել⁴⁸:

Մահացության մոտավոր գնահատման ուղղությամբ կարևոր է համապատասխան տեղեկատվություն պարունակող վիմագրերի և հիշատակարանների ուսումնասիրությունը: Առաջնորդվելով Ա. Հարքնեսսի (1896 թ.), Վ. ՄաքԴոնելլի (1913 թ.), Բ. Ռիչարդսոնի (1933 թ.), Վ. Վիլլքոքսի (1937 թ.), Էբերհարդի (1954 թ.), Լ. Հենրիի (1957-1959 թթ.), Ռ. Մայերսի (1963 թ.) և պատմական ժողովրդագրության այլ երևելիների կողմից առաջադրված և կիրառված մեթոդներով⁴⁹, տեղայնացնելով դրանք՝ տապանաքարերի և խաչքար-մահարձանների վիմագրերի շնորհիվ դուրս ենք բերել զանգվածային մահացության դեպքերը կամ տարեթվերը, որոնք հաստատում են ժողովրդագրական աղետների մասին մատենագրական տեղեկությունները:

⁴⁸ Ձեռագրի հիշատակարանների միջոցով ընտանիքի անդամների թվաքանակը հաշվարկելու մեթոդը պատմական Վասպուրականի 15-րդ դ. ձեռագրերի հիշատակարանների օրինակով իր ուրույն ձևով մշակել և 2015 թ. հայագիտության մեջ հաջողությամբ կիրառել է Գ. Երանյանը (տե՛ս **Երանյան Գ.**, Հայ ընտանիքի անդամների միջին թվաքանակն ըստ XV դ. ձեռագրերի հիշատակարանների (Վասպուրականի օրինակով), Երևան, 2015):

⁴⁹ Թվարկված մեթոդների մասին առավել մանրամասն տե՛ս **Hollingsworth T.**, նշվ. աշխ., էջ 272-274:

Տարբեր տեսակետների ուսումնասիրությունը և գիտական քննությունն ամբողջական չէր դառնա, եթե նկատի չունենայինք նաև որոշ թուրք հետազոտողների⁵⁰ կարծիքներ: Քննության ենթ առել նաև իտալերեն ուսումնասիրություններ⁵¹:

Ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ խնդրո առարկա թեմայի ուսումնասիրությամբ զբաղվում ենք ավելի քան մեկ տասնամյակ՝ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն⁵² և հրատարակելով մի շարք աշխատություններ⁵³, որոնց հանրագումարն էլ կարելի է համարել սույն մենագրությունը: Քննարկված տարբեր խնդիրնե-

⁵⁰ Տե՛ս օրինակ՝ **Tüzün G.**, Muhteşem Süleyman, “Tarihte Olağanüstü Kişiler”, Ana Yayıncılık, 2004:

⁵¹ Տե՛ս օրինակ՝ **Barbero Al.**, Il divano di Istanbul, Palermo: Sellerio Editore, 2011:

⁵² Տե՛ս **Մալխասյան Մ.**, Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում – 17-րդ դարի առաջին կեսին, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2016:

⁵³ Տե՛ս **Մալխասյան Մ.**, Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկը՝ պատմաաշխարհագրական հետազոտությունների սկզբնաղբյուր (վարչաքաղաքական և ժողովրդագրական ուսումնասիրություն), «Էջմիածին», 2010, թ. Է, էջ 110-125; **Նույնի**, Օսմանյան կայսրության և Սեֆյան տերության առաջացումն ու հզորացումը. ժողովրդագրական գործընթացների ազդեցությունը 17-րդ դարի հայ ազատագրական մտքի վրա, «Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ», Երևան, 2015, էջ 9-33; **Նույնի**, Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դարի առաջին կեսին, «Հայագիտության հարցեր» հանդես, 2016, թ. 1, էջ 94-104; **Նույնի**, Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում ԺԶ դարում, «Էջմիածին», 2016, թ. Դ, էջ 52-72; **Նույնի**, Օտար էթնիկական ներթափանցումները Հայաստան 16-րդ դարում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան, 2016, էջ 167-181; **Նույնի**, 1606-1609 թթ. Մեծ սովը Հայաստանում, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2017, թ. 2, էջ 17-34; **Նույնի**, Օսմանյան կայսրության էթնոկրոնական քաղաքականության հիմնական առանձնահատկություններն Արևմտյան Հայաստանում XVI դարում, «Հայագիտության հարցեր», 2017, թ. 2, էջ 48-59; **Նույնի**, Շահ Աբաս Ա-ի կազմակերպած հայ բնակչության բռնագաղթի տարածքային ընդգրկման խնդիրը, «Հայագիտության հարցեր», 2019, թ. 3, էջ 49-65:

րի վերաբերյալ դասախոսություններ և զեկուցումներ ենք ներկայացրել ՀՀ-ում, ԱՄՆ-ում, ՌԴ-ում և Սերբիայում:

Մենագրության առանձին դրույթների մշակման գործում օգտակար խորհուրդներով մեզ օգնելու և հետազոտության իրականացմանն աջակցելու համար շնորհակալություն ենք հայտնում պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանին, պ.գ.թ. Գեղամ Բադալյանին, պ.գ.դ., պրոֆ. Արտակ Մովսիսյանին, պ.գ.դ., պրոֆ. Վահան Բայբուրդյանին, պ.գ.թ. Արման Մալոյանին, պ.գ.թ., դոց. Հովիկ Գրիգորյանին, պ.գ.դ., պրոֆ. Հայրապետ Մարգարյանին, ծ.գ.դ. Տ. Աբրահամ քին. Մալխասյանին, պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Արամ Սիմոնյանին, կ.գ.թ. Լևոն Ասատրյանին, պ.գ.դ., պրոֆ. Հայկազ Հովհաննիսյանին, պ.գ.դ., պրոֆ. Էդիկ Մինասյանին, պ.գ.թ., դոց. Հակոբ Մուրադյանին, պ.գ.դ., պրոֆ. Աշոտ Փիլիպոսյանին, պ.գ.դ. Վահան Տեր-Ղևոնդյանին, պ.գ.դ., պրոֆ. Արման Եղիազարյանին, պ.գ.թ., դոց. Արտաշես Շահնազարյանին, պ.գ.թ. Տիգրան Գևորգյանին, պ.գ.թ. Արմեն Վիրաբյանին, պ.գ.դ., պրոֆ. Հայկ Ավետիսյանին, պ.գ.թ., դոց. Մխիթար Գաբրիելյանին, ա.գ.թ., դոց. Գուրգեն Հովհաննիսյանին, պ.գ.թ., դոց. Ավետիս Հարությունյանին, ս.գ.դ., պրոֆ. Արթուր Մկրտիչյանին, պ.գ.թ., պրոֆ. Պետրոս Հովհաննիսյանին, կ.գ.դ., պրոֆ. Հրաչիկ Միրզոյանին, ա.գ.թ., դոց. Սեյրան Սուվարյանին, պատմաբան Լենա Ասրյանին, բ.գ.թ. Խաչիկ Հարությունյանին, ինչպես նաև ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի բաժնի, ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի և Մատենադարանի թվայնացման բաժնի աշխատակիցներին:

ԳԼՈՒԽ Ա
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
16-ՐԴ ԴԱՐՈՒՄ

1.1. Ժողովրդագրական գործընթացների միտումները
և առանձնահատկությունները

16-րդ դարի սկզբին Սեֆյան Պարսկաստանի նվաճողական քաղաքականության և հատկապես 1514-1639 թթ. թուրք-պարսկական պատերազմների ժամանակ ռազմադաշտի վերածված Հայաստանը և հարևան հայաբնակ շրջանները սուլայի կորուստներ են կրել ռազմական գործողություններից ու դրանց հետևանքներից: Խ. Թուլյանի հաշվարկներով՝ մի քանի հարյուր հազար հայ խաղաղ բնակիչներ են մահացել, զգալի թվով փախստականներ էլ տեղափոխվել են Օսմանյան կայսրության արևմտյան շրջաններ (Կոստանդնուպոլիս, Ջնյուռնիա, Պրուսա, Քյոթահիա) և Եվրոպա⁵⁴: Ռազմաքաղաքական այս իրադրությունը նոր իրականություն է ստեղծել ժողովրդագրական գործընթացների միտումների համար, ուստիև այդ գործընթացները Հայաստանում 16-րդ դարում աչքի են ընկել մի շարք առանձնահատկություններով՝ հայ բնակչության զանգվածային տեղահանումներ, հաճախակի կրկնվող սով և ժանտախտ, օտար էթնիկական տարրի ներթափանցում, մանկահավաքություն և այլն⁵⁵, որոնց անդրադառնալուց առաջ հարկավոր է պարզել դրանք պայմանավորող գործոնները:

Հայաստանի բնակչության թիվը մոնղոլական արշավանքների նախօրյակին, ըստ Թ. Հակոբյանի հաշվարկների, շուրջ 5

⁵⁴ Տե՛ս **Tololyan Kh.**, Armenian Diaspora, in Encyclopedia of Diasporas: Immigrant and Refugee Cultures Around the World, Editors: M. Ember, C. Ember, I. Skoggard, New York: Springer Science+Business Media Inc., 2005, էջ 39:

⁵⁵ Օտար էթնիկական տարրի ներթափանցումներին և մանկահավաքությանը կանդրադառնանք հաջորդ ենթագլխում:

մն է եղել, որից մոտ 4,5 մլն՝ գյուղական, 0,5 մլն՝ քաղաքային բնակչություն⁵⁶: Մոնղոլական տիրապետության շրջանից Հայաստան մուտք գործած քոչվորական տնտեսվարման ձևը զգալի հարված է հասցրել տեղաբնիկ նստակյաց հասարակության ավանդական հողատիրության համակարգին և երկրագործական մշակույթին՝ արտագաղթի հսկայական ալիքի պատճառ դառնալով: 14-րդ դարի վերջին Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր ենթարկվել են Լենկ-Թեմուրի արշավանքներին, որոնք տասնյակ հազարավոր մարդկանց կյանք են խլել: Չնայած տեղի ունեցող ոչ նպաստավոր էթնոգործընթացներին, հայ բնակչությունը շարունակել է կազմել բնակչության գերակշիռ մեծամասնությունը: Անգամ թուրք հեղինակ Ջ. Տոգանը «Ներածություն թուրքերի պատմության» աշխատության մեջ խոստովանում է. «Մեծ Հայք կոչված Արևելյան Անատոլիայում հայերը XIII-XIV դարերում կազմում էին բնակչության մեծամասնությունը»⁵⁷: 15-րդ դարում թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում կարակոյունլուների և ակկոյունլուների միջև մրցակցության պայմաններում տեղի են ունեցել հայ բնակչության բռնագաղթեր, հայության տարբեր զանգվածներ բռնել են արտագաղթի ուղին:

Հայկական պետականության և պաշտոնական-պետական վիճակագրության բացակայության պայմաններում հնարավոր չէ հստակորեն հաշվարկել Հայաստանի բնակչության թվաքանակը 16-րդ դարում կամ դրան նախորդող ժամանակահատվածում: Սկզբնաղբյուրների տեղեկություններից ելնելով՝ Մ. Զուլալյանն իրավացիորեն գտնում է, որ 16-րդ դարում Հայաստանի

⁵⁶ Տե՛ս **Հակոբյան Թ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), 5-րդ հրատ., Երևան, 2007, էջ 361:

⁵⁷ **Togan Z.**, Umumi Türk Tarihine Giriş, Ankara, 1946, s. 197 (հղումը տե՛ս՝ **Զուլալյան Մ.**, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Երևան, 1995, էջ 104):

բնակչության մեծամասնությունը շարունակում էին մնալ գյուղացիները⁵⁸: Նման պարագայում անհրաժեշտ է դիտարկել այն հնարավորությունները, որոնցով ավանդական (մինչարդյունաբերական) վերարտադրության պայմաններում, ինչը բնորոշ էր ուշմիջնադարյան Հայաստանին, կարող էր փոփոխությունների ենթարկվել բնակչության թվի աճի դինամիկան: Նախևառաջ պետք է նշել, որ բնական ռեսուրսների քանակի և տեղաբաշխման, հողային ռեսուրսների և դրանց տնտեսական կարգավիճակի կայունությունը հանգեցնում են նրան, որ ավանդական վերարտադրության պայմաններում բնակչության թիվը պարզ վերարտադրություն է գրանցում: Հակառակն է լինում այն ժամանակ, երբ արտադրության (արհեստագործական կամ գյուղատնտեսական) կտրուկ աճ է գրանցվում, ավելանում է աշխատանքի պահանջարկը, հետևաբար աճում են աշխատատեղերը, և բնակչության զգալի աճ է լինում: Բնակչության թվի կտրուկ նվազման պատճառ կարող էր լինել համաճարակը, օրինակ՝ ժանտախտը: Եվրոպայի ժողովրդագրական զարգացման ուշմիջնադարյան և նոր դարերի վաղ շրջանը դիտարկելիս աչք են զարնում բնակչության տեղաբաշխման միտումների հետևյալ տարբերությունները. Հոլանդիայի հողային ռեսուրսների կայունության պատճառով բնակչության թիվը չնչին աճ է գրանցել, իսկ Արևելյան Եվրոպայում՝ Վիսլայից մինչև Ուրալյան լեռներ, բնակչությունը քառապատկվել է, քանի որ յուրացվել են գյուղատնտեսական նոր տարածքներ⁵⁹:

Հայաստանի տարածքում երկրագործական նոր հողահանդակների յուրացման հնարավորությունները սահմանափակ էին, քանի որ երկրագործական աշխատանքների համար պի-

⁵⁸ Տե՛ս **Зуляян М.**, Армения в первой половине XVI в., Москва, 1971, էջ 34:

⁵⁹ Տե՛ս **Бачи М.**, նշվ. աշխ., էջ 8-9:

տանի հողերի (դաշտերի) գերակշիռ մեծամասնությունը հարյուրամյակներ և նույնիսկ հազարամյակներ շարունակ յուրացված էին, ուստի բնակչության շատ կտրուկ աճ դժվար էր պատկերացնել: Նման պայմաններում գյուղատնտեսական աշխատանքների հաճախակի խաթարումն ու գյուղատնտեսական արտադրանքի կրճատումը, ինչպես նաև առևտրի՝ առնվազն տեղային սահմանափակումները, որոնք անխուսափելի էին պատերազմների պատճառով, կարող էին հանգեցնել բնակչության նվազման: Այս համատեքստում տեղին է Իռլանդիայի օրինակը, որի բնակչության թվի կրկնակի նվազման պատճառը 19-րդ դարում արդյունաբերացման նախօրյակին գյուղատնտեսության թույլ համակարգի վրա բնակչության մեծ թվի գերբեռնումն էր: Այսպիսով, ռեսուրսների ծավալի անփոփոխ լինելը և որոշակի շրջաբաժանումը հանգեցնում են գյուղական բնակչության թվի կայունության, իսկ նոր ռեսուրսների ստեղծումը (հողերի յուրացում, արդյունաբերական զարգացում, առևտրի ընդլայնում) նպաստում է բնակչության թվի արագ աճին: Համաճարակներն ու սպառողական մեծ բեռը շրջակա միջավայրի վրա առաջ են բերում ժողովրդագրական ճգնաժամեր: Ընդ որում՝ միջավայրի, կյանքի պայմանների և սոցիալական կառուցվածքի առանձնահատկությունները կարող են ապահովել բնակչության թվի երկարատև աճ կամ ընդհակառակը⁶⁰:

Հատկանշական է, որ, ըստ Ի. Պետրուշևսկու, 16-րդ դարում Արևելյան Հայաստանում դեռևս պահպանվել էր երկրագործ գյուղական համայնքների կայունությունը⁶¹: Էլ ավելի կարևոր է ընտանիքի ավանդական մոդելի պահպանումը: Սակայն երկարաժամկետ գործընթացներն ապահովող գործոնների կող-

⁶⁰ Տե՛ս **Бачи М.**, նշվ. աշխ., էջ 9:

⁶¹ Տե՛ս **Петрушевский И.**, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв., Ленинград, 1949, էջ 73:

քին առկա են նաև ժողովրդագրական փոփոխությունները սահմանափակող գործոններ՝ տարածքը և ազատ հողերի առկայությունը, սննդամթերքի արտադրությունը և սննդի ռեժիմը, համաճարակային իրավիճակը⁶², որոնք ավելի արագ կարող են փոփոխվել: Բնական պայմաններում այս գործոնները դանդաղ են փոխվում, սակայն ռազմաքաղաքական իրավիճակը և ժողովրդագրական քաղաքականությունը կարող են կտրուկ փոփոխություններ բերել կոնկրետ տարածքի բնակչության, երբեմն՝ կոնկրետ էթնիկական հանրության ժողովրդագրական համակարգի բաղադրիչների՝ ամուսնության, ծնելիության, մահացության, մոբիլության և միգրացիայի վրա: Այստեղ ավելորդ չի լինի նշել, որ Արևմտյան Հայաստանում հայերի շրջանում ծնելիության գործակիցը շարունակել է բարձր լինել անգամ Օսմանյան կայսրության տիրապետության պայմաններում, քանի որ երկարատև աճ ապահովող գործոններից մեկի՝ սոցիալական կառուցվածքի տեսանկյունից անփոփոխ է մնացել նահապետական ընտանիքը, սակայն գյուղատնտեսության զարգացման ցածր տեմպերը և հետևաբար ռեսուրսների ծավալի ցածր աճը ծնելիության բարձր տեմպերի պահպանման պայմաններում հանգեցրել են արդեն 19-րդ դարում բնակչության թվի աճի դանդաղեցման միայն արտագաղթի հաշվին: Փաստորեն, ժողովրդագրական համակարգի բաղադրիչներից լուրջ փոփոխության է ենթարկվել միայն միգրացիան, որը պայմանավորել է նաև բնակչության խտության տեղային փոփոխություններ, իսկ մյուս բաղադրիչներից ամուսնությունը և ծնելիությունը լուրջ փոփոխություններ չեն կրել ավանդական ընտանիքի և ռեսուրսների կայունության շնորհիվ:

Ծնելիության մակարդակի մասին պատկերացում կազմելու համար փորձել ենք հայերեն ծեռագրերի հիշատակարաններ

⁶² Տե՛ս **Бачи М.**, նշվ. աշխ., էջ 10, 12:

րից դուրս բերել ընտանիքի անդամների թիվը: 16-րդ դարի հիշատակարաններում թվարկումը հաճախ անորոշ կամ անկանոն է, օրինակ՝ 1575 թ. Արցախի Վարանդա գավառում գրված մի հիշատակարանում Հովհաննես գրիչը հիշատակում է «զիւր ծնաւոյնսն և զիւր զաւակսն»⁶³: Նման պայմաններում հաշվարկի համար 2013-2016 թթ. դիտարկել ենք 16-րդ դարում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններ Սողքից, Սանահնից, Համշենից, Թոխատից, Գավառից (խաչքար), Կեղիից, Վարազավանքից, Արճեշի Ասպիսնակ գյուղից, Հաքյարիի Գավառի գավառակի Կարպեւա գյուղից, Խլաթից, Ոստանից, Վանից, Մոկսի Բոլենց գյուղից և այլ բնակավայրերից: Դրանցում ներկայացված են ընտանիքի՝ համապատասխանաբար 7⁶⁴, 10⁶⁵, 7⁶⁶, 9⁶⁷, 6⁶⁸, 6⁶⁹, 9 (2 ընտանիք)⁷⁰, 9 (2 ընտանիք) և 7⁷¹, 8⁷², 8⁷³, 7⁷⁴, 8⁷⁵, 8 և 4⁷⁶, 6⁷⁷ և 8⁷⁸ անդամ: Միջին գործակիցը ստացվում է շուրջ 7.6:

⁶³ ՄՄ, ձեռ. № 4375, էջ 122բ:

⁶⁴ Տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի», կազմեց՝ Լ. Մելիքսեթ-Քեկ, «Բանբեր Մատենադարանի», թ. 4, Երևան, 1958, էջ 384-385:

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 387:

⁶⁶ Տե՛ս «Հայերեն ձեռագրեր Հյուսիսային Ամերիկայում», կազմեց՝ 2. Արզումանյան, «Բանբեր Մատենադարանի», թ. 11, Երևան, 1973, էջ 385-387:

⁶⁷ Տե՛ս **Ուլուքբայան Բ.**, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 349-353:

⁶⁸ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. IV, էջ 108:

⁶⁹ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 246:

⁷⁰ Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ե, № 1524, էջ 303:

⁷¹ Տե՛ս նույն տեղում, № 1624, սյ. 677-678:

⁷² Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ը, № 2605, սյ. 677-678:

⁷³ Տե՛ս նույն տեղում, № 2665, սյ. 1038:

⁷⁴ Տե՛ս նույն տեղում, № 2670, սյ. 1060:

⁷⁵ Տե՛ս նույն տեղում, № 2671, սյ. 1064:

⁷⁶ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 5520, էջ 280ա-բ:

⁷⁷ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 4216, էջ 308բ-309ա:

2016-2020 թթ. շարունակել ենք տվյալների դուրսբերումը ձեռագրերի հիշատակարաններից: 1539 թ. հիշատակարանում գրիչ Գաբրիել դպիրը նկարագրում է ձեռագրի պատվիրատու Ստեփաննոսի ընտանիքը՝ թվարկելով ծնողներին, կնոջը և 4 որդիներին⁷⁹: Քանի որ նրա քույրերի և եղբայրների մասին հիշատակություն չկա, հետևաբար կարելի է ստանալ միայն նրա ընտանիքի անդամների թիվը՝ 6: 1575 թ. Խլաթի Սողաձ գյուղում գրված հիշատակարանում Կարապետ գրիչը հիշատակում է ձեռագրի ստացող Մարտիրոս արեղայի ծնողներին և 3 եղբայրներին⁸⁰, հետևաբար արեղայի ծնողների մոնոգամ ընտանիքը կազմված է եղել առնվազն 6 անդամներից, քանի որ իգական անդամները կարող էին թվարկված չլինել⁸¹: Նույն պատկերն է 1566 թ. Վանի Ուրանց գյուղում ձեռագրի ստացողներից Տեր Կարապետի պարագայում՝ 6 (7) անձինք, ծնողներ և 3 եղբայրներ, բայց այն տարբերությամբ, որ հիշատակվում է հանգուցյալ մորից հետո հոր երկրորդ կինը⁸²: 1596 թ. հիշատակարանում թվարկված են մի գյուղապետի գերդաստանի 3 ընտանիքներ՝ համապատասխանաբար 5, 7 և 5 անդամներով⁸³: Շատ հաճախ են հանդիպում իշխանական ծագմամբ «պարոններ»-ի և նրանցից հոգևոր դասը համալրած «պարոնտերեր»-ի հիշատակությունները, օրինակ՝ 1552 թ. մի հիշատակարանում պարոնտեր Մելիքսեթ արքեպիսկոպոսի եղբայր պարոն Մելիք բեկի ավագ

⁷⁸ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 159:

⁷⁹ Տե՛ս «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան», էջ 157:

⁸⁰ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Ա, էջ 401:

⁸¹ Հաճախ կանայք կանոնավոր կերպով թվարկված են (տե՛ս օրինակ՝ 1538 թ. Գլակավանքում գրված Շարակնոցի հիշատակարանում՝ «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Դ, ս. 159-160):

⁸² Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Գ, էջ 140:

⁸³ Տե՛ս «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի», հ. Ա, էջ 358-359:

որդի Մելիք Շահնազարը և ընտանիքի ոչ միայն արական, այլև նույնիսկ իգական սեռին պատկանող մյուս անդամները կրում են «պարոն» տիտղոսը⁸⁴: Այստեղ էլ թվարկված 2 ընտանիքներում կան 4 և 9 (1-ը՝ հիշատակման պահին հանգուցյալ էր) անձինք⁸⁵: Նույն մոտեցմամբ դուրս ենք բերել ընտանիքների անդամների թվի վերաբերյալ հետևյալ տվյալները. 1520-ական թթ. Վասպուրականի Արծակի (Առջակի) վանք՝ 6, 10⁸⁶, 1566 թ. Մելիտենե (Մալաթիա)՝ 4, 4⁸⁷, 1580 թ. Սեբաստիա՝ 5, 4⁸⁸, 1587 թ. Պառագրկուս վանք՝ 6⁸⁹, 1589 թ. Խիզան՝ 6, 5, 3, 6, 6, 4, 5⁹⁰: Այս տվյալները որոշ չափով նվազեցնում են մեր կողմից կատարված նախընթաց հաշվարկների արդյունքը: Բոլոր տվյալների ընդհանուր համադրությամբ ստանում ենք 6.54 գործակիցը, սակայն միջին քառակուսային շեղումը մոտ է 1-ի, ինչը տրամաբանական է նաև երբեմն ոչ կանոնավոր թվարկումների պատճառով, հետևաբար շարունակում ենք ընդունելի համարել մեր նախընթաց հաշվարկի արդյունքը՝ 7.5-7.6-ի սահմաններում:

Շատ հաճախ հանդիպում են դեպքեր, երբ ընտանիքի անդամները չեն թվարկվում, օրինակ՝ 1597 թ. հիշատակարանում Ղազար կրոնավորն ընդհանրապես չի թվարկում ընտանիքի անդամներին⁹¹, իսկ 1588 թ. հիշատակարանում գրիչ Սամուել

⁸⁴ Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսալայի մասնաւոր հաաքումներո», հ. Ա, էջ 10-11:

⁸⁵ Տե՛ս նույն տեղում:

⁸⁶ Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ», հ. Բ, ս. 383:

⁸⁷ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Ժ, էջ 87:

⁸⁸ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Թ, էջ 192-193:

⁸⁹ Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ», հ. Ը, ս. 663-668:

⁹⁰ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Զ, էջ 492-493:

⁹¹ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Դ, էջ 132-133:

սարկավագը միայն հանգուցյալ մորն է մատնանշում⁹²: Նույն օրինակով 1543 թ. Խիզանում գրված «Մաշտոց» ծիսարանի հիշատակարանում նշված են միայն պատվիրատու Տեր Ներսեսի ծնողները⁹³, իսկ 1572 թ. մեկ այլ խիզանցու⁹⁴ և նույն 16-րդ դարում Կարապետ Բաղիշեցի գրչի⁹⁵ ընտանիքների պարագայում թվարկում ընդհանրապես չկա: Ծնողների հիշատակմամբ բավարարվելու միտումը նկատելի է բազմաթիվ հիշատակարաններում. 1551 թ. Ավետարանի հիշատակարանում գրիչ Հովհաննես երեցը թվարկում է միայն ծնողներին⁹⁶, իսկ 1592 և 1593 թթ. Երզնկայի Ս. Երրորդության եկեղեցում գրված հիշատակարաններում գրիչ Մինաս երեցը նշում է ոչ միայն ծնողներին, այլև՝ ուսուցչին⁹⁷: 1577 թ. մի հիշատակարանում Վարդան գրիչը նշում է, որ նորոգել է ձեռագիր մատյանն ի հիշատակ խոջա Զաքարին «և իւր ծնօղացն և իւր ամէն մերձաւորացն»⁹⁸: Նմանատիպ ընդհանրական հիշատակություն է տեղ գտել Սեբաստիայի Մանճլիս գյուղում 1569 թ. գրված մի հիշատակարանում, որում գրիչ Հովհաննես երեցը թվարկման մեջ սահմանափակվում «եւ զծնաւոլսն իմ, եւ զեղբարս և զորդիս եւ զիրիցակինն զգառնուլն» ձևակերպմամբ⁹⁹: 1584 թ. Գլակավանքում գրված հիշատակարանում նույն միտումը նկատվում է ձեռագիրը փրկագնելու նպա-

⁹² Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Ե, էջ 95:

⁹³ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Է, էջ 215-216:

⁹⁴ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Ը, էջ 171:

⁹⁵ Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Ե, ս. 567-568:

⁹⁶ Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Ա, ս. 534:

⁹⁷ Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Գ, ս. 422-424, 426:

⁹⁸ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի եւ Անթիլիասի ու մասնաւորաց», հ. Բ, էջ 91:

⁹⁹ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. ԺԱ, էջ 384:

տակը նկարագրելիս՝ ազատել է «յիշատակ Տէր Անանիային եւ իւր ո(ր)դոցն Տէր Ազարիային եւ այլոցն»¹⁰⁰: Փաստորեն, թվարկումն անավարտ է: 1523 թ. Վանում գրված հիշատակարանում էլ թվարկման հստակ մոտեցում նկատելի չէ. Ջաքարիա գրիչը հիշատակում է միայն ծնողներին և սարկավագ որդուն¹⁰¹:

Ժողովրդագրական իմաստով հետաքրքիր է հեղինակների կամ գրիչների կողմից անձնապես իրենց առնչվող տեղեկությունների շարադրումը: Այսպես, Անդրեաս ժամանակագիրը հաղորդում է, որ իր եղբայրներից մեկը մահացել է 14 տարեկանում, իսկ ինքն էլ ծնվել է 1541 թ.¹⁰², ամուսնացել 20 տարեկանում և որդի ունեցել 22 տարեկանում, ով մահացել է 1579 թ.¹⁰³ 16 տարեկանում, իսկ մինչ այդ 1569 թ. մահացել է 4 տարին դեռ չբոլորած դուստրը, և ծնվել է ևս մեկ որդի, որը մահացել է 1585 թ.¹⁰³: Նա 2 որդիներ է ունեցել նաև 39 և 43 տարեկանում, ևս մեկ դուստր՝ 46 տարեկանում¹⁰⁴: Այսպիսով, գրիչը 6 զավակ է ունեցել, որոնցից 3-ը բավականին վաղ են մահացել, բայց նա շարունակել է զավակներ ունենալ անգամ բավականին պատկառելի տարիքում: Սա նշանակում է, որ ծնելիության մակարդակը շարունակում էր զգալիորեն բարձր լինել, սակայն բարձր էր նաև մահացության գործակիցը, որն առանձնակիորեն արտահայտվում էր մանուկ և պատանի տարիքային խմբերում: Մանկամահացության բարձր մակարդակին նպաստում էին առողջապահության ոչ բավարար պայմանները և համաճարակները:

¹⁰⁰ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. 2, ս. 53-54:

¹⁰¹ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Բ, էջ 34:

¹⁰² Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 157:

¹⁰³ Տե՛ս նույն տեղում, էջ 158, 159:

¹⁰⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 159:

Այսպիսով, 16-րդ դարի սկզբին Հայաստանում ռազմաքաղաքական իրադրության պայմաններում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների վրա ազդող գործոններն էին մի կողմից՝ կյանքի վատթարացող պայմանները և միաժամանակ ամուր ներէթնիկ սոցիալական կառուցվածքը, մյուս կողմից՝ տարածքի յուրացվածության բարձր աստիճանը (ազատ հողերի սակավությունը), սննդամթերքի արտադրության խաթարումները (պատերազմական իրավիճակի պատճառով երկրագործական աշխատանքներն ընդմիջվում էին, իսկ անասունների թալանը սովորական բնույթ էր կրում) և հաճախ կրկնվող համաճարակները (հատկապես՝ ժանտախտը):

Թուրք-պարսկական պատերազմական գործողությունների ընթացքում սովորական բնույթ էին կրում տարբեր բնակավայրերի ավերածությունները և թալանը, որոնք, փաստորեն, խաթարում էին սննդի արտադրության ցիկլի բնականոն ընթացքը: Օսմանյան կայսրության ամրապնդման գրավականներից էր նորանվաճ հողերում տեղաբնիկների զանգվածային բռնագաղթը (սյուրգյունը) և թյուրքական տարրի բնակեցումը, որի առաջին օրինակներն ի հայտ են եկել դեռևս Օրհան Ա-ի (1326-1362) ժամանակներում¹⁰⁵: Սեֆյանների կողմից Հայաստանի նվաճման, այնուհետև հատկապես թուրք-պարսկական պատերազմների ժամանակ Հայաստանից հարյուրիազարավոր հայեր գերեվարման են ենթարկվել, որոնց մի մասը վերաբնակեցվել է, մյուս մասը՝ ստրկության վաճառվել¹⁰⁶: Նմանօրինակ քաղաքականության հետևանքները տեսնելու համար ստորև ներայացնում ենք

¹⁰⁵ Տե՛ս **Շաքարյան Ա.**, Բռնագաղթն ու մանկահավաքը որպես Օսմանյան կայսրությունում ժողովրդագրական վերադասավորման միջոցներ, «Մերձավոր Արևելք», հ. II, Երևան, 2005, էջ 59-62:

¹⁰⁶ Տե՛ս **Խառատյան Ա.**, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Երևան, 2007, էջ 331:

պատերազմական գործողությունների ժամանակ այն իրադարձությունները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտացոլվել են ժողովրդագրական գործընթացների համատեքստում:

Հակոբ Կարնեցու «Ժամանակագրության» (17-րդ դար) համաձայն՝ 1501 թ. Սեֆյան շահ Իսմայիլ Ա-ն (1501-1524) «առաքեաց զօրս բազումս երկիրս Հայոց՝ գերեաց. աւերեաց և ասպատակեաց բազում գիւղք և գաւառք»՝ հասնելով մինչև Խաղտյաց (Բաբերդի) գավառ¹⁰⁷: Դեպքերին ժամանակակից կամախեցի Վրթանես գրիչը նույն իրադարձությունների առիթով 1501 թ. գրում է, որ Սեֆյանների ասպատակությունների պատճառով իր գավառակիցների հետ ստիպված է եղել հեռանալ հայրենի հողից¹⁰⁸: Մեկ այլ սկզբնաղբյուրի համաձայն՝ 1501 թ. Սեֆյանների ներխուժման արդյունքում Երզնկայից մեծ թվով հայեր փախել են դեպի արևմուտք¹⁰⁹: 1504 թ. Սանահնում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում խոսվում է Սեֆյանների նորահաստատ տիրապետության խիստ հարկապահանջության պատճառով վանքի հոգևոր սպասավոր Խաչատուր քահանայի սպանության և տեղի հայության՝ դեպի հյուսիս՝ «ընդ իշխանութին Վրաց» փախուստի մասին¹¹⁰: Փաստորեն, Սեֆյանների նվաճողական գործողություններն արտագաղթի պատճառ են դարձել: Գուգարքում քանիցս հանդիպում են պատերազմում զոհվածների մասին վիմագիր տեղեկություններ, ինչպես օրինակ՝ Սանահնի գավթի 1506 թ. տապանաքարի արձանագրությունը, որտեղ նշվում է հոր և երկու որդիների մահը «ի պատերազմի»¹¹¹:

¹⁰⁷ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 239:

¹⁰⁸ Տե՛ս Зулалян М., Армения в первой половине XVI в., էջ 62:

¹⁰⁹ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 130:

¹¹⁰ Տե՛ս «Հայերեն ձեռագրեր Հյուսիսային Ամերիկայում», էջ 387-389:

¹¹¹ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. IX, էջ 48:

Իրադարձությունները հետաքրքիր ընթացք էին ստանում Վանա լճի ավազանում, որտեղ Սեֆյան բանակը բախվեց քրդական ցեղախմբերի հետ: 1501 թ. Քաջբերունիքում (Արճեշում) նկարագրվող դեպքերի մասին ժամանակակից Բարսեղ Արճիշեցին նշում է, որ քաղաքի բնակչությունը քրիստոնյաներ են, որոնք օտար նվաճողների ծանր հարկապահանջության պատճառով ընտանիքներով 3 ամսով հեռացել են Վան, Ոստան, Արծկե և Բաղեշ¹¹²: 1501 թ. Բաղեշի քրդերը գրավել են Արծկեն և այրել ու ավերել նորաշեն տները¹¹³: Այս գործողությունների պատճառով 1502 թ. հայ բնակչությունը մի քանի ամսով փախուստի է դիմել Արճեշից: Այս բախումներն ուղեկցվել են նաև հայ բնակչության պարենամթերքի թալանով, օրինակ՝ Արճակ լճից հարավ-արևելք գտնվող Սևանի բերդի քրդերը 1503 թ. Արճեշը թալանել և 1210 բեռ հաց են տարել¹¹⁴: Սեֆյանները շուտով անցել են պատասխան գործողությունների, եկել Արճեշի գավառ, հայերից բռնի կերպով ծանր հարկեր հավաքել, «յելանելն բազում կին և հարսն գերի վերուցին»՝ գերեվարելով 400 պատանի և 1000 տավար¹¹⁵: Նման գործողություններն սկսում են սովորական բնույթ կրել: 1504 թ. Տարոնի դաշտում գտնվող քրդական և թուրքական 500 ձիավորներ ներխուժել են Քաջբերունիք և տարել Արճեշի ու գյուղերի բոլոր անասունները¹¹⁶:

Սեֆյանները կարճ ժամանակով կարողացան նվաճել ամբողջ Հայաստանը, սակայն 1514 թ. Չալդրանի ճակատամարտում Սեֆյաններին պարտության մատնելուց հետո սուլթան Սե-

¹¹² Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 127:

¹¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 130:

¹¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 127:

¹¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 127-128:

¹¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 128:

լիւմ Ա Ահեղը (1512-1520) 1515 թ. գրավում է Կամախը¹¹⁷, 1516 թ.՝ Ամիղը, և Հայաստանի զգալի մասն անցնում է Օսմանյան կայսրության տիրապետության տակ: 1510-ական թթ. երկրորդ կեսին և 1520-ական թթ. Հայաստանի տարածքում հարաբերական անդորր է տիրել, մեծածավալ ռազմական բախումներ չեն հիշատակվում, սակայն իրավիճակը փոխվում է 1530-ական թթ.: 1530 թ. ձեռագրի մի հիշատակարանում ասվում է, որ Արծկեից մինչև Թավրիզ մեծ վրդովման պատճառով «մեք լուեալ փախըստական եղաք և յաշխարհէ յաշխարհ շրջեցաք»¹¹⁸: Դեպքերին ժամանակակից Հովհաննես Արծիշեցու (16-րդ դար) տարեգրության համաձայն՝ 1531-1532 թթ. պարսից շահի դեմ ապստամբած և Օսմանյան կայսրության կողմն անցած Թավրիզի բեկլարբեկ Ուլամայի գործողությունների արդյունքում Բաղեշի քուրդ ամիրա Շարաֆը դիմում է պարսից շահին և ապաստանում նրա մոտ, իսկ շահը շարժվում է Բաղեշ, Մուշ և Խլաթ՝ 1533 թ. գերեվարելով Խլաթի բնակչության մի մասը¹¹⁹: Ուլամայի զորքերը Ամյուկ գավառի Այուր գյուղում «գերի արարին շատ հայ ու տաճկով ի ձեռն անկաւ»¹²⁰: Հեղինակը հետո ներկայացնում է, որ լուրեր տարածվեցին, թե Ուլաման պետք է արշավեր Բերկրիի և Արճեշի բնակչությանը գերելու, և ինքն ու տեղի մնացյալ ժողովուրդը կարճ ժամանակով տեղափոխվել և ամրացել են Հերիձորում (Զարիշատ) և Ալադաղում (Ծաղկանց լեռներ), «և Աստուած խնայեաց զքրիստոնեայքն»¹²¹:

1531-1535 թթ. պարսից բանակը ռազմակալում է Վանի նահանգը, ավերում ու կրակի մատնում Վանը, Ոստանը, Արծ-

¹¹⁷ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 428, 438:

¹¹⁸ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 232:

¹¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 227-228:

¹²⁰ Նույն տեղում:

¹²¹ Նույն տեղում:

կեն: Ժամանակակից հեղինակներն այս իրադարձություններն անվանել են «Վանի աղետ»¹²²: Հովհաննես Արճիշեցին գրում է, որ շահական բանակը 1533 թ. Վանը Ուլամայից գրավելիս 300 մարդու է սրի քաշել, այնուհետև «հեծեալքն ցուրեալ ի չորս դիմաց աւերեցին և անմարդաբնակ արարին. զՎանայ երկիրն, զՈստանայ և զԱմկուն, և զինչ մարդ որ ի ձեռքն անկանէր այնչափ տանջէին... և սաստկացաւ պատուհասն, որն զիրաշալի վանօրայքն և զեկեղեցիքն քակեցին...»¹²³: Հեղինակն այնուհետև ներկայացնում է, որ շահ Թահմասպ Ա-ն (1524-1576) Ամիրաբեկին հանձնարարել է Վանի բերդից իջած մարդկանց Մահմտանք (Խոշաք) տանել, իսկ հաջորդ օրը իջածներին սրի են քաշել¹²⁴: Գաղթի ճանապարհին՝ Վարազա լեռան ստորոտին, սաստիկ ձնաբուք է սկսվել, և 600 մարդ զոհ է գնացել ցրտին: Տեղ հասածները ևս մահացել են, օրինակ՝ Մահմտանքի մեկ գյուղում 80 վանեցի է մահացել: Ռազմական գործողությունների, սովի և ծարավի պատճառով Վան քաղաքում և նրա շրջակայքում 15 հազար մարդ է վախճանվել¹²⁵: Հեղինակը նույնիսկ թվարկում է զոհվածների անուններ, այդ թվում՝ իր հորաքրոջը, որ հարևան 20 ընտանիքների հետ բերդն է բարձրացել, և նրանցից որևէ մեկը ողջ չի մնացել¹²⁶: Վանում ընդօրինակված ձեռագրի մի հիշատակարանում ևս ասվում է, որ 1534 թ. «սպանին բազում քրիստոնեայս և զոմանս գերի վարեցին», զոհվեց 15 հազար մարդ¹²⁷: Նույն թվականի մեկ այլ հիշատակարանում 4 ամսվա կտրվածքով բերված է զոհերի՝ 16 հազար թիվը¹²⁸: Ըստ

¹²² Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, գ. II, էջ 626:

¹²³ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 229:

¹²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 229-230:

¹²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 230:

¹²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 231:

¹²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 233:

¹²⁸ Տե՛ս նույն տեղում:

Վ. Բայբուրդյանի՝ Թահմասպ Ա-ն Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև «մեռյալ տարածություն» ստեղծելու նպատակով բռնի տեղահանության էր ենթարկում սահմանամերձ շրջանների հայ բնակչությանը՝ վերաբնակեցնելով նրանց իր պետության ներքին շրջաններում¹²⁹:

Հովհաննես Արճիշեցու վկայությունները ցույց են տալիս, որ Վանի նահանգում հետագայում ևս հաճախ է ներքին միգրացիան մեծ ծավալներ ընդունել, մասնավորապես՝ երբ օսմանյան բանակը վերստին մտել է բերդ ու նորից որոշել թողնել այն, հայ բնակչության մի մասը գնացել է Մոկս, «և եկեալ շահն ի Վան, և տեսաւ զբերդն անմարդաբնակ և զքաղաքն աւերեալ...»¹³⁰: Ավելի առաջ շարժվելով՝ տեղեկանում է, որ օսմանյան բանակը նորից է ընդառաջ գալիս, «զԱրճիշու բերդի թուանգչիքն հաներ ու զժողովուրդն սուրգուն արեր մինչև յԱրծկէ»¹³¹: Հետաքրքիր է, որ մատենագիրը նշում է, թե Վանի Իբրահիմ փաշան, քաղաք վերադառնալով, «դարձեալ քրիստոնէութիւն արար էր օրինեալ փաշէն ու զամէն ազատ արար, որ եկին յաշխարհն իւրեանց»¹³²: Շահն այդ ժամանակ թալանել է Արծկեից հյուսիս ընկած Սարուսուն (Սարըսու) գավառը, ինչպես նաև Խլաթը, Մուշը, Ոստանը¹³³: Հովհաննես Արճիշեցու վկայությունները կարևոր են նրանով, որ այստեղ հստակ նկատելի է Վանի նահանգի հայության՝ Մոկքում ապաստանելու միտումը, ինչը նկատելի է հաջորդող տասնամյակներում և 17-րդ դարում ևս: Հենց սրանով են պայմանավորված քննարկվող ժամանակաշրջանում հայության գեր-

¹²⁹ Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 17-18:

¹³⁰ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 231:

¹³¹ Տե՛ս նույն տեղում:

¹³² Նույն տեղում:

¹³³ Տե՛ս նույն տեղում:

կենտրոնացումը և ձեռագրական ահռելի ժառանգության առկայությունը Մոկքում:

1533-1535 թթ. Հայաստանի տարածքում թուրք-պարսկական պատերազմական գործողությունների ընթացքում օսմանյան մեծ վեզիր Իբրահիմ փաշայի գլխավորած բանակի կողմից Երևանի, Նախիջևանի և Արցախի տարածքում իրականացված բնակչության թալանը, ինչպես նաև գեղանի աղջիկների և անգամ տղաների գերեվարումն առանձին գլխով նկարագրված է թուրք հեղինակ Իբրահիմ Փեչևիի երկում¹³⁴:

1536-1543 թթ. թուրք-պարսկական ճակատում հարաբերական անդորր է տիրել, և Արևմտյան Հայաստանում Օսմանյան կայսրությունն անցել է իր վարչամեքենայի ամրապնդմանը: 1540 թ. Օսմանյան կայսրությունը Էրզրումի նահանգում աշխարհագիր է անցկացրել, կազմվել են դավթարներ, կանուն-նամեներ, և վերջնականապես անցում է կատարվել օսմանյան կառավարման համակարգին ու հողատիրությանը¹³⁵:

Հայկական սկզբնաղբյուրներում քանիցս հիշատակվում է 1548 թ. շահ Թահմասպ Ա-ի կողմից Արևմտյան Հայաստանի ուղղությամբ ավերիչ արշավանքի մասին: Այսպես, 1548 թ. շահը, ի պատասխան օսմանյան բանակի՝ Թավրիզ արշավանքին, ավերածության ենթարկեց Խնուսը (2 անգամ), Բասենը, Էրզրումը, Կեղին (Քղին), Դերջանը, Բաբերդը, Երզնկան, Սպերը, Բիթլիսը¹³⁶: 1548 թ. Վանի պաշարման ժամանակ, ըստ Էվլիյա Չելե-

¹³⁴ Տե՛ս **Փափագյան Ա.**, Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (XVI-XVIII դդ.), «ՊԲՀ», 1992, թ. 1, էջ 106; «Թուրքական աղբյուրներ», հ. Ա, էջ 34:

¹³⁵ Տե՛ս **Сванидзе М.**, Первый поход Сулеймана I против Ирана 1533-1535 гг. и создание Эрзурумского пашалыка, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. V, Երևան, 2008, էջ 35-36:

¹³⁶ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 474; «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 136, 144, 145, 171-172; հ. 2, էջ 266-267, 355, 393, 518: Նշվածներից միայն մեկ

բիի, սովից և ծարավից բազմաթիվ զոհեր են եղել¹³⁷: Թուրք պատմագիր Սուլաք Զադեն 1549-1550 թթ. պատերազմական գործողությունները նկարագրելիս նշում է, որ ամեն անգամ երբ օսմանյան զորքերը նահանջում էին, Թահմասպ Ա-ն «հարձակվում էր սահմանամերձ շրջանի բնակիչների ու ռայանների վրա և մոտակա բերդերի էմիրներից վրեժխնդիր լինում», ինչպես արեցին Խլաթում և Արճեշում¹³⁸: Հատկանշական է, որ Քյաթիբ Չելեբին Խլաթը 1549 թ. Թահմասպ Ա-ի կողմից ավերումից հետո որպես գյուղաքաղաք է ներկայացնում, որն անգամ շուրջ մեկ հարյուրամյակ անց նախկին մեծությանը չէր հասել¹³⁹:

Ներսես Վարագեցի գրիչը ներկայացնում է, որ 1548-1549 թթ. պատերազմական գործողությունների ժամանակ օսմանյան բանակը ևս այրել է Վանի գյուղերն ու քաղաքները, այնուհետև բերդի շինարարության և զորքի պարենավորման կարիքներին ծառայեցրել տեղի հայ բնակչությանը¹⁴⁰: Այդուհանդերձ, 1550 թ. Թահմասպ Ա-ն գրավել է Վանը, Արարատյան կուսակալությունը, Էրզրումի նահանգը, հասել Երզնկա ու շատ հայերի գերեվարել¹⁴¹: Շուտով պարսկական բանակն ասպատակել է նաև Չըլդըրի (Ախալցխայի) նահանգը: 1551 թ. մի հիշատակարանում ախալցխացի Ամիրխանը պատմում է ձեռագրի՝ պարսկական աս-

տեղում է հիշատակվում Բիթլիսը (տե՛ս նույն տեղում, հ. 1, էջ 171-172): Լ. Խանլարյանն Առաքել Դավրիժեցու երկում ԾԶ գլխի աղբյուրներից է համարում Վարդան Բաղիշեցու ժամանակագրությունը, սակայն Ամիրաս Երզնկացուն է (տե՛ս «Անարժան Ամիրասէ Երլզնկացիլոյ արարեալ է ժողովաճոյ» (այսուհետ՝ **Ամիրաս Երզնկացի**), ՄՄ, ձեռ. № 10200, էջ 766-776) վերագրում տեքստի հիմնական մասի հեղինակ լինելը (տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 535):

¹³⁷ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 232:

¹³⁸ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 144:

¹³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 32-33:

¹⁴⁰ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 6273, էջ 438-440 (հղումը տե՛ս **Ջուլայյան Մ.**, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ, էջ 118):

¹⁴¹ Տե՛ս **Առաքելեան Հ.**, նշվ. աշխ., էջ 24:

պատակիչ արշավանքի ժամանակ գերեվարվելու և իր կողմից փրկագնվելու մասին¹⁴²: Դեպքերին ժամանակակից մեկ այլ գրիչ վկայում է, որ 1552 թ. շահ Թահմասպը «պաշարեաց զծովն բոլոր՝ զՎասպուրականն և զՌշտունիքն, զԲաղէշ և զՏարօնն, զԽլաթ և զԲզնունիքն, զՔաջբերունին և զՏարբերունին, զԽընուս, մինչ ի Յարզըռում, զԱղբակ և զՄահմուտանք...: Հրնակութիւն տեղոյն այնոցիկ քանդեցին, աւերեցին և հըմնայատակ արարին...: ...Եւ գնացեալ ոմն ի Հռոմաց տունն և ոմն ի Քուրդուստունն, ոմն ի Թուրքատան և ոմն ի Գուրջըստուն: Եւ մնաց երկիրն այն հոպանացեալ և անբնակ ի մարդկանէ **տարի մի բոլոր** (ընդգծումը մերն է – Մ.Մ.): ...Եւ մեք միաբանաւ ընդ բազմացն փախուցեալ և ազատեցաք... և եկեալ Վերին Գեղամայ դարիպ և աւտարական. և հասաք շրջագայութեամբ ի յաստուածապահ յամուրն Ծար»¹⁴³: Փաստորեն, նմանօրինակ արշավանքները հանգեցրել են ոչ միայն Հայաստանից տարբեր ուղղություններով արտագաղթի, այլև ներքին միգրացիայի՝ դեպի Հայաստանի՝ հարաբերականորեն ապահով վայրեր, ինչպիսին շատ հաճախ հանդիսացել է հայ մելիքական իշխանության ներքո գտնվող Ծարը: Ուշագրավ է նաև, որ ներքին միգրացիան, ըստ այս հիշատակարանի և վերը քննարկված այլ օրինակների, հաճախ կրել է ժամանակավոր բնույթ: Հիշատակվում են ներքին միգրացիայի այլ օրինակներ ևս: Ըստ Նորատուսի Ս. Աստվածածին եկեղեցու արձանագրության՝ Գեղարքունիքի մելիքական 4 ընտանիքներից մեկը՝ Մելիք-Ազարյանները, այդտեղ են հաստատվել 16-րդ դարի կեսերին՝ տեղափոխվելով Գանձակ (Քյո-

¹⁴² Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ա, № 158:

¹⁴³ ՄՄ, ձեռ. № 6282, էջ 625ա-բ (հղումը տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 275):

սամահմատ) գյուղից¹⁴⁴: Գյուղամիջում կան 1550 և 1553 թթ. թվագրվող ջուղայեցի ընտանիքի խաչքարեր¹⁴⁵, որոնք դաշտային հատվածներից լեռնային տեղանքում ընտանիքներով պատասպարումների լուռ վկաներն են: Հետաքրքիր է Սիսիանի Անգեղակոթ գյուղում 1549 թ. մի վիմագիր արձանագրություն, որտեղ ասվում է 4 եղբայրների կողմից իրենց հոր տապանաքարի կանգնեցման մասին՝ նշելով, որ գյուղը 7 տարի ավերակ վիճակում է եղել¹⁴⁶: Այստեղ փաստվում է ռազմական գործողությունների տարածումը նույնիսկ լեռնային այս շրջանում:

Սեֆյանների ռազմարշավները և «մեռյալ տարածության» ստեղծման քաղաքականությունը շարունակվել է նաև 1553 թ.: Այդ տարի Իգնատիոս գրիչը հաղորդում է, որ Թահմասպ Ա-ն 3 տարի անընդմեջ ամայացրել է Քաջբերունիքը (Արճեշը) և Վանա լճի շրջակայքը, կոտորել բնակիչներին¹⁴⁷: Ժամանակակից հեղինակի հավաստմամբ՝ 1553 թ. շահը Կապանից մինչև Սիս բոլոր քրիստոնյաներին փախուստի է մատնել՝ սպանելով Արճեշի միաբաններին, կտրելով Իսլաթի և Արծկեի այգիները, այրելով Տարոնի արտերը և Բասենը¹⁴⁸:

Օսմանյան կայսրությունը պատասխան գործողությունների է դիմել 1554 թ.: Նրանք գրավել են Արարատյան դաշտը, Նախիջևանը և Սյունիքը: Թուրք պատմիչ Փեչևին նշում է, որ 1554 թ. Շորագյալում (Շիրակում) թուրքերը հիմնովին կործանել ու ավերել են բարեշեն գյուղերը, ապա նույնն արել Երևանում և Նախիջևանում՝ ամայացնելով քաղաքներն ու գյուղերը¹⁴⁹: Թուրք

¹⁴⁴ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. IV, էջ 11, 15:

¹⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 23-24:

¹⁴⁶ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. II, էջ 120:

¹⁴⁷ Տե՛ս **Зулалян М.**, Армения в первой половине XVI в., էջ 81:

¹⁴⁸ Տե՛ս «Ժամանակագրություն (XI-XVIII դդ.)», տպագր. պատրաստեց՝ Ն. Պողարյան, «Բանբեր Մատենադարանի», թ. 9, Երևան, 1969, էջ 275:

¹⁴⁹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Ա, էջ 33:

հեղինակի տեղեկությունները հաստատվում են նաև հայկական սկզբնաղբյուրներով, ընդ որում՝ ասվում է, որ 1554 թ. սուլթան Սուլեյման Ա-ն (1520-1566) Սեֆյանների դեմ արշավանքի ժամանակ այրեց Նախիջևանը և ավերեց «բազում գաւառս ի հայոց»¹⁵⁰, ինչպես նաև «զՅերևան և զՆախջուան զամենայն գերի բերին»¹⁵¹: Փեչևին օսմանյան բանակի վայրագությունների ու երիտասարդների զանգվածային գերեվարման մասին հպարտորեն պատմում է. «Հաղթական բանակի սարսափից քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերն այն աստիճան ամայացել, ավերվել և բուերի ու ագռավների բնակավայրեր էին դարձել, որ տեսնողին սարսափ էին պատճառում»¹⁵²:

Այսպիսով, 1548-1554 թթ. ռազմական գործողությունների անմիջական հետևանքը դարձան Բարձր Հայքի, Տուրուբերանի, Վասպուրականի, Արարատյան դաշտի, Շիրակի, Սյունիքի, Նախիջևանի և հայկական այլ տարածքների ցանքատարածությունների մեծ մասի ոչնչացումն ու բնակչության սնանկացումը¹⁵³: Սա էլ իր հերթին նպաստում էր տեղաբնիկ բնակչության շրջանում ժողովրդագրական ճգնաժամի առաջացմանը: Առանձնակի բարձր է եղել մահացության գործակիցը, ինչն ապացուցվում է ոչ միայն մատենագրական տեղեկություններով, այլև հնագիտական նյութերով: Ուսումնասիրելով Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններում (ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերում, ԼՂՀ-ում և Գանձակ-Գարդմանում) 16-րդ դարի՝ միայն հստակ թվագրում ունեցող շուրջ 540 տա-

¹⁵⁰ «Ժամանակագրություն (XI-XVIII դդ.)», էջ 277:

¹⁵¹ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 157: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ 1554 թ. սուլթանը բազում գերիներ է տարել Նախիջևանից. «...նստաւ ի Նախջուան զՍահաթն աւերեաց, և զբազում գերիս արար» (**Առաքել Դավրիժեցի**, էջ 474: Հմմտ. «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 144, 145):

¹⁵² «Թուրքական աղբյուրներ», հ. Ա, էջ 33:

¹⁵³ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 84:

պանագրերն ու խաչքար-մահարձանների վիմագրերը՝ հաշվարկի միջոցով դուրս ենք բերել ուշագրավ վիճակագրություն: Ըստ այդմ՝ մեր կողմից հաշվարկված 540 թվակիր տապանաքարերից և խաչքար-մահարձաններից 88-ը 1548-1554 թթ. են թվագրվում՝ վերաբերելով շուրջ 100 անձի¹⁵⁴: Փաստորեն, ստացված թիվն ընդհանուրի մեջ ավելի քան 16 % է կազմում, ինչը ցույց է տալիս մահացության գործակցի՝ ակնհայտորեն բարձր լինելու փաստը:

1555 թ. մայիսի 29-ին կնքված Ամասիայի հաշտության պայմանագրով Հայաստանը բաժանվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև¹⁵⁵: Պայմանագրով Կարսի շրջանը չեզոք գոտի էր դառնում երկու տերությունների միջև: Այդ գոտու սահմաններն արևելքում հասնում էին մինչև Ախուրյան գետ, հարավում՝ Հայկական պար լեռնաշղթա (Կաղզվանի շրջանում), հյուսիսում՝ Կարսի սարահարթի հյուսիսային եզրամաս (Չըլդըր լճից հարավ՝ Զարիշատի շրջանում), արևմուտքում՝ Կարմիր Փորակի լեռներ¹⁵⁶: Չեզոք գոտու ստեղծումը կատարյալ արհավիրք էր Կարսի շրջանի տեղաբնիկ հայ բնակչության համար, քանի որ տարածքը պետք է ամայացվեր ու անմարդա-

¹⁵⁴ Հաշվարկի համար դիտարկված վիմագրերը տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. II, էջ 120, 121, 122, 124; պր. III, էջ 17-19, 163, 178-179, 185, 186-190, 204-205; պր. IV, էջ 23-24, 52-63, 65, 80-82, 85-86, 90-91, 94-95, 98-100, 107, 113-115, 118, 130, 131-134, 137-141, 171-173, 178, 179-181, 192-193, 200, 206-207, 210-213, 215-220, 231-233, 236-241, 244-247, 248-250, 254-259, 269-275, 285, 294-295, 305-307, 309-310, 319-325, 329-332, 351-352, 356-359, 361, 364-367, 372-374; պր. V, էջ 95-96, 159, 220, 222, 233-237, 243, 244, 246; պր. IX, էջ 47-48, 221, 223, 296-297, 320-321, 323-328, 444-445:

¹⁵⁵ Օսմանյան կայսրության համար պայմանագրի կարևորության մասին տե՛ս **Vercellin G.**, *Solimano il Magnifico*, Firenze: Giunti Dossier, 1997, էջ 14:

¹⁵⁶ Տե՛ս **Բաղայան Գ.**, Հայաստանը 16-րդ դ.: Պարսկա-օսմանյան պատերազմները (քարտեզ):

բնակ դարձվեր¹⁵⁷: Վրացական սկզբնաղբյուրներում ներկայացված է Կարսի ավերումը և օսմանահպատակների մի մասի կոտորածն ու մյուս մասի վերաբնակեցումը Կարսից Թահմասպ Ա-ի որդի Միրզա-Իսմայիլի կողմից¹⁵⁸:

Ամասիայի պայմանագիրը շուրջ երկու տասնամյակ Հայաստանին հարաբերական անդորր բերեց, ինչը խաթարվեց 1570-ական թթ. երկրորդ կեսին: 1576 թ. Կարսը 58 օրում վերակառուցվել է, ընդ որում՝ բեյլերբեյի պալատը կառուցել են հայերը, իսկ պարիսպներից ներս հիմնվել են նաև բնակելի տներ¹⁵⁹, և 1577 թ. սուլթան Մուրադ Գ-ն (1574-1595) պատերազմ է հայտարարել Սեֆյաններին¹⁶⁰: Թուրք պատմագիր Սելանիկի Մուստաֆա էֆենդիի (16-րդ դարի երկրորդ կես - 17-րդ դար) տարեգրության համաձայն՝ 1578 թ. Հրգրումի պարսպից դուրս բնակվող «ռայաները» (հայերը – Մ.Մ.) հանձն առան նոր պարսպի շինարարությունը, քանի որ իրենց տները պարսպից դուրս էին գտնվում և ապահովված չէին Սեֆյանների հնարավոր հարձակումից¹⁶¹: Փաստորեն, օգտագործվել է հայ բնակչության աշխատուժը: Խլաթում ընդօրինակված ձեռագրի մի հիշատակարա-

¹⁵⁷ Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 228; **Նաջարյան Հ.**, Թուրք-իրանական հարաբերությունները..., էջ 111; **Ջուլայան Մ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 45; **Նույնի**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, էջ 120-121:

¹⁵⁸ Տե՛ս «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», կազմեց՝ Լ. Մելիք-սեթ-Բեկ, հ. Բ (ԺԳ-ԺԸ դդ.), Երևան, 1936, էջ 136: Դրանից առաջ Միրզա-Իսմայիլի կողմից Կարսի և Հրգրումի նահանգներում կատարված բռնությունների մասին տե՛ս **Ջուլայան Մ.**, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1500-1555 թթ.), «ՀՍՍՌ-ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1959, թ. 3, էջ 58: Հատկանշական է, որ 13-րդ դարում Կարսի բնակչության թիվն անցել է 50 հազարից (տե՛ս **Հակոբյան Թ.**, Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, էջ 167):

¹⁵⁹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 119, հ. Գ, էջ 116:

¹⁶⁰ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 159:

¹⁶¹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 119:

նում ներկայացվում է, թե ինչպես Մուստաֆա Լալա փաշան Բասենի դաշտում ժողովում է շրջակայքի տասնյակ հազարավոր հայերի ու վերաշինում Կարսը, և երբ ավարտեցին շինարարությունը, «ասպատակեալ գնացին դէպ յարևելս՝ ի յերկիրն Կարմիր գլխոյ մինչ զքսան ասուր ճանապարհն անելի ի Կարսա, Յերեան, ի Շրուան և մինչ ի թագաւորական մեծ քաղաքն Տփղիս (իմա՝ Տփղիս – Մ.Մ.): Զայս ամենայն քաղաքս և գաւառս անմարդաբնակ արարին և զմեծ աթոռն սբ. Էջմիածին ցիր և ցան արարին՝ զկաթողիկոսն և զմիաբանքն. և յասուր միում գնացեալ ի վերայ Երևան քաղաքին և բերին գերի ոգիք ԻԴԴ (24 000) քահանայք և ռամիկք, կանայք և տղայք»¹⁶²:

Բռնագաղթի մասին տեղեկություններ հաղորդում են բազմաթիվ հեղինակներ, սակայն նրանց ներկայացրած թվական տվյալները տարբեր են: Այսպես, ժամանակագրություններից մեկում ներկայացվում է, որ օսմանյան զորքերը 1579 թ. «գերևան գերեցին ՌԼ (30000)»¹⁶³, իսկ մեկ այլ ժամանակագրի համաձայն՝ գերեցին Երևան քաղաքի և հարևան 18 գյուղերի բնակիչներին, և «ցուեցին զկին և զտղայ յամենայն աշխարհ»¹⁶⁴: Ըստ 16-րդ դարի մատենագիր Հովհաննես (Հովհաննիսիկ) Ծարեցու՝ 1579 թ. Մուրադ Գ սուլթանը Սեֆյանների դեմ ուղարկեց Լալա փաշային, ով եկավ «յերկիրն Արարատեան, և գերեաց ընդ Հայ և ընդ Տաճիկ՝ թուով ԿԴ (60 հազար – Մ.Մ.). և տարեալ խաղացոյց յերկիրն Հոռոմոց»¹⁶⁵: Ըստ 1579 թ. հիշատակարանի՝ Լալա

¹⁶² «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 251-252:

¹⁶³ Նույն տեղում, էջ 355:

¹⁶⁴ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 172:

¹⁶⁵ «Պատմութիւն Աղուանից աշխարհին արարեալ Ծարեցի Յովհաննէս վարդապետին» (այսուհետ՝ **Հովհաննիսիկ Ծարեցի**), տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 457: Հմտ. «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 241: Հովհաննիսիկ Ծարեցուն աղբյուրագետները երբեմն կոչում են Հովհաննես Ծարեցի (տե՛ս **Առաքել**

փաշան Նախիջևան քաղաքից և այլ գավառներից ավելի քան 40 հազար մարդ է գերել¹⁶⁶: Հատկանշական է, որ երբ 1579 թ. Անատոլիայի (Փոքր Ասիայի) բեյլերբեյի Ջաֆեր փաշան Կարսից շարժվում է «բարեշեն Երևանի երկիրը», Թոքմաք խանը թալանում ու հրկիզում է Երևանը և քաղաքից ու շրջակայքից գերի տանում 20 հազար մարդ (մեծ մասը՝ հայեր), որոնց ուղարկում է ստրկավաճառական շուկաներ¹⁶⁷: 1579 թ. Սեֆյան մեկ այլ հրամանատար Զիյադ օղլին «Գենջե քաղաքի և նրա գյուղերում ու գավառներում ապրող բոլոր ռայաներին՝ իրենց բոլոր մթերքներով, հագուստներով և կենդանիներով քշում տանում է: Շատերին բարձրացնում է լեռները, իսկ մնացածին՝ իր զինվորների հետ միասին, քշում տանում է Արագ գետի եզերքը: Նրա նպատակն էր պահել և պաշտպանել ռայաներին»¹⁶⁸: Այս առնչությամբ հետաքրքրական է, որ ներկայիս Այգեհատ գյուղից արևելք՝ Քոբայրի վանքից 1 կմ հյուսիս, Իգահատ գյուղատեղը լքվել է 1579 թ. հետո, և այլևս նրա մասին որևէ հիշատակություն հետազայում չի պահպանվել¹⁶⁹: Օսմանյան արշավանքների ավարառությունից ու կոտորածից զերծ են մնացել միայն Ծարից արևմուտք ընկած գավառները, սակայն 1578-1580 թթ. սով է բռնկվել գավառի կենտրոն Մեծ Մազրայում, որտեղ կենտրոնացած մեծաթիվ բնակչությանը սնունդը չէր բավականացնում¹⁷⁰:

Ի մի բերելով 1579 թ. բռնագաղթի վերաբերյալ սկզբնաղբյուրներում հիշատակվող թվերը՝ պետք է փաստել, որ 24 հա-

Դավրիժեցի, էջ 533, ծանոթ. 433: «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 235-255):

¹⁶⁶ Տե՛ս **Խառատյան Ա.**, նշվ. աշխ., էջ 331:

¹⁶⁷ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 124: Հմմտ. **Danişmend I.**, *Izahlı Osmanlı Tarihi Kronolojisi*, İstanbul, 1950, III, էջ 44:

¹⁶⁸ «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 134:

¹⁶⁹ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. IX, էջ 339:

¹⁷⁰ Տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, նշվ. աշխ., էջ 400-402:

զար թիվը վերաբերում է Երևան քաղաքին, 30 հազարը՝ Երևանին և հարևան 18 գյուղերին, իսկ 60 հազարը՝ ամբողջ Արարատյան կուսակալությանը: Ընդ որում՝ այս վերջին թվին պետք է գումարել նաև մինչ այդ Արարատյան կուսակալությունից Թոքմաք խանի կողմից գերեվարված 20 հազար մարդկանց ու Լալա փաշայի կողմից Նախիջևանից բռնագաղթվածներին, և տեղահանվածների ընդհանուր թիվը կգերազանցի 100 հազարը: Սեբաստիայում 1580 թ. գրված մի հիշատակարանում Մուստաֆա փաշայի կողմից իրականացված բռնագաղթը նկարագրված է հետևյալ կերպ. «...գերեցուց զԵրեւան իւր երկրով, զԷջմիածին եւ շատ անթիւ եւ անհամար գերի տարան ի քրիստոնեա ազգէն, այր եւ կին, ծեր եւ երիտասարդ եւ կուսան, առհասարակ զամենեսին գերեցուցին...»¹⁷¹:

Հովհաննիսիկ Ծարեցին նկարագրում է 1579 թ. օսմանյան ավերիչ արշավանքի հետևանքները. «եղև սաստիկ և մեծ տարածամ մահ ի յԱտրպատական և յամենայն Աղդանս, և կոտորէր զբազումս յամենայն ազգաց»¹⁷²: Նման պայմաններում օսմանյան բանակը, ժողովելով «Ղայթաղ» կոչվող թաթարներին և «Լակզիքն» լեռնականներին (լեզգիներին) Դերբենտում, անցավ Կուր գետը, փախուստի մատնեց Գանձակում և Պարտավում իշխողներին, գերեց, շատերին սպանեց Գանձակի, Պարտավի, Չարաբերդի (Ջրաբերդի), Խաչենի, Վարանդայի, Դիզակի լեռներում և դաշտերում՝ Չարեք գետից մինչև Երասխ, և 4-5 օր հետո վերադարձավ իր զորակայանը¹⁷³: Նույն թվին ժանտախտից և կոտորածից բացի եղավ նաև սաստիկ սով, քանզի «ամենայն գաւառք Հայոց, որք ընդ իշխանութեամբ կարմրագլխոցն կային,

¹⁷¹ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Թ, էջ 193:

¹⁷² **Հովհաննիսիկ Ծարեցի**, էջ 458-459: Հմմտ. «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 242:

¹⁷³ Տե՛ս **Հովհաննիսիկ Ծարեցի**, էջ 458-459:

քակեալք աւերեցան»։ Սոսկալի է Հովհաննես Ծարեցու նկարագրությունը սովի և դրա պատճառած թշվառության ու բարձր մահացության մասին։ Հաջորդ գարնանը հացի բերքը ոչնչացել էր, դիակները փողոցների այս կամ այն անկյունում թափված էին, անգամ տանուտերերի և մեծատունների որդիներին էին ուշ թաղում։ Եղան մարդակերության և գայլերի կողմից մարդկանց հոշոտման դեպքեր։ Սովը շարունակվեց 1579-1580 թթ., և «զթի մահուամբ և սովու և սրով մեռելոցն և գերելոցն բնաւ ոչ կարեն ընդ թիւ բերել...»¹⁷⁴։

Օսմանյան զորքերը 1580 թ. հերթական անգամ ներխուժել են Արևելյան Հայաստան՝ Արցախ, Գեղարքունիք և Երևան՝ առանձնակի դաժանությամբ վարվելով Երևանի բնակչության հետ։ Քաղաքի հոյակերպ շինություններն ավերելուց հետո նրանք կուսակալությունից բռնագաղթեցրել են շուրջ 20 հազար կանանց և երեխաների¹⁷⁵։ 1580 թ. Օսման Յոզղեմիրի ասպատակությունների մասին ձեռագրի մի հիշատակարանում Իսրայել գրիչը հաղորդում է հետևյալը. «Երեկ ազգ մի կայր Ղայտաղ կու ասեն և գերեաց բազում տեղիս՝ Ղարայալաղն, Ղարաղաջն, Խաչէն, Վարանդայ մինչև Տիզակ... երեկ Քուրտն էառ Խոյ, Սալմաստ և Նախչվան և գերեցին և թալնեցին... վայ և եղուկ ազգիս Հայոց...»¹⁷⁶։ Իսրայել գրչի տեղեկությունները ցույց են տալիս, որ քրդական ցեղերը դեռևս մշտապես չէին հաստատվել Խոյում և Սալմաստում, որոնք, այդուհանդերձ, դարձել էին նրանց ասպա-

¹⁷⁴ Հովհաննիսիկ Ծարեցի, էջ 460։

¹⁷⁵ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Ա, էջ 46-47։

¹⁷⁶ ՄՄ, ձեռ. № 4173, էջ 95ա (իղումը տե՛ս՝ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 252։ Հմտ. **Ջուլալյան Մ.**, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1555-1595 թթ.), «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1961, թ. 3, էջ 47)։

տակություններից հիմնական օջախներից մեկը, որտեղից էլ նրանք ներխուժում էին նաև Նախիջևան:

1580-ական թթ. ևս քանիցս հիշատակվում են հայ բնակչության բռնագաղթեր, իսկ պատերազմական գործողությունները տարբեր վայրերում հարուցել են հայ բնակչության զանգվածային տեղաշարժեր: Այսպես, Ա. Խառատյանը, չնշելով տեղեկության աղբյուրը, նշում է, որ 1581 թ. Արարատյան կուսակալությունից գերվել է ևս 240 հազար մարդ¹⁷⁷: 1582 թ. Գեղարքունիքը ևս ավերածության է ենթարկվել, մեկիք Հախնազարը ժողովրդի հետ հեռացել է Մազրայից, սակայն 1591 թ. վերադարձել է և հանձն առել գավառի վերաշինման գործը¹⁷⁸: 1583 թ. Երևանից ևս մեկ անգամ գերեվարություն է կազմակերպվել¹⁷⁹: 1584 թ. Բասենի Ծառս գյուղում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում Դավիթ գրիչը հայտնում է, որ ինքը փախել է Երևանից, երբ Ֆարիադ փաշան քաղաքի եկեղեցիների և տապանաքարերի հաշվին ու հայ աշխատուժով կառուցել է հզոր բերդը, «Թաջալ (իմա՝ թաթար – Մ.Մ.) ազգն արձակել ի վերայ քրիստոնեից ազգիս», և շատերը սպանվել ու շատերն էլ տարվել են գերության մինչև Գանձակ¹⁸⁰: Մեկ այլ հեղինակի մոտ կարդում ենք, որ 1584 թ. «...հասեալ ի մուտս Շարվանա և գերեաց զազգս Հալկազանց եւթանասուն ԲՌ (72000) գերի տարան այր ու կին, ծեր և տղա, և այլ թին միայն հայրն գիտի, յետո այլ տարին (1585 թ. – Մ.Մ.) գերեցին Արարատան գաւառն ԿՌ (60000), և եղաւ սով սաստիկ մեծ և նուազեցաւ զթումս (զթիւս – Մ.Մ.)

¹⁷⁷ Տե՛ս **Խառատյան Ա.**, նշվ. աշխ., էջ 331:

¹⁷⁸ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. IV, էջ 63; **Բարխուդարյան Ա.**, Գեղարքունիքի մեկիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի, «Բանբեր Մատենադարանի», թ. 8, Երևան, 1967, էջ 211:

¹⁷⁹ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 159:

¹⁸⁰ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 252:

Հայոց...»¹⁸¹: Ուշագրավ է, որ 1580-ական թթ. առաջին կեսին իրանական ճակատում ռազմական հաջողություններից հետո Օսմանյան կայսրությունը մեծաթիվ կայազորներ է տեղակայել Հայաստանի և Վրաստանի ամրոցներում, օրինակ՝ 1585 թ. Երևանում տեղակայվել էր 5600 հոգանոց կայազոր՝ կայսրությունում մինչ այդ երբևէ ամենամեծ կայազորային թիվը որևէ բերդում¹⁸²:

1584-1585 թթ. դեպքերի առնչությամբ Բարսեղ Վարազեցու հիշատակարանում պատմվում է Օսման փաշայի զորքերի կողմից Էրզրումի նահանգում երիտասարդ աղջիկների և տղաների գերեվարման մասին: Ըստ նրա՝ Սինան փաշայի զորքերը Վանից նահանջելիս «բազում գիւղ և գաւառ անքնակ արարին. կար որ ի յիրեանց հարկատուացն գերի վարեցին և յՍտամպոլ հասուցին», իսկ նրանից հետո ժամանեց Ֆահրադ փաշան, և «Երևանայ աշխարհն, քաղաքն և երկիրն, և ամենայն շուրջագայ գաւառքն ի յանօրէն ազգացն Պարսից և Իսմայելացոց սրբաջինջ եղև ամենայն աշխարհս քրիստոնէից...»¹⁸³: Դավիթ Եպիսկոպոսը Գեղամա գավառից Բասեն փախչելուց հետո 1587 թ. գրում է, որ Երևանի նախկին տեր Մահմադ խանը Ֆարհատ փաշայի արշավանքի ժամանակ «...եհան երկիրն ամէն անողորմաբար և տարաւ հետ իւրն, այնուհետև հսկա բազմությամբ հասավ Գեղամա երկիր...: Բազմումք փախան անդի և դարձան յետս և այլքն քշեցին մինչև Գանջայ...»¹⁸⁴: Չնայած թվարկված բռնագաղթերին և հայ բնակչության զանգվածային արտագաղթ-

¹⁸¹ ՄՄ, ձեռ. № 9223 ԻԷ, էջ 1ա (հղումը տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 253): Հմմտ. **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Երևան, 1959, էջ 64-65:

¹⁸² Տե՛ս «The Cambridge History of Turkey, Vol. 2: The Ottoman Empire as a World Power, 1453-1603», New York: Cambridge University Press, 2013, էջ 301:

¹⁸³ «Դիւան Հայոց պատմութեան», կազմեց՝ Գ. Աղանեանց, գ. Ժ, Թիֆլիս, 1912, էջ 34-37:

¹⁸⁴ **Ալիշան Ղ.**, Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 301:

թին, ըստ Ա. Մելքոնյանի, երկիրը շարունակում էր հիմնականում բնակեցված լինել տեղաբնիկ հայ տարրով¹⁸⁵: Եվ իսկապես, վերը ներկայացված դեպքերի մեծ մասում ինքնական զանգվածային միգրացիան նախևառաջ կրում էր ներքին բնույթ՝ հայրենիքի ոչ ապահով տեղանքից դեպի ավելի ապահով տարածք:

1583-1604 թթ. Արևելյան Հայաստանը (այդ թվում՝ Արարատյան կուսակալությունը և 1589 թվից նրա կազմ մտցված Նախիջևանը) գտնվել է Օսմանյան կայսրության կազմում¹⁸⁶: Առաքել Դավրիժեցին հաղորդում է, որ Օսմանյան կայսրությունը ծանր հարկապահանջություն և կրոնական սահմանափակումներ է իրականացրել Արևելյան Հայաստանում, ինչը 1586 թ. հանգեցրել է արտագաղթի նոր ալիքի ձևավորմանը. «...յագգէն Հայոց գնացին Սարուխան բէկն և իւր եղբայր Նազարն ի յՈսկանապատ գեղջէ. Օղլան քէշիշն և իւր եղբայր Ղալաբէկին ի Հաթերք գեղջէ: Զալալ բէկն իւր եղբօր որդւովքն ի Խաչենոյ: Մելիք Սուջումն ի Դիզակայ. Մելիք Փաշիկն ի Քօջիզ գեղջէ. Մելիք Բաբէն ի Բրետիս գեղջէ. Մելքիսէթ եպիսկոպոսն ի վերին Զականայ ի Մելիքզատայ գեղջէ. Մելիք Հայկազն ի Քշտաղս երկրէն՝ ի Խանածախ գեղջէ: Այլև չորս գեղ ի Դիզակայ երկրէն միահաղոյն չուեցին և գնացին յերկիրն Պարսից, և շահն բնակեցոյց զնոսա ի քաղաքն Սպահան: Այլև երեք մասն ի ժողովրդոց՝ Դաշտ կոչեցեալ տեղին՝ որ է ի գաւառին Գողթան՝ մերձ յԱգուլիս՝ գնացին յերկիրն Պարսից, և շահն զնոսա ևս բնակեցոյց ի քաղաքն Ասպահան: Եւ է պատճառ Դիզակեցոց և Դաշտեցոց գնալոյն՝ ծանր հարկապահանջութիւնն, կեղեքելն և կողոպտելն և կոտէ-

¹⁸⁵ Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, գ. II, էջ 627:

¹⁸⁶ Տե՛ս **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԶ դ.), էջ 32, 33:

ճուրխին առնելն, և անխնայ սպանանելն գլխատոնեայսն»¹⁸⁷: Սովորական բնույթ էր ստացել բնակչության զանգվածային օգտագործումը զորքի պարենավորման և շինարարական աշխատանքներում: Մեհմեդ Գ սուլթանի գահակալության (1595-1603) առաջին տարում Ֆահրադ փաշայի փոխարեն վրաց արքա Սիմոն Ա-ի (1556-1569, 1578-1599) դեմ ուղարկված ներքինի Ջաֆարը Արարատյան դաշտում հսկայական զորք է հավաքել և պատվիրել հեռավոր գյուղերից ու քաղաքներից պարենամթերք բերել զորքի և ձիերի համար. «Այլ և թիւս քսան հազարաց արանց արկեալ ռամկաց Հայոց և տաճկաց ամենայն աշխարհաց ունելով ի ձեռս իրեանց որթուց և թիաց, տապարաց, և կացնաց, բահաց, և փայտատաց, բրիչ տանց հիմանց, այլ և խիստ էառ հարկս ի ժողովրդենէ արտաքոյ նոմոսաց իրեանց»¹⁸⁸:

Սովը, անասունների անկումը և մահտարածամը (ժանտախտը) պատերազմական գործողությունների անբաժան ուղեկիցներն էին: Ինչպես արդեն նշել ենք, Հովհաննես Ծարեցին ներկայացնում է 1579-1580 թթ. սոսկալի սովը և ժանտախտի համաճարակը Արևելյան Հայաստանում: Դիարբեքիի Շենքուշ (Շենքուշ) գյուղաքաղաքում 1586 թ. ընդօրինակված Շարակնոցի հիշատակարանում գրիչ Գասպար երեցը գանգատվում է իր ժամանակաշրջանից, «որ տիրեալ էր աշխարհիս սով սաստիկ...»¹⁸⁹: Սովի առաջացմանը նպաստում էին ոչ միայն թուրք-պարսկական ռազմական բախումները, այլև Օսմանյան կայսրության հարկային քաղաքականությունը և հատկապես դարավերջին բռնկված ջալալիական ելույթները: Սկզբնաղբյուրներում հի-

¹⁸⁷ **Առաքել Դավրիժեցի**, էջ 63-64: Զալալբեկ իշխանի և մյուս մելիքների գաղթի մասին տե՛ս նաև **Ալիշան Ղ.**, Արցախ, Երևան, 1993, էջ 67, 115:

¹⁸⁸ **Հովհաննիսիկ Ծարեցի**, էջ 464-465:

¹⁸⁹ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ե, № 1627, սյ. 686:

շատակվում են 1595 և 1598 թթ. անասունների խիստ անկումը¹⁹⁰, 1599 թ. մեծ երաշտը և սերմերի չորանալը¹⁹¹, իսկ 1600 թ. «եղև մեծ սով ընդ ամենայն երկիր և անկեալ լինէին դիակունք նոցա յամենայն անցս ճանապարհաց իբրև գտարափս կարկտի և ոչ ոք էր, որ թաղէր զնոսա, զի ամենեքեան յօժարեցան ուտել զանսուրբս և բազումք զմիս գազանաց: Ի սոյն ամի անկաւ տարածամ մահ»¹⁹²: Ըստ Գրիգոր Դարանաղցու՝ 1600 թ. սովի ժամանակ Երզնկայի Շողա գյուղից Ենովք անունով մեկը Երզնկայից Էրզրում գնալու ճանապարհին սովից մահացած 300 մարդ է տեսել¹⁹³:

Էլ ավելի շատ են մահտարածամի մասին տեղեկությունները, սակայն, ի տարբերություն արևմտաեվրոպական սկզբնաղբյուրների, ցավոք, հայկական սկզբնաղբյուրները գոնե տեղային վիճակագրություն չեն ներկայացնում համաճարակի պատճառած զոհերի թվի վերաբերյալ: Ժանտախտի համաճարակ է հիշատակվում 1500, 1503, 1505, 1533, 1545, 1549, 1551, 1554, 1563, 1565, 1568, 1575-1576, 1579, 1581 թթ.¹⁹⁴: Բացի «մահտարածամ» եզրույթից, սկզբնաղբյուրներում ժանտախտի համաճա-

¹⁹⁰ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 271, 272, 278 (ծանոթ. 55); **Առաքել Դավրիժեցի**, էջ 476; **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, ժամանակագրություն, աշխ.՝ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 322; **Գրիգոր Դարանաղցի**, էջ 24, 50: Լ. Խանլարյանը կարծում է, որ երկուսն էլ նույն անասնամահն է, և տեղի է ունեցել 1595 թ. (տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 552, ծանոթ. 607):

¹⁹¹ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 356:

¹⁹² Նույն տեղում:

¹⁹³ Տե՛ս «Համառոտ բիբլիոգրաֆիա՝ Հայկական ՍՍՌ Մատենադարանի գրչագիր մանր ժամանակագրությունների», հրատ.՝ Ա. Աբրահամյան, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», թ. 1, Երևան, 1941, էջ 214:

¹⁹⁴ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 146, 172, 194, հ. 2, էջ 355, 518; «Ժամանակագրություն (XI-XVIII դդ.)», էջ 273, 275, 278; **Առաքել Դավրիժեցի**, էջ 474, 475; **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, էջ 304; ՄՄ, ձեռ. № 4786, էջ 280բ; «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ե, № 1624, սյ. 677; **Ուլուքաբյան Բ.**, նշվ. աշխ., էջ 409:

րակի համար հաճախ օգտագործվում են «մահ տարածեցաւ», «մահ եկն», «սաստիկ մահ եկաւ», «մահ տարածեցաւ յամենայն երկիր», «մահ, անապատ ի մարդկանէ» և նմանատիպ այլ ձևակերպումներ: Առանձին դեպքերում մատենագիրները ներկայացնում են համաճարակի որոշ մանրամասներ: 1533 թ. «մահտարածամ եղև ի վերայ աշխարհի և բազում մարդիկ խոցեցան ի հրեշտակացն Աստուծոյ և մեռան. քանի հայր և մայր անորդի եղան և անդուստր և քանի քոյր առանց եղբայր և եղբայր առանց քոյր մնացին. քանի քոյր ու եղբայր ի մէկ գիշերի մեռան. և ո՛վ կարէ պատմել զաղէտ և զկսկիծն ծնողացն և զընտանեացն. սիրելեացն և զբարեկամացն. բայց Աստուծոյ միայն է գիտելի...: Եւ յորժամ եղև այս պատուհասս՝ նա զայն աչօք տեսաք՝ որ ով որ փախաւ՝ ապրեցաւ...: ...ես մեղաւոր Յօհաննէս զայս դառն օրս աչոքս եմ տեսեր...»¹⁹⁵: 1549 թ. Սողբի Բարկիս (Բարկոյք) գյուղում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...Եղև մահտարածամ և մեռան անթիւ տղայք, հենց որ կալոյ ժամանակին տղայ չկար որ զկամսն քշեր...»¹⁹⁶: Փաստորեն, ժանտախտը մեծ հարված էր հասցնում նաև գյուղատնտեսական աշխատանքներին՝ խանգարելով սննդամթերքի արտադրությանը:

Շատ հաճախ են հանդիպում մատենագրական այնպիսի տեղեկությունները, որոնք ցույց են տալիս մեկ ընտանիքի հաշվարկով մահտարածամի ահռելի ծավալները: Այսպես, Վարագավանքում 1551 թ. գրված մի հիշատակարանում ձեռագրի վանեցի ստացողի հարազատներից մեկի երկու որդիները «տարածամ մահուամբ [մեկն]եցան առ Քրիստոս...»¹⁹⁷: Համաճարակը

¹⁹⁵ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 228:

¹⁹⁶ ՄՄ, ձեռ. № 9222, հիշ. Ժ (հղումը տես **Ջուլայան Մ.**, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ, էջ 117):

¹⁹⁷ ՄՄ, ձեռ. № 5967, էջ 223ա:

սովորաբար ուղեկցվել է սովով: Գրիչ Հակոբ Հիսուսիին վերագրվող ժամանակագրության համաձայն՝ 1575 թ. սկսած 3 տարի սով եղավ, որից հետո ժանտախտը գումարվեց¹⁹⁸: Այս տեղեկությունը հաստատվում է նաև այլ աղբյուրներով, օրինակ՝ Արճեշի Ասպիսնակ գյուղում ընդօրինակված Շարակնոցի 1576 թ. հիշատակարանում ձեռագրի ստացող Ղուկաս քահանայի 5 որդիներից 3-ը «տարաժամ մահուամբ առ Քրիստոս փոխեցան»¹⁹⁹: Փաստորեն, առավել խոցելի խումբը մանուկներն էին: Սա հաստատվում է նաև այլ տեղեկություններով, օրինակ՝ 1581 թ. մի հիշատակարանում խոսվում է մահտարաժամից մի ընտանիքում բոլոր 4 մանկահասակ դուստրերի մահվան մասին²⁰⁰:

Ժանտախտի մասին մատենագրական տեղեկությունները քննության առնելիս հարկավոր է ուշադրություն դարձնել տապանագրերին ու խաչքար-մահարձանների վիմագրերին: Ճիշտ է, հնարավոր չէ առանց հնագիտական լրացուցիչ ուսումնասիրման զուտ վիմագրերով պարզել գերեզմաններում ամփոփված անձանց մահվան պատճառը, սակայն պատերազմական գործողությունների կողքին ժանտախտի համաճարակի և սովի մասին հիշատակումների տարիներին դիտարկվում է տապանաքարերի թվի կտրուկ աճ: Ինչպես արդեն նշել ենք, Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններում (<< Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերում, ԼՂՀ-ում և Գանձակ-Գարդմանում) հաշվարկել ենք 16-րդ դարի՝ միայն հստակ թվագրում ունեցող շուրջ 540 տապանագրեր ու խաչքար-մահարձանների վիմագրեր: Ժանտախտի և սովի մասին հիշատակումների մի քանի տարիների համար ստացվել է հետևյալ վիճակագրու-

¹⁹⁸ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 195-196:

¹⁹⁹ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ե, № 1624, սյ. 677:

²⁰⁰ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 4786, էջ 280բ:

թյունը. 1505 թ.²⁰¹, 1549 թ.²⁰², 1551 թ.²⁰³, 1575 թ.²⁰⁴, 1581 թ.²⁰⁵: Այս տապանաքարերը հաշվարկված թվակիր հուշակոթողների մեջ կազմում են համապատասխանաբար 1.5, 2.2, 7.4, 2 և 3.3 %-ը:

Մահացության բարձր գործակցի մասին են վկայում ձեռագրերի հիշատակարաններում գրիչ-քահանաների կամ ստացողների հանգուցյալ կանանց մասին տեղեկությունները: Այսպես, Վանում 16-րդ դարում գրված հիշատակարանում թվարկված են ստացող Պողոսի հանգուցյալ կինը և ողջ կինը²⁰⁶: Նույն կերպ Մոկսի Բոլենց գյուղում 1579 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում թվարկվում են ստացող խոջա Խաղնադարի եղբոր հանգուցյալ և ողջ կանայք²⁰⁷: Սա, անշուշտ, պայմանավորված է նախևառաջ ծննդաբերությունների ժամանակ կանանց մահանալու մեծ հավանականությամբ:

Այսպիսով, 16-րդ դարում Հայաստանում Օսմանյան կայսրության և Սեֆյան տերության միջև պատերազմների և դրանց միջև կարճատև դադարների պայմաններում տեղի ունեցող ժո-

²⁰¹ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. III, էջ 112; պր. IV, էջ 28-29, 31-37, 42, 47-48, 98-100, 105, 106, 319-325:

²⁰² Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. II, էջ 120, 121, 122; պր. IV, էջ 80-82, 90-91, 98-100, 137-141, 248-250, 356-359; պր. V, էջ 220, 222:

²⁰³ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. III, էջ 17-19, 163, 178-179, 185, 186-190; պր. IV, էջ 52-63, 65, 82, 98-100, 107, 113-115, 118, 130, 131-134, 171-173, 178, 192-193, 206-207, 236-241, 269-275, 285, 294-295, 305-307, 309-310, 319-325, 329-332, 351-352, 364-367; պր. V, էջ 95-96, 220, 222, 243; պր. IX, էջ 47-48, 221, 223, 323-328:

²⁰⁴ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. II, էջ 56; պր. III, էջ 104, 200-202; պր. IV, էջ 85-86, 236-241, 269-275, 285, 364-367:

²⁰⁵ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. II, էջ 76, 112; պր. IV, էջ 101, 205, 236-241, 281-283, 285; պր. V, էջ 164-168, 233-237; պր. IX, էջ 323-328:

²⁰⁶ Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ը, № 2671, սյ. 1064:

²⁰⁷ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 5520, էջ 280ա-բ:

ղովրդագրական գործընթացներին բնորոշ էին հաճախ կրկնվող բռնագաղթերը²⁰⁸, զանգվածային արտագաղթը, սննդամթերքի արտադրության տևական արգելակումները, համաճարակները (հատկապես՝ ժանտախտը), սովը: Տարածքի յուրացվածության բարձր աստիճանը թեև առաջին հայացքից բնակչության բնական աճը սահմանափակող գործոն էր, այդուհանդերձ յուրաքանչյուր բռնագաղթից կամ զանգվածային մահացությունից հետո ազատված հողերի վերաօգտագործման համար աշխատանքային ռեսուրսների անհրաժեշտությունը հայ բնակչության ամուր ներէթնիկ սոցիալական կառուցվածքի շնորհիվ հանգեցնում էր բնակչության թվի կտրուկ աճի: Հենց դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ, չնայած 1579-1585 թթ. քանիցս կրկնված բռնագաղթերին, ընդամենը երկու տասնամյակ անց Արարատյան կուսակալությունում, որը շատ առատ էր հո-

²⁰⁸ Ա. Խառատյանն անհրաժեշտ է համարում տարբերակել բռնագաղթերն ու գերեվարությունները, մասնավորապես՝ բռնագաղթը բնակչության տեղահանումը և մայրաքաղաքում ու այլ քաղաքներում բնակեցումն էր՝ որպես հարկատու ռայա, իսկ գերիները տրվում էին զինվորականներին՝ որպես ռազմավար, որոնք կարող էին օգտագործվել կամ վաճառվել որպես ստրուկ: Ըստ Ա. Ալպոյաճյանի՝ Սելիմ Ա-ն և հաջորդ սուլթանները Կահիրեի շուկաներում մոտ 100 հազար հայ գերիների են վաճառել: Գերեվարվածների մի մասը համալրում էր մայրաքաղաքի հայ բնակչությունը (որպես արհեստավոր կամ շինարար), մի մասն էլ վաճառվում էր ստրկության կամ օգտագործվում բանակի բերդաշինական կարիքների համար (տե՛ս **Խառատյան Ա.**, նշվ. աշխ., էջ 59-71): Հավելենք, որ 1520-1580-ական թթ. Օսմանյան կայսրության փոքրասիական հատվածի բնակչության թիվն ավելացել 66,5 %-ով (տե՛ս **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի..., էջ 49), ինչը կարող է բացատրվել ոչ թե Ֆ. Բրոդելի և Օ. Բարքանի կողմից առաջ քաշված «միջերկրածովյան ավազանի ժողովրդագրական պայթյուն»-ի տեսությամբ, այլ զանգվածային բռնագաղթերի քաղաքականությամբ, որի կարևոր թիրախներից մեկը Հայաստանն էր: Ի դեպ, ուսումնասիրողները համակարծիք են այն հարցում, որ Սուլեյման Ա-ի գահակալության վերջին շրջանում՝ 1560-ական թթ. կեսերին, Օսմանյան կայսրության բնակչության թիվը շուրջ 15 միլիոն էր (տե՛ս **Barbero Al.**, նշվ. աշխ., էջ 100-101; **Mansel Ph.**, Constantinopoli: Splendore e declino della capitale dell'Impero Ottomano 1453-1924, Milano: Oscar Mondadori, 1997, էջ 82-83; **Tüzün G.**, նշվ. աշխ., էջ 19):

ղային ռեսուրսներով, պարսից շահ Աբաս Ա-ի բռնագաղթի նախօրեին վերստին հայ բնակչության հոծ զանգված էր կենտրոնացած:

*

*

*

16-րդ դարում Հայաստանի ժողովրդագրական գործընթացների վրա ազդել են ոչ միայն պատերազմական գործողությունները և դրանց հետևանքները, այլև բնական աղետներն ու բնակլիմայական պայմանների փոփոխությունները:

Հայկական լեռնաշխարհում աղետալի երկրաշարժերը հաճախ են եղել: Այդպիսիք տեղ են գտել նաև 16-րդ դարում: Մի քանի աղետալի երկրաշարժեր են հիշատակվում Երզնկայում: Ըստ Հակոբ Կարնեցու՝ 1535 թ. Երզնկայում ուժեղ երկրաշարժի պատճառով ավերածություններ և անհայտ կորածներ են եղել²⁰⁹: 1576 թ. նոյեմբերի 5-ի գիշերը ևս երկրաշարժ է եղել Երզնկայում. 4 ամիս վերացրել են հետևանքները²¹⁰: 1584 թ. հունիսի 17-ին՝ ժամը 3-ին, Երզնկա «քաղաքն առհասարակ փլավ», զոհվել է 15 հազար, հաշմված դարձել՝ 5 հազար հոգի²¹¹: 1543, 1574, 1575 և 1597 թթ. ուժեղ երկրաշարժեր են եղել Թոխատում²¹², 1578 թ.՝ Հասան-կալեում²¹³ և Մարզվանում²¹⁴, 1598 թ.՝ Ամասիայում²¹⁵:

Երկրաշարժերի մասին տեղեկությունների կողքին բազմաթիվ սկզբնաղբյուրներում վկայված են նաև տեղումների հետ

²⁰⁹ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 239:

²¹⁰ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 267; **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, էջ 319:

²¹¹ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 173, հ. 2, էջ 268, 284; **Առաքել Դավրիժեցի**, էջ 475; **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, էջ 321-322; **Ամիրաս Երզնկացի**, էջ 387ա: Հմմտ. նույն տեղում, էջ 382բ:

²¹² Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 157, 158, 160:

²¹³ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 133:

²¹⁴ Տե՛ս **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, էջ 320:

²¹⁵ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 271, 272:

կապված անոմալիաներ: Այդպիսի մի օրինակ ներկայացված է 1547 թ., երբ Սեբաստիայում 30 օր շարունակ անձրև է տեղացել²¹⁶: Սեբաստիայում տարեկան տեղումները ներկայումս 445 մմ են, ընդ որում՝ ամառային ամիսներին տեղումների քանակը չնչին է²¹⁷, ուստի դժվար է պատկերացնել այդպիսի տեղանքում 30-օրյա անդադար անձրևներ: Տեղումնառատ է եղել նաև 1575 թ. «յամենայն տեղ հեղեղ ելաւ և շատ զեն արար»²¹⁸: Սրանց հակառակ 1569 թ. երաշտ է եղել, և «մարախն (մորեխն – Մ.Մ.) երեկ աշխարհս»²¹⁹: 1599 թ. մարտի 17-ին էլ Առաքել Դավրիժեցին դառնաշունչ «ձմեռ» է հիշատակում²²⁰: Այսօրինակ դիպվածների հիշատակումը մեզ ստիպում է ուսումնասիրել բնակլիմայական փոփոխությունների միտումները 16-րդ դարում: Երկրաբանական, դենդրոփսրոնոլոգիական, մատենագրական և այլ ուսումնասիրությունների համադրությամբ պարզվել է, որ եթե 1315 թ. Հայաստանի հարավային և ծայր արևմտյան հատվածում նկատվել է նորմայից ցածր տեղումների քանակ, ապա 1540 թ. տեղումները նորմայից միայն մի փոքր են ցածր եղել, ընդ որում՝ երկու դեպքում էլ Հայաստանի մեծ մասում՝ Վանա լճի ավազանից արևելք և հյուսիս՝ մինչև Տայք ներառյալ, տեղումները նորմայից բարձր են եղել: Հյուսիսային Միջագետքում առաջին դեպքում տեղումները նորմայից ցածր են եղել, իսկ երկրորդ դեպքում՝ գրեթե նորմայի սահմաններում: Այս տվյալների կողքին առավել հետաքրքիր է 1616 թ. պատկերը՝ Վանա լճից հարավ և հարավ-արևելք տեղումները նորմայից բարձր են,

²¹⁶ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 171:

²¹⁷ Տե՛ս Devlet Meteoroloji İşleri Genel Müdürlüğü, տե՛ս՝ <http://www.dmi.gov.tr/veridegerlendirme/il-ve-ilceler-istatistik.aspx?m=SIVAS>, հասանելի էր՝ 28.01.2016:

²¹⁸ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 172:

²¹⁹ Նույն տեղում, էջ 146:

²²⁰ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 476:

Արարատյան դաշտից մինչև Էրզրում՝ նորմալից միայն մի փոքր բարձր²²¹: Ուշմիջնադարյան Եվրոպայի տեղումների այս 3 քարտեզներում Հայաստանի տարածքի մասնակի ուսումնասիրությունը միայն միմյանցից կտրված 3 տարիներով է ներկայացված և, անշուշտ, չի կարող արտահայտել բնակլիմայական փոփոխությունների ընդհանուր պատկերը, սակայն 1550-1750 թթ. համեմատական քարտեզը ցույց է տալիս, որ Հայաստանի մեծ մասում տեղումները նորմալից մի փոքր ավելի բարձր են եղել²²²:

Համադրելով Է. Քուքի և նրա շուրջ 40 գործընկերների հրատարակած աշխատանքի տվյալները մեր ունեցած մատենագրական տեղեկությունների ու միգրացիոն գործընթացների մասին հաղորդումների հետ՝ հանգում ենք հետևյալ եզրակացությանը: Տեղումների քանակի՝ նորմալից մի փոքր բարձր լինելը նպաստավոր գործոն էր գյուղատնտեսական աշխատանքների համար: Այն նպաստավոր պայմաններ էր ստեղծում ոչ միայն երկրագործության, այլ նաև անասնապահության համար, ուստի բնակլիմայական պայմանները կարող էին ապահովել սննդի արտադրության մեծ ծավալներ: Այս համատեքստում այնպիսի անոմալ երևույթները, ինչպիսիք 1547 և 1575 թթ. հեղեղներն էին ու 1569 թ. չորային եղանակը և մորեխների ակտիվությունը, կոնկրետ տարում պետք է բացասաբար ազդեին բերքի ստացման վրա՝ նպաստելով սովի առաջացմանը: Ինչ վերաբերում է Առաքել Դավրիժեցու կողմից 1599 թ. մարտի վերջին ցրտահարության հիշատակմանը, ապա ավանդական վերարտադրության պայմաններում գյուղատնտեսական աշխատանքներին այսօրինակ երևույթների կողմից հասցված վնասը պետք է հան-

²²¹ Տե՛ս **Cook Ed. et al.**, Old World megadroughts and pluvials during the Common Era, *Science Adv.*, Nov. 6, 2015;1:e1500561, էջ 2-3 (ներբեռնվել է <http://advances.sciencemag.org/> կայքից, հասանելի էր՝ 25.01.2016):

²²² Տե՛ս նույն տեղում, էջ 4:

գեցներ սովի և մարդկային մեծ զոհերի, ինչպես 1740-1741 թթ. Իռլանդիայում բռնկված մեծ սովի պատճառը դարձավ 1740 թ. սկզբին երկարատև սոսկալի ցուրտը²²³: Եվ իսկապես, նախկինում միայն ջալալիական ելույթներով բացատրվող 1599-1600 թթ. սովը, որ հետևել էր Հայաստանում 1599 թ. մեծ երաշտին և սերմերի չորանալուն²²⁴, պետք է բացատրել նաև 1599 թ. ցուրտ ձմեռով և մարտյան ցրտահարությամբ:

Այսպիսով, 16-րդ դարում ժողովրդագրական գործընթացները Հայաստանում կրել են ոչ միայն թուրք-պարսկական պատերազմների խիստ բացասական ազդեցությունը, այլև մերթ-ընդմերթ ազդվել են բնական աղետներից (նախևառաջ՝ երկրաշարժերից) և բնակլիմայական պայմանների փոփոխություններից: Այդուհանդերձ, 16-րդ դարում ժողովրդագրական գործընթացներն ազդվել են նախևառաջ ռազմական գործողություններից, որոնք տասնամյակներ շարունակ հազարավոր մարդկային զոհեր են խլել հայ բնակչությունից, պատճառ դարձել զանգվածային գերեվարությունների ու բռնագաղթերի, սովի ու համաճարակի, ներքին միգրացիայի և մեծածավալ արտագաղթի, որոնք էլ, փաստորեն, ժողովրդագրական գործընթացների հիմնական առանձնահատկություններից են դարձել՝ պայմանավորելով նաև հայ բնակչության՝ մայրենի հողում նույն թվաքանակի սահմաններում մնալու կամ ցածր աճ ունենալու միտում: Վերջինիս զուգահեռ նախկինի համեմատ ավելի մեծ ծավալներ են սկսում ընդունել օտար էթնիկական ներթափանցումները Հայաստան և Հարավային Հայաստանի առանձին հատվածներում հաստատված օտար ցեղախմբերի մի մասի շարժը դեպի Հայաստանի կենտրոնական նահանգներ:

²²³ Տե՛ս **Cook Ed.**, նշվ. աշխ., էջ 2:

²²⁴ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 356:

1.2. Էթնոժողովրդագրական գործընթացները

1.2.1. Օտար էթնիկական ներթափանցումներն ու տեղաշարժերը

16-րդ դարում Հայաստանը ենթարկվել է օտար էթնիկական տարրերի ներթափանցման, ինչը, սակայն, չի կարողացել փոխել նրա հայեցի էթնոնկարագիրը²²⁵: Սեֆյան պետությունը խրախուսում էր շիա դավանանքի թյուրքական և քրդական քոչվոր մի քանի ցեղերի հաստատվելն Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում՝ փորձելով հենարան ստեղծել սուննի Օսմանյան կայսրության դեմ մղվող պայքարում²²⁶: Ներթափանցումների ծավալները պատկերացնելու համար հարկավոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ նույն հողը մի ցեղապետից որոշ ժամանակ անց անցնում էր մեկ այլ ցեղապետի ձեռքը, ինչը նշանակում է, որ ցեղապետերի տրամադրության տակ եղած մարդկանց թիվը չէր կարող շատ մեծ լինել: Այսպես, 16-րդ դարի առաջին տասնամյակում Արարատյան կուսակալությունում շարունակել են իշխել արդեն Սեֆյաններին հարած Սաադլու ցեղի ամիրաները²²⁷:

1515 թ. Օսմանյան կայսրության հետ կնքած հաշտությունից հետո շահ Իսմայիլը կուսակալությունը խոշոր ավատի իրավունքով տվել է ղզլբաշական ռումլու մեծ ցեղի ամիրաներին, ինչի մասին են վկայում Հասան-բեկ Ռումլուի տեղեկությունները²²⁸: 16-րդ դարի առաջին կեսին Կարսը, Զարիշատը, Մաղասբերդը, Բայազետը, Մակուն և Կաղզվանը որպես օլբա (ավատ) Սեֆյան-

²²⁵ Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, գ. II, էջ 625:

²²⁶ Տե՛ս **Петрушевский И.**, նշվ. աշխ., էջ 89-91, 142:

²²⁷ Տե՛ս «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հ. II, Կալվաճագրեր, պ. Ա, կազմեց՝ Հ. Փափագյան, Երևան, 1968, վավ. 21, 23, 25, 27:

²²⁸ Տե՛ս **Փափագյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԶ դ.), էջ 26, 28:

ների կողմից փոփոխաբար տրվել են սաադլու, չմշկածագլու (չմշկածագցի), բայաթ, դունբուլի (դենբելի) և այլ ղզլբաշական (թյուրքախոս) ու քուրդ ցեղերի²²⁹: Իսքանդար Մունշին 1552 թ. դեպի Էրզրում կատարվող պարսկական արշավանքի մասնակիցների թվում հիշատակում է Արարատյան կուսակալությունում իշխող Շահկուլի սուլթան Ութաջլուին, որը, փաստորեն, նշանակվել էր կուսակալությունում 1549 թ. Հուսեյնջան սուլթան Ռումլուի՝ Էրզրումի Իսքանդար փաշայից պարտություն կրելուց հետո²³⁰: Փաստորեն, իշխանությունը Արարատյան կուսակալությունում մի ցեղից անցել էր ղզլբաշական մեկ այլ ցեղի: Հասանբեկ Ռումլուի, Իսքանդար Մունշիի և թուրք հեղինակ Սելանիկիի տեղեկությունների զուգադրմամբ ստացվում է, որ նորանշանակ «սուլթանին» ավելի քան երկու տասնամյակ անց հաջորդել է որդին՝ Մուհամմադի խան Թոխմախը²³¹: Իսքանդար Մունշին Թահմասպ Ա-ի գահակալության երկրորդ շրջանում տիրույթներ ունեցող 114 ամիրաների թվում ներկայացնում է նաև Արարատյան կուսակալությունում օլքաներ ունեցող տարբեր ցեղերի ամիրաների, օրինակ՝ Մուհամմադի խան Թոխմախիի օրոք Շորագյալի (Շիրակի) և ապա Ալաշկերտի կառավարիչն էր Կարախան Բայբուրդլուն, օլքաներ ունեին նաև քուրդ փագուկիները²³²: Այդուհանդերձ, Արևելյան Հայաստանում ժառանգական սեփականության նշված տարածքներն ամենևին էլ չվերածվեցին:

Ամենազանգվածային տեղաշարժերը տեղի ունեցան Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան և հարավային հատ-

²²⁹ Տե՛ս **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԶ դ.), էջ 28:

²³⁰ Տե՛ս նույն տեղում:

²³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 29-30: Ի դեպ, Թոխմախ խանն իշխել է հարաբերական խաղաղության պայմաններում, և հենց նրա օրոք է կառուցվել ոռոգման զգալի հնարավորություններ տվող Թոխմախի լճակը Երևանի տարածքում:

²³² Տե՛ս նույն տեղում, էջ 30:

վածներում, որոնք պայմանավորված էին քրդական ցեղերի հետ: Փաստորեն, 16-րդ դարում Հայաստանի բնակչության էթնոկրոնական կազմում որոշ փոփոխությունների առանցքը դարձան քրդական ցեղերի տեղաշարժերը դեպի Հայկական լեռնաշխարհի խորքերը: Ն. Ադոնցը Հայկական հարցի և Արևմտյան Հայաստանում քրդական գործոնի մասին իր մի քանի հոդվածներում («Թուրքիայի անդամահատումը», «Քրդերի ներթափանցումը Հայաստան», «Առաջավոր Ասիայի հիմնահարցի լուծման շուրջ» և այլն)²³³ նշում է, որ քրդական հետքը մինչ ուշ միջնադար Հայկական լեռնաշխարհում դեռևս զգալի չի եղել: Վ. Բայբուրդյանը հետևում է Ն. Ադոնցի այն տեսակետին, որ, բացառությամբ Վանի և Բաղեշի (Բիթլիսի) իշխող տների, մնացյալ քրդական տիրույթները Եփրատի և Տիգրիսի հովտում առաջացել են թուրք-պարսկական պատերազմների սկզբնական շրջանում՝ 16-րդ դարի սկզբին²³⁴: Միաժամանակ պետք է նկատել, որ հայ-քրդական առաջին առնչությունները վկայված են դրանից մի քանի հարյուրամյակ առաջ²³⁵: Քրդերը Մրվանյան հարստության ժամանակվանից (10-11-րդ դարեր) Միջագետքից շարժվել են հյուսիս, և 14-րդ դարում քրդական ցեղապետների մի մասը, մոնղոլների մոտ ծառայության անցնելով, Վանա լճի և Արևելյան Եփրատի ավազաններում հողային տիրույթներ է ստացել: 16-րդ

²³³ Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հ. 2, Երևան, 2012; **Նույնի**, Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989; **Adoniz N.**, Kurdish Intrusion into Armenia, “The new Armenia”, vol. 14 (1920), № 1, pp. 4-6.

²³⁴ Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի «քրդականացման» քաղաքականությունը, էջ 69:

²³⁵ Տե՛ս **Դալայան Տ.**, Հայ իշխանական տների հետքերը Հարավարևմտյան Հայաստանում (քրդական որոշ ցեղանունների և ցեղերի ծագման հարցի շուրջ), «ՊԲՀ», 2004, թ. 2, էջ 174-196: Քրդական վաղ տեղաշարժերի մասին տե՛ս **Փոլադյան Ա.**, Քրդերը և ռազմաքաղաքական անցքերը Ատրպատականում X դարի առաջին կեսին (ըստ արաբական աղբյուրների), «ՊԲՀ», 1984, թ. 2, էջ 87-92:

դարի կեսերին պորտուգալացի ճանապարհորդ Մ. Աֆոնսոն Հազդյում (Հարավային Սասունում) 500-600 բնակիչների մեջ մեծամասնություն կազմող հայ քրիստոնյաների կողքին հիշատակում է նաև մահմեդական քրդերին²³⁶: Շարաֆ-խանը Սասունի քրդական ցեղամիավորման իշխաններին կոչում է «Հազդ» և սերած համարում երկու եղբայրներից, որոնք անջատվել են ոռժկի ցեղից²³⁷: Այս պատմությունը, ինչպես նկատել են Ս. Հարությունյանը և Հ. Բարթիկյանը, կրում է «Սասնա ծռեր»-ի կնիքը: Ըստ Էվլիյա Չելեբիի՝ Հազդ բերդին տիրացել է Բիթլիսի Աբդալխանի նախնիներից մեկը Լենկ-Թեմուրի արշավանքների ժամանակաշրջանում, այնուհետև 1514 թ. այն շնորհվել է Բիթլիսի խանին՝ Դիարբեքիի նահանգի հյուքումնթի կարգավիճակով²³⁸: Իսլաթն էլ «Սասնա ծռեր»-ի քրդական պատումներում հիշվում է որպես Հայաստանի մայրաքաղաք, ուստի քրդական ընկալման մեջ խոր արմատներ է գցել Շահ-Արմենների պետության անվանումը. չէ՞ որ այդ պետության կենտրոնը Իսլաթն էր:

Քրդական ցեղերի՝ Հայաստան ներթափանցման ամբողջական ուսումնասիրությունը, իհարկե, չի տեղավորվում մեր ուսումնասիրության սահմաններում, սակայն կարևոր է դրա որոշ դրվագների վերհանումը, որպեսզի հետագա ուսումնասիրության ընթացքում ընկալելի լինեն քրդական ցեղերի՝ Հայաստանի տարբեր տարածքներում տեղաբաշխման և ներքին տեղաշարժերի միտումները: Հայաստանի հարավարևմտյան գավառներում քրդական տարրի հաստատման ուսումնասիրման համար կարևոր են ոչ միայն հայկական, այլև արաբական սկզբնաղբյուրները, որոնց համադրմամբ պարզվում է, որ արդեն 14-րդ

²³⁶ Տե՛ս **Հարությունյան Ս., Բարթիկյան Հ.**, «Սասնա ծռերի» արձագանքները «Շարաֆ-Նամեում», «ՊԲՀ», 1975, թ. 2, էջ 97-99:

²³⁷ Տե՛ս **Դավայան Տ.**, նշվ. աշխ., էջ 195:

²³⁸ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 194:

դարում ձևավորվել են Բաղեշի (ռոժակի (ռոժկի, ռուժակի, ռուզիկի, պարսկ.՝ ռուզաքի) ցեղի), Վան-Ոստանի (շամոյան կամ հաքքարի ցեղի), ինչպես նաև ավելի փոքր՝ Խիզանի, Հազոյի, Ջերմուկի, Սպարկերտի, Բալուի և այլ իշխանությունները: Ըստ «Շարաֆ-Նամե»-ի՝ Բաղեշի քուրդ ամիրաներն արդեն 14-րդ դարի կեսերից ժառանգաբար էին իշխում²³⁹: Այս ամիրայության առնչությամբ Առաքել Դավրիժեցին, մեջբերելով Արճեշում գրված մի հիշատակարան, պատմում է Աղթամարի Զաքարիա Գկաթողիկոսի (1434-1464) միջամտությամբ Բաղեշի ամիրայի կողմից Բաղեշի, Մուշի, Խուֆի, Սասունի և նրանց գավառների բնակչությանը հալածանքներից ազատելու մասին²⁴⁰: Կայսերական հարկ վճարելով՝ նա «ազատեաց զամենայն խառնիճաղանճ ժողովուրդն զՀայ և զՏաճիկ ի ձեռաց անօրինաց և ի դառն գերութենե»²⁴¹: Հետագա շարադրանքում նույն ամիրայի մասին խոսելիս նա նշում է «ի Քուրդ ամիրայեն»²⁴² արտահայտությունը, իսկ առափնյա Ոստան քաղաքում իշխողը «էր ազգաւ Քուրդ»²⁴³: Փաստորեն, 14-15-րդ դարերում նկատվել է քրդերի տեղաշարժ Տավրոսով դեպի հյուսիս՝ Հարավարևմտյան Հայաստան²⁴⁴:

Տոհմաբան Ե. Յամբաուրը, պատմաբան Մ. Զաքին և ուրիշներ, առաջնորդվելով Շարաֆ-խանի կիսավիպագրական տվյալներով, առաջ են քաշել այն տեսակետը, որ Վանը, Ոստանը, Ջուլամերիկը և Հաքքարին ընդգրկող քրդական իշխանու-

²³⁹ Տե՛ս **Փափագյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դ.), էջ 35:

²⁴⁰ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 331-333:

²⁴¹ Նույն տեղում, էջ 333:

²⁴² Նույն տեղում:

²⁴³ Նույն տեղում, էջ 334:

²⁴⁴ Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Օսմանյան կայսրության կողմից..., էջ 67-84: Քրդական տեղաշարժերի մասին տե՛ս նաև **Փափագյան Հ.**, Քուրդ ժողովրդի պատմության մի նոր սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», թ. 8, Երևան, 1967, էջ 229-248:

թյունը հիմնադրվել է 1480-1490-ական թթ.²⁴⁵: Հիմնվելով 15-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում տրված տվյալների վրա՝ Լ. Խաչիկյանը պարզել է, որ քրդական ամիրայության հիմնադիրը հայկական սկզբնաղբյուրներից մեզ հայտնի ամիր Եզդին-Շերն (Եզդանշիր, Իզեդ դին-Շեր) է, ով իշխել է 1380-ական թթ.²⁴⁶: Ա. Խաչատրյանը հայերեն ձեռագրերի հիշատակարաններից, Թովմա Մեծոփեցու և արաբական վիմագիր տվյալներից դուրս է բերել Հարավային Հայաստանում քրդերի մասին հաճախակի դարձող տեղեկությունները: Նպատակ չունենալով մանրամասնել 14-րդ դարի անցքերը՝ այժմ ներկայացնենք Ա. Խաչատրյանի կողմից առանձնացված դեպքերի միայն վայրը և թիվը՝ Ոստան (1318, 1335, 1377, 1384, 1386, 1392, 1395 թթ.), Խլաթ (1328, 1396 թթ.), Երզնկա (1338 թ.), Աղբակ (1351 թ.), Վան (1387 թ.), Դիզի ձոր (Փոքր Աղբակ, 1398 թ.), Ջուլամերիկ (1398 թ.)²⁴⁷: Հաջորդ դարի առաջին քառորդին Բաղեշում արդեն հիշվում է ռոժակի ցեղի ամիրայությունը, իսկ Արծկեն ընդգրկվել էր Ոստանի ամիրայության մեջ²⁴⁸: Ըստ Ա. Խաչատրյանի՝ Հաքքարիի ամիրայությունը՝ Ոստան կենտրոնով, գոյություն է ունեցել 1335-1424/1425 թթ., վերականգնվել է 15-րդ դարի վերջին, իսկ 16-17-րդ դարերում տրոհվել է Ջուլամերիկի, Ոստանի, Խոշաբի և Բերկրիի իշխանությունների²⁴⁹: Էվլիա Չելեբին, 17-րդ դարի կեսերին հյուրընկալվելով Բիթլիսում իշխող

²⁴⁵ Տե՛ս **Խաչատրյան Ա.**, Հաքքարի քրդական իշխանության կազմավորման հարցի շուրջ (ԺԴ դար), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 13, Երևան, 1985, էջ 134-135:

²⁴⁶ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 36, 58; «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց՝ Լ. Խաչիկյան, մասն Բ (1451-1480 թթ.), Երևան, 1958, I-VII:

²⁴⁷ Տե՛ս **Խաչատրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 136-141:

²⁴⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 142-145:

²⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 145-151:

քրդական ռոժակի ցեղի պետ Աբդալ խանի մոտ, նշում է, որ նրանք «հին քրդերից են»²⁵⁰, ինչը խոսում է այն մասին, որ քրդերը մի քանի փուլով են հաստատվել Արևմտյան Հայաստանում: Ուսումնասիրելով ցեղապետից ուղեգրի գրի առած բանաստեղծությունը՝ հոլանդացի գիտնական Մարտին վան Բրոյնեսենը եզրակացրել է, որ ռոժկի ցեղն ունի հայկական ծագում²⁵¹:

Քրդական ներթափանցումների փուլերը դիտարկելիս կարևոր է հասկանալ՝ ինչպես է ընկալվել այս էթնոսը ժամանակի հայ էթնոքաղաքական մտածողության կողմից: Այս առնչությամբ Հ. Մարգարյանը իրավացիորեն նկատել է, որ ուշմիջնադարյան հայ հեղինակների, օրինակ՝ Առաքել Դավրիժեցու և Զաքարիա Քանաքեռցու մոտ զանգվածաբար գործածվող «մար» և «քուրդ» էթնոնիմները հանդես են գալիս որպես հոմանիշներ, ինչպես և կարծում է Վ. Մինորսկին, մինչդեռ մինչև Մատթեոս Ուռհայեցին և Դավիթ Ալավկաորդին հայ հեղինակներին անծանոթ է եղել «քուրդ» անվանումը, իսկ 13-րդ դարի հեղինակներ Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին մինչև 12-րդ դարի դեպքերին անդրադառնալիս օգտագործել են «մար», այնուհետև 12-րդ դարից սկսած՝ «քուրդ» էթնոնիմները²⁵²: Այսպիսով, մեր ուսումնասիրության ներքո գտնվող ժամանակաշրջանի հեղինակների համար երկու եզրերն էլ հավասարապես ընդունելի են եղել, ինչում կհամոզվենք տեղական սկզբնաղբյուրներից հետագա մեջբերումներում: Այս շփոթը կա նաև օտար հեղինակների մոտ, ինչի պատճառը, ըստ Վ. Իվանովի, այն էր, որ «քուրդ» անվանու-

²⁵⁰ «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 202:

²⁵¹ Տե՛ս **Դալայան Տ.**, նշվ. աշխ., էջ 188-189:

²⁵² Տե՛ս **Մարգարյան Հ.**, Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ, «ՊԲՀ», 1992, թ. 2-3, էջ 146-149:

մով միջնադարում բնորոշվում էին իրանալեզու բոլոր քոչվորները, ուստի այն նույնական չէ ժամանակակից էթնոնիմին²⁵³:

16-րդ դարի սկզբին քրդական ցեղերը շարունակում են իրենց տեղաշարժերը Վանա լճի ավազանի հյուսիս: Դեպքերին ժամանակակից Բարսեղ Արճիշեցին նշում է, որ 1501 թ. Բաղեշի քրդերը գրավել են Արծկեն և այրել ու ավերել նորաշեն տները²⁵⁴: 1502 թ. հայ բնակչությունը նույնիսկ ստիպված է եղել հեռանալ Արճեշից: Հաջորդ տարի Սևանի բերդի (Արճակ լճից հարավ-արևելք) քրդերը թալանել են Արճեշը և 1210 բեռ հաց տարել, ապա պատասխան գործողություններով ներխուժել են ղզլբաշները՝ հարձակվելով Արծկե քաղաքի վրա, որտեղից «ազգն Մարաց» հեռացել է, բայց որոշ ժամանակ անց «ազգն քրդաց» վերստին գրավել է բերդը²⁵⁵: Սեֆյանները քիչ անց ևս մեկ անգամ անցել են պատասխան գործողությունների, Արճեշի հայերից ծանր հարկեր են հավաքել, «յելանելն բազում կին և հարսն գերի վերուցին», այնուհետև Մանձկերտի (Բուլանուխ) գավառում 7 ղշլախ քրդերի (700 հոգու) սրի են քաշել, շարունակել են Արճեշում հայերից բռնի հարկեր հավաքել, ինչպես նաև 400 հայ պատանիների են գերել ու 1000 տավար տարել²⁵⁶: 1504 թ. Տարոնի դաշտում գտնվող քրդական և թուրքական 500 ծիավոր ներխուժել են Քաջբերունիք՝ տանելով Արճեշի ու գյուղերի բոլոր անասունները²⁵⁷: Նույն 1504 թ. «ազգն մարաց» ավերածություններ է արել Վանում, Աղթամարում և Արծկեում²⁵⁸: Փաստորեն, Սեֆյանների կողմից Հայաստանի նվաճման ժամանակ Վանա լճի

²⁵³ Տե՛ս **Ivanov Wl.**, The Gabri Dialect Spoken by the Zoroastrians of Persia, Roma, 1940, էջ 42:

²⁵⁴ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 130:

²⁵⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 127:

²⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 127-128:

²⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 128:

²⁵⁸ Տե՛ս «Ժամանակագրություն (XI-XVIII դդ.)», էջ 273:

ավագանի քրդական ցեղերը համառ դիմադրություն են ցույց տվել, և դրանից մեծապես տուժել է տեղի հայ բնակչությունը:

Սուննի քրդերի և շիա Սեֆյանների միջև ռազմական բախումը բնական հիմքեր ստեղծեց թուրք-քրդական համագործակցության սկզբնավորման համար: Չալդրանի ճակատամարտում (1514 թ.) քուրդ ցեղապետերի մի մասը օսմանյան բանակի կողմից էր, մի մասն էլ (ազդեցիկ 25 առաջնորդներ, օրինակ՝ Մայաֆարկինի, Հիսն Քայֆի (Հասան Քեյֆ)²⁵⁹, Ագիլի (Անգո), Սասունի, Բալուի բեյերը) նրանց կողմը հակվեց ճակատամարտից հետո²⁶⁰: Սելիմ Ահեդի՝ Չալդրանի ուղղությամբ շարժվելիս Դիարբեքիրի քրդերը ասպատակել են Կամախի, Դերջանի, Բաբերդի բերդերի միջև ընկած տարածքները՝ վնաս պատճառելով օսմանյան զորքերին: Սելիմը և Դիարբեքիրի իշխողը նամակագրական կապի մեջ են մտել, և վերջինս նշել է իր 200 հազար հրացանաձիգների մասին: Ի վերջո, Սեֆյաններին պարտության մատնելուց հետո սուլթանի 100 հազարանոց բանակը՝ վեզիր Բըլըքլի Մուհամեդ փաշայի ղեկավարությամբ, պաշարել է Դիարբեքիրը: Քրդերը, մոլլա Իդրիս Իմատիի միջամտությամբ, բերդը զիջել են վեզիրին և գնացել Մարդին, իսկ Իդրիսը սուլ-

²⁵⁹ Հիսն Քայֆի շրջանում քրդական տարրի առկայության մասին խոսում են դեռևս միջնադարյան արաբական սկզբնաղբյուրները: Քրդական հոմայդա ցեղից էին ծագում Մրվանյանները, որոնք 10-րդ դարում Համդանյան ցեղի արաբներից գրավեցին Դիարբեքիրը, Մայաֆարկինը, Հիսն Քեյֆը, կարճ ժամանակով՝ նույնիսկ Մանազկերտը, Խլաթը, Արճեշն ու Վանը՝ իրենց կենտրոնը դարձնելով Ապահունիքը (տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց՝ Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 156-157, 261):

²⁶⁰ Տե՛ս **Քայբուրդյան Վ.**, Օսմանյան կայսրության կողմից..., էջ 72-73: Ճակատամարտի մասին առավել մանրամասն տե՛ս **Savory R.**, The Principal Offices of the Safawid State during the Reign of Ismāil I (907-30/1501-24), "Bulletin of the School of Oriental and African Studies", University of London, 23(1), էջ 91-105:

թանի կողմից ընդմիշտ ստացել է Դիարբեքիրը²⁶¹: 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի թուրք պետական գործիչ և պատմագիր Մեհմեդ Քյամիլ փաշան իր «Օսմանյան պետության քաղաքական պատմությունը» երկում գրում է 1514-1515 թթ. մոլլա Իդրիսի գործունեության և քրդական դերեբեյությունների հիմնադրման մասին: Ըստ նրա՝ Իդրիսի շնորհիվ Իսմայիլի դեմ ապստամբական օջախներ են դարձել Դիարբեքիրը, Բիթլիսը, Հիսնի-Քեյֆը, ինչպես նաև Սղերդի, Քիրքուքի և հարակից շրջանների 9 ցեղերի առաջնորդներ ընդունել են օսմանյան հպատակությունը, ապա նրանց են միացել հարևան ևս 16 բեյեր, որոնց օժանդակությամբ օսմանյան բանակը գրավել է Մուշը, Մարդինը, Էրզանը, Սինջարը, Ուրֆան, Ջերմուկը, Բերեջիկը և Դիարբեքիրի հարավային շրջանները²⁶²: Ըստ Ն. Ադոնցի՝ Իդրիսի ջանքերով քրդերն Արևմտյան Հայաստանի խորքեր էին տեղափոխվում երեք ուղղություններով՝ Դիարբեքիրից, Մոսուլից Հաքյարիով, Իրանից Սոուբուլադի շրջակայքից: Իդրիսը նույնիսկ համոզեց Իրանից մոտ 20 ցեղապետերի գաղթել Դիարբեքիրի շրջան²⁶³:

Էվլիյա Չելեբին իր ուղեգրությունների տարբեր հատվածներում քրդերին անդրադառնալիս գրում է օսմանյան իշխանությունների կողմից նրանց հնազանդեցման մասին: Այսպես, 1514 թ. Բիթլիսի խանը հպատակվել է Սելիմ Ահեդին, և «հյուրումների կարգով նրա որդիները մինչև հիմա էլ իշխում են իբրև խան, որոնց փաղիշահական հրամաններում վեհաշուք խան

²⁶¹ Էվլիյա Չելեբին Դիարբեքիրի հիմնադրման մասին մի մտացածին իսլամական ավանդազրույց է պատմում, որտեղ պատմական անցքերին առնչվող երկու դրվագ կա՝ մինչ մուսուլման իշխողների մուտքը Դիարբեքիրում ոչ մուսուլման բնակչություն էր, և մուսուլման տարրի հոսքը Մոսուլի շրջանի հետ է կապվում (տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 179-181):

²⁶² Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Դ, թարգմ.՝ Ա. Սաֆրաստյանի և Գ. Սանթրոջյանի, Երևան, 1972, էջ 79:

²⁶³ Տե՛ս **Քայքայության վ.**, Օսմանյան կայսրության կողմից..., էջ 76:

տիտղոսն է տրվում»²⁶⁴: Էվլիյա Չելեբին, շարունակաբար իսլամական գույներով ներկայացնելով հայկական բնակավայրերի պատմությունը, Բիթլիսի մասին խոսելիս առաջին մահմեդական տիրակալին նշելուց առաջ ասում է՝ «առաջին անգամ այս վայրը քրիստոնյաներից գրավել է»²⁶⁵ դրանով իսկ ընդունելով մինչ այդ քրիստոնեական իշխանության գոյության փաստը: 1514 թ. Սելիմ Ահեդի վեզիր Բըլըքլի Մուհամեդ փաշան Չալդրանի ճակատամարտից վերադառնալիս Դիարբեքրի հետ գրավում է նաև Միաֆարկինը²⁶⁶: 1515 թ. Սղերդի խանը Մուլա Իդրիսի համաձայնությամբ ևս սուլթանին հպատակություն է հայտնել²⁶⁷: Նույն տարում սուլթանին հպատակվել են Բալուն (հյուքյումեթ), Ճապադջուրը, որ, ըստ Էվլիյա Չելեբիի, քրդական 9 օջաքընքներից էր, Գենճը²⁶⁸: 1516 թ. Մուլա Իդրիսի և Բըլըքլի Մուհամեդ

²⁶⁴ «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 196:

²⁶⁵ Նույն տեղում:

²⁶⁶ Էվլիյա Չելեբին հաղորդում է մի լեգենդ, ըստ որի՝ քրդերի նախնին Միաֆարկինում հաստատվել է հավանելով տեղի ջուրն ու օդը (տե՛ս նույն տեղում, էջ 191-192): Սա նշանակում է, որ միայն ռազմաքաղաքական գործընթացներով դժվար է բացատրել քրդական տեղաշարժերի պատճառները, քանի որ կարևոր դեր են խաղացել նաև բնակլիմայական և սոցիալ-տնտեսական փոփոխությունները: Միջագետքում 14-16-րդ դարերում տեղումները նորմայից ցածր են եղել, ուստի այս շարունակական միտումը կարող էր հանգեցնել ջրային ռեսուրսների պատճառով միգրացիոն ալիքի առաջացման դեպի ավելի ջրառատ տարածաշրջան: Դիարբեքրի նահանգը, որ ընդգրկել է ոչ միայն Հարավային Հայաստանի հողերը, այլև Հյուսիսային Միջագետքի մի մասը 16-17-րդ դարերում բավականին նպաստավոր բնակլիմայական պայմաններ ուներ: Քյաթիբ Չելեբիի տեղեկությունների համաձայն՝ Նիսիբիսի (Մծբինի) մոտ մերձափնյա շուրջ 40 հազար բանջարանոց կար, Սղերդում առատ էին թուզը, նուռը և խաղողը, և «բոլոր ծառերն այստեղ աճում են անձրևի ջրով» («Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 54-56): Ներկայիս խիստ չորային պայմաններում (հուլիս-օգոստոս ամիսներին 11-12 մմ տեղումներ) դժվար է նույնը պատկերացնել:

²⁶⁷ Տոհմի ընդհատման պատճառով այդ ժամանակ Սղերդը Դիարբեքրի նահանգի գավառի էր վերածվել (տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 264):

²⁶⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 164, 167: Յորթուքը, օջաքընքը և հյուքյումեթը Օսմանյան կայսրությունում ժառանգական հողատիրության ձևեր էին: Հյուքյումեթի

փաշայի ձեռքով Սաղմանը ևս հպատակվել է Սելիմ Ահեդին²⁶⁹: 1515 թ. սկսած՝ Իդրիսի կողմից խրախուսվել է քրդական ցեղերի հոսքը Էրզրումի նահանգի հարավային շրջաններ²⁷⁰: Էվլիյա Չելեբին 17-րդ դարի կեսերին Դիարբեքիրի նահանգում նշում է 5 հյուքյումեթ (Էլ-Ջեզիրե, Էկիլ (Անգո), Գենճ, Բալու, Խրու), 19 սանջակ, որոնցից «8-ը քրդական բեյերի տիրապետության ներքո էին գտնվում, որովհետև (սուլթան) Սելիմ խանը [այդ երկրները] նվաճելու ժամանակ նրանց (քուրդ բեյերին) յուրթլուք և օջաքլըք է շնորհել»՝ Սաղման (թուրք.՝ Սաքման), Կողբ (Խուլի, թուրք.՝ Կուլեբ), Միհրանի, Թարջիլ (թուրք.՝ Թերջիլ), Աթախ (թուրք.՝ Աթաք), Բերդակ (թուրք.՝ Փերթեք), Ճապաղջուր (թուրք.՝ Չապաքջուր), Ջերմուկ (թուրք.՝ Չերմիք), իսկ Հիսնի-Բեյֆը, Մալաֆարկինը և Սինջարը լոկ օսմանյան սանջակներ էին²⁷¹:

1515 թ. պայմանագրով Արևմտյան Հայաստանը և Հյուսիսային Միջագետքը Սեֆյաններից անցան օսմանյան տիրապետության տակ: Ըստ Հ. Փափագյանի՝ պետական սահմանների

տներն ու բերքերը իշխողներին էր պատկանում, իսկ օջաքլըքում՝ պետությանը (տե՛ս նույն տեղում, էջ 318-320, ծան. 77):

²⁶⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 163:

²⁷⁰ Տե՛ս **Троттер**, Мало-азийские курды, «Известия Кавказского отдела императорского Русского географического общества», т. VII, Тифлис, 1882-1883, էջ 1-3:

²⁷¹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 25: 16-րդ դարի վերջին քառորդին Օսմանյան կայսրության վարչատարածքային բաժանման ցուցակում, որ ներկայացնում է 16-րդ դարի թուրք պետական գործիչ, պատմագիր Ֆերիդուն բեյը, արտացոլվում է քրդական ցեղերի հողատիրությունը Արևմտյան Հայաստանում: Կարևոր է, որ հիշատակվող օջաքլըքների մոտ 80%-ը կապված էր քրդական ցեղերի հետ: Դիարբեքիրի նահանգի 22 գավառների շարքում Ջերմեքը, Մարկերտը, Կալեքը, Էբակը, Միհրանին, Քորքիշը, Ահաքեը, Մալաֆարկինը և Քուրդքանը օջաքլըքներ էին, իսկ Ջետր, Հետր, Էքուր, Բերիել, Բալու և Գենճ օջաքլըքները՝ հյուքյումեթներ, Վանի նահանգի գավառների շարքում Վերֆայի, Մոկսի, Շենավի և Կուրկուրի օջաքլըքները, ինչպես նաև Բիթլիսի, Հարանի և Հեքքարի յուրթլուք օջաքլըքներն ու Մահմուդի հյուքյումեթը (թուրք-քրդական այլափոխումների ենթարկված տեղանունները տրված են բնագրի հայերեն թարգմանության համաձայն՝ տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 218-221):

նման փոփոխությունը հանգեցրել է Արևմտյան Հայաստանում բնակչության տեղաշարժերի, մասնավորապես՝ քրդական տարրն սկսել է տեղաշարժվել նաև դեպի Հայաստանի կենտրոնական նահանգներ²⁷²: Թեև նա կարծում է, թե քրդերն այդտեղ սկսել են կայուն բնակություն հաստատել, սակայն հայ հեղինակների, եվրոպացի և անգամ թուրք ուղեգիրների տվյալները ցույց են տալիս, որ նրանք այդտեղ դեռևս մշտաբնակ չեն եղել: Բաղեշի ռոժակի մեծ ցեղից Մուլլա Իդրիսի միջոցով դավանակից քրդերին թուրք-պարսկական սահմանային գոտում որպես պատնեշ օգտագործելու քաղաքականության իրագործման ընթացքը նկարագրված է Շարաֆ խան Բիթլիսիի կողմից. «...բազմաթիվ աշիրաթներ Սուլեյմանի քրդերից, որոնք բնակվում էին Միաֆարդինի կողմերում, գնացին բնակություն հաստատելու կրճըլբաշներից գրավված վայրերում, միաժամանակ հանձն առնելով պաշտպանել սահմանները: Այդ աշիրաթների պարագլուխները կարևոր պաշտոններ՝ զիամեթներ, ալայբեկներ և սանջաքներ ստացան»²⁷³: Շարաֆ խանը հատկապես կարևորում է փեսյան ցեղի առաջնորդ Շահսուվար բեկին, որին վստահված էր Բայազետի բերդի պաշտպանությունը²⁷⁴: Արարատյան կուսակալության վարչամիավորներում քրդական ցեղերի մասին քուրդ հեղինակն ընդհանրապես չի խոսում: Իսքանդար Մունշիի հաղորդմամբ՝ Իսմայիլն էլ իր հերթին իրեն հավատարիմ մահմուդի և փազուկի քրդերին տիրույթներ էր տվել Ա-

²⁷² Տե՛ս **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺՁ դ.), էջ 24:

²⁷³ “Scheref-nameh ou Histoire des Kourdes, par Scheref, prince de Bidlis”, publiee par V. Veliaminof-Zernof, SPB, 1860, t. 1, pp. 269-270, հղումը տե՛ս՝ **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺՁ դ.), էջ 24:

²⁷⁴ Տե՛ս նույն տեղում:

լաշկերտի՝ դեռևս իր տիրապետության ներքո գտնվող արևելյան մասում և Մակուի մերձակայքում²⁷⁵:

14-16-րդ դարերի միգրացիոն տեղաշարժերի հետևանքով 16-րդ դարի առաջին կեսին Վանի նահանգում բնակվում էին նեմիրան (Մամրտանք, Խիզանում), մահմուդի (Խոշաբում), դունբուլի (Սաղմանում), փազուկի (Արճեշում և Ադիլջևազում), ռոժկի (Բիթլիսում) ցեղերը: «Շարաֆ-նամե»-ում հիշատակվում են նաև հաքքարի, բելիլան, բիլբասի, կավալիսի, քեսյանի (Կեցանի), շեկակի (շկակ) և այլ ցեղեր, որոնք բնակվում էին Հայաստանի հարավային շրջաններում: Ամենաազդեցիկը Բիթլիսի (Բաղեշի) ամիրաներն էին, որոնք, ըստ ձեռագրերի հիշատակարանների տեղեկությունների, իշխում էին Բիթլիսում, Խլաթում, Մուշում, Խնուսում, Բասենում և Ավնիկում: Վանա լճի հարավային ափագանը Խիզանի քուրդ ամիրաների իշխանության ներքո էր: Ազդեցիկ էին նաև Ոստանի շամբո ցեղի ամիրաները²⁷⁶: 1540-ական թթ. դեպքերի առիթով էվլիյա Չելեբին Կոթուրի ձորից արևմուտք՝ մինչև Վան, հիշատակում է փինյանիշի քրդերին²⁷⁷:

Մ. Զուլայանը կարծում է, որ 16-17-րդ դարերում քոչվոր և կիսաքոչվոր ցեղերին (հիմնականում՝ քրդական և թուրքմենական) Արևմտյան Հայաստանում ավելացնելով՝ օտար տիրապետությունը ձգտում էր մասնատել և թուլացնել տեղական նստակյաց բնակչությանը²⁷⁸: Կարծում ենք՝ Մ. Զուլայանն իրավացի է,

²⁷⁵ Տե՛ս **Փափագյան Հ.**, Երևանի Մուհամադ-խան Ղաջարի՝ Միրզա-աղա Սիպկին և Ահմադ-աղա Զիլանիին շնորհած աղայության հրամանագրերը (XVIII դ.), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 13, Երևան, 1985, էջ 275:

²⁷⁶ Տե՛ս **Зуляян М.**, Армения в первой половине XVI в., էջ 25-26:

²⁷⁷ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 230:

²⁷⁸ Տե՛ս **Զուլայան Մ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 210-212: Վանի նահանգի քրդական ցեղախմբերի մասին տե՛ս նաև **Բադալյան Գ.**, Վանի էյա-

քանի որ օտար էթնիկ տարրի ստվարացման պայմաններում նստակյաց բնակչության համար ռեսուրսների հասանելիությունը սահմանափակվում էր: Լեոն, Վ. Մինորսկին և Վ. Բայբուրդյանը նշում են, որ օսմանյան քաղաքականությունը ձգտում էր ապահովել քուրդ ցեղապետերի տիրապետող դիրքը Արևմտյան Հայաստանում, ընդ որում՝ հայերի զանգվածային արտագաղթը և քրդական տարրի շարունակական ներթափանցումը հանգեցրին նրան, որ արդեն 18-րդ դարում գրեթե բոլոր վարչամիավորներում հայերի կողքին զգալի էր նաև քրդերի թիվը²⁷⁹: Նրանց բնակության օջախներն էին Դիարբեքիրի և Վանի նահանգները, մասամբ՝ Պարսկահայքը և Էրզրումի նահանգի հարավը:

Քրդական ցեղային իշխանությունների իրավունքների սահմանափակման փորձերը խիստ բացասաբար էին ընկալվում նրանց կողմից, և նման մի առիթի պարագայում 1533 թ. Բիթլիսի քուրդ էմիր Շարաֆ խանն ապստամբություն բարձրացրեց՝ աջակցություն ստանալով Սեֆյանների կողմից²⁸⁰: Թուրք-պարսկական պատերազմական թոհոփոհի մեջ, ի վերջո, Սուլեյման Ա-ին հաջողվեց վերստին հպատակեցնել քրդական ցեղերին: Այսպես, 1548 թ. հպատակվել է մահմուդի քրդերի բեյը՝ յուրթլուքի և օջաքլըքի կարգով, և մասնակցել Թավրիզի, Նախիջևանի ու Երևանի ուղղությամբ արշավանքներին²⁸¹: 1549 թ. Ամյուկը, Ոստանը և այլ տարածքներ դարձել են մահմուդի քրդերի բեյի հյուքյումեթը, այնուհետև հետևել են Ջերմ, Բերկրի և այլ բերդերի քուրդ իշխողները²⁸²: 1549 թ. քուրդ բոլոր բեյերը հպատակվել են

լեթի քրդական իշխանությունները (հուքյումեթները) 14-րդ դ. – 19-րդ դ. 40-ական թթ., «Իրան-նամե», 1998, թ. 2-3, էջ 23-37:

²⁷⁹ Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Օսմանյան կայսրության կողմից..., էջ 77, 80-82:

²⁸⁰ Տե՛ս **Զուլպյան Մ.**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, էջ 114:

²⁸¹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 224:

²⁸² Տե՛ս նույն տեղում, էջ 229:

Սուլեյմանին²⁸³: Այդուհանդերձ, Սուլեյման Ա-ն նախկինի չափ չէր վստահում քրդական ցեղապետերին և Արճեշի բերդի պահպանության համար մարդկանց էր բերել Բոսնիայից և Ալբանիայից, ովքեր մի քանի սերունդներ շարունակ կատարել են իրենց վստահված գործը, իսկ «անծանոթ քրդերին», ըստ էվլիյա Չելեբիի, ներս չէին թողնում²⁸⁴:

16-րդ դարի թուրք-պարսկական պատերազմների կապակցությամբ սկզբնաղբյուրներում քրդական ցեղերը քանիցս հիշատակվում են արդեն նաև Պարսկահայքում: 17-րդ դարի թուրք պատմագիր Սուլաք Չադեն 1549-1550 թթ. հիշատակում է Խոյի խան նշանակված դենբեյի (դունբուլի) Հաջի բեյին, ինչպես և Արճեշի ու Ադիլջևազի քուրդ բեյերին²⁸⁵: Հատկանշական է, որ թուրք-պարսկական սահմանի երկու կողմերում հաստատված քրդական ցեղերը ռեսուրսների ձեռքբերման համար միմյանց դեմ հաճախ պայքար էին մղում: 1577 թ. Վանի նահանգի արևելքում բնակվող քրդական ցեղերն ասպատակության ենթարկեցին Խոյի, Սալմաստի և Ուրմիո շրջանները²⁸⁶: Հաքյարիի Գավառի գավառակի Կարպեղա գյուղից Բարսեղ վարդապետը 1598 թ. Բաղեշի Ամիրդոլու վանքում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում գանգատվում է իր հայրենի բնակավայրում Աղբակի քուրդ տանուտերերի բռնություններից՝ նշելով, որ այլևս «Ոչ եղև մեզ բնակութին անդ եւ մի՛ այսուիեստեւ լիցի բնաւ»²⁸⁷:

²⁸³ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 214:

²⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 222:

²⁸⁵ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 143, 144:

²⁸⁶ Տե՛ս **Փափագյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺՀ դ.), էջ 30: Սալմաստում Առաքել Դավրիժեցին դարավերջին հիշատակում է «քուրդ պարոն» Ղազի խանին (տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 65):

²⁸⁷ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ը, № 2605, սյ. 677-678:

Քրդական ցեղերի տեղաշարժի հաջորդ ալիքն ուղղվեց դեպի Էրզրումի նահանգ: Սկզբնաղբյուրներում քանիցս հիշատակվում է 1590-1592 թթ. քրդական տեղաշարժը դեպի Երզնկա՝ ջալալի Գզիրօղլի Մուստաֆա բեկի ղեկավարությամբ²⁸⁸: Մեզ են հասել 16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին քրդական ավազակախմբերի կողմից նահանգի տարբեր շրջաններում, օրինակ՝ Կամախում, քարավանների թալանի մասին հիշատակություններ²⁸⁹: 1590-1595 թթ. Կեղիին անդրադառնալիս Հակոբ Կարնեցին նշում է. «Զի այն ժամանակ յոյժ շէն եղեալ է Կեղի, բովանդակ հայք և անուանիք և դասատուն վարդապետաց»²⁹⁰: Հաջորդող տարիների համար ժամանակագիրը շարունակում է. «...ազգն քրդաց ապըստամբ և ջալալի բազում են եղեալ, որ զմիմեանց զերկիրն ասպատակեն, և թալանեն և գողանան եղեր հանապազ և յանցս ճանապարհաց և ի լերինս բազումք որսան և ըսպանեն, որ դեռևս սովորութիւն նոցա այն է, որ մինչև Բ (2) և Գ (3) անգամ զերկիրն Կեղու և Բալվա թալաներ և աւիրեալ են, զի դեռ ևս Օսմանցիք ոչ են եղեալ այսչափ հզօր զօրութեամբ և նուաճեալ զամենայն աշխարհ, զի անտիրացեալ է ի թագաւորաց: Վասն որոյ տարի վերայ տարւոյ աւերումն է սկսեալ և սղութիւն հացի»²⁹¹: Հակոբ Կարնեցու պապը՝ Միրաքը, Ամիդ գնալու ճանապարհին հենց նմանատիպ հարձակման հետևանքով իր ուղեկիցների հետ թալանվել և սպանվել է²⁹²: Փաստորեն, Հակոբ Կարնեցու հաղորդած տեղեկությունները խոսում են

²⁸⁸ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 269, 394; **Սամուել Անեցի և շարունակողներ**, էջ 322; **Առաքել Դավրիժեցի**, էջ 475: Տե՛ս նաև նույն տեղում, էջ 551-552, ծանոթ. 598-599:

²⁸⁹ Տե՛ս **Փափազյան Վ.**, Առևտրական ճանապարհների պաշտպանությունը Սեֆյան պետությունում XVII դարում, «ՊԲՀ», 1986, թ. 4, էջ 158:

²⁹⁰ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 246:

²⁹¹ Նույն տեղում, էջ 246-247:

²⁹² Տե՛ս նույն տեղում, էջ 247:

օսմանյան կենտրոնական իշխանության թուլացման մասին: Ի դեպ, նա իր ժամանակակից հեղինակների պես համարժեք իմաստներով օգտագործում է «քուրդք» և «մարք» եզրերը²⁹³:

Այսպիսով, 16-րդ դարում քրդական ցեղախմբերի հողատիրության ընդլայնումն Արևմտյան Հայաստանում և Պարսկահայքում դարձավ օտար էթնիկական տարրի ամրապնդման կարևոր փուլերից մեկը, թեև այդ ժամանակ նորահաստատ, ինչպես և 14-րդ դարի կեսերից վերաբնակված ցեղերը դեռևս մեծամասնությունը չէին կազմում այն հողերում, որի նստակյաց երկրագործ հասարակության արտադրած սննդամթերքի շնորհիվ կարողանում էին ապահովել իրենց սեզոնային-անասնապահական ապրելակերպը: Միաժամանակ նկատելի էր քրդական ցեղախմբերի սեզոնային տեղաշարժ դեպի Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջաններ:

1.2.2. Օսմանյան կայսրության էթնոկրոնական քաղաքականության առանձնահատկությունները Հայաստանում

Օսմանյան կայսրության էթնոկրոնական քաղաքականությունը²⁹⁴ Հայաստանում ի սկզբանե ունեցել է որոշակի առանձնահատկություններ, քանի որ հայերին դիտում էին իբրև այլադավանների, որոնք հայրենի հողում ակնհայտ մեծամասնություն էին կազմում: Սուլթան Մեհմեդ Բ Ֆաթիհի (1444-1446, 1451-1481)

²⁹³ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 246-247:

²⁹⁴ Ներկայումս ժողովրդավարական երկրների կրոնադավանական ազատությունների պայմաններում կրոնական քաղաքականությունը ժողովրդագրական քաղաքականության բաղադրիչը չէ, սակայն Օսմանյան կայսրության կրոնական քաղաքականությունն ուներ էթնիկ պատկանելությունն ընդգծող դրսևորումներ, և ազգային հարցերի հիմքում շեշտվում էր կրոնադավանական պատկանելությունը, ուստի «կրոնական քաղաքականության» փոխարեն նախընտրել ենք օգտագործել «էթնոկրոնական քաղաքականություն» եզրույթը:

օրոք Օսմանյան կայսրությունում կազմակերպվել է կրոնադավանական համայնքների՝ միլլեթների համակարգ²⁹⁵, որը թուրքամետ ուսումնասիրողները ներկայացնում են որպես «դրական» երևույթ²⁹⁶: Դրա անհրաժեշտությունը բխում էր նրանից, որ անգամ էգեյան և Մարմարա ծովերի առափնյա քաղաքներից շատերում քրիստոնյաները կազմում էին բնակչության մեծամասնությունը: Նշենք նաև, որ 16-րդ դարում ևս բոլոր խոշոր քաղաքներում կային հույների, հայերի, հրեաների և այլ ժողովուրդների խոշոր համայնքներ²⁹⁷: Միլլեթների համակարգը կրոնամշակութային ներհամայնքային սահմանափակ ազատություն ունենալու հնարավորություն էր ընձեռում²⁹⁸: Այդ համակարգի տրամաբանությունից էր բխում նաև 1461 թ. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության ստեղծումը²⁹⁹, որը բնականաբար ուներ նաև այլ պատճառներ, որոնք մեր ուսումնասիրության առարկան չեն: Առաջին հայացքից թվում է, թե այս ամենը կարող էր նպաստել Օսմանյան կայսրության կողմից աստիճանաբար նվաճվող Արևմտյան Հայաստանում հայ բնակչության իրավունքները հաշվի առնելուն, սակայն օսմանյան իշխանությունների գործադրած մանկահավաքչության և բռնագաղթերի քաղաքականությունը վկայում է բոլորովին այլ դիրքորոշման մասին:

15-րդ դարում Օսմանյան կայսրությունում արմատավորվեց «սյուրգյունային» (բռնագաղթերի) քաղաքականությունը: Այն

²⁹⁵ Տե՛ս “Handbook of Ethnic Conflict: International Perspectives”, editors D. Landis & R. Albert, New York-Dordrecht-Heidelberg-London, 2012, էջ 266:

²⁹⁶ Տե՛ս օրինակ՝ **Shaw S.**, *Empire of the Gazis: The Rise and Decline of the Ottoman Empire (1280–1808)*, London, 1976, էջ 59:

²⁹⁷ Տե՛ս **Barrington M. Jr.**, *Ethnic and Religious Hostilities in Early Modern Port Cities*, “International Journal of Politics, Culture and Society”, vol. 14, 2001, № 4, էջ 710:

²⁹⁸ Տե՛ս **Խառատյան Ա.**, նշվ. աշխ., էջ 59:

²⁹⁹ Տե՛ս օրինակ՝ **Bardakjian K.**, *The Rise of the Armenian Patriarchate of Constantinople*, in “Christians and Jews in the Ottoman Empire: The Functioning of a Plural Society”, edited by B. Brande and B. Lewis, Vol. I, New York, 1982, էջ 89-100:

կրում էր մե'րթ զանգվածային, մե'րթ նպատակային բնույթ: 15-րդ դարի երկրորդ կեսին բալկանյան տարբեր քաղաքներից և Կեսարիայից հայ արհեստավորներ են տարվել Կոստանդնուպոլիս, իսկ սյուրգյունի համակարգը վերածվել է օսմանյան պետական զանգվածային վերաբնակեցման քաղաքականության³⁰⁰: 1473 թ. Դերջանում Ուզուն Հասանի նկատմամբ տարած հաղթանակից հետո Մեհմեդ Ֆաթիհն Էրզրումի, Երզնկայի, Բաբերդի, Տերիկի, Սեբաստիայի, Դիարբեքիի և այլ վայրերի հայ արհեստավորների բռնի տեղափոխել է Կոստանդնուպոլիս³⁰¹: 1573 թ. Կեսարիայի Ադրնաս, Մեծ և Փոքր Բուռունգյուզ (Պուրունկյուզ), Ուրկյուպ գյուղերը Սելիմ Բ-ի հրամանով բռնագաղթեցվել են դեպի Կիպրոս³⁰²: 17-րդ դարի թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբին մինչև իսկ թվարկում է Կոստանդնուպոլսի այն թաղամասերի անունները, որտեղ բնակվում էին Արևմտյան Հայաստանից և Փոքր Ասիայից բռնագաղթված հայ արհեստավորները³⁰³: 16-րդ դարում թուրք-պարսկական պատերազմները մշտապես ուղեկցվել են հայ բնակչության բռնագաղթերով, ընդ որում՝ 16-րդ դարում դրանց հիմնական կազմակերպիչն Օսմանյան կայսրությունն էր, իսկ 17-րդ դարում՝ Սեֆյանները:

Ռ. Սաֆրաստյանն իրավացիորեն նկատում է, որ Օսմանյան կայսրությունը միակ ղազխական բեյությունն էր, որ վերաճեց կայսրության, ուստիև քրիստոնյա ժողովուրդներին պատկանող

³⁰⁰ Տե՛ս **Agoston G.**, The Ottoman Empire and the Technological Dialogue Between Europe and Asia: The Case of Military Technology and Know-How in the Gunpowder Age, in “Science between Europe and Asia; Historical Studies on the Transmission, Adoption and Adaptation of Knowledge”, edited by F. Günergun & D. Raina, Dordrecht, 2011, էջ 35:

³⁰¹ Տե՛ս **Çark Y.**, Türk devleti hizmetinde Ermeniler, İstanbul, 1953, էջ 10-11:

³⁰² Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 633, 804, 889:

³⁰³ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 35; **Զուլպյան Մ.**, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ, էջ 111:

տարածքների աստիճանական նվաճումն ուղեկցվում էր ղազխական բեյության էթնիկական միատարր կառավարման հոգեբանությամբ, որի փայլուն արտահայտությունն էին դեշիրմեն (մանկահավաքությունը) և փենչիքը (Մուրադ Ա-ի ժամանակվանից քրիստոնյա գերիների մեկ հինգերորդի հարկադիր աշխատանք, մուսուլմանացում և ենիչերիների մեջ ընդգրկում)³⁰⁴: Ըստ թուրք պատմաբան Մ. Գյոքքիլգինի՝ իրենց թվապես գերազանցող հպատակ քրիստոնյաներին ենթակայության մեջ պահելու հիմնական մեթոդը օսմանյան իշխանությունների կողմից ենիչերական զորաբանակում զինվորական ծառայությունն ու մահմեդականացումն էր³⁰⁵: Նմանօրինակ բացատրություն է ներկայացնում նաև ռուս նշանավոր արևելագետ Վլ. Մինորսկին³⁰⁶:

Թուրք պատմիչ Կոչի-բեյը Օսմանյան կայսրությունում մանկահավաքի ենթակա էթնոսների ցուցակում հիշատակում է հայերին³⁰⁷: Հայկական սկզբնաղբյուրներում քանիցս հանդիպում են մանկահավաքի մասին հիշատակումներ: Կայսրության փոքրասիական շրջանների հայ բնակչությունից մանկահավաք կատարվել է դեռևս 1457, 1464, 1472 թթ.³⁰⁸: Ն. Ակինյանն այն տեսակետն է առաջ քաշել, որ հայկական սկզբնաղբյուրներում բուն Հայաստանում հիշատակվող առաջին մանկահավաքը եղել

³⁰⁴ Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Ցեղասպանության ակունքները միջնադարյան Թուրքիայում, «ՊԲՀ», 1998, թ. 1-2, էջ 105-112:

³⁰⁵ Տե՛ս **Շաքարյան Ա.**, Դեշիրմեն համակարգի սկզբնավորման հարցերի շուրջ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 23, Երևան, 2004, էջ 444, 449:

³⁰⁶ Տե՛ս **Minorsky VI.**, Shaykh Bālī-Efendi on the Safavids, "Bulletin of the School of Oriental and African Studies", University of London, Vol. 20, 1957, № 1/3, էջ 437:

³⁰⁷ Տե՛ս **Զուլպյան Մ.**, «Դեշիրմեն»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, «ՊԲՀ», 1959, թ. 2-3, էջ 250:

³⁰⁸ Տե՛ս **Խառատյան Ա.**, նշվ. աշխ., էջ 341-342:

է 1531 թ.³⁰⁹, մինչդեռ Մ. Զուլայանը, վկայակոչելով Անանուն Սեբաստացու ժամանակագրությունը³¹⁰, կարծում է, որ առաջին մանկահավաքը եղել է 1519 թ.³¹¹ և հետագայում կրկնվել է նաև 1531, 1536, 1543, 1547, 1550, 1567, 1585, 1589, 1590 և 1622 թթ.³¹²: Վարդան Բաղիշեցին (17-րդ դար) և մի քանի այլ հեղինակներ ևս հիշատակում են, որ առաջին դեշիրմեն սահմանել է Սելիմ Ահեղը 1519 թ.³¹³: Ա. Շաքարյանը սա համարում է ոչ թե դեշիրմե, այլ ընտրողաբար արված փենչիք, քանի որ Հայաստանն այդ ժամանակ դեռևս ռազմադաշտ էր, իսկ հայերը նվաճված գերի ժողովուրդ էին, որի մեկ հինգերորդը պատկանում էր սուլթանին³¹⁴: Նման տարակարծության պատճառները հասկանալու համար դիմել ենք սկզբնաղբյուրների օգնությանը: Այսպես, Անանուն Սեբաստացին (16-րդ դար) գրում է, որ 1519 թ. «բարկութիւնն աստուծոյ սաստկաւ և սուլդան (սուլթան – Մ.Մ.) Սելիմն տղայ ժողւեց ի քրիստոնէից»՝ մի քանի տող ներքև շարունակելով՝ 1531 թ. «տղայ ժողւեցին ի քրիստոնէից, ահ և փախ, լաց և աղաղակ և խեղճ բաներ շատ եղև»³¹⁵: Այստեղից հնարա-

³⁰⁹ Տե՛ս **Ակինեան Ն.**, Մաղաքիա վ. Դերջանցի. տաղասաց, շինարար եւ բարեգործ, «Հանդէս Ամսօրեայ», 1952, թ. 11-12, էջ 591:

³¹⁰ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 169:

³¹¹ Տե՛ս **Զուլայան Մ.**, «Դեշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 250; **Փափազյան Ա.**, Արևմտահայության վիճակը ըստ օսմանյան սուլթանական ֆերմանների (XVI-XVIII դդ.), «ՊԲՀ», 1988, թ. 2, էջ 131:

³¹² Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 169, 170, 171, 172; **Զուլայան Մ.**, «Դեշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 250; **Նույնի**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 329-331: 1585 թ. Հովհաննես Սեբաստացին գրում է, որ Սեբաստիայից սուլթանի կողմից առաքված մի պաշտոնյա ժողովել է 300 մանուկ և «արձակեալ ընդ ամենայն տեղիս զնոյն առնէր ի վերա քրիստոնէական տոհմից...» (ՄՄ, ձեռ. № 1868, էջ 232բ-233ա, հղումը տե՛ս՝ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 254):

³¹³ Տե՛ս «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 71; **Առաքել Դավրիժեցի**, էջ 474; «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 355:

³¹⁴ Տե՛ս **Շաքարյան Ա.**, Դեշիրմե համակարգի սկզբնավորման..., էջ 445:

³¹⁵ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 169-170:

վոր չէ եզրակացնել, թե երկրորդը պետք է փենչիք լիներ, ուստի երևույթի մասին տեղեկությունները դիտարկել ենք նաև այլ աղբյուրներում: 17-րդ դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին ներկայացնում է, որ 1519 թ. «սուլթան Սելիմն արար զմանչ ժողովելն: ... սուլթան Սելիմն չարացավ՝ տղայ ժողովեաց ի քրիստոնէից»³¹⁶: Անդրեաս սրկ. Եվդոկացու ժամանակագրության (16-րդ դար) մեջ նշվում է, որ 1531 թ. «եղաւ սկիզբն տղայ ժողովի»³¹⁷: Անանուն ժամանակագրության (18-րդ դար) համաձայն՝ Սելիմը «արար տղայ ժողով ի քրիստոնէից», իսկ 1533 թ. «սկիզբն եղև տղայ ժողովելոյ»³¹⁸: Ինչպես տեսնում ենք, առկա հիշատակություններով հնարավոր չէ վերջնական եզրահանգման գալ ընտրողաբար արված փենչիքի հարցում: Հետաքրքրություն է ներկայացնում մանկահավաքի աշխարհագրությունը: 1531 թ. մանկահավաքն «ի հայոց ազգէս» ներառել է Տրապիզոնը, Համշենը, Սպերը, Բաբերդը, Դերջանը, Երզնկան, Կամախը, Տերիկը³¹⁹, իսկ հատկապես 1550 թ. մանկահավաքն ընդգրկում է եղել³²⁰:

Մանկահավաքի կազմակերպման սկզբունքները Մ. Զուլայանն ուսումնասիրել է թուրք հետազոտող Ի. Ուզունչարշըլիի՝ սուլթանական հրովարտականքի և հրամանների հիման վրա 1943 թ. հրատարակած աշխատության միջոցով: Ըստ այդմ, մանկահավաքը կազմակերպվում էր 2-3 կամ 5 տարին մեկ անգամ՝ 8-20 տարեկան քրիստոնյաներից՝ 40 տնից մեկ կամ ավելի շատ մարդ վերցնելով³²¹: Բալկանյան աղբյուրները վկայում են 7-12 տարեկանների, իսկ սուլթանական հրովարտականքը՝ 15-20

³¹⁶ Առաքել Դավրիժեցի, էջ 474:

³¹⁷ Նույն տեղում, էջ 156:

³¹⁸ Նույն տեղում, էջ 321, 322:

³¹⁹ Տե՛ս Զուլայան Մ., «Դևչիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 251:

³²⁰ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 172:

³²¹ Տե՛ս Զուլայան Մ., «Դևչիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 251-252:

տարեկան պատանիների հավաքագրման մասին, ինչը փաստում է գործնականում կամայական հավաքագրումը³²²: Ա. Խառատյանն իրավացիորեն մեջբերում է Ն. Իցկովիչի այն դիտարկումը, որ Օսմանյան կայսրությունում սոցիալական շարժունությունը՝ ռայայից ասկյարի անցումը, հնարավոր էր իսլամ ընդունելու և դեշիրմեի ուղիով, որոնք, փաստորեն, բռնի մեթոդներով էին կիրառվում: Դեշիրմեով հավաքվածների մի մասն ուղղվում էր ենիչերական զորամասեր, մյուս մասը՝ հարկադիր աշխատանքի: Նոր նվաճված տարածքների բնակչությունն առհասարակ ռազմագերի էր համարվում, ուստի նրանցից վերցվողների քանակը որոշվում էր սուլթանի կամ ռազմական գործողությունը ղեկավարած փաշայի կողմից: Հանքարդյունաբերական շրջաններում, վակֆային (մզկիթապատկան) հողերում և մայրաքաղաքում երբեմն մանկահավաքներ չէին իրականացվում՝ վերագործարկվելով պատերազմական իրադրության պայմաններում³²³: Ենիչերի վերածվածները ստանում էին մուսուլմանական դաստիարակություն և կտրվում իրենց ազգային համայնքից: 16-րդ դարի վերջին և 17-րդ դարում Օսմանյան կայսրության ռազմատնտեսական հզորության անկումը պայմանավորեց գերության համակարգի քայքայման գործընթացը³²⁴: 1637 թ. օսմանյան աղբյուրներում հիշատակվող վերջին պաշտոնական դեշիրմեից հետո իրականացվող դրվագային դեշիրմեները քրիստոնյաների նկատմամբ տիրապետության պահպանման մեխանիզմներից

³²² Տե՛ս **Շաքարյան Ա.**, Մանկահավաքն Օսմանյան կայսրությունում որպես աշխատուժի վերակազմակերպման միջոց, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 24, Երևան, 2005, էջ 431:

³²³ Տե՛ս **Խառատյան Ա.**, նշվ. աշխ., էջ 341-344:

³²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 345:

մեկն էին դարձել, իսկ ենիչերական զորքերի համալրումն արդեն բուն օսմանյան տարրից էր կատարվում³²⁵:

Դեշիրմեով հավաքված քրիստոնյա երեխաների մեծ մասը, փաստորեն, ոչ թե համալրում է ենիչերիների զորաբանակը, որ 16-րդ դարի վերջին առավելագույնը կարող էր հասնել 48 հազարի, այլ, ըստ ֆրանսիացի ճանապարհորդ դ'Արամոնի, օգտագործվում էր գյուղատնտեսական աշխատանքներում՝ էժան գներով վաճառվելով փոքրասիական թյուրքալեզու գյուղացիությանը³²⁶: Ա. Շաքարյանը կարծում է, որ դեշիրմեի համակարգի մասնակի վերաճումը ստրկավաճառության բխում էր մարդկային ռեսուրսների խիստ կարիքից և մարդուժով առավել հարուստ տարածքների հաշվին մարդկային նվազ ռեսուրսներ, հետևաբար և թույլ գյուղատնտեսություն ունեցող վայրերի զարգացման քաղաքականության մեջ էր տեղավորվում³²⁷:

Սկզբնաղբյուրներում առկա վկայությունները փաստում են, որ մանկահավաքը կատարվել է միայն բռնի եղանակներով³²⁸: Պատահական չէ, որ սլավոնական ժողովուրդների մոտ դեշիրմեն ստացել է «արյան հարկ» անվանումը³²⁹: Ինչպես եզրակացնում է Մ. Զուլալյանը, մանկահավաքը Օսմանյան կայսրության

³²⁵ Տե՛ս **Խառատյան Ա.**, նշվ. աշխ., էջ 347:

³²⁶ Տե՛ս **Շաքարյան Ա.**, Մանկահավաքն Օսմանյան..., էջ 434-436:

³²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 430, 439-440:

³²⁸ Տե՛ս **Զուլալյան Մ.**, «Դեշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 252-254; «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 169-170; **Գրիգոր Դարանաղի**, էջ 304-311; **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, ս. 2608-2610; **Չամչեան Մ.**, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 513: Ըստ ժամանակագիր Հովհաննես Սեբաստացու և Մ. Չամչյանի՝ 1543 թ. մանկաժողովի ժամանակ նույնիսկ հայկական ութ եկեղեցիներ են այրվել (տե՛ս **Չամչեան Մ.**, նշվ. աշխ., էջ 513; **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն Եվդոկիոյ Հայոց, Գահիրե, 1952, էջ 598):

³²⁹ Տե՛ս **Շաքարյան Ա.**, Օսմանյան կայսրության բնակչության խուսափումը դեշիրմեից (համաձայն օսմանյան փաստաթղթերի), «Մերձավոր Արևելք», հ. III, Երևան, 2006, էջ 32:

քրիստոնյաների ազգային ճնշման և ուժացման քաղաքականության բաղադրիչներից էր³³⁰: Ի մի բերելով մեջբերված տեսակետները՝ հարկ է նկատել, որ մանկահավաքը քրիստոնյաների մուսուլմանացման ճանապարհով մարդկային ռեսուրսների բավարարման քաղաքականություն էր, ուստի, ինչպես նկատել է Մ. Զուլայանը, այն պետք է անպայման դիտարկել Օսմանյան կայսրության ազգային-կրոնական քաղաքականության համատեքստում: Ընդհանուր առմամբ, 3 դարերի ընթացքում ավելի քան 500 հազար քրիստոնյաների մանուկներ վերածվել են ենի-չերիների³³¹, իսկ այլ աշխատանքներում ընդգրկվածների թիվը մի քանի անգամ ավելին պետք է լիներ: Երբեմն պետական կարևորություն ունեցող աշխատանքներում ընդգրկված քրիստոնյաներն օգտվել են արտոնություններից, օրինակ՝ 1569 թ. Շապին-Գարահիսարի մոտակա 4 հանքերում աշխատող 23 գյուղերի բնակիչներ ազատվել են դեշիրմեից³³²: Այդուհանդերձ, հրովարտակներից մեկում ակնհայտ է, որ որոշ դեպքերում մանկահավաքի են ենթարկվել անգամ արտոնություններ վայելող Կամախի, Գյումուշխանեի, Շապին-Գարահիսարի հանքերում աշխատող հայ և հույն հանքափորների ընտանիքները³³³:

Հետաքրքիր է մանկահավաքների նկատմամբ Հայ առաքելական եկեղեցու մոտեցումը: Սկզբնաղբյուրներում քանիցս ներկայացված է, որ 1543 թ. դերջանցի Մաղաքիա վարդապետը գնաց սուլթան Սուլեյմանի մոտ և վերջինիս հրամանով չեղարկեց մանկահավաքը Դերջանում և Բաբերդում³³⁴: Սուլեյման Ա-ի

³³⁰ Տե՛ս **Զուլայան Մ.**, «Դեշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 255:

³³¹ Տե՛ս «Ուղեգրություններ», հ. 2, էջ 294:

³³² Տե՛ս **Շաքարյան Ա.**, Մանկահավաքն Օսմանյան կայսրությունում..., էջ 433:

³³³ Տե՛ս **Զուլայան Մ.**, «Դեշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 253:

³³⁴ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 439: Մաղաքիա Դերջանցու գործունեության մասին տե՛ս նաև՝ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. է, ձեռ. թիվ 2145, սյ. 194:

կողմից Կեսարիայի բեյին ուղղված 1564 թ. մի հրամանագրում նշվում է մանկահավաքի ենթարկված մի քանի տղաների՝ Կոստանդնուպոլսից հայրենի բնակավայր փախչելու և վերստին քրիստոնյա դառնալու մասին³³⁵։ Ըստ նույն փաստաթղթի՝ եկեղեցում հայրենի դավանանքին վերադառնալու ծես է կատարվել³³⁶։ Սա նշանակում է, որ այդ ժամանակաշրջանում բռնի իսլամացած մանուկը կամ պատանին քրիստոնեական համայնքի կողմից անմիջապես մերժված չէր համարվում, այլ հնարավոր էր նրա վերադարձը հարազատ համայնք։ Սա լիովին բացատրելի է Հայ առաքելական եկեղեցու 7 խորհուրդների նշանակությամբ, քանի որ մկրտության խորհուրդն անջինջ է համարվում։

Թուրքական սկզբնաղբյուրները վկայում են նաև Արևելյան Հայաստանից մանուկների և պատանիների հավաքման մասին։ 1589 թ. մանկահավաքը, ըստ Սելանիկիի, ընդգրկել է նաև Սեֆյաններից գրավված հողերը։ Նա հետևյալ կերպ է բնութագրում դեշիրմեի կատարման ընթացքը. «Ժամանակի իշխողները տղաների դեշիրմեի գործում անխիղճ են եղել և նվերի անվան տակ շատ մեծ կաշառքներ են վերցրել. ինչպես գայլն է հարձակվում ոչխարի հոտի վրա, այնպես էլ նրանք ագահորեն հարձակվել են երկրի ոայաների վրա։ Հարուստ ոայաներից խլել են անթիվ անհամար հարստություն, իսկ աղքատ ոայաներից՝ նրանց զավակներին, քանդել են նրանց տունն ու տեղը»³³⁷։

³³⁵ Տե՛ս **Փափագյան Ա.**, Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին վերաբերող թուրքական մի շարք վավերագրեր, «ՊԲՀ», 1983, թ. 4, էջ 202։

³³⁶ Տե՛ս **Շաքարյան Ա.**, Օսմանյան կայսրության բնակչության խուսափումը դեշիրմեից, էջ 31։

³³⁷ «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 136-137։

Տղայաժողովներից զատ սկզբնաղբյուրներում կան նաև աղջիկների հավաքմանն առնչվող փաստեր, ինչպես օրինակ՝ 1569 թ. «աղջիկ ժողովեցին ի քրիստոնէից»³³⁸:

Հայաստանի տարածքում մանկահավաքների ծավալների վերաբերյալ հայագիտության մեջ տարբեր կարծիքներ կան: Այսպես, Մ. Օրմանյանն իր «Ազգապատում» աշխատության մեջ այն հետևյալ կերպ է ներկայացնում. «Մանկաժողովը անելի Ասիական գաւառներու մէջ կը կատարուէր, եւ քրիստոնէայ տարրերուն մէջ անելի հարստահարուողը Հայը կ'ըլլար»³³⁹: Ի հակառակ այս տեսակետի՝ Մ. Զուլպյանը պնդում է, որ օսմանյան իշխանությունները քրիստոնյա երեխաներին Բալկաններում ավելի շատ էին հավաքում, քան Արևմտյան Հայաստանում, որովհետև այստեղ որպես իրենց ռազմական հենարան օգտագործվում էին քուրդ ցեղապետները, իսկ Բալկաններում այդպիսի տարրը բացակայում էր, ուստի պետք էր հնարավորինս արագ ամրապնդվել: Նրա կարծիքով՝ հայերից մանկահավաքն առավել մեծ չափերով դրսևորվել է ոչ թե բուն Հայաստանում, այլ Եփրատից արևմուտք ընկած շրջաններում, որոնք 16-րդ դարում խիստ հայահոծ էին³⁴⁰: Մեր կարծիքով՝ Մ. Զուլպյանի դիտարկումը միայն մասամբ է հաստատվում սկզբնաղբյուրների տվյալներով, քանի որ բազմաթիվ են մանկահավաքների մասին տեղեկություններն Էրզրումի նահանգում, որտեղ 16-րդ դարում քրդական տարրի առկայությունն առանձնապես նկատելի էր:

Բացի դեշիրմեից, հայ բնակչության աճի դինամիկայի վրա բացասաբար էր անդրադառնում նաև հարկային քաղաքականությունը: Օսմանյան կայսրության ու Սեֆյան Պարսկաստանի ազգային և հարկային քաղաքականության՝ կրոնականաց-

³³⁸ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 355:

³³⁹ **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., սյ. 2608:

³⁴⁰ Տե՛ս **Зуляян М.**, Армения в первой половине XVI в., էջ 49:

ված լինելու վառ վկայությունն է այլադավաններից զինվորական ծառայության փոխարեն գլխահարկի (ջիզիե կամ ջիզյա) գանձումը: Ջիզիեն 1528 թ. Օսմանյան կայսրության եկամտի 8%-ն էր, ընդ որում՝ այն հաճախ գանձվում էր ոչ միասնական սկզբունքով: Միայն 1691 թ. այն միօրինակացվեց՝ գանձվելով 14-75 տարեկան ոչ մուսուլման տղամարդկանցից³⁴¹: 17-րդ դարի թուրք պատմագիր Կոչի բեյի «Ռիսալե» երկում նկարագրվում է 1582 թ. և դրան հաջորդող տարիներին աղքատ ոչ մուսուլման հպատակներից ջիզիեի հարկման գործընթացը, հավելյալ ապօրինությունները, օրինակ՝ սահմանված 240 ակչեի փոխարեն հաճախ 700-800 ակչե էր գանձվում³⁴²:

Միտումնավոր անտեսելով հենց օսմանյան սկզբնաղբյուրների հաղորդած տվյալները՝ արդի թուրք պատմաբանները փոր-

³⁴¹ Տե՛ս **Մարտիրոսյան Ա.**, Գլխահարկն Օսմանյան կայսրությունում, «Մերձավոր Արևելք», հ. VI, Երևան, 2009, էջ 168-174: Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների նկատմամբ հարկային քաղաքականությունը մանրամասն չենք ներկայացնում, քանի որ դա ավելի շատ սոցիալ-տնտեսական պատմության մաս է: Օսմանյան հարկային քաղաքականության մասին տե՛ս «Հայոց պատմություն», հ. III, գ. I; **Անասյան Հ.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում; **Ջուլյան Մ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ.; **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի...; **Փափազյան Ա.**, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Երևան, 1999; «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI-XVII դարերի կանոն-նամներ)», թարգմ. և ծանոթ.՝ Ա. Սաֆրաստյանի և Մ. Ջուլյանի, Երևան, 1964; **Саркисян Е.**, Административная и демографическая политика османского правительства в Западной Армении, էջ 357-380; «Аграрный строй Османской империи XV-XVII вв.: документы и материалы»; **Darling L.**, Revenue Raising and Legitimacy: Tax Collection and Finance Administration in the Ottoman Empire, 1560-1660, New York, 1996; **Gerber H.**, Muslims and Zimmis in Ottoman Economy and Society: Encounters, Culture, and Knowledge, "Studies in Ottoman Social and Economic Life", edited by R. Motika, Ch. Herzog, M. Ursinus, Heidelberg, 1999, p. 141-169; **Balla E., Johnson N.**, Fiscal Crisis and Institutional Change in the Ottoman Empire and France, "The Journal of Economic History", № 69 (3), 2009, p. 809-845: Թուրքական մեկնաբանությունները տե՛ս **Tuncer H.**, Osmanlı imparatorluğunda toprak hukuku, arazi kanunları ve kanun açıklamaları, Ankara, 1962; **Çizakça M.**, A Comparative Evolution of Business Partnerships: The Islamic World and Europe, with Specific Reference to the Ottoman Archives, Leiden – New York, 1996.

³⁴² Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 230-231:

ծում են առաջ քաշել այն տեսակետը, թե իբր Օսմանյան կայսրությունում հարկերն անհատական չեն եղել, իսկ հարկային քաղաքականության հիմքում կրոնադավանական տարանջատում չի եղել: Նույնիսկ նման տեսակետն ամերիկյան թուրքագիտության մեջ առաջ տանող թուրք պատմաբան Մ. Ջոզֆելը ստիպված է խոստովանել, որ ջիզիեն ոչ մուսուլման բոլոր չափահաս տղամարդ հպատակներից անհատապես գանձվող հարկատեսակ էր³⁴³: Այս կերպ թուրք պատմաբանն ակամայից հաստատում է այն փաստը, որ օսմանյան հարկային համակարգը կրոնական խտրականության սկզբունքի վրա է հիմնված եղել:

«Արյան հարկից» և գլխահարկից զատ ակնհայտ բռնի գործողություններ են իրականացվել քրիստոնյա բնակչության նկատմամբ՝ ընդհուպ մինչև զանգվածային կամ մասնակի իսլամացման դեպքերը: Հաճախ է քննարկման թեմա դառնում Համշենի հայության իսլամացման ժամանակաշրջանի հարցը: Այսպես, Լ. Սահակյանը կարծում է, որ համշենահայության բռնի իսլամացման քաղաքականությունն ակտիվացել է 16-րդ դարի վերջից³⁴⁴, Լ. Խաչիկյանը և Մ. Աբրահամյանը՝ 17-րդ դարից³⁴⁵, Հ. Տաշյանը՝ 17-րդ դարի վերջից³⁴⁶: Մ. Ջուլալյանն իրավացիորեն նկատում է, որ մանկահավաքի ենթարկված հայության հա-

³⁴³ Տե՛ս **Coşgel M.**, The Fiscal Regime of an Expanding State: Political Economy of Ottoman Taxation, “University of Connecticut Department of Economics Working Paper Series”, Working Paper 2013-28, էջ 20; **Նույնի**, Efficiency and Continuity in Public Finance: The Ottoman System of Taxation, “University of Connecticut Department of Economics Working Paper Series”, Working Paper 2004-02R, էջ 20:

³⁴⁴ Տե՛ս **Սահակյան Լ.**, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, էջ 207-218:

³⁴⁵ Տե՛ս **Խաչիկյան Լ.**, Էջեր համշինահայ պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թ. 2, էջ 136; **Աբրահամյան Մ.**, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի իսլամացման խնդրի շուրջ, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. VII, Երևան, 2011, էջ 180-184:

³⁴⁶ Տե՛ս **Տաշեան Յ.**, նշվ. աշխ., էջ 30:

մար սկզբնաղբյուրներում հաճախ նշվում են Տրապիզոնը, Համշենը և Էրզրումի նահանգը³⁴⁷, ուստի այդ տեղում բնակչության գերակշիռ մեծամասնությունը պետք է կազմեին քրիստոնյաները: Բացի այդ, Լ. Սահակյանն իր վերջին ուսումնասիրություններից մեկում հստակ ցույց է տվել, որ Համշենը 16-րդ դարի առաջին երեսնամյակին եղել է հայ գրչության կարևոր կենտրոններից մեկը³⁴⁸: Փաստորեն, Համշենի բնակչության զանգվածային իսլամացումը չպետք է դիտարկել 16-րդ դարում:

Զանգվածային իսլամացման դեպք գրանցվել է 1578 թ., երբ Արևմտյան Հայաստանում օսմանյան վարչամեքենան հաստատելու և տեղի բնակչությանը հարկման ենթարկելու խնդրով Բաբերդի, Սպերի, Թորթումի և այլ գավառներ է ուղարկվել Լալա փաշան: Նա կարճ ժամանակում ավերակների է վերածել Բարձր Հայքի և Տայքի հայկական բազմաթիվ բնակավայրեր, սրի քաշել տասնյակ հազարավոր մարդկանց, և ավելի քան 50 հազար հայեր ֆիզիկական ոչնչացումից փրկվելու համար իսլամ են ընդունել³⁴⁹: Ըստ Ա. Ալպոյաճյանի՝ Կեսարիայում ևս տեղ են գտել զանգվածային մուսուլմանացման դեպքեր³⁵⁰:

Զգալի թիվ են կազմում իսլամացման մասին մասնավոր դեպքերի, կրոնական հողի վրա սպանությունների և եկեղեցիների՝ մզկիթի վերածման մասին հիշատակությունները սկզբնաղբյուրներում: Անհատական կամ մասնակի իսլամացման դեպքերը տեղ են գտել առանձնաշնորհումների և որոշ հարկերից ազատման պատճառով: Շարիաթի համաձայն՝ մուսուլմանն իրավունք ունի իր քրիստոնյա ազգականի ժառանգածը ստանալ: 17-

³⁴⁷ Տե՛ս **Զուլպյան Մ.**, «Դևշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 251:

³⁴⁸ Տե՛ս **Սահակյան Լ.**, Համշենը հայկական ձեռագրերում, «Արևելագիտության հարցեր», հ. 12, Երևան, 2016, էջ 86-95:

³⁴⁹ Տե՛ս **Տաշեան Յ.**, նշվ. աշխ., էջ 3-20:

³⁵⁰ Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, էջ 638-640:

րդ դարում Ռումելիի հույն, ալբանացի, բուլղար, սերբ մեծ թվով բնակչություն իսլամ ընդունեց, իսկ հայ բնակչության շրջանում այդ գործընթացն ավելի դանդաղ էր ընթանում³⁵¹: Եկեղեցիների բռնազավթման դեպքերից առանձնանում են 1518 թ. Ամիդում Կաթողիկե Ս. Թեոդորոսի վերածումը մզկիթի³⁵², 1565 թ. Սեբաստիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ժամատան քանդումը³⁵³ և 1592 թ. վերջինիս ու Ս. Աստվածածին եկեղեցու վերածումը մզկիթի³⁵⁴: Բազմաթիվ են հավատի համար նահատակությունների հիշատակումները: 1550 և 1590 թթ. Էրզրումում հիշատակվում են քրիստոնյաների՝ մեկօրյա զանգվածային սպանություններ³⁵⁵: Ահա նահատակված մարդկանց նաև անունները. 1517 թ. Ամիդում՝ Խաչատուր Կողբացի, 1519 թ.՝ Աստվածատուր, 1524 թ.՝ Բարունակ Ամդեցի, 1524 թ.՝ Մալաթիայի եկեղեցու լուսարար Կարապետ, 1528 թ.՝ Եդեսիայում Թորոս, 1533 թ.՝ Սեբաստիայի նահանգի Տևու (Տևոցու) վանքի արքեպիսկոպոս Հայրապետ, 1534 թ.՝ Թադեոս քահանա Սեբաստացի, 1535 թ.՝ Սեբաստիայի Շանքուռակ (Շնքուռակ) գյուղում երիտասարդ քահանա, 1536 թ.՝ Սեբաստիայում խոջա Կոզջան և այլք³⁵⁶:

Ինչպես Օսմանյան կայսրությունում, Սեֆյան Պարսկաստանում ևս 16-րդ դարում գործադրվել է ջիզիեն, սակայն չեն հիշատակվում զանգվածային մուսուլմանացման դեպքեր, իսկ դեշիրմեի ինստիտուտը չի գործել: Պատերազմների ժամանակ մա-

³⁵¹ Տե՛ս Ալայօյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, էջ 640-643:

³⁵² Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 428:

³⁵³ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 172:

³⁵⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 173; հ. 2, էջ 268, 518: Հմմտ. Առաքել Դավրիժեցի, էջ 475:

³⁵⁵ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 267, 518, 531:

³⁵⁶ Տե՛ս Օրմանեան Մ., նշվ. աշխ., սյ. 2591-2592, 2597-2599; «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 62, 499; Առաքել Դավրիժեցի, էջ 474; «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 170; հ. 2, էջ 266, 284, 382; Չամչեան Մ., նշվ. աշխ., էջ 516:

նունների գերեվարումների հիշատակումն ավելի շատ համարելի է փենչիքի հետ: Հավատի համար 16-րդ դարում նահատակությունների դեպքերի հիշատակություններն Արևելյան Հայաստանում հազվադեպ են, օրինակ՝ Գեղարքունիքի Աղամխան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում 1576 թ. թվագրվող տապանաքարի վրա գրված է. «Այս է հանգիստ Զաւիւրապին որ մարտիրոսաճաւ (մարտիրոսացաւ – Մ.Մ.) ի սէր Քրիստոսի»³⁵⁷, ուստի սա հավատի համար նահատակված անձ է: Արևելյան Հայաստանում նահատակությունների մասին դեպքերի և դեպի Պարսկաստան բռնագաղթի ենթարկվածների զանգվածային մուսուլմանացման հիշատակումներ սկզբնաղբյուրներում ավելի շատ հայտնվում են 17-րդ դարում շահ Աբաս Ա-ի գործունեության և հաջորդող շրջաններում³⁵⁸:

Այսպիսով, 16-րդ դարում Օսմանյան կայսրության էթնոկրոնական քաղաքականությունը Հայաստանում արտահայտվում էր այնպիսի բացասական երևույթներով, ինչպիսիք էին մանկահավաքները և գլխահարկի գանձումը, իսկ բռնի զանգվածային մուսուլմանացման դեպքերը թեև հազվադեպ են հիշատակվում, սակայն նախադեպ էին դառնում հաջորդ դարերի ընթացքում դրանց հաճախակի գործադրման համար: Այս ամենը կազմակերպված բնույթ ունեւ, Հայաստանի տարածքում ուղղակիորեն վերաբերում էր տեղաբնիկ հայ բնակչությանը և սերտաճած էր պետական ժողովրդագրական քաղաքականությանը՝ բացասաբար անդրադառնալով հայ բնակչության թվաքանակի շարժընթացի և հասարակական կյանքի վրա:

³⁵⁷ «Դիվան հայ վիմագրության», պր. IV, էջ 203:

³⁵⁸ Էթնոքաղաքական ընդհանուր խճանկարը տե՛ս **Galichian R.**, A Glance into the History of Armenia through Cartographic Records, London, 2015, էջ 42-43:

1.3. Բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը (առանձին վարչամիավորների օրինակով)

16-րդ դարում, չնայած հաճախակի տեղի ունեցող պատերազմական գործողություններին, զանգվածային բռնագաղթերին, սովին և ժանտախտին, սննդի ստացման համար հարմար բնակլիմայական պայմանների և համապատասխան հողերի առատության շնորհիվ Հայաստանի զգալի մասը շարունակում էր խիտ բնակեցված լինել: Բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը տեսնելու համար դիմենք Հայաստանի տարբեր վարչամիավորներում բնակչության տեղաբաշխման ներկայացմանը: Նախևառաջ սկսենք օսմանյան վարչամիավորներից:

16-րդ դարում Արևմտյան Հայաստանի ամենամարդաշատ վարչամիավորներից էր Էրզրումի նահանգը: 1474 թ. իտալացի ճանապարհորդ Հ. Բարբարոյի վկայությամբ Էրզրումի ամենամարդաշատ կենտրոններից Բաբերդն ունեցել է 1500 ընտանիք հայ բնակչություն³⁵⁹: Ըստ Էվլիյա Չելեբիի՝ Մեհմեդ Ֆաթիհը Իզմիրին մերձակա Թիրե քաղաքը գրավելուց հետո այնտեղից մոտ 3 հազար մարդ բերել է Բաբերդի սանջակ (գավառ)³⁶⁰: Ի. Միրօղլուի հրատարակած օսմանյան աշխարհագիր մատյանների շնորհիվ Լ. Սահակյանը վերհանել է 16-րդ դարում Էրզրումի նահանգի մի քանի գավառների բնակավայրերի թիվը, բնակչության մոտավոր թիվը և էթնոկրոնական կազմը: Այսպես, Բաբերդի կազայում (գավառակում) 1516-1518 թթ. հաշվառված է 211 (մոտ 15 հազար մարդ), 1520 թ.՝ 203, 1530 թ.՝ 207 (16,7 հազար մարդ) գյուղ, ընդ որում՝ քրիստոնյաները (հայերը) և մահմեդականները 1516 թ. կազմում էին բնակչության համապատասխա-

³⁵⁹ Տե՛ս «Ուղեգրություններ», հ. Ա, էջ 195:

³⁶⁰ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 126:

նաբար 78 (89) և 11 %-ը, 1530 թ.՝ 71 (87) և 13 %-ը³⁶¹: Հետաքրքիր է, որ Բաբերդ քաղաքի բնակչության թիվը, չնայած ոչ նպաստավոր ռազմաքաղաքական անցքերին, 16-րդ դարում շարունակաբար աճել է՝ 1520 թ. 3341-ից 1591 թ. հասնելով 5630-ի, ընդ որում՝ քրիստոնյաների տեսակարար կշիռը 68,7 %-ից նվազել է 65,2 %-ի³⁶²: Ակնհայտ է, որ քաղաքում մահմեդականների տեսակարար կշռի՝ գյուղական բնակչության համապատասխան ցուցանիշը գերազանցելու գլխավոր պատճառը բերդում տեղակայված կայազորն էր:

Էրզրումի նահանգի մեկ այլ վարչամիավորում՝ Սպերի գավառակում, 1520 թ. կար 139 գյուղ, իսկ հրապարակված 41 գյուղերում 6,3 հազար բնակչության միայն 0,2 %-ն էր մահմեդական՝ 1530 թ. հասնելով միայն 1,6 %-ի³⁶³: Թ. Հակոբյանը, հենվելով եվրոպացի ուղեգիրների տեղեկությունների վրա, կարծում է, որ, չնայած 1548 թ. Սեֆյանների կողմից ավերմանը, 16-րդ դարի երկրորդ կեսին Սպերի բնակչության թիվը 4-5 հազար ընտանիք էր³⁶⁴:

Զգալի թվով բնակավայրեր են գրանցվել նաև Դերջանում՝ 1516 թ.՝ 173 (Ներքին Դերջանի 66 գյուղից 34-ը ավերված էին), 1530 թ.՝ 170, ընդ որում՝ 1516 թ. 4,7 հազար բնակիչներից միայն 9,8 %-ն էր մահմեդական, իսկ 1530 թ.՝ մոտ 10,8 հազարից 7,6 %-ը³⁶⁵: Այսպիսով, Էրզրումի նահանգի 3 գավառակների օրինա-

³⁶¹ Տե՛ս **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի..., էջ 58, 212, VI: Փակագծերում ավելացված են «անհայտ» կրոնական պատկանելություն ունեցողները, որոնց Լ. Սահակյանը հաշվարկել է քրիստոնյաների թվի մեջ:

³⁶² Տե՛ս նույն տեղում, էջ 125-128: Տե՛ս նաև **Melkonyan A.**, The demography of the Province of Erzerum: Sixteenth-Twentieth Centuries, in “Armenian Karin/Erzerum”, Edited by R. Hovannisian, Costa Mesa (California), 2003, էջ 134-145:

³⁶³ Տե՛ս **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի..., էջ 58, 245:

³⁶⁴ Տե՛ս **Հակոբյան Թ.**, Պատմական Հայաստանի քաղաքները, էջ 225-226:

³⁶⁵ Տե՛ս **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի..., էջ 272-273, XII:

կով երևում է, որ 16-րդ դարի առաջին կեսին հայ բնակչությունը շարունակում էր գերակշռող մեծամասնություն կազմել իր հայրենի հողում (3 գավառակներում՝ միջինը 93 %): 3 գավառակներում 1516-1530 թթ. 520-ից ավելի գյուղերի հիշատակումն էլ իր հերթին խոսում է բնակչության մեծ խտության մասին: Դարավերջին էլ (1591 թ.) Բաբերդի գավառակի գյուղերում հաշվառվել է 4534 (5087) քրիստոնյա և 1800 մահմեդական³⁶⁶: Անշուշտ, այս թվերը նախորդների հետ անհամատեղելի են թվում, սակայն, ուսումնասիրելով օսմանյան հարկացուցակների՝ ըստ շնչերի կազմելու սկզբունքները, հանգել ենք այն եզրակացության, որ այստեղ խոսքը միայն գլխահարկ վճարող քրիստոնյաների մասին է, այսինքն՝ չափահաս տղամարդ բնակիչները՝ առանց ծերունիների: Ըստ Թ. Հոլլինգսուորթի՝ երեխաները ուշմիջնադարյան Եվրոպայում կազմում էին բնակչության 40 %-ը³⁶⁷, ուստիև սրա հետ միասին հաշվի առնելով նաև զառամյալների (պայմանականորեն՝ շուրջ 5%), ստանում ենք, որ գավառակում ապրում էր 18,5 հազար քրիստոնյա, ինչը համադրելի է դարի առաջին կեսի վիճակագրական ցուցանիշների հետ:

Էրզրումի հարևան Կարսի նահանգում բնակչության տեղաբաշխման ավանդական պատկերի վրա խիստ բացասական ազդեցություն ունեցավ Ամասիայի պայմանագիրը, որի մասին խոսել ենք նախորդ ենթագլխում: Այդուհանդերձ, անգամ Ամասիայի հաշտությունից և շահ Աբաս Ա-ի կազմակերպած բռնագաղթից հետո՝ 1608-1610 թթ., Կարսում հայ բնակչություն է հիշատակվում՝ «բնակիչք Ղարսայ հայք»³⁶⁸:

Օսմանյան կայսրության՝ արևմտահայկական ամենահայախոճ վարչամիավորներից մեկն էր Վանի նահանգը: Այստեղ

³⁶⁶ Տե՛ս **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի..., VI:

³⁶⁷ Տե՛ս **Hollingsworth T.**, նշվ. աշխ., էջ 49:

³⁶⁸ «Դիան պատմութեան Հայոց», գիրք Ժ, էջ 59:

դեռ 1510-ական թթ. վենետիկցի մի վաճառական Վանը հիշատակում է որպես հիմնականում հայերով բնակեցված մեծ քաղաք, իսկ Աղթամար կղզում՝ «Արմենիկ» անունով բազմամարդ քաղաք (այսինքն՝ հայկական աղբյուրներում հիշատակվող Աղթամար ավանը), որտեղ միայն հայ քրիստոնյաներ էին բնակվում³⁶⁹: Վանի նահանգի վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն, ցավոք, չի հրատարակվել: Սուլեյման Կանունիի կողմից անցկացված մարդահամարի մասին քանիցս հիշատակում է թուրք ուղեգիր էվլիյա Չելեբին: Այդուհանդերձ, «Գյուլջիստանի վիլայեթի մեծ դավթար»-ի օրինակը ցույց է տալիս, որ հարկացուցակներում հնարավոր չէ տեղեկություններ գտնել օջաքը կամ հյուքումեթ հանդիսացող վարչամիավորներում, որոնք առկա էին նախևառաջ հենց Վանի և Դիարբեքիի նահանգներում: Այդ իսկ ոչ միասնական սկզբունքների պարագայում 1577 թ. օսմանյան թիմարների մի դավթարում Վանի նահանգի Վանի, Արճեշի, Արծկեի (թուրք.՝ Ադիջևազ), Բիթլիսի, Բերկրիի և Կեցանի (թուրք.՝ Քեսան) գավառների Գավաշի, Արճեշի, Տատիկի, Օխկանի, Չուխուրի, Ամյուկի, Մուշի, Ադիջևազի, Բերկրիի և այլ նահիեններում (գյուղախմբերում) նշվում է 104 գյուղ³⁷⁰: Նույնպիսի մի դավթար էլ 1603 թ. հիմնականում համապատասխանում է նախորդին³⁷¹: Հետաքրքրական է, որ, երբ 1561 թ. «Շամիրամայ ջուրն բերին Վանայ այգիքն», Վան քաղաքից աշխատանքներին մասնակցել է 8 հազար մշակ³⁷²: Սա խոսում է այն մասին, որ քաղաքը պետք է բնակչության մեծ թիվ ունենար:

³⁶⁹ Տե՛ս «Ուղեգրություններ», հ. Ա, էջ 300-301:

³⁷⁰ Տե՛ս **Փափազյան Հ.**, Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Վանի էյալեթին վերաբերող օսմանյան դիվանական վավերագրերը, «Բանբեր Մատենադարանի», թ. 15, Երևան, 1986, էջ 275:

³⁷¹ Տե՛ս նույն տեղում:

³⁷² Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 482:

Հետաքրքիր իրավիճակ էր թուրք-վրացական հարաբերություններում կռվախնձոր հանդիսացող Սամցխեի աթաբեկությունում (վրաց.՝ Սաաթաբագո): Նրան վերաբերող 1520-ական թթ. կազմված օսմանյան մի զեկուցագրում նշվում է, որ Տայք (վրաց.՝ Թավելի) գավառը, գտնվում էր Վրաստանի կազմում, բազմամարդ և ընդարձակ էր, խիտ բնակեցված ու բարգավաճ, ուներ շուրջ 200 բարեկարգ գյուղեր³⁷³: Մամրվանի (թուրք.՝ Նարիման) գավառը ուներ 40-50 գյուղ, ջրառատ էր և ցանքատարածություններով ու արոտավայրերով հարուստ³⁷⁴: Թորթումի Խախոյի (Իշխանաձորի) շրջանում մոտավորապես 100 գյուղ կար, այդ թվում՝ 20-30-ում կառավարում էին անկախ «անհավատ ազնավորներ»³⁷⁵, այսինքն՝ քրիստոնյա ազնվականներ: Արդահանի գավառում՝ մինչև Թմուկ բերդ, 300 գյուղ կար՝ ջրառատ և ցանքատարածություններով ու արոտավայրերով հարուստ³⁷⁶: Զավախքում՝ մինչև Ածղուր (Ասկուրեթ), մոտ 200 գյուղ կար՝ հարթավայրոտ, խիտ բնակեցված գյուղերով, իսկ փաշայանիստ Ախալցխայի շրջակայքում 200 գյուղ կար³⁷⁷: Այսպիսով, զեկուցագրի տվյալների համադրմամբ ստացվում է, որ 1520-ական թթ. աթաբեկությունում շուրջ 1050 գյուղ կար:

Համանման թվեր են ներկայացված դարավերջի օսմանյան հարկացուցակում: Չըլդրի (Ախալցխայի) նահանգի 1250 բնակավայրերի բնակչության գերակշիռ մասը, ըստ 16-րդ դարի վերջի օսմանյան հարկացուցակի՝ «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթար»-ի, կրում էր հայերի ու վրացիների շրջանում մեծ տա-

³⁷³ Տե՛ս **Մուրադյան Ս.**, XVI դ. օսմաներեն մի վավերագիր, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 22, Երևան, 2003, էջ 244:

³⁷⁴ Տե՛ս նույն տեղում:

³⁷⁵ Տե՛ս նույն տեղում:

³⁷⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 245:

³⁷⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 246:

րածում ունեցող անուններ, այսինքն՝ երկրամասը գերազանցապես քրիստոնեաբնակ էր³⁷⁸։ Ա. Մելքոնյանը համեմատել է օսմանյան երկու հարկացուցակների տվյալները՝ եզրակացնելով, որ միայն Վերին Ջավախքի 3 գավառներում 1595 թ. եղել է 358 գյուղ, իսկ 1694-1732 թթ.՝ 142, այսինքն՝ 2,5 անգամ ավելի քիչ։ 1595 թ. Ախալքալաքի գավառում եղել է 139 գյուղ (Ակշեհիի նահիե՝ 84 գյուղ, Թմուկ՝ 22, Նիալիսողուրի՝ 33), Խերթվիսի գավառում՝ 119 (Անտառային Ջավախք՝ 69, Խերթվիս՝ 38, Բուզմարեթ՝ 12), Չըլդըրի գավառում՝ 100 (Ջանբագ՝ 51, Գայլաբերդ՝ 16, Քանարբեկ՝ 33), ընդ որում՝ բնակավայրերի թիվը նվազել է բոլոր նահիեներում, հատկապես՝ Բուզմարեթի նահիեում ընդամենը մեկ բնակավայր էր մնացել³⁷⁹։ Մեր կարծիքով՝ այս կտրուկ նվազման ժամանակահատվածը պետք է համարել 17-րդ դարի երկրորդ կեսը, քանի որ Չըլդըրի էյալեթի 13 սանջակներում Էվլիյա Չելեբին 17-րդ դարի կեսին հիշատակում է 1060 գյուղ³⁸⁰։ Հետագայում բռնի մահմեդականացման քաղաքականությունից առանձնակի տուժել է Օլթիի լիվան, որի բնակավայրերի թիվը 18-րդ դարի առաջին քառորդին 16-րդ դարի վերջի համեմատ կրկնակի նվազել է³⁸¹։

Օսմանյան կայսրության կազմում զգալի վերափոխումներ է կրել Համշենը։ Թուրք պատմաբան Մ. Գյոքբիլգինի հրապարակած Տրապիզոնի գավառին պատկանող օսմանյան աշխար-

³⁷⁸ Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Օսմանյան կայսրության ժողովրդագրական քաղաքականությունը որպես ցեղապանության դրսևորում ըստ Էրզրումի և Ախալցխայի նահանգների օրինակների, էջ 40; **Նույնի**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 76-82։

³⁷⁹ Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Օսմանյան կայսրության ժողովրդագրական քաղաքականությունը..., էջ 43։

³⁸⁰ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 110։

³⁸¹ Տե՛ս **Ակոպով Ա.**, Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի I երեսնամյակը, Երևան, 2013, էջ 97, 102։

հագիր մատյաններից տեղեկանում ենք, որ 16-րդ դարում Համշենը Տրապիզոնի գավառի մի գավառակ էր 3 նահիեններով (գյուղախմբերով)՝ Հեմշին, Քարահեմշին, Էքսանց³⁸²: Համաձայն այդ հրապարակման՝ 1532 թ. Տրապիզոնի գավառի նույնանուն գավառակում կար 199 գյուղ (բնակչությունը՝ 12639 տուն քրիստոնյա և 1094 տուն մահմեդական), իսկ Համշենի գավառակում՝ 34 գյուղ (457 տուն քրիստոնյա և 214 տուն մահմեդական)՝ 682 շունչ բնակչությամբ³⁸³: Լ. Սահակյանն ընտանիքի անդամների թվի՝ 8-10 միջին գործակցով հաշվարկել է Համշենի բնակչության թիվը՝ անընդունելի համարելով 682 շունչ բնակչության մատնանշումը Մ. Գյոքբիլգինի մոտ: Նա ստացել է 3656-4570 քրիստոնյա և 1712-2140 մահմեդական³⁸⁴: Միանգամայն ընդունելի համարելով Լ. Սահակյանի հաշվարկը, պետք է միաժամանակ նկատենք, որ 682 շունչը գլխահարկ վճարող տղամարդկանց թիվն է միայն: Ըստ Լ. Սահակյանի՝ Համշենում բռնի մահմեդականացման առաջին փորձերը պետք է դիտարկել 16-րդ դարի վերջից և 17-րդ դարից, ինչն Օսմանյան կայսրության՝ Սեֆյանների հետ սահմանին սուննի մահմեդականների տիրապետող դիրքն ամրապնդելու տրամաբանությունից էր բխում³⁸⁵:

Արևմտյան Հայաստանի քաղաքներում օսմանյան կայազորների տեղակայման պայմաններում արհեստականորեն ավելանում էր բնակչության թիվը: Միաժամանակ տեղաբնիկ տարրի հաշվին 16-րդ դարում մարդաշատ քաղաքներ էին Էրզրումը, Վանը, Երզնկան, ինչպես նաև Կարսը, Բայազետը, Խլաթը, Բիթլիսը, Մուշը, Արճեշը, Սեբաստիան, Մալաթիան, Դիարբեքիրը, նույնիսկ՝ Մանազկերտը, որը քրդական բեյերի միջև մղվող

³⁸² Տե՛ս **Սահակյան Լ.**, Օսմանյան կայսրությունում համշենահայերի..., էջ 212:

³⁸³ Տե՛ս նույն տեղում, էջ 213:

³⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 215:

³⁸⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 216-218:

կոիվներից դեռևս այնքան էլ չէր տուժել և 16-րդ դարի սկզբին ուներ մոտ 6 հազար տուն բնակչություն³⁸⁶:

16-17-րդ դարերի միգրացիոն գործընթացների արդյունքում ավելի ստվարացավ պատմական Փոքր Հայքի տարածքում ստեղծված օսմանյան վարչամիավորների հայ բնակչությունը: Հայահոծ էր հատկապես Սեբաստիայի նահանգը, իսկ Կեսարիայի շրջանում հայ բնակչության ստվարացմանը զուգընթաց 1550-1680-ական թթ. արդեն հիշվում են Կեսարիայի և Թոմարգայի հոգևոր առանձին առաջնորդներ³⁸⁷:

Սեֆյան Պարսկաստանի կողմից Արևելյան Հայաստանում ստեղծված վարչամիավորներում բնակչության տեղաբաշխման պատկերը ստանալու հարցում մեր տրամադրության տակ պաշտոնական վիճակագրություն չկա: Գուցե այս հարցում մեզ որոշ չափով օգնեն 1591 թ. Երևանի նահանգում Օսմանյան կայսրության կողմից կազմված հարկացուցակը, որը, սակայն, չի հրատարակվել և, բացի այդ, ամբողջական չի կազմվել: Նման պայմաններում պարսկական կալվածագրերի³⁸⁸, հրովարտականների, հայ մատենագիրների, եվրոպացի և թուրք ուղեգիրների, ինչպես նաև վիմագրերի տվյալներով հնարավոր է հաստատապես պնդել, որ 16-րդ դարում Արևելյան Հայաստանը բավականին խիտ է բնակեցված եղել, ընդ որում՝ բնակչության գերակշիռ մեծամասնությունը շարունակել են կազմել հայերը: 1533 թ. օսմանյան բանակի՝ Արևելյան Հայաստան արշավանքը նկարագրելիս թուրք պատմիչ Իբրահիմ Փեչևին Շորագյալի (Շիրակի) համար

³⁸⁶ Տե՛ս **Հակոբյան Թ.**, Պատմական Հայաստանի քաղաքները, էջ 20:

³⁸⁷ Տե՛ս **Ալաթյան Ա.**, Պատմություն հայ Կեսարիոյ, էջ 907-909, 981:

³⁸⁸ Տե՛ս «Մատենադարանի պարսկական վավերագրերը», II, կալվածագրեր, պր. Ա (ԺԴ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Փափազյան, Երևան, 1968, վավ. 12-16, 18, 19, 21, 22, 24, 26, 27; **Փափազյան Հ.**, Գյուղերն ու ագարակները Արևելյան Հայաստանում XVI-XVII դարերում, «ԴԲՀ», 1966, թ. 4, էջ 222:

առանձնահատուկ նշում է, որ մինչ իրենց զորքերի մուտքը «շատ բարեշեն է եղել, ունեցել է մշակված հողերով հարուստ բազմաթիվ գյուղեր», իսկ իրենց բանակն ավերել է դրանք³⁸⁹: Թահմասպ Ա-ի 1565 թ. հրովարտակում առանձնահատուկ կարևորությամբ նշված են Զուղան, Նախիջևանը, Գեղարքունիքը, Կաղզվանը և Շիրակը, ուստի նրանք միջազգային կամ տարածաշրջանային առևտրի կարևոր ուղիների վրա էին³⁹⁰: 20 հազար³⁹¹ բնակչությամբ Զուղա գյուղաքաղաքն առհասարակ վերածվել էր մետաքսի միջազգային առևտրի համաշխարհային կենտրոններից մեկի, և «էր մեծ և երևելի շէնն այն ի ժամանակին յայնմիկ **Ի մէջ արեւելեայ աշխարհիս** (ընդգծումը մերն է – Մ.Մ.), զի տակաւին ոչ էին վարեալ յաշխարհն Պարսից յայնմ ժամանակի»³⁹²: 1590-1605 թթ. օսմանյան տիրապետության շրջանից մեզ հասել են Թադեի, Դարաշամբի, Աստապատի և մերձակա վանքերի, Մակուի, Չորսի, Նախիջևանի և Գողթնի գյուղական որոշ համայնքների մասին օսմանյան վավերագրեր³⁹³, որոնք հաստատում են Գողթն-Նախիջևանում և Պարսկահայքում հայ բնակչության գերակշռող լինելու մասին: Մինչ շահ Աբասի բռնագաղթը Սալմաստի եպիսկոպոսությունը բավականին բարձր դիրք ուներ³⁹⁴: Պարսից արքունիքին տրվելիք պարտքը փակելու համար այթռակից Սահակ կաթողիկոսը մեկնել է հայաբնակ տարբեր

³⁸⁹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Ա, էջ 33:

³⁹⁰ Տե՛ս **Փափագյան Վ.**, Առևտրաարհեստագործական հարկը Սեֆյան տերության մեջ XVI դարում և նրա վերացման հանգամանքները, «ՊԲՀ», 1984, թ. 2, էջ 117-120:

³⁹¹ **Հասրաթյան Մ.**, Հայկական ճարտարապետությունը և պատմաաշխարհագրական ու դեմոգրաֆիկ գործոնները, «ՊԲՀ», 1996, թ. 1-2, էջ 170:

³⁹² **Առաքել Դավրիժեցի**, էջ 61:

³⁹³ Տե՛ս **Փափագյան Հ.**, Մատենադարանի թուրքերեն վավերագրերի աղբյուրագիտական արժեքը, «ՊԲՀ», 1974, թ. 4, էջ 93:

³⁹⁴ Տե՛ս **Առաքելեան Հ.**, նշվ. աշխ., էջ 26-27:

վայրեր, այդ թվում՝ Խոյի գավառ³⁹⁵: Պարսկահայքի պատմաքաղաքական տարանջատումը Հայաստանի ընդհանրությունից, ըստ Հ. Առաքելյանի, տեղի է ունեցել 15-րդ կամ 16-րդ դարում, քանի որ մինչ այդ հիշատակվում է Երասխի կամուրջը, որի մասին չգիտեն Առաքել Դավրիժեցին, Տավերնիեն, Շարդենը, Թուրնեֆորը, ընդ որում՝ Շարդենը նույնիսկ պարզ նշում է, որ Երասխը Հայաստանը բաժանում է Մեդիայից³⁹⁶:

Արևելյան Հայաստանում հոծ հայ բնակչություն էր կենտրոնացած հատկապես Արարատյան դաշտում, որտեղից քանիցս 16-րդ դարում կազմակերպվել են հայերի բռնագաղթեր, մելիքական տների հովանու ներքո գտնվող Արցախում, Գեղարքունիքում, ինչպես նաև Սյունիքի մյուս հատվածներում, Գանձակում, վրացահպատակ Լոռիում: 1538 թ. Թահմասպ Ա-ի հրամանագրով հաստատվել է Գեղարքունիքի Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Միրաբադ, Գյուրջի Վերան և Ամրսաղ գյուղերի մուլքերի պատկանելությունը Գեղարքունիքի Մելիք Բեկ Մելիք-Շահնազարյանին, 1605 թ. Մելիք Քյամալին է շնորհվել Նախիջևանի թումանի Զառուզիբիլ (Ծար և Սողք) գավառի Ղարասաղալ գյուղից հարկերի գանձման իրավունքը, նույն թվին Աբաս Ա-ի հրամանագրով շահական բոլոր պաշտոնյաներին հրամայվել է Գեղարքունիքից բերված գերիներին ներմամբ հանձնել Յավրի Բեկին, իսկ 1708 թ. Երևանի դատարանի արձանագրության մեջ նշվում է Մելիք-Շահնազարյաններին վերադարձվող գյուղերի ցանկը՝ Ղարանլուղդարա, Դրախտիկ (Թուխլիջա), Մազրա, Ադիյաման (Կոթ), Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Միրաբադ, Գյուրջի Վերան,

³⁹⁵ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 206:

³⁹⁶ Տե՛ս **Առաքելյան Հ.**, նշվ. աշխ., էջ 35-36:

Ամրսաղ³⁹⁷: 16-րդ դարում Գեղարքունիքի մելիքության՝ Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցանկում թվարկված են Ղուլալի (Գավառից 2 կմ հարավ-արևելք), Վերին Քյուլաղրան, Դալու-ղարդաշ (Սարուխան), Քթաշեն, Գավառ, Կոթ, Կածիք, Կնձուտ, Գանձակ, Նորատուս և այլ գյուղեր³⁹⁸:

Ընդհանրացնելով ներկայացրած տվյալները՝ նշենք, որ 16-րդ դարի վերջին Երևանի և Գանձակի նահանգներում, ըստ Խուան Պարսկաստանցու (16-17-րդ դարեր), 250 հազարական ծուխ բնակչություն կար, իսկ ըստ Սիդոնի եպիսկոպոսի մի գրության՝ 1587 թ. «Մեծ Հայքի» կաթողիկոսի իրավասության տակ կար ավելի քան 260 հազար հայ ընտանիք, Սսի՝ ավելի քան 20 հազար³⁹⁹: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վանա լճի ավազանում գործում էր Աղթամարի կաթողիկոսության նվիրապետական աթոռը, Գանձակ-Արցախում՝ Գանձասարի կաթողիկոսությունը, իսկ մեր կողմից հայ բնակչության ընտանիքի միջին մեծության գործակիցը 7,6 էինք հաշվարկել, ուստի ստացվում է, որ, Սիդոնի եպիսկոպոսի գրության համաձայն, 1587 թ. դրությամբ Հայաստանի տարածքում միայն Ս. Էջմիածնի նվիրապետության ներքո, որը 16-րդ դարի վերջին շատ ծանր ժամանակաշրջան էր ապրում, կար առնվազն 2 մլն հայ բնակչություն: Այս թվին զուգահեռ հաշվարկելով Խուան Պարսկաստանցու թվերը և դիտարկելով Լ. Սահակյանի և Ա. Մելքոնյանի կողմից մահմեդականների համար ընդունելի համարվող ընտանիքի միջին մե-

³⁹⁷ Բնակավայրերի անվանումները տրված են մահմեդական փաստաթղթերում ներկայացված ոչ հայկական ձևերով (տե՛ս **Կոստիկյան Ք.**, Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունից, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 24, Երևան, 2005, էջ 303-329):

³⁹⁸ Տե՛ս **Բարխուդարյան Ս.**, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի, էջ 191-227:

³⁹⁹ Տե՛ս **Կարապետյան Մ.**, Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ., «ՊԲՀ», 1986, թ. 2, էջ 97:

ծության 6 գործակիցը՝ միջինացված գործակցով հաշվարկով ստանում ենք, որ Գանձակի և Երևանի նահանգներում օսման-յան բռնազավթման սկզբնափուլում կար յուրաքանչյուրում շուրջ 1,75 միլիոն բնակչություն: Փաստորեն, այս երկու թվերի հաշվարկը բերում է միմյանց հակառակ ծայրահեղությունների:

Նման պարագայում հետադարձ հայացք գցելով նաև Արևմտյան Հայաստանի վարչամիավորներում բնակչության տեղաբաշխմանը (1250 գյուղ Չըլդըրի նահանգում, 520 գյուղ Էրզրումի նահանգի միայն 3 գավառակներում, 100-ից ավելի գյուղեր Վանի նահանգի միայն մոտ մեկ տասնյակ նահիեներում)՝ կարելի է եզրակացնել, որ 16-րդ դարում Հայաստանը շարունակել է բավականին խիտ բնակեցված լինել, ընդ որում, չնայած պատերազմական գործողություններին, օտար էթնիկական ներթափանցումներին, հայ բնակչության զանգվածային բռնազաղթերին, կամավոր արտագաղթին, սովին և հիվանդություններին, հայկական բնակավայրերի ավանդական ցանցը դեռևս շարունակել է պահպանվել: Համադրելով վերը կատարած մեր հաշվարկները, բնակչության տեղաբաշխման պատկերը, Հայկական լեռնաշխարհի բնակլիմայական պայմանները և հետևապես հացահատիկի ու առհասարակ սննդի ստացման լայն հնարավորությունները՝ միանգամայն իրատեսական ենք համարում, որ Հայաստանի բնակչության թիվը լինել 5 միլիոնի սահմաններում, որից առնվազն 4 միլիոնը՝ հայեր: Հակառակ պարագայում 17-րդ դարի սկզբին Հայաստանին պատած ամենազանգվածային բռնազաղթից, ինչպես և աննախադեպ սովից ու ժանտախտից հետո մի քանի տասնամյակում բնակչության տեղաբաշխման նախկին պատկերը և բնակավայրերի ցանցը չէին կարող իրենց հիմնական գծերով վերականգնվել:

ԳԼՈՒԽ Բ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

2.1. Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները

Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 17-րդ դարում աչքի են ընկել մի շարք առանձնահատկություններով, որոնք պայմանավորված էին ռազմաքաղաքական իրադրությամբ թելադրվող հանգամանքներով, մասնավորապես՝ թուրք-պարսկական հերթական պատերազմի ընթացքում կատարվեց հայ բնակչության՝ նախադեպը չունեցող բռնագաղթ, իսկ 16-րդ դարի վերջին տարիներից մինչև 17-րդ դարի առաջին տասնամյակի վերջը Հայաստանը և հարևան Փոքր Ասիան փոթորկվել էին ջալալիական շարժումներից: 16-րդ դարի վերջին տասնամյակում և 17-րդ դարի սկզբին ամբողջ Հայաստանը գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Ինչպես նշել ենք նախորդ գլխում, 1586 թ. սկսած տեղ են գտել զանգվածային արտագաղթերի դեպքեր Արևելյան Հայաստանից, որտեղ մելիքական տները և բնակչությունը չեն հարմարվել օսմանյան հարկային վարչամեքենային: Այս միտումը շարունակվել է նաև 1601-1603 թթ.: Նախիջևանի Խառցն գյուղում ընդօրինակված Ավետարանի 1602 թ. հիշատակարանում ուշագրավ տեղեկություն կա այն մասին, որ «մեծ մայրաքաղաք գեղն Ճահուկի» բնակչությունը, չդիմանալով օսմանյան հալածանքներին, «ելեալ փախան ի բնակչացն իւրեանց»⁴⁰⁰:

17-րդ դարում Հայաստանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների վրա ամենաբացասական ազդեցությունն են գործել շահ Աբաս Ա-ի կողմից կազմակերպված զանգ-

⁴⁰⁰ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 66:

վածային բռնագաղթը և Օսմանյան կայսրության ասիական նահանգները համակած ջալալիական շարժումները, որոնց կանդրադառնանք առանձին:

Շարունակվող թուրք-պարսկական պատերազմների համար շարունակում էր բնութագրական լինել հայերի զանգվածային գերեվարումը: 17-րդ դարի սկզբին Կոստանդնուպոլսի շուկաներից մեկում Սիմեոն Լեհացին ականատես է եղել քրիստոնյա մանուկ և պատանի գերիների զանգվածային վաճառքի⁴⁰¹: Ա. Խառատյանը մեծագույն առաքինություն է համարում հայ խոջաների, եկեղեցու և համայնքների կողմից գերիների փրկագնման դեպքերը (1534 թ. խոջաները՝ Նախիջևանցի ունիթորի, 17-րդ դարի սկզբին՝ Օգոստինոս Բաջեցին՝ ևս Նախիջևանցի ունիթորների, 1620-1630-ական թթ.՝ Կարինի հայ մաքսապետ Սանոս Չելեպին (ըստ Հակոբ Կարնեցու՝ շուրջ հազար մարդու), 1630 թ.՝ Մովսես կաթողիկոսը 3-4 հազար գերի Երևանից, Թավրիզից և այլ վայրերից)⁴⁰²: Նա իրավամբ կարծում է, որ Հայ եկեղեցին գերիներին փրկագները քաղաքականություն էր դարձրել, օրինակ՝ 1638 թ. Արարատյան դաշտից և Երևանից գերվածներին հաջողվեց փրկագներ էրգրումի հայ վաճառականների օգնությամբ⁴⁰³: Եվ իսկապես, փրկագնման քաղաքականությունը վարել է ոչ միայն Մովսես Գ Տաթևացին (1629-1632), այլև նրա հաջորդ Փիլիպպոս Ա Աղբակեցին (1633-1655), ով 1650 թ.

⁴⁰¹ Տե՛ս Սիմեոն դարի Լեհացույ Ուղեգրութիւն. տարեգրութիւն եւ յիշատակարանք (այսուհետ՝ **Սիմեոն Լեհացի**), հրատ.՝ Ն. Ակինեան, Վիեննա, 1936, էջ 18-20:

⁴⁰² Գերիների ազատման դրվագ է ներկայացված 1607 թ. Ավետարանի հիշատակարանում, որի համաձայն՝ պարոնտեր Ղալապեկ Ոհանը Գանձակ քաղաքից շատ գերիներ և գրքեր ազատեց (տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 282):

⁴⁰³ Տե՛ս **Խառատյան Ա.**, նշվ. աշխ., էջ 331-334:

շահ Աբաս Բ-ից (1642-1666) փրկագնման միջոցով կարողացել է մի խումբ հայերի ազատել գերությունից⁴⁰⁴:

17-րդ դարի առաջին կեսին Հայաստանում ժողովրդագրական գործընթացների մեջ հետաքրքիր առանձնահատկություն էր վանականների թվի կտրուկ աճը, ինչը պայմանավորված էր Հայ առաքելական եկեղեցու գործունեության ակտիվացմամբ, գոյություն ունեցող վանքերի վերաշինմամբ և նոր վանքերի հիմնմամբ: Ձեռագրերի հիշատակարաններում, մանր ժամանակագրություններում և անգամ թուրք ուղեգիրների աշխատանքներում քանիցս հանդիպում ենք այս կամ այն վանական կենտրոնում հոգևորականների թվի հիշատակմանը կամ թվարկմանը: Ս. Էջմիածնում հիշատակվում են ավելի քան 500 հոգևորականներ⁴⁰⁵, Մշո Ս. Կարապետ վանքում՝ 300⁴⁰⁶, Վարագավանքում՝ ավելի քան 300⁴⁰⁷, Աղթամարի Ս. Խաչ վանքում՝ ավելի քան 200 (և մոտ 300 ճգնավոր դերձակներ)⁴⁰⁸, Տաթևի վանքում՝ ավելի քան 100⁴⁰⁹, Լիմ անապատում՝ 60-70⁴¹⁰, Հովհաննավանքում՝ 60⁴¹¹, Խոտակերաց վանքում՝ 6⁴¹²: Տարբեր բնակավայրերում հիշատակվում են բազմաթիվ հոգևորականներ, օրինակ՝

⁴⁰⁴ Տե՛ս «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հ. I, հրավարտակներ, պ. II (1601-1650 թթ.), կազմեց՝ Հ. Փափազյան, Երևան, 1959, վավ. 39:

⁴⁰⁵ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 296, 358:

⁴⁰⁶ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 170:

⁴⁰⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 259: Վարագավանքում 16-րդ դարում (1575 թ.) ևս մեծ թվով բարձրաստիճան հոգևորականների թվարկման օրինակ տե՛ս՝ ՄՄ, ձեռ. № 4749, էջ 95ա:

⁴⁰⁸ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 257:

⁴⁰⁹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 187-189:

⁴¹⁰ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 356; «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 199, 478-479, 523, 811; **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Գ. մաս, Վիեննա, 1947, էջ 978:

⁴¹¹ Տե՛ս **Ջաքարիա Քանաքեղի**, հ. II, էջ 188:

⁴¹² Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 402-404:

Բաղեշում՝ 11⁴¹³, Ագուլխում՝ 10⁴¹⁴, Հովհաննավանքում՝ ավելի քան 10⁴¹⁵, Խիզանում՝ ավելի քան 10⁴¹⁶, Ղարամուրատում (Գանձակի Չակամի գավառ)՝ 7⁴¹⁷: Ուշագրավ է, որ Փիլիպպոս Աղբակեցին ձեռնադրել է ավելի քան 400 կուսակրոն հոգևորականներ⁴¹⁸, կանոնակարգել է կրթությունը, վանքերում կարգել արեղաներ, գյուղերում ու քաղաքներում՝ երեցներ. «Եւ սովաւ բազում կիսաւեր և խախտեալ եկեղեցիք նորոգեցան, և ի գիւղս և ի քաղաքս յոլով եկեղեցիք նոր շինեցան հրաշագան յօրինուածովք՝ պայծառ և փառաւոր ամենայն որպիսութեամբ»⁴¹⁹:

Ձեռագրերի հիշատակարաններում գրիչի կամ ստացողի ընտանիքի անդամների թվարկումից շատ հաճախ պարզ է դառնում, որ նույն գերդաստանի մի քանի սերունդներում եղել են մի շարք հոգևորականներ: Այսպես, Մշո Եղիազարու (Առաքելոց) վանքում գրված Սաղմոսարանի 1636 թ. հիշատակարանում 3 սերունդում ներկայացված են 4 հոգևորականներ⁴²⁰: Սյունյաց Աջանան գավառի Եղինկյան գյուղում 1615 թ. գրված «Վարք Հարանց»-ի հիշատակարանում գրիչ Մինաս քահանան հիշատակում է քահանա հորը և քահանա եղբորը⁴²¹: Դիզակի Թաղասեռ գյուղում նորոգված Ավետարանի 1634 թ. հիշատակարանում թվարկված են Հովհաննես եպիսկոպոսին արյունակից 4 եպիսկոպոսներ, 2 արեղաներ և 2 քահանաներ⁴²²: 1630-1660-ական թթ. վանական կյանքի աշխուժացմանը զուգահեռ աննախադեպ

⁴¹³ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 603-606:

⁴¹⁴ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 423-432:

⁴¹⁵ Տե՛ս նույն տեղում:

⁴¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 146-148:

⁴¹⁷ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 362-368:

⁴¹⁸ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 359:

⁴¹⁹ **Առաքել Դավրիժեցի**, էջ 266:

⁴²⁰ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 640:

⁴²¹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 543:

⁴²² Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 557:

տարածում ստացավ նաև կուսակրոն կանանց թվի աճը, և հատկապես աչքի էին ընկնում Երնջակ գավառի Շոռոթի, Առինջի, Վարանդայի Ավետարանոց գյուղի և Ագուլիսի կուսանոցները⁴²³:

17-րդ դարի առաջին կեսին հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ժողովրդագրական գործընթացներին առնչվող տեղեկություններ հայթայթելիս հանդիպելով գրիչների կամ ստացողների ընտանիքների անդամների հաճախակի թվարկմանը՝ մենք որոշեցինք դրանց միջոցով հաշվարկել տվյալ ժամանակաշրջանում ընտանիքի միջին մեծության գործակիցը (ընտանիքի անդամների միջին թիվը): Հաշվի ենք առել միայն այն հիշատակարանները, որոնք գրվել են բուն Հայաստանում և ունեն ձեռագրի ընդօրինակման վայրի հստակ տեղորոշում⁴²⁴: Տվյալների դուրսբերման համար ընթերցել ենք շուրջ 3000 հիշատակարաններ, որոնցից դուրս ենք բերել շատ թե քիչ կանոնավոր թվարկմամբ մոտ 650 ընտանիքների վերաբերյալ տվյալներ: Այս գործում ոչ նպաստավոր գործոն է որոշ դեպքերում իզական սեռի ներկայացուցիչների ոչ կանոնավոր թվարկումը կամ ընդհանրապես բացակայությունը⁴²⁵, օրինակ՝ Խիզանում ընդօրինակված Ավետարանի 1623 թ. հիշատակարանում պարզապես գրված է՝ «և ամենայն դստերքն իւր», «և հանգուցեալ կանայքն իւր»⁴²⁶: Երբեմն թվարկման մեջ չեն թվարկվում ոչ միայն իզական սեռի ներկայացուցիչ հարազատները, այլև անգամ

⁴²³ Տե՛ս Մկրտչյան Հ., Հայկական ձեռագրերի հիշատակարանները կանանց մենաստանների և կուսակրոն կանանց վերաբերյալ, «Էջմիածին», 2013, թ. Բ, էջ 89-101:

⁴²⁴ Առանց վայրի նշման կամ գաղթօջախներում գրառված ձեռագրերն առանձին ուսումնասիրության նյութ կարող են լինել: Մեր աշխատանքում դիտարկել ենք գաղթօջախների ձեռագրերի միայն այն հիշատակարանները, որոնցում ներկայացված են նոր վերաբնակիչներ՝ հայրենի բնակավայրի հիշատակմամբ:

⁴²⁵ Տե՛ս օրինակ՝ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 20-21:

⁴²⁶ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 115:

արական սեռի ներկայացուցիչները, օրինակ՝ Դիզակի Քամալե-ցիք գյուղում ծաղկված Ավետարանի 1639 թ. հիշատակարանում ծաղկող Ավետիսը հիշատակում է ծնողներին և «եղբայրքն իմ և քրերքն իմ»⁴²⁷: Թվարկման տվյալներն ի մի բերելուց հետո ստացել ենք ընտանիքի միջին մեծության 6.2 գործակիցը⁴²⁸: Հաշվի առնելով իգական սեռի ներկայացուցիչների թվարկման ժամանակ թույլ տրված հաճախակի բացթողումները (մեր կողմից ուսումնասիրված հիշատակարաններից ավելի քան 80 ընտանիքների պարագայում, այսինքն՝ 12,3 % դեպքերում)՝ կարծում ենք, որ ընտանիքի միջին մեծության գործակիցը ճիշտ կլինի 12,3 %-ով (եթե անորոշ գրված «քրերք» կամ «ղստերք» ձևակերպումների պարագայում իգական սեռի ներկայացուցիչների թիվը նվազագույն հնարավորն ենք դիտարկում՝ 2) ավելի բարձր համարել, այսինքն՝ 7: Փաստորեն, միանշանակ ճիշտ է վարվել Ա. Մելքոնյանը, որ շահ Աբասի բռնագաղթի վերաբերյալ ընտա-

⁴²⁷ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 768-769:

⁴²⁸ Հաշվարկի տվյալների հիմքը (ընտանիքի անդամների թվարկումը) տե՛ս՝ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, № 9, 12, 13, 14, 16, 17, 18, 22, 25, 32, 43, 59, 60, 64, 66, 67, 70, 71, 78, 80, 81, 82, 83, 92, 95, 100, 105, 108, 144, 160, 163, 167, 169, 170, 171, 172, 173, 175, 180, 193, 208, 209, 218, 224, 230, 231, 237, 240, 254, 259, 272, 318, 321, 333, 353, 355, 364, 365, 366, 371, 378, 386, 395, 445, 459, 464, 478, 508, 533, 537, 606, 608, 611, 612, 614, 660, 665, 683, 690, 694, 718, 719, 724, 729, 731, 764, 791, 797, 798, 808, 815, 844, 851, 861, 863, 872, 894, 931, 932, 944, 951, 969, 980, 982, 987; հ. Բ, № 1, 19, 29, 31, 49, 54, 64, 65, 66, 96, 158, 159, 164, 190, 204, 214, 267, 277, 290, 293, 311, 314, 318, 320, 335, 340, 353, 367, 368, 372, 378, 380, 381, 383, 435, 446, 485, 504, 505, 515, 549, 554, 561, 563, 581, 592, 603, 626, 628, 645, 654, 665, 685, 690, 692, 702, 733, 820, 823, 824, 825, 827, 835, 846, 861, 864, 874, 901, 911, 917, 923, 935, 946, 959, 960, 965, 967, 968, 972, 1004, 1018, 1028, 1030, 1077, 1081, 1083, 1085, 1090, 1097, 1098, 1117, 1121, 1140, 1150, 1155, 1178, 1187, 1188, 1189, 1195, 1207; հ. Գ, № 22, 33, 61, 75, 83, 107, 115, 151, 166, 173, 175, 249, 298, 301, 303, 313, 315, 316, 329, 338, 358, 384, 421, 428, 442, 446, 463, 484, 485, 492, 495, 523, 524, 542, 554, 560, 575, 606, 618, 625, 630, 634, 637, 642, 652 և այլն:

նիքների թվի հիշատակումները բազմապատկել է իր կողմից 19-րդ դարի սկզբին Էրզրումի նահանգի համար հաշվարկած 7-8 գործակցով⁴²⁹ ընդունելով, որ 17-րդ դարի սկզբին գործակիցը նույնը պետք է լիներ:

Հաշվարկները կատարելիս ուշադրություն ենք դարձրել, որ ընտանիքների անդամների միջին թիվն առանձնապես մեծ էր Վանա լճի ավազանում, Էրզրումի նահանգում, Արցախում, Արարատյան կուսակալության մեջ մոտոդ Կոտայքում և մի քանի այլ շրջաններում (միջինը՝ 7.5-8): Գործակիցը տասնամյակներով հաշվարկելիս ամենաբարձրը ստացել ենք 1601-1610 թթ.՝ 6.5, թեև մահվան մասին դեպքերի ամենաշատը հանդիպել ենք հենց այս տասնամյակում: Կարծում ենք, որ ընտանիքի անդամների թվի մեծությունը պայմանավորված է 16-րդ դարի վերջին երկու տասնամյակներում ծնվածների թվով: 1611-1620 թթ. գործակիցը նվազում է 8,3 %-ով, 1621-1630 թթ.՝ ևս 4,1 %-ով, ինչը պետք է պայմանավորված լիներ 1604 թ. բռնագաղթի և 1606-1609 թթ. սովի հետևանքով բնակչության բացարձակ թվի նվազմամբ, հետևաբար և ավելի քիչ թվով մարդկանցից ծնվածների թվով: Ժողովրդագրական «պայթյուն» է գրանցվում հաջորդ տասնամյակում՝ 1631-1640 թթ., երբ ընտանիքի անդամների միջին թիվն աճել է մոտ 8 %-ով, ինչը պետք է պայմանավորված լիներ նախորդող մեկ և կես տասնամյակներին Արևելյան Հայաստանում Ամիրգունա խանի ժողովրդագրական քաղաքականությամբ, իսկ Արևմտյան Հայաստանում՝ ջալալիական շարժումների հաղթահարմամբ և մի շարք այլ գործոններով, որոնց կանդրադառնանք հաջորդ ենթագլուխներում: Մեր հաշվարկների համաձայն՝ 1641-1650 թթ. գրեթե պահպանվել է նախորդ տասնամյակի պատկերը՝ չնչին (2,4 %) նվազմամբ:

⁴²⁹ Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, գ. II, էջ 629:

Հարկ ենք համարում շեշտել, որ ընտանիքի միջին մեծության գործակիցը հաշվարկելիս դիտարկել ենք միայն ամուսիններին և իրենց զավակներին: Միաժամանակ կարծում ենք, որ Լ. Սահակյանը⁴³⁰ և տարբեր այլ ուսումնասիրողներ ճիշտ են վարվում ծխերի (տների) միջին մեծության գործակիցը շատ ավելի բարձր, օրինակ՝ 10 դիտարկելով, քանի որ, ինչպես նկատել է Մ. Կարապետյանը Ի. Շոպենի վիճակագրության ուսումնասիրությունից⁴³¹, տների և ընտանիքների համաժամանակյա վիճակագրության մեջ առաջինի մեջ ավելի շատ մարդիկ էին մտնում: Սա, իհարկե, բացատրվում է նահապետական ընտանիքով, այսինքն՝ մեկ ծխի մեջ կարող էին լինել տատիկն ու պապիկը կամ էլ ամուսինների մի քանի որդիների ընտանիքները: Սա, ինչպես և եվրոպական շատ երկրներում, երբեմն հետապնդում էր նաև վճարելիք որոշ հարկերի չափը նվազեցնելու նպատակ⁴³²: Զաքարիա Քանաքեռցու տեղեկությունը Կարբի գյուղաքաղաքում մեկ տանը 30, իսկ Պետրոս Պետիկի հաղորդումը Նախիջևանի Ապարաններ գյուղում՝ 20-25 (առնվազն՝ 5) անհատի մասին⁴³³ ևս հաստատում են մեկ տան՝ մեկ ընտանիքից զգալիորեն մեծ լինելու հանգամանքը: Նման պարագայում կարծում ենք, որ ճիշտ է սկզբնաղբյուրներում հիշատակվող «ընտանիք» և «ծուխ» («տուն») հասկացությունների պարագայում միջին գործակից համարել համապատասխանաբար 7 և 10:

⁴³⁰ Տե՛ս **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի..., էջ 60-63:

⁴³¹ Մ. Կարապետյանը Ի. Շոպենի վիճակագրության մեջ նկատել է, որ Ռուսական կայսրությանը միացվելուց հետո Երևանի 1730 տներում 2751 ընտանիք կար (տե՛ս **Կարապետյան Մ.**, Երևանի բնակչության..., էջ 103, իսկ նրա կողմից օգտագործված վիճակագրությունը տե՛ս՝ **Шопен И.**, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения къ Россійской Имперіи, Санкт-Петербургъ, 1852, էջ 468, 543-546): Փաստորեն, 19-րդ դարի երկրորդ քառորդի սկզբին 1 տանը բաժին էր ընկնում միջինը 1.59 ընտանիք:

⁴³² Տե՛ս **Hollingsworth T.**, նշվ. աշխ., էջ 90-91:

⁴³³ Տե՛ս **Կարապետյան Մ.**, Երևանի բնակչության..., էջ 103:

Ընտանիքների անդամների թվարկումից ակնհայտ է, որ բարձր է եղել մահացության գործակիցը, հատկապես՝ կանանց և երեխաների շրջանում: Բալու քաղաքում ընդօրինակված Ավետարանի 1623 թ. հիշատակարանում ներկայացված են ստացող պարոն դարբին Աղաջանի հանգուցյալ 2 կանայք և ողջ կինը⁴³⁴: Այսօրինակ հիշատակումներից հստակ երևում է կանանց շրջանում մահացության բարձր գործակիցը, որը պետք է պայմանավորված լիներ ծննդաբերությունների ժամանակ մահացությամբ:

Կյանքի միջին տևողության վիճակագրություն կազմելու համար բավարար տվյալներ չունենք, քանի որ հազվադեպ են հանդիպում մահվան տարիքի հիշատակումները: Այդ եզակի օրինակներից մեկում՝ Որոտանի Գետաթաղ գյուղում գրված Շարակնոցի 1639 թ. հիշատակարանում գրիչ Ավետը հիշատակում է 3-ամյա հասակում վախճանված 2 եղբայրներին, 12 տարեկանում վախճանված քեռուն, ինչպես նաև ծեռագրի ստացող Մինաս քահանայի՝ 15 տարեկանում վախճանված եղբորը⁴³⁵: Հազվադեպ հիշատակվում է նաև մահվան պատճառը: 1619 թ. Կեցանի Եղեգիս գյուղում գրված Ավետարանի հիշատակարանում Մարտիրոս գրիչը հաղորդում է, որ Ավետարանի պատվիրատու Հովհաննեսի որդի Կարապետը «տարաժամ փոխեցաւ առ Քրիստոս»⁴³⁶. մահվան պատճառը ժանտախտն էր: Հետաքրքիր տվյալներ է հաղորդում Հակոբ Կարնեցին: Նրա հավաստմամբ՝ իր հոր՝ Գևորգի հայրն ու մայրը 4 զավակ են ունեցել: Գևորգը ծնվել է 1583 թ. և մահացել 1655 թ.՝ ապրելով 72 տարի: Գևորգի ամուսնանալուց հետո՝ 1606 թ., վրա է հասել սովը, և նրա մայրն ու երկու եղբայրները մահացել են: Ունեցել է 7 երեխա (5 որդի և 2 աղջիկ), որոնցից 3-ը մանկահասակ մահացել են: Ավագ որդի

⁴³⁴ Տե՛ս «Հայերեն ծեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 112-113:

⁴³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 765:

⁴³⁶ Նույն տեղում, էջ 18:

Մեկընը մահացել է հորը գրեթե զուգահեռ՝ 42 տարեկանում, աղիքների հիվանդությունից⁴³⁷: Հակոբ Կարնեցու ընտանիքին վերաբերող տվյալներից երևում է սովի, հիվանդությունների և մանկամահացության ազդեցությունը կյանքի միջին տևողության վրա, ինչպես նաև դրանց շրջանցման պարագայում 70 տարեկանի շեմը հաղթահարելու մեծ հավանականությունը:

17-րդ դարի հենց սկզբից ժողովրդագրական գործընթացներում իրենց անբաժան տեղն ունեին պատերազմական գործողություններին ուղեկցող սովն ու ժանտախտը: Խիզան քաղաքում ընդօրինակված Ավետարանի 1601 թ. հիշատակարանում ասվում է. «...յոյժ սղութին է հացի և այլ ամենայն իրաց: Եւ է [տա]րածան մահ ի [տեղ]իս...»⁴³⁸: Այսօրինակ հիշատակումները բազմաթիվ են շահ Աբաս Ա-ի կազմակերպած բռնագաղթին և ջալալիական շարժմանը հաջորդող տարիներին՝ 1606-1609 թթ., որոնց հաջորդ ենթավերնագրերում կանդրադառնանք: Բազմաթիվ են ժանտախտի դեպքերը նաև հաջորդ տասնամյակներում: Սկզբնաղբյուրներում հիշատակվում է, որ 1618 թ. «մահ անկաւ, հարիւր և քառասուն տղայ մեռաւ ի Գումիշխանէն ի մէկ օրն»⁴³⁹: Վարդան Բաղիշեցու ժամանակագրության (17-րդ դար) համաձայն՝ սա սաստիկ մարդամահ էր Գյումուշխանեի համար, «որ փոքր քաղաք մի է՝ երեք հարիւր տուն»⁴⁴⁰: Ըստ Հակոբ Կարնեցու՝ 1621 թ. «յոյժ մահ է անկեր Արգրում և շրջակա բոլորքն»⁴⁴¹: Մեկ այլ սկզբնաղբյուրի համաձայն՝ 1621 թ. «մահ տարածեցաւ յարևելից մինչև ի մուտս արևու, անասելի և անպատմելի, մինչ

⁴³⁷ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 242-243, 246, 247, 248, 249:

⁴³⁸ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 34:

⁴³⁹ **Առաքել Դավրիժեցի**, էջ 480; «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 268, 283:

⁴⁴⁰ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 394:

⁴⁴¹ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 240:

գի փոս հատեալ Ի (20), Լ (30), Խ (40), Ծ (50) մարդ ի ներս լնուին և որոց ոչ գոյր տեարք, անկեալք յանցս ճանապարհաց»⁴⁴²:

Ժանտախտի դեպքեր արձանագրվել են նաև 1623 թ.⁴⁴³: 1623 թ. Խիզանում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում Հովհաննես քահանան հաղորդում է, որ Եգիպտոսից և Ստամբուլից սաստիկ մահտարածամը 2 տարվա ընթացքում հասել է Հալեպ, Ուռհա, Ամիդ, Բաղեշ, Վան, Խիզան և մոտակա գավառներ՝ օրական մինչև 100 կյանք խլելով (երբեմն՝ մեկ տնից միանգամից 2-3 մեռյալ)⁴⁴⁴: Տեղեկությունը հաստատում է նաև Ավնդանց գյուղի Կիրակոս քահանան՝ 2 շաբաթվա մեջ օրական 8-10 մահ արձանագրելով (ընդ որում՝ զոհվել է նաև գրչի Ստեփանոս որդին, և կարճ ժամանակ անց ծնվել է նոր որդի՝ Մովսեսը)⁴⁴⁵: 1624 թ. Ավնդանց գյուղում գրված Ավետարանի ստացող Կարապետ Մոկացին ներկայացնում է շահ Աբասի բռնագաղթից հետո ստեղծված իրավիճակը՝ բռնագաղթյալների մի մասի մահը, համատարած սովը, մարդակեր գայլերի տարածումը, տարածամ մահը, որը, ըստ նրա, սկսել է «Լատինացւոց աշխարհից» ու տարածվել մինչև Պարսկաստան⁴⁴⁶: Այդուհանդերձ, ըստ նրա, մահտարածամի գլխավոր պատճառը 1601 թվականից չդադարող պատերազմներն էին⁴⁴⁷:

1630-ական թթ. առաջին կեսին ռազմական գործողությունները հիմնականում ընթանում էին Միջագետքում՝ օսմանյան ռազմերթերի ժամանակ մեծ նեղություններ պատճառելով Դիարբեքիի հայությանը, որ ստիպված էր լինում ոչ միայն լրա-

⁴⁴² «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 356:

⁴⁴³ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 146; հ. 2, էջ 520:

⁴⁴⁴ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 115:

⁴⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 148: Հմմտ. նույն տեղում, էջ 597-598, 635, 725:

⁴⁴⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 150-151:

⁴⁴⁷ Տե՛ս նույն տեղում:

ցուցիչ հարկային և աշխատանքային պարտավորություններ ստանձնել, այլև զորքին ապահովել պարենամթերքով և կացարանով: Ամիդում ընդօրինակված Աստվածաշնչի 1635 թ. հիշատակարանում Մինաս գրիչը հաղորդում է, որ «տարածեաց յաշխարհս Միջագետաց մահ տարածամ, ի քաղաք և ի գեղ, ևս առաւել ի քաղաքս Համիթ», և վեզիր Մահմադ փաշայի զորքերի դուրսբերումից (մարտի 28) հետո մահտարածամը մեծ ծավալներ է ընդունել. ապրիլին վախճանվել են քաղաքի հայ հոգևորականներից Առաքել արեղան և Հովհաննես քահանան ու նրա կինը, իսկ հունիսին համաճարակն ավելի է սաստկացել՝ խլելով գրչի աշակերտի՝ Սաֆար դպիրի կյանքը, և միայն հուլիսի 5-ին՝ Վարդավառին, համաճարակը նահանջել է⁴⁴⁸:

Հատկանշական է, որ Ամիդում 1635 թ. գրված հիշատակարանում խոսվում է մահտարածամի ժամանակ ամուսնությունների խաթարման մասին, ուստիև մահտարածամի պատճառած ժողովրդագրական վնասը նկատելի էր ոչ միայն զոհերի թվաքանակի արտահայտությամբ, այլև ընտանիքների կազմման և ծնելիության մակարդակի դանդաղեցման ուղղությամբ⁴⁴⁹: Պատերազմից հետո ևս հիշատակվում են մահտարածամի մի քանի դեպքեր: Ըստ Հակոբ Կարնեցու՝ 1643 թ. օգոստոսին Էրզրումում «մահ անկալ»⁴⁵⁰, իսկ 1644 թ. ևս «տղայամահն եղև»⁴⁵¹: Վերջին հիշատակումը խոսում է համաճարակների՝ նախևառաջ մանուկների և պատանիների կյանքի համար վտանգավորության բարձր աստիճանի մասին: Եվ իսկապես, հայերեն ձեռագրերի

⁴⁴⁸ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 597-599: Համաճարակի մասին հիշատակում կա նաև 1634 թ. (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 146):

⁴⁴⁹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 598-599:

⁴⁵⁰ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 242:

⁴⁵¹ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 395:

հիշատակարաններում գրիչներն իրենց կամ ստացողների ընտանիքի անդամներին թվարկելիս շատ հաճախ հիշատակում են «տղայ»՝ մանուկ հասակում վախճանված եղբորը, քրոջը կամ զավակին: Հատկանշական է, որ մահտարաժամի մասին տեղեկություններում հեղինակները, որոշ բացառություններով, մատնանշում են համաճարակի՝ արևմուտքից ներթափանցելու մասին: Ընդհանուր առմամբ, դժվար է գնահատել ժանտախտից վախճանվածների հանրագումարը Հայաստանում 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին, քանի որ վիճակագրական տվյալները խիստ սահմանափակ են: Սովի և ժանտախտի պատճառած վնասներին հաճախ գումարվել է նաև մորեխների պոպուլյացիայի ակտիվացումը, ինչպես օրինակ՝ 1608 թ. Վանում⁴⁵²:

Պատերազմական գործողությունների, սովի և համաճարակների ուղղակի և անուղղակի ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների, մասնավորապես՝ մահացության գործակցի աճի վրա ակնհայտ է ոչ միայն ձեռագրերի հիշատակարանների, այլև 17-րդ դարի առաջին կեսի թվակիր տապանաքարերի և խաչքար-մահարձանների ուսումնասիրությունից: Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններում (<< Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերում, ԼՂՀ-ում և Գանձակում) հաշվարկել ենք 17-րդ դարի առաջին կեսի՝ միայն հստակ թվագրում ունեցող ավելի քան 130 տապանագրեր ու խաչքար-մահարձանների վիմագրեր՝ մոտ 150 հանգուցյալների տվյալներով⁴⁵³: Մեր հաշվարկի արդյունքում ստացվել է, որ

⁴⁵² Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 300-301:

⁴⁵³ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. II, էջ 68, 73-74, 76, 117, 122, 135; պր. III, էջ 19, 32, 43-44, 46, 47, 63, 65, 184, 200-202; պր. IV, էջ 15, 16-17, 28-29, 31-37, 42, 47-48, 105-106, 111-112, 129, 137-141, 144-145, 171-173, 178, 179-181, 192-193, 202-203, 206-207, 236-239, 244-247, 254-259, 269-275, 281-283, 285, 298-301, 312, 319-325, 329-332, 340, 342, 347-348, 351-352, 356-359, 361, 362, 369-371, 379; պր. V, էջ 18, 57, 94, 95, 98, 103-104, 147, 162-164, 172, 173, 179,

դրանց ավելի քան մեկ երրորդը (38,2 %-ը) վերաբերում է դարի առաջին տասնամյակին, այսինքն՝ այն ժամանակահատվածին, երբ տեղի են ունեցել շահ Աբաս Ա-ի կողմից կազմակերպված բռնազաղթը և 1606-1609 թթ. Մեծ սովը: Կարծում ենք, որ վերջինս պետք է անվանել «Մեծ սով», քանի որ տարածքային ընդգրկմամբ, մարդկային զոհերի մասին հիշատակումների քանակով և տևողությամբ այն աննախադեպ էր:

Ժողովրդագրական գործընթացների վրա շարունակել են իրենց բացասական ազդեցությունը թողնել նաև բնական աղետները: 1636 թ. Խլաթի Սոխորդ գյուղը «վերուստ ի վայր իջաւ», և 1637 թ. բաղիշեցի մահտեսի Սիմեոնը սողանքից փլուզման ենթարկված գյուղի կարիքների համար աղբյուրը ևս իջեցրեց գյուղ⁴⁵⁴: Այդուհանդերձ, փոքր տարածքում վնասի մասին այսօրինակ հիշատակությունները սակավաթիվ են:

Աղետալի հետևանքներ են ունեցել հատկապես երկրաշարժերը: Զգալի արհավիրքներ է պատճառել 1646 թ. ապրիլի 2-ին Վանում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժ, երբ շատերը մնացին փլատակների տակ⁴⁵⁵: Առաքել Դավրիժեցու հաղորդմամբ՝ զոհվեցին հազարավոր մարդիկ, ավերվեցին Վան քաղաքը, բազմաթիվ գյուղեր (Քարափոս, Նորագյուղ և այլն), քաղաքի 4

185-186, 193, 195, 233-237, 240, 244-246, 248, 250, 253-254, 255, 257-264, 265, 268, 272-274; պր. VI, էջ 30, 55; պր. IX, էջ 35, 103, 105, 106, 221, 223, 271, 275, 296-297, 320-321, 392, 421, 444-445, 448, 449, 457: Տե՛ս նաև «Գանձակի գաւառ. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար», կազմեց՝ Ե. Լալայան, «Ազգագրական հանդէս», գիրք Ե, Թիֆլիս, 1899, թ. 1, էջ 262-263: «ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Լոռու մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» (տե՛ս ՀՀ կառ. որոշում № 49-Ա, 29.01.2004 <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=37965>):

⁴⁵⁴ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 484:

⁴⁵⁵ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 161, 355; հ. 2, էջ 483; «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Գ, էջ 218: Երկրաշարժը կարող է թվագրվել 1648 թ. (տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 485), սակայն այդ դեպքում հակասություն է առաջանում մյուս աղբյուրների հետ:

եկեղեցիները և բոլոր մզկիթները՝ բացառությամբ մեկի: Ըստ նրա՝ Վանի գավառում փլուզվել են 15 վանքեր (այդ թվում՝ Վարազավանքը), որոնցից միայն 3-ն են այնուհետև վերականգնվել: Բոլոր գյուղերի եկեղեցիները ևս փլուզվել են: Բազմաթիվ աղբյուրներ ցամաքել են, որի պատճառով տեղի է ունեցել բերդաշինական համակարգի և տարաբնակեցման համակարգի (բնակավայրերի ցանցի) վերաբաշխում, օրինակ՝ Եղնաբերդի և Ներքին Փագախ գյուղի աղբյուրների ցամաքման պատճառով բերդը և գյուղը տեղափոխեցին Ղասրիկ (Խասրիկ): Ավանց գյուղի աղբյուրները նույնպես ցամաքեցին: Վանքերի վերաշինման գործում ակտիվորեն ներգրավված են եղել Վանի խոջաներն ու չելեպիները՝ խոջա Ախիջանը, խոջա Ամրխանը, Մարխաս չալապին, խոջա Դիլանչին, խոջա Հովհաննեսը և այլք⁴⁵⁶: Երկրաշարժի ավերիչ հետևանքների մասին ականատես Կարապետ Վանեցի գրիչը «Յայսմաուրք»-ի 1647 թ. հիշատակարանում հայտնում է ոչ միայն 40 եկեղեցիների փլուզման և բազմաթիվ զոհերի մասին, այլև նշում, որ ողջ մնացածները «գրոհ տուեալ ելին ի քաղաքէն, քանզի ոչ դադարէր երկիրն ի շարժմանէն», իսկ Վանի Նորագյուղ գյուղը հիմնովին փլուզվել էր՝ խլելով 6-7 մարդու կյանք, ընդ որում՝ վերաշինումն էլ 2 տարի է տևել⁴⁵⁷:

Բնակլիմայական երևույթները ևս երբեմն ազդեցություն են ունեցել ժողովրդագրական գործընթացների վրա: Սկզբնաղբյուրներում հաճախ հանդիպում են բնակլիմայական երևույթների անոմալ դրսևորման դրվագներ: Մի ճառընտիրի 1615 թ. հիշատակարանում ասվում է, որ օգոստոսի 10-ին «գետ մի վազեց», իսկ ձմեռը ձյուն չեկավ⁴⁵⁸: Ղարաջալու գյուղում (Ուրմիայի մոտ) ոմն Պետրոս երեց 1631 թ. մի բնական աղետ է նկարա-

⁴⁵⁶ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 377-380:

⁴⁵⁷ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Գ, էջ 240-241:

⁴⁵⁸ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 549:

գրում. «...պատուհաս երեկ ի վերայ աշխարհիս՝ ծուն եկաւ մեծ Զատկի Կանաչ կիրակին, և ամենայն պտղաբերքն չորացան, և ապայ Աստուած ողորմած էր՝ կէս մի կանաչեցաւ, և կէս մի անցաւ մինչև ի տակն չորացաւ»: Գրիչը նաև հայտնում է, որ 3 տարի ապրել են բերդի տակ, և միայն ծմռան 3 ամիսներն էին տունն անցկացնում⁴⁵⁹: Մկրտիչ երեցը հաղորդում է, որ 1633 թ. Բաբերդում աղբյուրները ցամաքել էին, Ճորոխից էին քաղաքի ջուրը վերցնում, սակայն հաջորդ տարին խիստ ջրառատ է եղել՝ «աղբիւր չեղած տեղացն ջուր բոխէր»⁴⁶⁰: 1640-1648 թթ. Էվլիյա Չելեբին խոսում է Չարշամբա բազարի անանցանելի գետի (այսինքն՝ Կըզըլ-Ըրմաքի) մասին, որն ավերում է Թոխատը, այնուհետև ոռոգում Ամասիայի հողերը⁴⁶¹: Հետաքրքիրն այն է, որ ներկայումս Թոխատում հուլիսյան տեղումները միջինը 11,5 մմ են⁴⁶², ինչի պարագայում ջրհեղեղի հավանականությունը շատ փոքր է: Պատմական Փոքր Հայքի տարածքում 17-րդ դարի երկրորդ քառորդից սկսած տեղումների առատությամբ պետք է նաև բացատրել միգրացիոն ալիքներն այդ ուղղությամբ:

Այսպիսով, 17-րդ դարի առաջին կեսին պահպանվել է պատերազմական իրադրության վճռորոշ ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների վրա: Վերջիններիս վրա թողած հետևանքներով առանձնանում են Սեֆյան շահ Աբաս Ա-ի կողմից կազմակերպված բռնագաղթը և ջալալիական շարժումները, որոնց կանդապառնանք հաջորդիվ:

⁴⁵⁹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 412-413:

⁴⁶⁰ Նույն տեղում, էջ 559:

⁴⁶¹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 38: 1653 թ. հուլիսին Թոխատում մեծ ջրհեղեղ է եղել, որն ավերածությունների և զոհերի պատճառ է դարձել (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 161):

⁴⁶² Տե՛ս Devlet Meteoroloji İşleri Genel Müdürlüğü, տե՛ս՝ <http://www.dmi.gov.tr/veridegerlendirme/il-ve-ilceler-istatistik.aspx?m=TOKAT>, հասանելի էր՝ 28.01.2016:

2.2. Շահ Աբաս Ա-ի բռնագաղթի ժողովրդագրական հետևանքները

16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին Օսմանյան կայսրությունը և Սեֆյան Պարսկաստանը միմյանց միջև ընթացող պատերազմների ժամանակ հաճախակի են իրականացրել հայ բնակչության զանգվածային բռնագաղթները, որոնք նրանց ժողովրդագրական քաղաքականության կարևոր տարրերից էին: Այդ ժամանակաշրջանում հայերի ամենագանգվածային բռնագաղթը կազմակերպել է պարսից շահ Աբաս Ա-ն (1587-1629), որը սկզբնաղբյուրներում ստացել է թուրքերեն «sürgün» (արտաքսում, տեղահանություն, բռնագաղթ) բառից ծագող «մեծ սուրգուն»⁴⁶³ անվանումը:

Բռնագաղթին զուգընթաց տեղի են ունեցել նաև հայ բնակչության ներքին տեղաշարժերը, որոնց ևս անդրադառնալու ենք ստորև: Տեղի ունեցած արհավիրքների զանգվածային ընդգրկման հետևանքներն այնպիսին են եղել, որ հանգեցրել են բազմաթիվ բնակավայրերից հայ բնակչության իսպառ տեղահանության, հետևաբար ժողովրդագրական նկարագրի փոփոխությունը որոշ տարածքներում ստեղծել է այնպիսի իրավիճակ, որն ի նպաստ հայերի չի եղել: Նման համայնապատկերում բռնագաղթի բոլոր ծալքերը վերհանելու համար առաջ են քաշվում հետևյալ խնդիրները.

1. որո՞նք էին բռնագաղթի պատճառները,
2. ե՞րբ է այն սկսվել,
3. քանի՞ փուլերով է տեղի ունեցել,
4. ինչպիսի՞ տարածքային ընդգրկում է ունեցել,

⁴⁶³ Տե՛ս օրինակ՝ **Առաքել Դավրիժեցի**, էջ 167, 183, 186, 194; «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 269-271:

5. որո՞նք են ժողովրդագրական հետևանքները, մասնավորապես՝ որքա՞ն մարդ է բռնագաղթի ենթարկվել, և միայն հայերի՞ նկատմամբ է նման քաղաքականություն կիրառվել:

Այս խնդիրների քննությունը կարևոր և արդիական է ոչ միայն պատմական ժամանակաշրջանի ուսումնասիրության տեսանկյունից, այլև լույս է սփռում ադրբեջանական պատմագեղծարարության կողմից եղծվող հայոց պատմության տարբեր դրվագների վրա: Մասնավորապես, Հայաստանի տարբեր հատվածներում, օրինակ՝ Նախիջևանում, հայ բնակչության տեսակարար կշռի զգալի նվազումը, որ հիմնականում նշյալ բռնագաղթի արդյունք էր, ադրբեջանական պատմագիտական մտքի կողմից միտումնավոր կերպով չի փոխկապակցվում այս բռնագաղթի հետ: Հիմք ընդունելով 1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի, 1926, 1939, 1959, 1970, 1979, 1989 թթ. խորհրդային մարդահամարների տվյալները, որոնց համաձայն Նախիջևանում հայերն այլևս մեծամասնություն չէին (հայեր էին բնակչության՝ համապատասխանաբար 34.4⁴⁶⁴, 10.8⁴⁶⁵, 10.5⁴⁶⁶,

⁴⁶⁴ «Первая Всеобщая перепись населения Российской Имперіи 1897 г.», Таблица XIII. Распределение населения по родному языку: Губернские итоги. Нахичеванский уезд. Мարդահամարի տվյալները տե՛ս՝ http://www.demoscope.ru/weekly/ssp/emp_lan_97_uezd.php?reg=575 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.: Հատկանշական է, որ Ռուսական կայսրության վիճակագրական ժողովածուների տվյալներով հայերի տեսակարար կշիռը երբեմն ավելի բարձր է եղել, քան մարդահամարի ժամանակ: Այսպես, մարդահամարից մեկ տարի առաջ՝ 1896 թ. սկզբի դրությամբ, հայերը կազմել են բնակչության 42.2 %-ը (տե՛ս «Энциклопедический словарь Ф. Брокгауза и И. Ефрона», т. ХХА, С.-Петербург, 1897, էջ 704-705), իսկ կայսրության փլուզմանը հանգեցրած հեղափոխական 1917 թ. նախորդող տարում՝ 1916 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 42 %-ը (տե՛ս «Кавказский календарь на 1917 годъ: Отдель статистическій», Тифлисъ, 1916, էջ 218-221, հաշվարկը մերն է):

⁴⁶⁵ «Всесоюзная перепись населения 1926 г.», Таблица VI. Население по полу, народности. Нахичеванская АССР. Մարդահամարի տվյալները տե՛ս՝ http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_26.php?reg=2294 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:

⁴⁶⁶ «Всесоюзная перепись населения 1939 г.», Таблица 26. Национальный состав населения районов, районных центров, городов и крупных сельских населенных

6.7⁴⁶⁷, 2.9⁴⁶⁸, 1.4⁴⁶⁹ և 0.6⁴⁷⁰ %-ը), այդտեղ առկա էթնոժողովրդագրական պատկերը մեկնաբանվել է առանց նախընթաց իրադարձությունների պարզաբանման՝ աչքաթող անելով տեղանքի պատմաժողովրդագրական անցքերը: Նման պարագայում առաջ է քաշվել կեղծ թեզ, թե տեղի մահմեդական բնակչությունը միշտ գերակշռող է եղել, ինչը բացարձակապես չի համապատասխանում պատմական ճշմարտությանը: Հատկանշական է, որ անգամ 1829-1832 թթ. Հայկական մարզում ժողովրդագրական իրավիճակը ներկայացնող ռուս վիճակագիր Ի. Շոպենը Նախիջևանի և առհասարակ հայկական գավառների բնակավայրերի մասին խոսելիս նշում է, որ դրանք Մեծ Հայքի թագավորության մասն են կազմել և հայաթափվել են շահ Աբասի քաղաքականության հետևանքով⁴⁷¹:

Նշված խնդիրների պարզաբանումը թույլ կտա նաև քաղաքական դաշտում հակազդելու պատմական կեղծ թեզերին:

пунктов. Нахичеванская АССР. Մարդահամարի տվյալները տե՛ս՝ http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_39_ra.php?reg=752 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:

⁴⁶⁷ «Всесоюзная перепись населения 1959 г.», Таблица 3, 4. Распределение населения по национальности и родному языку. Нахичеванская АССР. Մարդահամարի տվյալները տե՛ս՝ http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_59.php?reg=66 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:

⁴⁶⁸ «Всесоюзная перепись населения 1970 г.», Таблица 7с. Распределение населения по национальности, родному и второму языку. Нахичеванская АССР. Մարդահամարի տվյալները տե՛ս՝ http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_70.php?reg=73 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:

⁴⁶⁹ «Всесоюзная перепись населения 1979 г.», Таблица 9с. Распределение населения по национальности и родному языку. Нахичеванская АССР. Մարդահամարի տվյալները տե՛ս՝ http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_79.php?reg=76 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:

⁴⁷⁰ «Всесоюзная перепись населения 1989 г.», Таблица 9с. Распределение населения по национальности и родному языку. Нахичеванская АССР. Մարդահամարի տվյալները տե՛ս՝ http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_89.php?reg=70 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:

⁴⁷¹ Տե՛ս օրինակ՝ Шопен И., նշվ. աշխ., էջ 318-320:

Նախևառաջ անդրադառնանք բռնագաղթի պատճառներին և սկզբին: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ թուրք-պարսկական հերթական պատերազմի սկզբում՝ 1603 թ., Թավրիզը կորցնելուց հետո օսմանյան զորքը նահանջեց Նախիջևան և, իմանալով, որ վաղ թե ուշ շահը գրավելու է «զաշխարհս զայս», որոշեցին թալանել «գեղականաց գաւառացն, և մանաւանդ Զուղայոս», որտեղից «ամենեքեան ելեալք ի բնակութեանց և ի շինամիջէ փախեան, և ելին ի լերինս՝ յայրս և յամուր վայրս տեսանել զվերջն թէ որպէս լինելոց է»⁴⁷²: Սա հայերի ներքին (ներհայաստանյան) տեղաշարժի օրինակ է և, փաստորեն, այս պատերազմի ժողովրդագրական առաջին հետքն է հայ բնակչության վրա: Այս առնչությամբ հետաքրքրական է պատմիչի այն տեղեկությունը, որ «ի պահպանութիւն գաւառականացն Նախչուանոս», շահն ուղարկում է Զրադ Սուլթան զորավարին, բայց մինչև նրա հասնելը թուրքական զորքը թալանում է «ի մերձակայ գեղորէիցն»⁴⁷³: Սա ցույց է տալիս, որ շահն ի սկզբանե առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել գավառի բնակչության նկատմամբ և նկատի է ունեցել նրանց օգտագործումն իր հետագա ռազմավարական ծրագրերում:

Նախիջևանի գրավումից հետո պարսկական բանակը շարժվում է Երևանի ուղղությամբ: Խիզանում ընդօրինակված Ավետարանի 1604 թ. հիշատակարանում Մարտիրոս գրիչը դեպքերի առնչությամբ համակրանքով է խոսում շահ Աբասի մասին՝ շեշտելով, որ նա Երևանի ուղղությամբ արշավանքի ժամանակ խնայել է «ի քրիստոնեայսն», այսինքն՝ հայերին⁴⁷⁴: Նման հիշատակումների պարագայում հստակություն մտցնելու համար հարկ ենք համարում նշել, որ միջնադարյան հայ հեղինակների

⁴⁷² Առաքել Դավրիժեցի, էջ 66:

⁴⁷³ Նույն տեղում, էջ 66-67:

⁴⁷⁴ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 143-144:

մոտ հայերի համար համարժեքորեն օգտագործվել է «քրիստոնյա» տերմինը: Այսպես օրինակ, Առաքել Դավրիժեցին հայ էթնոնիմին համարժեք օգտագործում է «քրիստոնեայք», «ազգն քրիստոնէից», «ազգն Հայոց», «ազգս Հայոց», «տունս Արամեան», «ազգաւ Հայ և հաւատով քրիստոնեայ» արտահայտությունները⁴⁷⁵: Նույն մոտեցումն առկա է ուշմիջնադարյան հիշատակարանների գրիչների մոտ⁴⁷⁶:

Փաստորեն, արևելահայկական տարածքների գրավման ժամանակ շահը փորձում էր պահպանել օսմանյան տիրապետության ժամանակահատվածում իր նկատմամբ ձևավորված համակրալից վերաբերմունքը հայերի շրջանում: Այդ տրամադրություններն ի հայտ էին եկել երկու պատճառով. նախ օսմանյան վարչակարգն Արևելյան Հայաստանում աչքի ընկավ ավելի ծանր հարկային քաղաքականությամբ, և, բացի այդ, արևելահայ առևտրական վերնախավը՝ խոջայությունը, տնտեսական սերտ կապեր էր հաստատել պարսկական արքունիքի հետ, քանի որ Սեֆյանների տարածքով էր անցնում հայ խոջայության առևտրական տարանցման ուղու զգալի մասը⁴⁷⁷:

Այսպիսով, առաջ է գալիս հետևյալ հարցը. շահ Աբասն արդյոք իր արշավանքի սկզբում ծրագրե՞լ է իրականացնել հայ բնակչության զանգվածային բռնագաղթ, թե՞ պատերազմական գործողությունների ընթացքն է ստիպել դիմելու նման քայլի:

⁴⁷⁵ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 239, 240-241, 254, 256, 257, 258, 288, 311, 322, 324, 378:

⁴⁷⁶ Տե՛ս օրինակ՝ 1575 թ. հիշատակարան՝ ՄՄ, ձեռ. № 3566, էջ 132բ:

⁴⁷⁷ Տե՛ս **Blow D.**, նշվ. աշխ., էջ 77; **Herzig E.**, The Deportation of the Armenians in 1604-1605 and Europe's Myth of Shah 'Abbas I, էջ 59-71: Սեֆյանների քաղաքական գաղափարա-փոփոխական փոփոխությունների և այս համատեքստում շահ Աբասի քաղաքականության նրբերանգների մասին տե՛ս **Mitchel C.**, The Practice of Politics in Safavid Iran: Power, Religion and Rhetoric, "BIPS Persian Studies Book Series", vol. 1, London-New York, 2009, էջ 189-190:

Ստորև դեպքերի ներկայացման հաջորդականությունը և մեր կողմից ժամանակագրական ու տարածքային փուլաբաժանումը հստակորեն ցույց է տալիս, որ բռնագաղթը նախապես ծրագրված է եղել, թեև ծավալային ընդգրկման խնդիրը, անշուշտ, պայմանավորված է եղել արդեն պատերազմական գործողությունների ընթացքով:

Երևանի պաշարման ժամանակ շահ Աբասը նվաճում է Արարատյան կուսակալությունը, «որ էր շէն և լի ամենայն բարեօք՝ ուստի լցեալ լինէր ամենայն պիտոյք բանակին Պարսից, մարդկան և անասնոց»⁴⁷⁸: Վարչամիավորի շենության և ամենայն բարիքներով լիության հիշատակումը հաստատում է այդտեղ միջնադարում բնակչության արագ վերարտադրման համար անհրաժեշտ պայմանների առկայությունը, ինչի շնորհիվ այստեղ քանիցս կրկնված բռնագաղթերից հետո բնակչությունն արագ վերականգնվում էր⁴⁷⁹:

Պարսից բանակը Երևանի պաշարման ընթացքում օգտագործում է Արարատյան կուսակալության հայ բնակչության ներուժը: Այս առնչությամբ Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ յաւուրս յայսոսիկ հրամայեաց շահն զօրացն Պարսից գնալ յերկիրն Այրարատու՝ և յամենայն շրջակայ գաւառս նորա, հանել յամենայն տեղեաց արս՝ որ ասի ըռադաթ»⁴⁸⁰, եթէ ի քրիստոնէից իցէ, և եթէ ի մահմետականաց, որոյ և իցէ ազգաց, ժողովել և բերել ի բանակն Պարսից, զի ընդ զօրացն Պարսից մարտակից լիցին,

⁴⁷⁸ **Առաքել Դավրիժեցի**, էջ 69-70:

⁴⁷⁹ Այս պայմանների մասին առավել մանրամասն տե՛ս **Մալխասյան Մ.**, Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում ԺԶ դարում, էջ 70-88:

⁴⁸⁰ Կարծում ենք՝ արաբերեն ռաիյաթ բառի աղավաղված ձևն է, որ թարգմանաբար նշանակում է հարկատու բնակչություն, քանի որ մեջբերված հատվածում խոսքը գնում է աշխատունակ տղամարդկանց մասին:

զսիբայն⁴⁸¹ քել և այլ գործակցութեամբ օգնական լինել զօրացն Պարսից: Եւ ի ժամ պատերազմին յորժամ երիշ⁴⁸² առնէին և կամ զսիբայն ի վեր քէին, զքրիստոնեայսն յառաջ խաղացուցեալ ընդդէմ հրոյ և սրոյ մատուցանէին, որովք կոտորեալք լինէին ազգն Հայոց յերկուց կողմանց՝ յառաջուստ յՕսմանցոց՝ և յետուստ ի Պարսից»⁴⁸³: Փաստորեն, այս փուլում տեղահանվում և Երևանի բերդի մոտ էին բերվում Արարատյան կուսակալության հարկատու, այսինքն՝ աշխատունակ տղամարդիկ:

Բռնի տեղահանության այս առաջին փուլում, ըստ Առաքել Դավրիժեցու, երկու ամսում Ամիրգունա խանը, բացի Արարատյան կուսակալությունից, նաև «զերկիրն Գանձակայ՝ ուր և կարաց հասանել, հրոյ ճարակ տուեալ և սրով մաշեալ, զորս կոտորեաց և զորս աւարեալ գերեաց աղխիւք և ընտանեօք և բերեալ էած յԵրևան ի լիութիւն և ի յղփութիւն բանակին Պարսից»⁴⁸⁴: Գանձակի ուղղությամբ բռնի տեղահանության ժամանակ, ի տարբերություն Արարատյան կուսակալության, պատմիչի կողմից մասնակի կոտորածի մասին հիշատակությունը ցույց է տալիս, որ այստեղ հնարավոր է՝ բնակիչները դիմադրության փորձ են ցուցաբերել, ինչի պատճառով արժանացել են նման վերաբերմունքի: Ընտանիքի անդամների և նրանց ունեցվածքի բռնի տեղափոխումը պարսից զորակայան բնութագրում է նրանց՝ որպես բանակին սպասարկող անձնակազմ օգտագործվելը:

Այսպիսով, դեռևս մինչև օսմանյան հիմնական ուժերի ժամանումն արդեն իսկ իրականացվում է բռնագաղթի առաջին

⁴⁸¹ Արաբերենից թարգմանաբար՝ պաշարողական մեքենա:

⁴⁸² Թուրքերենից թարգմանաբար՝ հարձակում:

⁴⁸³ **Առաքել Դավրիժեցի**, էջ 70: Այս մեջբերման վերջնամասում ևս մեկ անգամ տեսնում ենք «զքրիստոնեայսն» և «ազգն Հայոց» համարժեք կիրառությունը՝ որպես էթնոնիմ:

⁴⁸⁴ Նույն տեղում:

փուլը, որը, փաստորեն, առայժմ ներքին բնույթ էր կրում՝ Հայաստանի մի հատվածից դեպի մեկ այլ հատված: Արարատյան կուսակալության բոլոր կողմերից Երևանի մատույցներ բերված բնակչությունից հենց հայերն էին ամբողջությամբ շահագործվում: Առհասարակ, բռնագաղթի այս փուլի նպատակը Երևանը պաշարած պարսկական բանակի ամբողջական սպասարկումն էր: Դեպքերի ականատես պորտուգալացի ավգուստինյան հոգևորականների խումբն առաջնորդող Անտոնիո դի Գոուվեան նույնիսկ Առաքել Դավրիժեցուց ավելի կոնկրետ ու մռայլորեն է նկարագրում հայերի զրկանքները: Ըստ նրա՝ շուրջ 12 հազար հայ արհեստավորներ բերվել են Երևանի շրջակայքից, այսինքն՝ Արարատյան կուսակալությունից, որպեսզի կառուցեն պաշարողական ենթակառուցվածքները, և անգամ պարենի սպառման, ձմեռվա ցրտի ու թուրքական կայազորի կողմից հակազդման պայմաններում շարունակել են աշխատել ու բազմաթիվ կորուստներ կրել⁴⁸⁵:

Բացի Երևանի մատույցներ բերված հայ բնակչությունից՝ ծանր դրության մեջ էին նաև քաղաքի ներսում գտնվող հայերը: Ընդ որում՝ Երևանի բնակչությունը կորուստներ է կրել ոչ միայն բուն պատերազմական գործողություններից, այլև դրանց հարուցած սովից: Խիզանում ընդօրինակված Ավետարանի 1604 թ. հիշատակարանում գրիչ Սարգիս քահանան հետաքրքիր տեղեկություն է հայտնում, որ Երևանի 8-ամյա պաշարման ընթացքում «բազումք ի ներս քաղաքին սովալլուկ և սովամահ լինէին և զմահացեալսն քարավէժ առնէին»⁴⁸⁶: Սա բացատրվում է հենց

⁴⁸⁵ Տե՛ս **Di Gouvea**, *Relation des Grandes Guerres et Victoires Obtenues par Le Roy de Perse Chah Abbas*, Rouen, 1646, էջ 237-245 (հղումը տե՛ս՝ **Blow D.**, նշվ. աշխ., էջ 78-79, 249): Ռազմական պատրաստությունների մասին մանրամասն տե՛ս նաև Իսքանդար բեգ Մունշիի մոտ՝ **Eskandar Beg Monshi**, էջ 844-846:

⁴⁸⁶ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 147:

շահի մարտավարական մոտեցմամբ, քանի որ նա մտադրվել էր սովամահ անելու ճանապարհով ստիպել օսմանյան կայազորին հանձնվել⁴⁸⁷:

Այս իրադարձությունների ժամանակ հետաքրքրական է Հայաստանում հաստատված քրդական ցեղերի տեղաշարժերի հնարավորության ուսումնասիրությունը: Ըստ դեպքերի ժամանակակից պարսից պալատական պատմիչ Իսքանդար բեգ Մունշիի՝ Երևանի պաշարման ժամանակ Ամիրգունա խանի դիվանագիտական ջանքերի շնորհիվ քրդական հաքքարի, մահմուդի, դունբուլի և այլ ցեղերի աշիրեթապետեր, եկել են Երևան և հպատակություն հայտնել շահին⁴⁸⁸: Այս ցեղերը բնակվում էին այն տարածքներում, որոնք մինչև 1590 թ. Կոստանդնուպոլսի պայմանագիրը թուրք-պարսկական սահմանի արևելյան հատվածն էին կազմում: Հաքքարի ցեղը զբաղեցնում էր պատմական Աղբակ գավառի և դրանից հարավ, մահմուդին՝ դրանից դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք, իսկ դունբուլին՝ հաքքարից դեպի հյուսիս-արևելք՝ դեպի Խոյ ընկած տարածքները⁴⁸⁹: Այս ցեղերը, փաստորեն, մինչև շահի արշավանքը շուրջ երկու տասնամյակ եղել են օսմանյան հպատակներ, իսկ այդժամ իրավիճակը կտրուկ փոխվում էր: Նկարագրելով Վանի օսմանյան բեգլարբեգի ստորակա, Խոշաբի և Կարահիսարի կառավարիչ Սուլեյման Բեգ Մահմուդիի՝ շահին հպատակվելու հանգամանքները՝ Իսքանդար բեգ Մունշին նշում է, որ քուրդ ամիրաներին բնորոշ էր հավատարմություն հայտնելը այն ուժին, որը գերիշխող էր դառ-

⁴⁸⁷ Տե՛ս **Blow D.**, նշվ. աշխ., էջ 78:

⁴⁸⁸ Տե՛ս **Փափագյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 30; «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 97:

⁴⁸⁹ Առավել մանրամասն տե՛ս **Բադալյան Գ.**, Վանի էյալեթի քրդական իշխանությունները (հուլյունթյունները) 14 դ. - 19-րդ դ. 40-ական թթ., էջ 23-37:

նում, ինչը շահը գիտակցում էր, սակայն ընծաներով և խան տիտղոսը շնորհելով՝ հետ է ուղարկում իր տիրույթները⁴⁹⁰:

Այդ նույն ժամանակ օսմանյան զորքերն Էրզրումի և Վանի ուղղությամբ զորաշարժեր են կազմակերպել՝ Սեֆյանների դեմ վճռական գործողությունների նախապատրաստվելով, և այդ պատճառով հայ բնակչությունը զգալի նեղություններ է կրել Վանի դաշտում Ահմադ փաշայի զորքերի կողմից⁴⁹¹: Ակնհայտ է, որ զորքի պարենավորման խնդիրը պետք է լուծվեր հենց դաշտի հայ բնակչության գյուղատնտեսական արտադրանքի միջոցով: Որոշ անհաջող գործողություններից հետո Ահմադ փաշան ստիպված նահանջում է Մշո դաշտ, որտեղ շուտով դիմավորում է օսմանյան հիմնական ուժերով այստեղ ժամանող Ջղալ-օղլու Սինան փաշային⁴⁹²:

Երևանի պաշարման ձգձգման պայմաններում շահը կազմակերպում է ոչ միայն Արարատյան կուսակալության և Գանձակի, այլև Արևմտյան Հայաստանի՝ Արարատյան կուսակալությանը սահմանամերձ օսմանյան վարչամիավորների հայ բնակչության բռնագաղթը: Սա, փաստորեն, բռնագաղթի երկրորդ փուլն էր: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ 1603-1604 թթ. ձմռանը շահը «առաքեաց զօրագլուխս բազում զօրօք ի կողմն Արզրումայ որք գնացեալ աւերեցին զերկիրն Բասենու և զԻսնուայ և զաշտն (զդաշտն – Մ. Մ.) Արզրումայ և զայլս ուր և կարացին հասանել, քանդեալ, աւերեալ, այրեալ և ապականեալ զերկիրն և զՀնսն, և զինչս և զստացուածս կողոպտեալ, և զարս սպանեալ, և զկանայս և զմանկունս գերեցուցեալ, բերին յԵրևան ի բանակն իւրեանց: ... Սոյնպէս և յերկիրն Արճիշու առաքեաց զօրս, որք գնա-

⁴⁹⁰ Տե՛ս **Eskandar Beg Monshi**, v. II, էջ 856:

⁴⁹¹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 147:

⁴⁹² Տե՛ս **Eskandar Beg Monshi**, v. II, էջ 855-856:

ցեալ արարին ըստ վերոյասացելումդ ասար և գերութին և ապականութին ազգին Հայոց ի ժամանակս ձմերայնոյ»⁴⁹³:

Երբ հաստատվում է տեղեկությունը, որ Սինան փաշան բանակել է Մշո դաշտում, շահը զորք է ուղարկում Կարսի և Զարիշատի գավառներ՝ կարգադրելով ոչնչացնել այդտեղի հացահատիկի ցանքատարածությունները և արոտավայրերը, որպեսզի դրանցից չկարողանա օգտվել և պարենավորվել դեպի արևելք աճապարող օսմանյան բանակը: Ըստ Իսքանդար Մունշիի՝ 1604 թ. ամռանը պարսից զորքերն ասպատակում, կողոպտում և հրկիզում են Կարսի ու Զարիշատի ցանքսերն ու արոտավայրերը՝ մինչև Բասենի Հասան-Կալա բերդը, և երկու-երեք հազար ընտանիք հայեր ու քոչվոր ցեղեր քշում դեպի Իրաք, իսկ շուրջ 20 հազար «ոչ-մուսուլմաններ» իսլամացվում են⁴⁹⁴: Ինչպես նկատում է Հ. Մուրադյանը, 17-րդ դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ժան-Բատիստ Տավերնիեն բռնագաղթից հետո աղետալի է նկարագրում նշված տարածաշրջաններից հատկապես Կաղզվանի գավառի վիճակը, որն ավերակ և անմարդաբնակ էր⁴⁹⁵: Ուսումնասիրելով սկզբնաղբյուրի անգլերեն հրատարակությունը՝ տեսնում ենք, որ ճանապարհորդը Վերին Բասենի Չոբանի՝ Հովվի կամրջից մինչև Կարսի շրջան մոտենալը հիշատակում է ան-

⁴⁹³ Առաքել Դավրիժեցի, էջ 72:

⁴⁹⁴ Տե՛ս **Eskandar Beg Monshi**, v. II, էջ 856-857: ՀՀ ԳԱԱ կողմից հրատարակված հայոց պատմության թե՛ հին և թե՛ նոր բազմահատորյակներում նշված հատվածը վրիպմամբ թարգմանված է ոչ թե դեպի Իրաք բռնագաղթի ուղենշմամբ, այլ՝ դեպի Արարատյան կուսակալության տարածք, այնտեղից էլ՝ Պարսկաստան (տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, գ. II, էջ 628):

⁴⁹⁵ Տե՛ս **Մուրադյան Հ.**, Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգի Կաղզվանի գավառում (17-19-րդ դարի 1-ին երեսնամյակին), «Կանթեղ», 2001, թ. 4, էջ 171-177: Կարսի նահանգից պարսիկները բռնագաղթեր են կազմակերպել նաև հաջորդ տարիներին (տե՛ս **Նույնի**, Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում XVI-XIX դարի առաջին կեսին, «Հայոց պատմության հարցեր», թ. 5, Երևան, 2005, էջ 61-62):

տառոտ լեռներ և ամայի շրջաններ, որտեղ ընդամենը մեկ գյուղ է տեսել⁴⁹⁶: Այս մասին է վկայում նաև Հ. Առաքելյանի կողմից մեջբերվող Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մի Ավետարանի հիշատակարան, ըստ որի՝ Երևանի գրավումից (գերեվարվածների ժամանման պահին բերդն արդեն գրավված էր) հետո շահը Կարսի նահանգից գերել է ավելի քան 20 հազար հայ⁴⁹⁷:

Բասենի, Կարսի ու Զարիշատի տեղահանությանը զուգահեռ Արծկեի անհաջող պաշարումից հետո պարսից զորահրամանատար Ալահվերդի խանը «զամենայն երկիրն Արծկեյո հաւասար աւերեաց և հրդէի արկեալ այրեաց. և զամենայն արու արս կոտորեաց՝ և զինչս, և զստացուածս՝ զուստերս և զդստերս և զկանայս յաւար և ի գերութիւն առեալ: Եւ ելեալ անտի եկն յԱրճէշ և ի Բերկրի, և ի Վան և յամենայն գաւառս նոցա արար այնպէս»⁴⁹⁸: Այս ամբողջ բազմությանը և բռնագրավված անասուններին նա տեղափոխեց Երևանի մոտ: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ միայն Արծկեից, Արճեշից, Բերկրիից և Վանից գերեվարված ու Երևանի մոտ պարսից զորակայան բերված հայերի թվաքանակը, չհաշված զոհվածներին, 23 հազար էր⁴⁹⁹: Հետաքրքրական է, որ հայ պատմիչը բռնագաղթի այս փուլում էրզրումի և Վանի նահանգներից տեղահանության առնչությամբ շեշտում է արական սեռի ներկայացուցիչների կոտորման մասին: Սա գուցե զանգվածային չի կրել, սակայն տեղահանության հապճեպ և բռնի բնույթը ցույց է տալիս, որ այն անկասկած որոշակի դիմադրական արձագանք էր ստանալու Արևմտյան Հայաստանում:

⁴⁹⁶ Տե՛ս “The Six Voyages of John Baptista Tavernier, A Noble Man of France now living, Through Turkey into Persia, and The East-Indies, Finished in the Year 1670. Giving an Account of the State of those Countries”, Book I, Made English by F. P., London, 1678, էջ 9:

⁴⁹⁷ Տե՛ս **Առաքելյան Հ.**, նշվ. աշխ., էջ 63-64:

⁴⁹⁸ **Առաքել Դավրիժեցի**, էջ 74:

⁴⁹⁹ Տե՛ս նույն տեղում:

Ուսումնասիրողների կողմից ամայացման այս քաղաքականությունը անվանվել է «այրված հողի» մարտավարության ռազմագիտական տերմինով⁵⁰⁰: Կանադացի իսլամագետ Ռ. Աբիսաաբը պնդում է, որ սահմանակից շրջանների ամայացումը, բնակչության տեղահանումն ու նույնիսկ բռնի իսլամացումը եղել են շահ Աբասի քաղաքականության կարևոր տարրերը, և նկատում, որ Իսքանդար Մունշին շահ Աբասի իրականացրած այս քաղաքականությունը հիշատակում է ավելի շատ դեպքերում, քան նրան նախորդած որևէ տիրակալի պարագայում⁵⁰¹:

1604 թ. հունիսին շահ Աբասը գրավում է Երևանը և հանձնում ղզլբաշ կաջար մեծ ցեղի աղջա-կոյունլու օյմաղից Ղազվինի պաշտոնյա Ամիրգունա խանին⁵⁰²: Քաղաքում շարունակվում էր սովը: 1605 թ. հիշատակարաններից մեկում ձեռագիրն ստացող Հայկաթը և Ասլանը նշում են, որ երբ Աբասը Երևանը գրավեց, «սովն զչորս կողմ աշխարհ... բազումք մեծատունք սովամահ կորեան...»⁵⁰³: Այդ նույն դեպքերի առնչությամբ Քաշաթաղի մելիք Հայկազի ստացած Ավետարանի 1606 թ. հիշատակարանում նշվում է, որ շահը Երևանի բերդը գրավելիս կոտորել է 12 հազար «մանկտիս և կանայս»⁵⁰⁴: Որևէ այլ սկզբնաղբյուրում կոտորածի մասին տեղեկություն չկա, ուստի սա Երևանի պաշարման

⁵⁰⁰ Տե՛ս **Քայբորդյան Վ.**, Օսմանյան կայսրության պատմություն, էջ 228; **Perry J.**, Forced Migration in Iran during the Seventeenth and Eighteenth Centuries, “Iranian Studies”, 1975, vol. 8, N 4, էջ 199-215; **Abisaab R.**, Converting Persia: Religion and Power in the Safavid Empire, London – New York, 2004, էջ 61; **Newman A.**, Safavid Iran: Rebirth of a Persian Empire, London – New York, 2009, էջ 60-61; **Kia M.**, Daily Life in the Ottoman Empire, “The Greenwood Press Daily Life Through History Series”, Santa Barbara-Greenwood, 2011, էջ 119:

⁵⁰¹ Տե՛ս **Abisaab R.**, նշվ. աշխ., էջ 61-62, 194, ծանոթ. 61:

⁵⁰² Տե՛ս **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 29-30:

⁵⁰³ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 168:

⁵⁰⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 206-207:

ժամանակ սովից և պատերազմական գործողություններից զոհվածների ընդհանուր թիվը միայն կարող է լինել:

Այնուհետև կազմակերպվում է բռնագաղթի երրորդ փուլը: Երևանի գրավումից հետո շահ Աբասը բնակչությանը Պարսկաստան տեղափոխելու նպատակով հրամայում է. «...որքան ժողովուրդք, որք ղարիպականքն են և պանդուխտք, և այնք ևս որք ի գերութենէ ազատեալք են, - եթէ քրիստոնեայք իցեն, եթէ մահմետականք, եթէ եբրայեցի, - զոր բերին խաներն... . եթէ Ամիրգունա խանն որ եբեր ի Գանջայու երկրէն, եթէ Ալահվէրտի խանն, որ եբեր յԱրծկէոյ և յԱրճիշոյ և ի Բերկրու և ի Վանայ, եւ թէ միւս խաներն, որք միւսանգամ բերին յԱրիճշոյ, ի Մանազկերտու, յԱլաշկերտու, և ի Մակուայ, եթէ միւս խաներն որք բերին ի Կարսայ, ի Կաղզվանայ, ի Բասենու, յԱրգրումայ, ի Խնուսայ. և զայլս զամենեսեան, որք յայլ ուստեքէ լեալ էին, զսոսա զամենեսեան հրամայեաց զի խոյզ արարեալ գտցեն յերկրին Երևանու...»⁵⁰⁵: Առաքել Դավրիժեցու այս տեղեկությունից ակնհայտ է, որ շահը հրամայել է Հայաստանի տարբեր հատվածներից Արարատյան կուսակալություն բերված բազմությանը հավաքել և կենտրոնացնել մի տեղ՝ հետագայում Պարսկաստան տանելու համար, ընդ որում՝ մեջբերումը ցույց է տալիս նաև, որ մարդկանց մի մասը կարողացել էր ազատվել գերությունից, որոնց նույնպես պետք է գտնեին և բռնագաղթի ենթարկեին: Այս մանրամասները ևս մեկ անգամ հաստատում են մեր այն տեսակետը, որ բռնագաղթը տեղի է ունեցել մի քանի փուլերով:

Այն, որ Արարատյան կուսակալությունում բռնագաղթի վճռական փուլի նախօրեին ոչ միայն տեղի հայերն էին, այլև Արևմտյան Հայաստանից և Գանձակի վարչամիավորից տեղահանվածները, հաճախ աչքաթող է արվում ուսումնասիրողների

⁵⁰⁵ Առաքել Դավրիժեցի, էջ 75-76:

կողմից, բայց Առաքել Դավրիժեցու և մի քանի հիշատակարանների տվյալները հնարավորություն են ընձեռում հասկանալու այս կարևոր խնդիրը:

Տեղեկանալով օսմանյան զորահրամանատար Ջղալօղլի Սինան փաշայի՝ Էրզրումից դեպի Արարատյան կուսակալություն շարժվելու մասին՝ շահ Աբասը Շիրակավանից Աղջակալա (Երվանդակերտ) է գալիս և «զոր ի վաղ ժամանակաց ունէր ի մտի զքշելն ազգին քրիստոնէից և զաւերելն աշխարհին Հայոց անդ յայտնեաց խորհրդակցաց իւրոց: Քանզի գիտէր ի միտս իւր, թէ ո՛չ կարէ պատերազմաւ զդէմ ունել Սինան փաշային, այսինքն Ջղալօղլի Սարդարին: Վասն որոյ հրամայեաց զամենայն բնակիչս աշխարհին Հայոց, եթէ քրիստոնեայ, եթէ հրէայ, եթէ մահմետական, քշել յաշխարհն Պարսից: Զի եկեալ Օսմանցոցն անբնակ գտանիցեն զերկիրն ի մարդկանէ: Եւ ո՛չ գտցի կերակուր և ռոճիկ և այլ ինչ պիտոյք նոցա և անասնոց նոցա, և առ ի չգոյէ հարկաւորաց վտանգեսցին զօրքն Օսմանցոց: Նաև տարեալ ժողովուրդքն լինիցին նմա անզերծանելի հարկատուք՝ ծառայք և հողագործք մինչև ցյալիտեան»⁵⁰⁶: Առաքել Դավրիժեցին, փաստորեն, մի կողմից նշում է, որ շահը վաղուց էր նպատակադրվել «ազգին քրիստոնէից» քշել Պարսկաստան, մյուս կողմից էլ այդ քայլին էր դիմում, քանի որ չէր կարող դիմադրել Սինան փաշային: Փաստորեն, փաշան պարենավորման հնարավորություն չէր ունենալու, իսկ Պարսկաստանը «ցյալիտեան» ստանում էր հարկատու հողագործ բնակչություն:

Իսթանդար Մունշին ևս նշում է, որ Ամիրգունա խանը և Արդաբիլի Ջուֆեղար խանը հրաման են ստանում Մշո դաշտից Երևանի ուղղությամբ արշավանքի նախապատրաստվող Ջղալօղլի Սինան փաշայի արշավանքին ընդառաջ Արարատյան կու-

⁵⁰⁶ Առաքել Դավրիժեցի, էջ 77:

սակալության և Նախիջևանի շրջակայքի բնակչությանը տեղահանել, բնակավայրերն ավերել, ցանքսերն ու հացահատիկի պաշարները հրկիզել⁵⁰⁷:

Նույն պատճառներն է նշում նաև բռնագաղթից հետո Հայաստան այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենը: Ըստ նրա՝ Երևանի և Նախիջևանի դաշտերն ու այգիները հրկիզվեցին, շինություններն ավերվեցին, բնակչությունն ու անասնահոտերը տեղափոխվեցին Պարսկաստան, և նույնիսկ ջրի աղբյուրները թունավորվեցին, որպեսզի օսմանյան բանակը Պարսկաստանի դեմ արշավանքների ժամանակ զրկվեր պարենավորման հնարավորություններից⁵⁰⁸:

Թուրքական աղբյուրները նույնպես հավաստում են, որ երբ 1604 թ. ձմռանը Ջղալե Զադե (Ջղալօղլի) Սինան փաշան հասնում է Կարս, «ճանապարհին եղած ռայաների [հայերի] գյուղերի ու ավանների բնակիչները աքսորված լինելով, երկիրը մնում է անմշակ: Երկրում սով է տիրում»⁵⁰⁹:

Ինչպես արդեն նշել ենք, բռնագաղթի պատճառներից էր նաև այն, որ պարսից շահը նպատակ ուներ հայ վաճառականների միջոցով ընդլայնել Պարսկաստանի արտաքին առևտրական կապերը, ինչպես նաև հայ արհեստավորների և երկրագործների միջոցով զարգացնել երկրի հետամնաց տնտեսությունը⁵¹⁰:

⁵⁰⁷ Տե՛ս **Փափագյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 30:

⁵⁰⁸ Տե՛ս **Զուլալյան Մ.**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, էջ 150-151:

⁵⁰⁹ «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 94:

⁵¹⁰ Տե՛ս “The Cambridge History of Iran”, Vol. 6, Cambridge University Press, 1986, էջ 271; **Blow D.**, նշվ. աշխ., էջ 79-80; **Newman A.**, նշվ. աշխ., էջ 61; **Canby Sh.**, Shah ‘Abbas: The Remaking of Iran, London, 2009, էջ 64-65; **Aslanian S.**, From the Indian Ocean to the Mediterranean: the Global Networks of Armenian Merchants from New Julfa, Berkeley, 2011, էջ 33-34:

Հ. Առաքելյանը բռնագաղթի այս փուլի պատճառների թվում միայն օսմանյան բանակի պարենավորման արգելակումը բավարար չի համարում, քանի որ այդ պարագայում հարկ չկար բռնագաղթի ենթարկելու Ատրպատականի հայերին: Այս համատեքստում նա մեջբերում է Շարդենի տեղեկություններն այն մասին, որ Երևանի, Նախիջևանի, Ջուղայի և Բարձր Հայքի (այսինքն՝ Էրզրումի նահանգի) հայերին տեղահանեց և տարավ իր մայրաքաղաքը՝ այդտեղի առևտուրն աշխուժացնելու համար, քանի որ եվրոպացի վաճառականների համար հայերը կրոնակից էին, ուստի և՛ ավելի համակրելի⁵¹¹: Նա հույս ուներ նաև մեծ հարված հասցնել Օսմանյան կայսրության մետաքսի առևտրին՝ փոխարենը զարգացնելով մետաքսի սեփական առևտուրը, որը Հայաստանի տարածքից տեղափոխվելու էր հարավ՝ ընդհուպ մինչև Պարսից ծոց⁵¹²: Փաստորեն, այս բռնագաղթի միջոցով պարսից շահը հեռահար նպատակներ էր հետապնդում՝ ցանկանալով հզորացնել իր երկիրն ու միաժամանակ թուլացնել թշնամուն:

Բռնագաղթի հիմնական փուլը, ըստ Առաքել Դավրիժեցու, սկսվել է 1604 թ. օգոստոսին՝ հիմնական թափն առնելով Խաչվերացից հետո՝ աշնանը⁵¹³: Այս համատեքստում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Հին Ջուղայում սկսված և Սպահանում ավարտին հասցված մի «Յայսմաուրք»-ի հիշատա-

⁵¹¹ Տե՛ս **Առաքելյան Հ.**, նշվ. աշխ., էջ 76-78:

⁵¹² Տե՛ս **Newman A.**, նշվ. աշխ., էջ 61; **Faroghi S.**, *The Ottoman Empire and the World Around It*, London-New York: I.B. Tauris, 2004, էջ 139: Համաշխարհային տարանցիկ առևտրի հետ առնչության մասին մանրամասն տե՛ս **Baghdiantz McCabe I.**, *The Shah's Silk for Europe's Silver: The Eurasian Trade of the Julfa Armenians in Safavid Iran and India (1530-1750)*, "University of Pennsylvania Armenian Texts and Studies", Book 15, Atlanta: Scholars Press, 1999:

⁵¹³ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 79: Տե՛ս նաև **Դանեղյան Լ.**, Հայերի բռնագաղթն Իրան 17-րդ դարում, էջ 63-75: Հմմտ. «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 146, 302:

կարանը, որտեղ գրիչ Արիստակես արեղան հայտնում է, որ Ջուղա գյուղաքաղաքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում է գրել 1604 թ. հունվարի 20-ից մինչև հունիսի 4-ը, իսկ ավարտել է 1605 թ. Սպահանում⁵¹⁴: Սա հաստատում է Առաքել Դավրիժեցու և մանր ժամանակագիրների այն տեղեկությունը, որ բռնագաղթյալների ալիքը Սպահան է հասել հաջորդ տարի, ուստի Ջուղայի բռնագաղթը 1604 թ. ամռանն է սկսվել: Միաժամանակ անընդունելի ենք համարում բռնագաղթն արհեստականորեն 1605 թ. տանելը՝ հիմնվելով լոկ խարբերդի Գահլու գյուղից Հովհաննես գրիչի կողմից 1606 թ. թվագրումը, քանի որ նույն գրիչը 1605 թ. նշում է, որ ինքը Սպահան տարվածների խմբում էր⁵¹⁵: Այսպիսով, բռնագաղթի վճռական փուլը սկսել է 1604 թ., իսկ բռնագաղթի ենթարկվածների բազմությունը տեղ է հասել միայն հաջորդ տարի՝ 1605 թ.:

Գաղթի կազմակերպման գործում ներգրավվել են նաև հայոց մեծամեծները, որոնք, սակայն, առաջարկել են գաղթի գնալ գարնանը, քանի որ գույքը, ծերերին ու մանուկներին տեղափոխելու համար անհրաժեշտ քանակով փոխադրամիջոցներ չկային⁵¹⁶: Այդուհանդերձ, շահը զորապետներին կարգել է տարբեր ուղղություններով և հրամայել բոլոր մարդկանց գերեվարել: Ամիրգունա խանին հանձնարարվել է Արարատյան կուսակալության գործը, և նա բերել է բոլորին Արարատյան դաշտ, որտեղ, ըստ Առաքել Դավրիժեցու, Գառնու լեռներից մինչև Երասխ գետը լայնությամբ ձգվում էր գաղթականության բանակը, իսկ երկարությունը մեկ օրվա ճանապարհ էր զբաղեցնում⁵¹⁷: Ընդ որում՝ պարսից բանակը ոչ միայն քշում էր բնակչությանը բոլոր

⁵¹⁴ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 183-184:

⁵¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 236:

⁵¹⁶ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 78:

⁵¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 78-79:

բնակավայրերից, այլև՝ Արևմտյան Հայաստանում իրականացրածի օրինակով վերացնում հացահատիկի պաշարները⁵¹⁸:

Ըստ Առաքել Դավրիժեցու՝ Ամիրգունա խանի ուղարկած ուժերը Գառնի գյուղում թալան են սկսում, հափշտակում «զգա-
լակս քրիստոնէից»⁵¹⁹: Սա տեսնելով՝ գյուղացիները համախմբ-
վում են և դուրս քշում զորականներին, և միայն Ամիրգունա
խանն է կարողանում հնազանդեցնել նրանց ու միացնել գաղ-
թական զանգվածներին⁵²⁰: Գառնի գյուղից բացի՝ Գառնիի գա-
վառում կային նաև այլ գյուղեր, «որք ամրացեալք են յամուր
վայրս լերանց երկրիս՝ յայրս և ի ծերպս քարանձաւաց»⁵²¹: Հա-
վուց թառի վանքի Մանուել եպիսկոպոսը և Գեղարդավանքի
Աստվածատուր եպիսկոպոսը մի խումբ հոգևորականների և աշ-
խարհականների հետ որոշ պարենով ամրացան Գեղարդի ձորի
քարայրներում, որտեղ, ի վերջո, խանը բռնեց նրանց: Մարդ-
կանց մի մասը, այդ թվում՝ Մանուել եպիսկոպոսը, սրի քաշվեց,
մյուս մասը քշվեց գաղթականության ընդհանուր զանգվածի
մոտ⁵²²: Այդուհանդերձ, Գառնու գավառում զորքը ոչ բոլորին է
կարողացել գերել՝ «թողեալ ի բաց գնացին». հասնում են Քոռա-
դարա մեծ ձորը և «թէպէտ բազումք կային անդէն ի ձորն այրք և
ամրոցք, յորում թաքուցեալք էին քրիստոնեայք, թողեալ զայլսն
զամենայն՝ դիմեցին ի վերայ անուանի այրին՝ որում Եախըշխան
այր»⁵²³ ասէին. զի վասն ամրութեան նորին բազումք էին անդ ժո-

⁵¹⁸ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 79:

⁵¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 83:

⁵²⁰ Տե՛ս նույն տեղում:

⁵²¹ Տե՛ս նույն տեղում:

⁵²² Տե՛ս նույն տեղում, էջ 83-84:

⁵²³ Յախըշխան քարանձավ. Գառնի գյուղի մոտ՝ Ազատ գետի վերին հոսանքում, տեղակայված քարանձավներից սա ամենամեծն է և կարող է տեղավորել շուրջ հազար մարդ (տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բա-

ղովեալք արք և կանայք քրիստոնեայք, անծինք իբրև հազարք»⁵²⁴: Երկարատև շրջափակումից հետո մտան անձավ ու կոտորեցին մեծ մասին, իսկ փրկվածներին գերեվարեցին⁵²⁵:

Այսպիսով, շահ Աբասն «անմարդաբնակ արար միահաղոյն զամենալի և գյուղթի աշխարհս Հայոց», քանզի «ո՛չ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց ի Պարսկաստուն (Պարսկաստան – Մ. Մ.), այլ զբազումս: Եւ սկսեալ ի սահմանացն Նախջուանու և անցեալ ընդ Եղեգաձոր, առ եզերք Գեղամայ, և Լօռոյ, և զՀամ-զաչիման գաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակուան, զԶարիշատ, և մասն ինչ ի գեղօրէիցն Կարսայ, և զծորն Կաղզ-վանու բնաւին, և բովանդակ զերկիրն Ալաշկերտու, և զգեղօ-րայսն Մակուայ, և զերկիրն Աղբակու և զՍալամաստու և զԽոյայ և զՈրմի (զՈւրմիոյ – Մ. Մ.), և որ ինչ պանդուխտք և դարիպա-կանք մնացեալք էին ի քաղաքն և ի գեղօրայսն Թարվիզու (Թավրիզու – Մ. Մ.), զդաշտն Արարատու բովանդակ, և զերև-ան քաղաք, զերկիրն Ղրիբուվաղայ, զԾաղկունուց ձոր, զԳառնու ձորն, զՈւրծաձորն: Եւ յառաջ քան զայս՝ զգաւառն Կարնոյ, և զԲասենու, և զԽնուսայ, և զՄանագլերտու, և զԱրծկէոյ, և զԱրճոյ, և զԲերկրու, և զՎանայ աւարով և գերութեամբ բերեալ էին յերևան, և ընդ սոսա քշեցին և տարան»⁵²⁶: Անգամ 17-րդ դարի կեսին Առաքել Դավրիժեցին իր ժամանակի համար գան-գատվում է. «Որ և այժմ տեսանեմք զարգաւանդ և զբերրի գիողս զարտ և զանդաստանս սորա, և զաւերակս բազմապատիկ գե-ղօրէիցն և զմեծանիստ աւանացն»⁵²⁷: Նշված տարածքներից Աղ-

նարան», կազմեցին՝ Թ. Հակոբյանը, Ստ. Մելիք-Բախշյանը, Հ. Բարսեղյանը, հ. 3, Երևան, 1991, էջ 915):

⁵²⁴ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 84-85:

⁵²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 85-86:

⁵²⁶ Նույն տեղում, էջ 86-87:

⁵²⁷ Նույն տեղում, էջ 87:

բակի բռնագաղթի մանրամասներին անդրադառնում է նաև Իս-քանդար Մունշին: Ըստ այդմ՝ այստեղ քրիստոնյա բնակչություն-նը դիմադրություն է կազմակերպել, և նրանցից շուրջ հազար կանայք և երեխաներ, որպես ռազմագերիներ, տարվել են շահի մոտ՝ Թավրիզ⁵²⁸: Այս նկարագրությունը կարևոր ենք համարում, քանի որ գավառը հետագայում հայտնի է դառնում որպես գե-րազանցապես քրդաբնակ տարածք: Ինչ վերաբերում է Գեղամա եզերքի հիշատակմանը, ակնհայտ է, որ այստեղ խոսքը վերաբե-րում է Գեղարքունիքի միայն արևմտյան կեսի՝ Գեղամա լեռների լանջերին, իսկ 1606 թ. Թիֆլիսից վերադառնալիս շահը Մազ-րայում հյուրընկալվել է հայոց մելիք Շահնազարի տանը և վերա-հաստատել նրա մելիքական ժառանգական իրավունքները⁵²⁹:

1650-ական թթ. հայ բնակչության՝ Սպահանի կենտրոնից արվարձաններ տեղափոխումը նկարագրելիս Առաքել Դավրիժե-ցին թվարկում է բռնագաղթի հետևանքով վերաբնակեցված հա-յության ծագման վայրերը՝ նշելով նաև Բաղեշը, Երզնկան, Մու-շը, Դերջանը, Բաբերդը, Սպերը⁵³⁰, որոնք բռնագաղթը նկարա-գրելիս պատմիչը չէր մատնանշել: Նման պարագայում անհրա-ժեշտ է դիմել դեպքերին մոտ մեկ այլ հեղինակի՝ Զաքարիա Քա-նաքեոցու տվյալներին: Բռնագաղթի ընդգրկած տարածքը նկա-րագրելիս նա գրում է. «Սկսեալ ի կողմանցն Նախչուանայ՝ զԵ-ղեգաձոր, զԳեղամ, զԼօռի, զՀամզաչիման, զՆիգ, զՇարապխա-նայ, զՇիրակ, զԶարիշատ, և զգեղօրայսն Կարուց, և զձորն Կաղ-զուանայ, զԱլաշկերտ, զՄակու, զԱղբակ, զՍալմաստ, զԽոյ, զՈրմի, և զկողմն Թաւրիզու, զդաշտն Արարատու, զԵրևան քա-ղաք, զԿոտէս գավառ, զԾաղկնոձոր, զԳառնոձոր, զՈւրծաձոր, և որ զգաւառն Կարնոյ և զԲասենոյ՝ զԻնուս, զՄանազկերտ,

⁵²⁸ Տե՛ս **Eskandar Beg Monshi**, v. II, էջ 869-870:

⁵²⁹ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 114:

⁵³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 352:

զԱրծկէ, զԱրճեշ, զԲերկրի, և զամենայն գաւառսն Վանայ, և այլ ամենայն տեղից գերեաց և ասերեաց, այրեաց և հրդեհեաց զամենայն բնակութիւնսն, զի մի մնասցէ շէն»⁵³¹:

Զաքարիա Քանաքեոցին, ինչպես տեսնում ենք, գրեթե նույնությամբ կրկնում է բռնագաղթի ընդգրկած տարածքը, ուստի անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև դեպքերին շատ մոտ գրված ձեռագրերի հիշատակարաններին: Պարսկաստանի Գյանդումանի նահանգի Քադաք գյուղում 1611 թ. գրված Ավետարանի հիշատակարանում գրիչ Զաքարիա Վանեցին նշում է, որ հրամայվեց գերելու «ազգս Հայոց», և «գերեցուցին զԿարս, զՇիրակունիս, զԲասեն, զԿաղզղւան, զԱղջաղալէն, զԱլաշկէրտ. զԳաւգ[սու] (զԳյոկսու – Մ. Մ.), [զԽ]նուս, զՄալ[ազ]կերտ, զԱիքլիս, զՏումանիս, զՉլդըր, զԱրտախան (զԱրտահան – Մ. Մ.), զԿոլայ (զԿող – Մ. Մ.), զՇաքի, զՇրւան, զՇամախի, զԲ[ա]նակ, զՓասկեր (իմա՝ Փանասկերտ – Մ. Մ.), զՅուխտիք (զՈւխտիք – Մ. Մ.), զՄամրվան, զԹաւրիսուն (զԹորթում – Մ. Մ.), զՍեպեր, զԹէրջան (զԴերջան – Մ.Մ.), զԿամախ, զՎան, զԱրճեշ, զԱրծկէ, զԲերկրի, զ[Զ]արիշատ, զԵրեւան, զՆախչլւան, զՋուղայ, զԱղբակ, զՍալամաստ և այլ բազում գեաւդ և քաղաք...»⁵³²: Այստեղ Չլդըրի էյալեթի տարածքների հիշատակումը սկզբունքորեն տարբերվում է մյուս աղբյուրների տեղանունների շարքից և չի հաստատվում այլ աղբյուրներով:

1611 թ. գրված մեկ այլ հիշատակարանում բռնագաղթի ընդգրկած տարածքում նշված են Գանձակը, Նախիջևանը, Երևանը, Սալմաստը, Աղբակը, Վանը, Կարսը, Էրզրումը⁵³³, որոնք, ըստ էության, բռնագաղթի հիմնական օջախներն էին:

⁵³¹ **Զաքարիա Քանաքեոցի**, էջ 49:

⁵³² «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 411-412:

⁵³³ Տե՛ս նույն տեղում, էջ 448-450:

Հովհաննավանքում ընդօրինակված Ժողովածուի 1631 թ. հիշատակարանում գրիչ Ղուկասը շարադրում է. «...շահ Ապագ վերաձայն[ե]ալ ի Ռ և ի ԾԳ (1604) թվին եկեալ յաշխարս Հայոց, ի յԱրարատեան տանէս և ի Գողթնեաց գաւառէ, մանաւանդ թէ զՋուղայ իսկ, բովանդակ տարեալ բնակեցոյց ի Շօշ քաղաք և ի շրջակա գաւառսն իւր տունը իբրև Ժ (10) հազար»⁵³⁴: Այստեղ, փաստորեն, բռնագաղթի մայր օջախ է նշվում Արարատյան կուսակալությունը՝ Գողթն գավառով հանդերձ: Նմանօրինակ հատվածական հիշատակումները երբեմն ստիպել են ուսումնասիրողներին կարծել, որ Առաքել Դավրիժեցու մատնանշած տարածքը չափազանցություն է, սակայն, մեր կարծիքով, այդ տեղեկությունների բնույթը պայմանավորված է հիշատակարանի գրչության վայրով, օրինակ՝ նախորդ դեպքում Հովհաննավանքը գտնվում էր Արարատյան կուսակալությունում, ուստի պետք է ներկայացնել հենց իր վարչամիավորի կրած վնասը: Նույն տրամաբանությամբ վերը նշված 10 հազար տունը միայն այդ հատված տեղափոխվածների թիվն է:

Նման մոտեցման արտացոլումն է 1608 թ. Բաբերդում Գրիգոր Դարանաղցու գրած հիշատակարանում բռնագաղթի ընդգրկած տարածքի ներկայացումը՝ Երևանի գավառներից մինչև Բասեն⁵³⁵, քանի որ վերջինս, ինչպես և Բաբերդը, Էրզրումի նահանգի կազմում էր: Բաբերդում ընդօրինակված ձեռագրի 1638 թ. հիշատակարանում նույն Գրիգոր Դարանաղցին նշում է. «Նա թագաւորն Պարսից շահ Ապազն (Աբասն – Մ. Մ.) երեկ էառ զԵրևան և զամենայն գաւառքն մինչև ի Բասէն, և զամենայն աշխարհինն հրծիգ և աւերակ արար և զամենայն բնակիչքն թէ՛ Հայք, թէ՛ Տաճիկ՝ միահամուռն սուրկուն արար, և տարօ ի Սօս

⁵³⁴ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 428:

⁵³⁵ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 328-329:

քաղաքին, որ է Իսպահէն»⁵³⁶: Նույն նահանգի բնակիչ Հակոբ Կարնեցին գրում է. «Բասենու հետ զազգս Հայոց սուրկուն արար տարաւ ի Սպահան»⁵³⁷:

Բասենի՝ որպէս բռնագաղթի մայր օջախներից մեկի մասին հիշատակումները հանդիպում են նաև այլ սկզբնաղբյուրներում: Այսպէս, Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրության (18-րդ դար) մեջ ևս առանձնակի շեշտադրում է կատարվում Բասենի վրա՝ շահը «հասեալ մինչև ի Վան և զԲասեն աւերեաց: Եւ անտի զամենայն ազգս Հայոց քշեաց, սկսեալ անտի մինչ Երևան: Եւ անտի բերեալ ափն Երասխ գետոյն, որ էր թիվ ՌԾԴ (1605) մուտ տարոյն: Ընդ նմին և գիւղաքաղաքն Ջուղայ քշեաց և տարաւ յԱսպահան բնակեցոյց և ի գաւառս նորայ սփռեաց: Այս է մէծ սուրգունն. որ և յետ Բ (2) ամի եղև սով սաստիկ, մինչ Գ (3) ամ, այնպէս որ մարդիք զմեռեալս և զկենդանիս սպանանեալ ուտէին, որ է սարսռելի ի լսելն»⁵³⁸: Այնուհետև ժամանակագիրը շարունակում է, որ շահը «յոյժ նեղեաց զազգս Հայոց և երկիրս Հայոց ցիր և ցան արար և անբնակ արար Հայաս տուն և ոչընչացոյց զերկիրն»⁵³⁹:

Մեկ այլ ժամանակագրության մեջ նշվում է. «Շահ Ապասն... զՀայոց ազգն քշեց Իսպահան, զԵրևան և զՆախչևան և զՋուղայ և զայլ կողմանսն՝ յԱլաշկերտու ի Խոյայ և տարաւ ի Գիլան և յԱպահան»⁵⁴⁰: Փաստորեն, կրկին համոզվում ենք, որ սկզբնաղբյուրի գրչության վայրի հանգամանքը երբեմն ներազդել է հեղինակների վրա՝ բռնագաղթի ընդգրկումը միայն իրենց վարչամիավորի տարածքում ներկայացնելու համար, քանի որ

⁵³⁶ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 724:

⁵³⁷ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 240:

⁵³⁸ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 428:

⁵³⁹ Նույն տեղում:

⁵⁴⁰ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 324:

վերը ներկայացված օրինակներում հաստատվում է բռնագաղթի՝ աշխարհագրական այն մեծ ընդգրկումը, որ ներկայացնում է Առաքել Դավրիժեցին:

Բռնագաղթի ենթարկված ջուղայեցի Արիստակես արեղան բռնագաղթի ընդգրկած տարածքը նշում է «ի Ջուղայոյ մինչ ի Կարս ամենեքեան գերի վարեցան, ի ծերոց մինչև ցողայն, որ երկիրն անբնակ եղև»⁵⁴¹: Սա, փաստորեն, բռնագաղթի հիմնական արեալն էր:

Բռնագաղթի առնչությամբ հայագիտության մեջ մեծ տարածում ունի Աստվածատուր քահանայի 1605 թ. հիշատակարանը⁵⁴²: Նա պատմում է Թավրիզի գրավման ժամանակ շահ Աբասի կողմից քրիստոնյա բնակչության կոտորածի մասին (ըստ թուրքական աղբյուրների՝ կոտորվել է քաղաքի սուննի բնակչության մի մասը), այնուհետև երկու փուլով ներկայացնում է բռնագաղթը, մեկը՝ հայ և մուսուլման բնակչությանը Երևանից, Նախիջևանից և Սալմաստից դեպի Թավրիզ՝ այնտեղից հաջորդ տարի միայն հայերին՝ Սպահան, իսկ մյուսը՝ Կարսից, Շիրակից, Արծկեից, Արճեշից, Բերկրիից, Խնուսից՝ 300 հազար հայերի⁵⁴³: Ընդ որում՝ նախորդ հրատարակություններում պահվել է տեղանունների թվարկման շարքում Երևանի, Նախիջևանի, Ջուղայի, Աղբակի և Սալմաստի թվարկումը, որը Վ. Հակոբյանը և Ա. Հովհաննիսյանը, փաստորեն, կրճատել են իրենց տպագրածում:

⁵⁴¹ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 184:

⁵⁴² Տե՛ս նույն տեղում, թիվ 225, էջ 181-183: Հմմտ. «Մի ձեռագիր Աւետարան Զարմախի Լիվասեան գիւղում», կազմեց՝ Ա. Երեմեան, «Հանդէս ամսօրեայ», 1948, թ. 3-6, սյ. 293-299; «Յուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի», «Էջմիածին», 1950, թ. Է-Ը, էջ 81-88; «Յուցակ Թեհրանի հայերէն ձեռագիրներում», կազմեց՝ Հ. Ոսկեան, «Հանդէս ամսօրեայ», 1953, թ. 1-3, սյ. 95-110; «ԺԷ դարի մի ձեռագիր Աւետարան», հրատ.՝ Ա. Երեմեան, «Սիոն», 1967, թ. 7-8, էջ 328-330:

⁵⁴³ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 182:

Բռնագաղթի տարածքային ընդգրկման, փուլաբաժանման և հետևանքների խնդիրներին առնչվող նյութեր կան նաև բազմաթիվ այլ սկզբնաղբյուրներում, որոնք մենք ևս ուսումնասիրել ենք և խմբավորել դեռևս մեր թեկնածուական ատենախոսությունը շարադրելիս: Հարկ է նկատել, որ հայերի բռնագաղթի մեկ այլ փուլ տեղի է ունեցել վրաց բռնագաղթի հետ, որն առանձին ուսումնասիրության թեմա է, թեև ընկալելի է դարձնում վերը նշված տարածքային թվարկումները:

Ուսումնասիրողներից խնդրին առանձնահատուկ անդրադարձել է Գ. Բադալյանը, որը քարտեզագրել է բռնագաղթը: Ըստ նրա կազմած քարտեզի՝ բռնագաղթն ընդգրկել է Արարատյան կուսակալությունը, Վանա և Ուրմիո լճերի միջակայքը, Գանձակից մինչև Էրզրում և Թորթում ընկած տարածքը⁵⁴⁴: Ուշագրավ է, որ հայ մելիքների կողմից տնօրինվող Արցախը և Սյունիքի կենտրոնական ու արևելյան մասերը խուսափել են ժողովրդագրական այս արհավիրքից: Բռնագաղթն ընդգրկել է ոչ միայն Արևելյան Հայաստանի Արարատյան կուսակալությունը (ներառյալ՝ Նախիջևանը), այլև Գանձակի գավառը, Ուրմիո, Սալմաստի, Խոյի, Մակուի վարչամիավորները, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի արևելյան և հյուսիսային մասերը, Էրզրումի նահանգի արևելյան ու կենտրոնական հատվածները և Կարսի նահանգն ամբողջությամբ:

Ի հակառակ տեղային նշանակության հիշատակարանների, որոշ գրիչների հաղորդած տվյալները չեն սահմանափակվում իրենց վարչամիավորով: Զակամ գավառի Ղարամուրատ

⁵⁴⁴ Տե՛ս «Հայերի բռնագաղթը Շահ-Աբաս 1-ինի կողմից Պարսկաստան XVII դ. սկզբին», հեղինակ՝ Գ. Բադալյան, մասշտաբ՝ 1:4 000 000, «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, էջ 51: Տե՛ս նաև «Հայաստանը XVII դ. առաջին կեսին», հեղինակ՝ Գ. Բադալյան, մասշտաբ՝ 1:3 600 000, «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, էջ 50:

գյուղում 1610 թ. գրված հիշատակարանում գրիչ Դավիթ եպիսկոպոսը պատմում է Գողթան գավառի մոտ Երասխի գետանցի և ջրասույզ եղած բազում մարդկանց, Ջուղայի և Երևանի բնակչությանը Սպահանում բնակեցնելու մասին.

«...Յետ դառնալոյ չկայր հրաման:

Բոլոր երկիրս ամենայն,

Մինչ Կաղզըվան և Շիրակուան,

Ձորն Եղեքաց և Նաղէջվան.

Համենեսեան սուրկուն տարան»⁵⁴⁵:

Բռնագաղթին ժամանակակից Անանուն ժամանակագրության (17-րդ դար) հեղինակը մանրամասն նկարագրում է բռնագաղթը՝ երբեմն մեջքերելով ականատեսների վկայություններ և այնպիսի դրվագներ, որոնք բացակայում են ժամանակակից պատմիչների մոտ: Նա գրում է, որ իր ժամանակներում ապրում են «ի մէջ վեցեկի պատուհասի, որ է՝ սով, սուր, գերութիւն, տարածամ մահ, անօրինաց զրկանքն և սաստիկ հարկապահանջողութիւն»⁵⁴⁶: Նա նաև նկարագրում է բռնագաղթի ընթացքը, որը համապատասխանում է մեր կողմից վերը ներկայացված փուլաբաժանմանը: Ըստ նրա՝ 1604 թ. օսմանյան բանակը չկարողացավ կասեցնել Երևանի գրավումը, քանի որ «ընդ ամենայն տեղիս ելուզակ էին եղեալ իշխանքն և զաշխարհն աւերէին, սովն և նեղութիւն ի յիւրեանց երկիրն էին ձգեալ»⁵⁴⁷: Տեսնելով, որ Ջղաթօղի Սինան փաշայի արշավանքը հնարավոր չէ կասեցնել, Արարատյան գավառում «զվայրքն հրծիգ առնէր, զի մի օթևան լիցի զօրացն Տաճկաց կամ գրաստուց նոցա կերակուր և դարման», որից հետո հրամայեց զորքին «զազգն Հայոց» քշել Պարսկաստան, և պարսից բանակը հապճեպորեն Շիրակավանի ու Կար-

⁵⁴⁵ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 365-366:

⁵⁴⁶ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 181:

⁵⁴⁷ Նույն տեղում, էջ 181-182:

սի գավառներից մինչև Գողթան գավառ բռնագաղթեցրել է բնակչությանը⁵⁴⁸: Անանուն ժամանակագիրը մանրամասնորեն նկարագրում է պարսից բանակի կողմից գործադրվող բռնությունները (սպանություններ, կտտանքներ, թալան, գյուղերի հրդեհում)՝ սպառիչ կերպով ցույց տալով, որ բնակչության միգրացիան բռնի կերպով է կազմակերպվել: Նրանց հասցրել են Ջուղա, այնուհետև այստեղի բնակիչներին ևս տեղահանել են, քաղաքն այրել⁵⁴⁹: Բավական կսկծալի է Երասխի գետանցման դրվագը. շատերը զոհվում են, պատանիներ գերեվարվում⁵⁵⁰:

Ըստ դեպքերին ականատես պորտուգալացի Գուովեայի՝ բռնագաղթի հրամանը կատարելիս պարսկական 100 հոգանոց զորագնդերը մտնում էին հայկական գյուղերը և դաժանորեն դուրս մղում բնակիչներին իրենց տներից⁵⁵¹: Եվրոպացի հեղինակը նշում է նաև, որ բռնություններ են գործադրվել հայ աղջիկների և կանանց նկատմամբ, ընդ որում՝ նրանցից ավելի քան 100 հազար հոգի քշվել են ստրկավաճառական շուկաներ: Նա այս թիվը չափազանցված չի համարում, քանի որ պարսից զորագնդերը յուրաքանչյուր բնակավայրից, իր հավաստմամբ, առնվազն 10 հոգի կարող էին տանել⁵⁵²:

1606 թ. Խարբերդի Գահլու գյուղում գրված հիշատակարանում Հովհաննես երեցը հաղորդում է, որ Ջղալօղլիի

⁵⁴⁸ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 182:

⁵⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 182-183:

⁵⁵⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 183: Այստեղ ևս, ինչպես Առաքել Դավրիժեցու երկում, նկարագրվում է, որ ոմանք փախուստի են դիմել՝ չենթարկվելով գաղթի հրամանին, սակայն մահվան են դատապարտվել, ինչպես Հավուց թառի Մանուել եպիսկոպոսը, Գեղարդավանքի Աստվածատուրը և Երևանի տեր Եղիան: Նկարագրվում է Գառնիի և Գեղարդավանքի մի խումբ բնակիչների ապաստանելը և եղերական մահը քարանձավներում (տե՛ս նույն տեղում, էջ 184):

⁵⁵¹ Տե՛ս **Ջուլայան Մ.**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, էջ 148:

⁵⁵² Տե՛ս նույն տեղում:

գալստյան լուրն ստանալուն պես շահը «գերի և աար էառ գաշ-խարիս Հայոց՝ զԿարսայ յերկիրն գերեցուց և զցորեան և զկալն կրակով այրեաց, որդին կորչստեան: Որ ի յերկրորդում տարին հանց սով եղև Խարս (Կարս – Մ. Մ.) և Արզրում, որ շատ ոք սովամահ մեռան: Եւ [Շ]ահն այրեաց յԱնու (Անի – Մ. Մ.) քաղաքէն մինչև զՃուղայ և զՆախճըւան զամենայն գիւղ և զքաղաք, և զմարդն լալով և ողբով քշեաց ի յԱսպահան»⁵⁵³:

Քաշաթաղի մելիք Հայկազի կողմից ստացված Ավետարանի 1606 թ. հիշատակարանում, ի տարբերություն այլ աղբյուրների, բռնագաղթը ներկայացվում է Ջղալօղլիին հաղթելուց հետո, իսկ բռնագաղթի օջախ է նշվում Վանից, Մուշից, Արծկեից, Խլաթից, Ադիցևազից, Մոկսից, Լաթից մինչև Էրզրում. «Հանեալ տեղացն և Ղարս և անտի բերեալ Երևան, և անտից բերեալ Նախէջևան, և բերեալ անցոյց Երասխովն: Եւ բազում ժողովրդոց թափել Երասխին խեղտամահել. ոմն սովամահ եղեալ, ոմն գերայվարեալ, ոմն գշեալ տարան զՂազմին (Ղազվին – Մ. Մ.) և զՍպահան: [Ի] Ջղոյ մինչև Նախշվան (Նախիջևան – Մ. Մ.), մինչև Երևկան (Երևան – Մ. Մ.), մինչև Առզընկան (Երզնկա – Մ. Մ.), մինչև Վան ոչ մնաց շինութիւն: Վա՛յ և եղուկ Հայոց ազգին, որ բնաջինջ եղեն մնաց անմխիթար սուգ, բազումք մնացին քարածինք տեղիս...»⁵⁵⁴: Թեև աշխարհագրական ընդգրկման առումով հիշատակարանի տեղեկությունները համապատասխանում են մյուս աղբյուրների տվյալներին, սակայն բռնագաղթի կազմակերպումը Ջղալօղլիին հաղթելուց հետո չի հաստատվում այլ աղբյուրներով: Այստեղ, ըստ երևույթին, հեղինակին մոլորության մեջ է զգել այն հանգամանքը, որ պարսից շահը բռնագաղթի հիմնական ալիքից հետո մի քանի անգամ լրացուցիչ ուժեր է

⁵⁵³ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 196-197:

⁵⁵⁴ Նույն տեղում, էջ 206:

ուղարկել՝ տեղերում մնացած բնակիչներին ևս բռնագաղթեցնելու համար:

Առաքել Դավրիժեցու և Զաքարիա Քանաքեռցու տեղեկությունն այն մասին, որ բռնագաղթը և Երասխի գետանցը տեղի են ունեցել Ջղալօղլու ժամանումից հետո, հաստատվում է ժամանակակից ձեռագրերի հիշատակարանների տվյալներով: Մոկսի Ծպատ անապատում ընդօրինակված Ավետարանի մեկնության 1604 թ. հիշատակարանում գրիչ Բարսեղ վարդապետը հաղորդում է, որ Ջղալօղլու բանակի՝ Էրզրում հասնելուց հետո պարսից բանակը «սկսեալ ի տանէն Շիրակայ մինչև ի Ջուղայ և տունն Գողթնեաց զՀայք բնաջինջ արարեալ, տարեալ հանին ի խորին Պարսիկս՝ ի Շօշ և յԱպահան՝ կաթողիկոսով և եպիսկոպոսօք, քահանայիք և ժողովրդովք, արամբք և կանամբք, ընչիւք և գոյիւք: Եւ թողին զդաշտն Արարատեան և զՆախջաւան նահանգօքն և զփարթամն ճոխութեամբ զՋուղայ շրջակայիւքն ամայի և թափուր ի բնակչացն»⁵⁵⁵: Մոկսում 1605 թ. գրված մեկ այլ հիշատակարանում գրիչ Հովհաննես քահանան, հաստատելով Ջղալօղլի ժամանման լուրից հետո բռնագաղթի արագացման փաստը, գանգատվում է, որ շահը «գամենեսեան գերեցոյց՝ զարս և զկանայս, զծերս և զտղայս, և այնչափ քանդեաց և աւերեց, որ զշուն և զկատուն այլ սատակեաց, և զմարդն առաքեաց ի Խուժաստան (Խուզիստան – Մ. Մ.) աշխարհն իւրեանց, և եղեն այն ամենայն քրիստոնեայքն ցիր և ցան մինչ ի Քաշան և յԱպահան...»⁵⁵⁶: Խիզանում և Սպահանում 1607 թ. գրված Ավետարանի հիշատակարանում գրիչ Խաչատուր Խիզանցին նկարագրում է բռնագաղթը՝ հաստատելով, որ Ջղալօղլի գալուց հետո դեպի Թավրիզ նահանջելիս «զԷրևան՝ զՆախջաւան, զՋուղայ՝ զպար-

⁵⁵⁵ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 129-130:

⁵⁵⁶ Նույն տեղում, էջ 181:

ծանք Հայոց ազգիս, և զայլ ամենայն քրիստոնեայքն քանդեաց յիրեանց տանցն և ի հայրենեացն, և առաքեաց ի Խուժաստան աշխարհն իւր, ի մէջ չար բարբարոսացն և եղեն այն ամենայն քրիստոնեայքն ցիր և ցան մինչև ի Քաշան և ի Սպահան»⁵⁵⁷:

Այժմ մանրամասն անդրադառնանք Երասխի գետանցին:

Փաստորեն, երբ պարսկական բանակը Զուղայում էր, օսմանյան ուժերը հասան Նախիջևան, և շահ Սբասը հրամայեց շտապ անցնել Երասխը: Հրամանը փոխով կատարելու համար պարսից բանակը դիմում է դաժանությունների՝ անգամ չխորշելով հոգևորականների սպանություններից: Նավերը չէին բավականացնում, ուստի մեծ մասը ստիպված ոտքով է մտնում գետը: Ըստ Առաքել Դավրիժեցու և դեպքերին ականատես հայ կաթոլիկ հոգևորական Օգոստինոս Բաջեցու (Բաջենցի)՝ լողալու մեջ ոչ հմուտ ծերերը, աղջիկներն ու մանուկները խեղդվում են, շատ աղջիկների փախցնում են զինվորները, մայրերից շատերն ստիպված թողնում են երեխաներին, տկարները լքվում են, իսկ մնացյալ գաղթականության զանգվածից զոհվում են հազարավոր մարդիկ⁵⁵⁸: 1606 թ. Գահլու գյուղում գրված հիշատակարանում Հովհաննես երեցը նկարագրում է ընտանիքի անդամների՝ միմյանցից բաժանման սոսկալի դրվագները և հավելում. «ոմանք ի յԱրասխն ջրայխեղդ առ Աստուած փոխեցան. այլ ոք Մարանդայ սարին անհաղորդ ու անթաղ մնացին»⁵⁵⁹: Նոր Զուղայում 1618 թ. հիշատակարանում Սիմեոն երեցը գրում է, որ 1604 թ. բռնագաղթի ժամանակ ավերվել են բազմաթիվ քաղաքներ, գյուղեր, եկեղեցիներ, «և շատ գերի վարեաց զազգս Հայոց, և ջրայխեղդ եղեալ բազում հոգիք...»⁵⁶⁰: Գ. Բադալյանի հաշ-

⁵⁵⁷ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 259:

⁵⁵⁸ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 80-81; **Օգոստինոս Բաջեցի**, էջ 6:

⁵⁵⁹ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 196:

⁵⁶⁰ Նույն տեղում, էջ 658:

վարկներով՝ բռնի տեղահանվածներից միայն 150-200 հազարն է ողջ մնացել բռնագաղթի երկարատև ու դաժան ճանապարհն անցնելուց հետո, ընդ որում՝ Երասխ գետն անցնելիս մահացել կամ խոշտանգումներով ոչնչացվել են շուրջ 100 հազար հայեր⁵⁶¹: Հ. Առաքելյանը ևս կարծում է, որ Երևանի և Նախիջևանի հայերի մեծ բազմություն հիվանդություններից ոչնչացավ⁵⁶²:

Մայրաքաղաք Սպահանը միջազգային առևտրի մեջ ակտիվորեն ընդգրկված տարրով բնակեցնելու համար⁵⁶³ եռօրյա ժամկետում կազմակերպվեց Ջուղա գյուղաքաղաքի հայ բնակչության բռնագաղթը: Շրջակա գյուղերի սակավաթիվ մահմեդականները պարսկական բանակի հետ գալիս էին, 10-30 հոգանոց խմբերով ներխուժում հայերի տներ ու թալան անում, ընդ որում՝ հայերը հեռանում էին Ջուղայից «ակամայ կամօք»⁵⁶⁴: Ջուղայե-

⁵⁶¹ Տե՛ս **Բադայան Գ.**, Հայերի բռնագաղթը Շահ-Աբաս 1-ինի կողմից:

⁵⁶² Տե՛ս **Առաքելյան Հ.**, նշվ. աշխ., էջ 79:

⁵⁶³ Տե՛ս **Herzig E.**, The rise of the Julfa merchants in the late sixteenth century, “Safavid Persia”, edited by C. Melville, London: I. B. Tauris, 1996, էջ 305-322; **Լեո**, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934, էջ 64:

⁵⁶⁴ **Առաքել Դավրիժեցի**, էջ 90: Ջուղայի գերեզմանատանը զգալի թիվ են կազմել հատկապես 16-րդ դարի և 17-րդ դարի սկզբի գերեզմանները, ինչը վկայում է բնակավայրի՝ այդ ժամանակահատվածում մեծ բնակչություն ունենալու մասին (տե՛ս **Այվազյան Ա.**, Ջուղա, Երևան, 1984): 1581 թ. Ջուղա այցելած անգլիացի վաճառական Նյուբերին նշում է 3 հազար տուն՝ 15-20 հազար բնակչով ու 7 եկեղեցիներով, իսկ 1590 թ. անգլիացի ճանապարհորդ Քարթրայթը՝ 2 հազար տուն՝ 10 հազար բնակչով (տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 413): 1673 թ. այդտեղ այցելած Շարդենը գրում է, որ հայերն ասում են՝ Ջուղան 4 հազար տուն բնակչություն է ունեցել, սակայն ավերակներից կարելի էր ենթադրել 2 հազար, իսկ իր ժամանակ միայն 30 ընտանիք կար, բոլորն էլ հայ: Շոպենը նշում է, որ Ջուղան և Ագուլիսն ունեին համապատասխանաբար 8 և 10 հազարական տուն բնակչություն, և ոչ բերրի հողերի պատճառով զբաղվում էին վաճառականությամբ (տե՛ս **Առաքելյան Հ.**, նշվ. աշխ., էջ 30-31, 81): Նոր Ջուղայի հիմնադրման ժամանակ բնակություն է հաստատել շուրջ 30 հազար մարդ (տե՛ս «Ուղեգրություններ», հ. 2, էջ 80), ընդ որում՝ Ջուղայից վերաբնակվեց 3 հազար հայ ընտանիք (տե՛ս “The Cambridge History of Iran”, Vol. 6, էջ 271):

ցիների համակրանքը ձեռք բերելու համար շահը հրամայում է նրանց երիվարներով և ուղտերով անցկացնել գետը, սակայն ջուլայեցիների պարագայում ևս գերեվարում են երիտասարդ աղջիկներ և տղաներ, շատերը խեղդվում են, «յերկու կողմէ յեզերս գետոյն ցրուեալք էին գէշք և դիք մարդկան խեղդելոց ի ջրոյն»⁵⁶⁵: Շահ Աբասը հրամայեց Թահմազկուլի (Թահմասսակուլի) բեկին վերադառնալ Ջուղա և ոչնչացնել բոլոր շինությունները՝ «ո՛չ բնաւ թողին յարկ ծածկեալ կամ շէն, այլ յաւեր և յապականութիւն դարձուցին»⁵⁶⁶: Երասխն անցնելուց հետո Ջուղայի գաղթականությանը հանգստի ժամանակ չտրվեց, և եղանակային դժվարին պայմաններում նրանք արագ հասան Թավրիզ, որտեղ Թահմազկուլին տեղեկացավ, որ Ջուղայի բնակիչների մի մասը տեղափոխվել է լեռներ, մի մասն էլ՝ առողջական կամ ֆիզիկական տարբեր պատճառաբանություններով մնացել է Ջուղայում, ուստի հանձնարարեց Համդամ աղային Ջուղայից բերել մնացած մարդկանց: Համդամ աղան հաջորդ գարնանը եկավ Ջուղա և կոտորածի սպառնալիքով հրամայեց բոլորին կատարել շահի հրամանը: Լեռներում ու ձորերում ապաստանածներին ևս բերեցին և տարան Թավրիզ, ապա՝ Ղազվին, որի գյուղերում էլ ձմեռեցին և գարնանը գնացին Սպահան⁵⁶⁷: Առաքել Դավրիժե-

⁵⁶⁵ Առաքել Դավրիժեցի, էջ 91-92:

⁵⁶⁶ Նույն տեղում, էջ 92: Հմմտ. նույն տեղում, էջ 88:

⁵⁶⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 92-93: Բռնագաղթի հետագա ուղղությունների, Պարսկաստանում վերաբնակեցման շրջանների, համայնքային կյանքի կազմակերպման, ինչպես նաև բռնի մահմեդականացման փորձերի մասին տե՛ս նույն տեղում, էջ 82, 93-97, 147-191, 346-372; **Հաքարիա Քանաքեռցի**, հ. II, էջ 49; «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 745; հ. Բ, էջ 318-319; **Մարտիրոսյան Հ.**, Հայերի տեղաբաշխումն Իրանում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 4, Երևան, 1969, էջ 150-171; **Առաքելեան Հ.**, նշվ. աշխ., էջ 86-88; **Բայբուրդյան Վ.**, Իրանի հայ համայնքը, էջ 34-35; **Մինասյան Լ.**, Պատմություն Փերիայի հայերի (1606-1956), Անթիլիաս, 1971; **Բայբուրդյան Վ.**, Նոր Ջուղա, Երևան, 2007:

ցին վստահեցնում է, որ բազմաթիվ ականատեսներից և հիշատակարաններից տեղեկացել է, թե բռնագաղթի հիմնական ալիքից հետո շահը փոքր խմբերով 7-8 անգամ Ատրպատականից տեղահանել է հայերին⁵⁶⁸:

1611 թ. Ջաքարիա Վանեցին նշում է, որ բռնագաղթյալներին Թավրիզ հասցնելիս շահը նախ հրամայում է նրանց բնակվել տեղում կամ գնալ յուրաքանչյուրն իրենց տեղը, սակայն ճանապարհվելիս առաջին 2 օրերի ընթացքում հարձակումների են ենթարկվել քրդական ցեղախմբերի կողմից, շատերը զոհվել կամ գերի են տարվել: Շահը հրամայել է մինչև մարտ մնալ այդտեղ, իսկ հետո տարել է Սպահան⁵⁶⁹: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ Նախիջևան քաղաքի ամբողջ բնակչությունը, ի տարբերություն Գողթնի, բռնագաղթի է ենթարկվել առաջին ալիքից հետո՝ բանսարկության արդյունքում, և շահի հրամանով բնակչությունը տարվել է Ֆահրապատ, այգեստաններն ու տները քանդվել են, և բնակիչների միայն մի փոքր մասն է կարողացել պատսպարվել շրջակա գյուղերում, օրինակ՝ Ագուլիսում՝ փրկվելով տեղահանությունից⁵⁷⁰: 17-րդ դարի սկզբին միատարր հայ բնակչություն ունեցող Նախիջևանն ընդգրկում էր Վասպուրականի Նախճավան և Գողթն, Սյունիքի Վայոց ձոր, Ճահուկ, Երնջակ և Ծղուկ գավառները, և բաժանված էր Զուղայի (Ազատ-Ջիրանի և Դարաշամբի մահալներ) ու Շահապունիքի (Դարալազյազի մահալ և Սիսականի օլթա) շրջանների⁵⁷¹: Հ. Փանոսյանը, վկայակոչելով Մատենադարանի № 1294 ձեռագիրը, հաշվարկել է, որ շահ Աբասի կողմից Նախիջևանի երկրամասից բռնագաղթի է

⁵⁶⁸ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 147:

⁵⁶⁹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 411:

⁵⁷⁰ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 286:

⁵⁷¹ Տե՛ս «Մատենադարանի պարսկերեն հրովարտականքը», պր. III, կազմեց՝ Բ. Կոստիկյան, Երևան, 2005, էջ 77:

ենթարկվել ավելի քան 160 հազար հայ⁵⁷²: Հղելով № 4521 ձեռագիրը՝ նա նշում է, որ Ազատ-Ջիրանի և Դարաշամբի մահալներից բռնագաղթվել է մոտ 21 հազար տուն հայ՝ Նախիջևանի բնակչության կեսից ավելին, իսկ Դարալագյազի մահալի և Սիսական օլթայի լեռնային հատվածները զերծ են մնացել բռնագաղթից՝ հեռու գտնվելով շահի արշավանքի ճանապարհից⁵⁷³: Հիմք ընդունելով Մատենադարանի № 2494, 3138, 4120 և 6496 ձեռագրերը՝ Հ. Փանոսյանը նշում է, որ Ազատ-Ջիրանի մահալի Ագուլիս քաղաքից տեղահանվել է 2,5 հազար ընտանիք (մոտ 15 հազար մարդ), Օրդուբադից՝ 1,2 հազար ընտանիք (8 հազար մարդ), Ջուղայից՝ 2 հազար ընտանիք (մոտ 12 հազար մարդ), Դարալագյազի մահալի կենտրոն Նախիջևանից՝ 5,3 հազար ընտանիք (31,8 հազար մարդ): Նա Մատենադարանի ձեռագրերից դուրս է բերել բռնագաղթի տվյալները գյուղացանկերով՝ 34 գյուղ Ազատ-Ջիրանի մահալից (5505 ընտանիք՝ 44711 անդամներով), 25 գյուղ Դարաշամբի մահալից (4000 ընտանիք՝ 33786 անդամներով)⁵⁷⁴: Փաստորեն, այս հաշվարկները ցույց են տալիս, որ ուսումնասիրողը ծխի և ընտանիքի միջին մեծությունը տարբեր գործակիցներով է հաշվարկել, ուստիև եթե իր իսկ ներկայացրած մոտ 21 հազար տուն հայ բռնագաղթվածներին հաշվարկում ենք մեզ համար ընդունելի 10 գործակցով, ստանում ենք մոտ 210 հազար թիվը, ինչը կարող է չափազանցություն թվալ անգամ ամբողջ բնակչության թվաքանակի համար, բայց համապատասխանում է երկրամասի բնական պայմանների ընդհանուր հնարավորություններին: Այդուհանդերձ, իր իսկ տեղային

⁵⁷² Տե՛ս **Փանոսյան Հ.**, Ժողովրդագրական տեղաշարժերը Թուման-ե Նախիջևանի Ազատ-Ջիրանի ու Դարաշամբի մահալներում (XVII դ. առաջին կես), «Գիտական աշխատություններ», թ. XV, Երևան, 2013, էջ 48:

⁵⁷³ Տե՛ս նույն տեղում, էջ 50:

⁵⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 50-52:

հաշվարկների հանրագումարում ստանում ենք շուրջ 145 հազար թիվը, որն ավելի իրատեսական է:

Ըստ դեպքերի ժամանակակից Իսքանդար Մունշիի՝ 1604-1605 թթ. ձմռանը թուրքերի կողմն անցած Մուհամմադ Թաքալուն Նախիջևանին տիրելու համար պայքար է ծավալում պարսիկներին հավատարիմ Մակսուդ-սուլթան Քանգարլուի դեմ՝ զգալի թվով կռիվողներ հավաքագրելով Արարատյան կուսակալության տարբեր մահալներից: Սա նշանակում է, որ բռնագաղթից անմիջապես հետո կուսակալությունում պետք է բնակչություն լիներ, որ նրանից էլ հավաքագրում կատարվեր⁵⁷⁵: Այս տեսանկյունից հետաքրքրական է, որ Օգոստինոս Բաջեցին հաղորդում է, թե Նախիջևանի և Երնջակի հայ կաթոլիկների մի մասը կարողացել է պապական դեսպանի միջնորդությամբ վերադառնալ Նախիջևան⁵⁷⁶: Հ. Փանոսյանը Մատենադարանի № 3478 ձեռագրից դուրս է բերել, որ բռնագաղթից հետո մի քանի տասնամյակների ընթացքում 5 հազար հայ ընտանիքներ տարբեր ճանապարհներով ետ են եկել Նախիջևանի Ազատ-Ջիրանի և Դարաշամբի մահալների հայրենի գյուղեր⁵⁷⁷:

Նոր Զուղայում 1609 թ. գրված Ավետարանի հիշատակարանում ստացող խոջա Տերիջանը թվարկում է ծնողներին, կնոջը, 5 որդիներին (2-ը՝ հանգուցյալ), եղբորը, 2 քույրերին (1-ը՝ հանգուցյալ), քրոջ 3 որդիներին (2-ը՝ հանգուցյալ) և 2 դուստրերին: Ակնհայտ է, որ 7-ական անդամ ունեցող այս ընտանիքներում հանգուցյալների մեծ թիվը պետք է պայմանավորված լիներ բռնագաղթի դժվարին ճանապարհով, ընդ որում՝ գրիչ Ստեփանոս քահանան գանգատվում է 1604 թ. բռնագաղթից, երբ շահը

⁵⁷⁵ Տե՛ս **Փափագյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 31:

⁵⁷⁶ Տե՛ս **Օգոստինոս Բաջեցի**, էջ 7-8:

⁵⁷⁷ Տե՛ս **Փանոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 52, 55:

«սուք հասոյց ի վերայ Հայաստանաց, զոր քակեաց և աւիրեաց զամենայն տունս և բնակութիւնս, զոր փախեալ և թաքեալ ի յամրոցն և ի ծերպս վիմաց, զոմանս գտեալ կոտորեալ, զոմանս գերի վարեալ և առաքեալ ի Շաւշ քաղաքն Ասպահան...»⁵⁷⁸: Սպահանում բնակվող ոմն Մկրտիչ քահանա 1606 թ. նորոգված «Յայսմաուրք»-ի հիշատակարանում նշում է, որ Գողթն գավառի Դաշտ գյուղից է և 40 տներով հաստատվել են Սպահանում: Նա նաև թվարկում է ծնողներին, կնոջը, 3 որդիներին (1-ը՝ հանգուցյալ), դստերը, 2 եղբայրներին (1-ը՝ հանգուցյալ), 6 քույրերին (5-ը՝ հանգուցյալ)⁵⁷⁹: Այս տան ընտանիքների օրինակով ևս տեսնում ենք մահացածների անսովոր մեծ թիվը, ինչպես նաև նկատում ենք երկու սերունդներում ընտանիքի անդամների համապատասխանաբար 11 և 6 թվերը: Ստացվում է, որ մեր տրամադրության տակ եղած բռնագաղթյալ 4 ընտանիքների անդամների միջին թիվը 7.75 է: Միաժամանակ վերը նշված ընտանիքների պատմության դիտարկմամբ հաստատվում է Գ. Բադալյանի այն կարծիքը, որ բռնագաղթի ենթարկվածների շուրջ մեկ երրորդը ոչնչացել է ճանապարհին:

Սինան փաշայի զորքը Վանի նահանգում բանակելիս սպառեց հայ բնակչության կուտակած պարենամթերքը և թշվառության հասցրեց նրան: Շուտով պարսիկները Վանի մոտ պարտության մատնեցին Սինան փաշային, և պատերազմական գործողությունների պատճառով Վանի նահանգի բնակիչներից շատերը զոհվեցին, գերեվարվելով Թավրիզ տարվեցին մեծ թվով մարդիկ ու անասուններ՝ «ի լիութին ազգին Պարսից»⁵⁸⁰:

Կարևոր նշանակություն ունի շահ Աբասի կողմից բռնագաղթի ենթարկվածների մոտավոր թվաքանակի դուրսբերումը:

⁵⁷⁸ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 337-339:

⁵⁷⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 222-223:

⁵⁸⁰ Առաքել Դավրիժեցի, էջ 99:

Ինչպես արդեն նշել ենք բռնագաղթի տարածքային ընդգրկման հիմնախնդրի առնչությամբ, Աստվածատուր քահանայի 1605 թ. հիշատակարանում⁵⁸¹ բռնագաղթը երկու փուլով է ներկայացվում, մեկը՝ հայ և մահմեդական բնակչությանը Երևանից, Նախիջևանից և Սալմաստից դեպի Թավրիզ՝ այնտեղից հաջորդ տարի միայն հայերին՝ Սպահան, իսկ մյուսը՝ Կարսից, Շիրակից, Արծկեից, Արճեշից, Բերկրիից, Խնուսից՝ 300 հազար հայերի⁵⁸²։ Ընդ որում՝ գրիչը պնդում է, որ բռնագաղթյալների առաջին ալիքը ճանապարհին հարձակման է ենթարկվել քուրդ ցեղապետների կողմից, իսկ երկրորդ ալիքից շատերը զոհ են գնացել պարսից բանակի բռնություններին⁵⁸³։ Հայագիտության մեջ շրջանառվող 300 հազար թիվը⁵⁸⁴ գործածության մեջ է մտել հենց այս հիշատակարանի հիման վրա։ Ի դեպ, մոտ թիվ է ներկայացնում նաև գերմանացի Կ. Ռիտտերը (24 հազար բռնագաղթված հայ ընտանիք) Գիլան և Սպահան տեղափոխվածների կտրվածքով։ Հ. Առաքելյանն այս թիվը ճիշտ համարելու դեպքում, ընտանիքի միջին մեծության 10 գործակցով հաշվելով, մարդկանց թիվը 240-250 հազար է ստանում⁵⁸⁵։

1665 թ. Ստեփանոս քահանայի պատմագրական երկում Սպահանի նահանգում հաշվվում է 12 հազար տուն կամ մոտ 150 հազար մարդ հայ, իսկ Նոր Զուղայի Ս. Մինաս եկեղեցում պահվող ժամանակակից մի ձեռագրի հիշատակարանում նշվում է,

⁵⁸¹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 181-183։ Հմմտ. «Մի ձեռագիր Աւետարան Զարմահայի Լիվասեան գիւղում», սյ. 293-299; «Յուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի», էջ 81-88; «Յուցակ Թեհրանի հայերեն ձեռագիրներու», սյ. 95-110; «ԺԷ դարի մի ձեռագիր Աւետարան», էջ 328-330։

⁵⁸² Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 182։

⁵⁸³ Տե՛ս նույն տեղում, էջ 182-183։

⁵⁸⁴ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 98։

⁵⁸⁵ Տե՛ս **Առաքելյան Հ.**, նշվ. աշխ., էջ 94։

որ բռնագաղթի ճանապարհին բազմության շուրջ կեսը մահացել է: Նման պարագայում Հ. Առաքելյանը մահացածների թիվը 200 հազար է հաշվում, իսկ հայ գաղթականների ընդհանուր թիվը Հայաստանից՝ 400-500 հազար⁵⁸⁶: Ըստ Մ. Կարապետյանի՝ միայն 250 հազարն է հասել Պարսկաստան⁵⁸⁷:

Շրջանառության մեջ է նաև վրացական մի աղբյուրում նշված տարագրյալ ընտանիքների 80 հազար թիվը⁵⁸⁸: Այս տվյալն իրենց աշխատություններում օգտագործել են Հ. Նաջարյանը, Լ. Դանեղյանը, Մ. Կարապետյանը, Ա. Մելքոնյանը և ուրիշներ: Լ. Դանեղյանը և Մ. Կարապետյանը սրա հիման վրա բռնագաղթյալների թիվը 400-600 հազար են համարել⁵⁸⁹: Ուշադիր ուսումնասիրելով վրացական աղբյուրը՝ կարծում ենք, որ նշված թիվը միայն մասամբ է առնչվում հայոց բռնագաղթին: Նախ հեղինակը ներկայացնում է թիվը շահ Աբասի կողմից Արցախի գրավումից հետո, այնուհետև գրում. «Ութսուն հազար ծուփս վրացիներից, հայերից և հրեաներից, նաև իշխաններին և ազնվականներին տեղահան արին և Մազանդարանում տեղավորեցին և ոմանց այլ երկրները ցրեցին»⁵⁹⁰: Փաստորեն, այս թվի մեջ ներկայացված են նաև վրացիները և հրեաները, քանի որ հետո բռնագաղթի են ենթարկվել նաև նրանք⁵⁹¹: Կախեթի և

⁵⁸⁶ Տե՛ս **Առաքելյան Հ.**, նշվ. աշխ., էջ 95-97:

⁵⁸⁷ Տե՛ս **Կարապետյան Մ.**, Երևանի բնակչության..., էջ 98:

⁵⁸⁸ Տե՛ս «Վրաց աղբյուրներ», հ. Բ, էջ 112:

⁵⁸⁹ Տե՛ս **Դանեղյան Լ.**, Հայերի բռնագաղթն Իրան 17-րդ դարում, էջ 72:

⁵⁹⁰ «Վրաց աղբյուրներ», հ. Բ, էջ 112:

⁵⁹¹ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 137-139: Սպասանում մոտ 300 տուն հրեա էր ապրում (տե՛ս նույն տեղում, էջ 363), իսկ Քարթլիից տարված վրացիները 20 հազար էին (տե՛ս «The Cambridge History of Iran», հ. 6, էջ 272): Շարդենը խոսում է շերամապահության զարգացման համար Հայաստանից և Վրաստանից Մազանդարանում և Գիլանում տեղավորված 30 հազար քրիստոնյա ընտանիքների մասին: Ըստ նրա՝ միայն Կախեթից Պարսկաստան է տարվել 80 հազար ընտանիք: Մազանդարանում լինելով 1632/1633 թ.՝ նա հանդիպել է Ֆարիաբադի հայ

Գրիմայի բնակչության բռնագաղթի մասին Առաքել Դավրիժեցին երկիցս նշում է, որ կազմվել են ցուցակներ, որտեղ գրառվել են ընտանիքի անդամները և տեղափոխվող ունեցվածքը⁵⁹²: Ակնհայտ է, որ նախապես սահմանված թիվ է եղել, քանի որ պատմիչը նշում է, որ ցուցակներն ընդգրկող մատյանով տեղափոխման գործին անցան այն ժամանակ, երբ բռնագաղթյալների թիվն «եղև զբաւ հանելոյն»: Պետք է ենթադրել, որ այս մատյանները հաշվառված են եղել պարսից արքունի դիվանում: Ցավալի է, որ հայոց բռնագաղթը նկարագրելիս Առաքել Դավրիժեցին չի խոսում նույնատիպ ցուցակների մասին, ինչը հավանաբար բռնագաղթի հապճեպությամբ է պայմանավորված:

Մ. Զուլպյանը գիտական շրջանառության մեջ է դրել դեպքերին ժամանակակից հիշատակարաններից մեկի տվյալը, որի համաձայն՝ Արևմտյան Հայաստանից Արարատյան դաշտ տարված բնակչության թիվը, առանց սպանվածների ու մահացածների, կազմել է 60 հազար մարդ⁵⁹³: Իրականում հիշատակարա-

եպիսկոպոսին և տեղեկացել, որ 400 քրիստոնյա ընտանիքներ էին մնացել վնասակար օդի պատճառով: Հ. Առաքելյանն իրավացիորեն նկատում է, որ 30 հազար հայ և վրացի ընտանիքներ (իր հաշվարկով՝ մոտ 200 հազար մարդ) չէին կարող պարզապես բնաջնջվել, նրանցից շատերը պետք է վերադարձած լինեին իրենց բնակավայրերը կամ էլ հեռանային այլ տեղեր՝ վկայակոչելով 1636 թ. Շամախի այցելած Ադամ Օլեարիուսի վկայությունը քաղաքում բազմաթիվ հայերի ու հայ եպիսկոպոսի կողմից անցկացվող ջորհինքի արարողության մասին, ինչպես նաև Շարդենի տեղեկությունները Թիֆլիսից մինչև բուն Պարսկաստան հայերի մեծ թվի մասին տեղեկությունները (տե՛ս **Առաքելեան Հ.**, նշվ. աշխ., էջ 89-90, 95, 97):

⁵⁹² 1615-1617 թթ. վրաց բռնագաղթի մասին տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 564, 569-570, 622; «Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրությունը», հրատ.՝ Ա. Աբրահամյան, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», թ. 1, Երևան, 1941, էջ 96:

⁵⁹³ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 5315, էջ 208 ա-բ (հղումը տե՛ս **Զուլպյան Մ.**, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանում և նրանց հետևանքները (1590-1639 թթ.), «ԼՀԳ», 1966, թ. 2, էջ 85): Մեր կարծիքով՝ հղված ձեռագիրը պետք է

նում 1611 թ. Զաքարիա Վանեցին հաղորդում է, որ Թավրիզից մինչև Էրզրում անմարդաբնակ դարձավ, իսկ միայն Երևանից մինչև Թավրիզ 60 հազար գերի տարան՝ չհաշված սպանվածներին, սովից մահացածներին, ջրախեղդ եղածներին և ցրտից մահացածներին⁵⁹⁴։ Փաստորեն, բռնագաղթյալների թիվը վերաբերում է ոչ թե Արևմտյան Հայաստանին, այլ Երևանից մինչև Թավրիզ բռնագաղթվածներից ողջ մնացածներին։

Իրադարձություններին ականատես պորտուգալացի միսիոներ Գոուվեայի հաղորդմամբ՝ բռնագաղթեցվել է ավելի քան 60 հազար ընտանիք⁵⁹⁵։ Ա. Մելքոնյանը, հիմք ընդունելով ընտանիքի անդամների 7-8 թիվը⁵⁹⁶, ինչպես նաև 60 հազար ընտանիքների մասին հիշատակումն ու Աստվածատուր քահանայի կողմից հիշատակված 300 հազար բռնագաղթյալների թիվը, որի մեջ չէին մտնում Երևանից, Նախիջևանից և Սալմաստից տարագրվածները, բռնագաղթի ենթարկված հայերի թիվը 420-480 հազար է համարում⁵⁹⁷։ Բռնագաղթի առնչությամբ Ա. Մելքոնյանը գրում է. «Հայոց պատմության մեջ իր նախադեպը չունեցող այս բռնագաղթն անդառնալի հարված հասցրեց ամբողջ Հայաստանին՝ լրջորեն փոխելով երկրի ժողովրդագրական պատկերը։ Հայկական բազմաթիվ գավառներ միայն տասնամյակներ

լինի № 5345, ինչպես հրատարակվել է Վ. Հակոբյանի և Ա. Հովհաննիսյանի կողմից։

⁵⁹⁴ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 412։

⁵⁹⁵ Տե՛ս **ЭЗОВЪ Г.**, նշվ. աշխ., էջ 468; **Զուլայան Մ.**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, էջ 149; **Baghdiantz McCabe I.**, նշվ. աշխ., էջ 54։

⁵⁹⁶ Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994, էջ 112։ Խ. Թոլոյանը բռնագաղթի ենթարկված ընտանիքների անդամների թիվը 6-10 է դիտարկում (տե՛ս **Tololyan Kh.**, նշվ. աշխ., էջ 39), ուստի այս պարագայում ևս միջինը 8 կարելի է դիտարկել։

⁵⁹⁷ Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, գ. II, էջ 629։

անց կարողացան մասնակիորեն վերականգնել իրենց նախկին ժողովրդագրական վիճակը: Եղան նաև գավառներ, որոնք ընդհուպ մինչև XIX դարը մնացին ամայի: Հենց այդ ժամանակաշրջանում էլ լայն թափ ստացավ Հայկական լեռնաշխարհի տեղանունների օտարացման գործընթացը: Հայկական տեղանունները կա՛մ ուղղակի թարգմանվեցին թուրքերեն, կա՛մ նրանց տրվեցին օտար անվանումներ»⁵⁹⁸:

Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի և զուգահեռ գործընթացների առնչությամբ հետաքրքիր տեղեկություններ ենք գտնում մի Ավետարանի 1604 թ. հիշատակարանում: Գրիչ Հակոբ երեցը հաղորդում է, որ շահ Աբասն ավերեց «զՀայոց աշխարհս՝ Առգրումայ մինչև ի Շրվան (Շիրվան – Մ. Մ.)», այնուհետև շարունակում է. «Յուսմանլուն, Գանճայու ղուլն Բ [2] անգամ գնաց ի երկիրն Գեղամայ, բազում գերիս գեր[ե]աց՝ ի քահանայի[ց] և սարկաւաքաց, Աւեդարանաց և ի գրոց: Տարան ի քաղաքն Գանճակոյ վաճառեցին որդիքն ի վեր[այ] հարցն, կինն ի վերայ յայրոն, որն Ճ (100) մարչիլ, որն Ծ (50), այլ աւել և պալաս: ...եղև սով հացի և աղի. ելաւ որ մէկ հոխկայ աղն Ա (1) շահի, չէր անգանիլ ի մարդի յափ: ...Հայոց ազգին խաւար եղև»⁵⁹⁹: Գեղամա «պարոնաց պարոն» Մելիք Շահնազարի պատվերով նորոգված Ավետարանի 1606 թ. հիշատակարանում նորոգող Դավիթ եպիսկոպոսի կողմից նկարագրվում են շահ Աբասի գործողությունները՝ նշելով, որ Երևանի գրավումից հետո շահը գնաց «մինչև ի սահմանս Կարսայ բերդին, ելին զաւրքն Պարսից, աւերեցին բազում երկիրս, և գերեցին բազում քրիստոնեայս **յաւելի քան զերկու բիւրս** (ընդգծումը մերն է – Մ.Մ.)»⁶⁰⁰:

⁵⁹⁸ «Հայոց պատմություն», հ. II, գ. II, էջ 629-630:

⁵⁹⁹ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 134:

⁶⁰⁰ Նույն տեղում, էջ 217-218: Հիշատակարանում ասվում է, որ երբ Զդալօղլին ժամանեց, շահը հրամայեց Ամիրգունա խանին հանել «զամենեսեան ի տանէ և

Շատ հետաքրքիր տեղեկություններ են ներկայացվում Գեղարքունիքի՝ բռնագաղթի մեծ ալիքից զերծ մնալու վերաբերյալ: Այսպես, երբ շահը հեռանում է «երկրէս Հայոց», օսմանյան բանակը շարժվում է «ի վերայ մնացելոցն՝ երկրին Գեղամայ, որ ոչ կարացին տանել ազգն Պարսից»⁶⁰¹: Հետագայում ձմեռային հարկերը գանձելու համար Երնջակից Ամիրգունա խանն ուղարկել է Դատաբեկ զորավարին, որը կոտորել է Կոթ գյուղի բնակիչներին: Գարնանը Մելիք Շահնագարը կոչ է արել հարևան տարածքների բնակչությանն ապաստանել իր մոտ և ինքն ամրացել է Ծարում ու Տպելում, և նրա հետ գնացածները «զերծան ի սրոյ և ի գրութենէ այլազգեաց»⁶⁰²: Թեև Բ. Ուլուքաբյանը կարծում է, որ բռնագաղթին ենթարկվել են նաև Գեղամա ու Ծարի գավառների բնակիչները⁶⁰³, սակայն Պ. Չոբանյանը, հենվելով վերոնշյալ սկզբնաղբյուրի վրա, իրավամբ կարծում է, որ Ծարի իշխանությունը թուրք-պարսկական պատերազմներում սովորաբար զերծ է մնացել ռազմական գործողություններից, գերեվարությունից և սովից, նույնիսկ Գեղարքունիքի մնացած հատվածներից հաճախ այստեղ են ապաստանել, ընդ որում՝ այն, որ Ծարը, մասնավորապես՝ Հաթերքը, զերծ է մնացել օսմանյան ներխուժումից, հաստատվում է նաև 1620 թ. հիշատակարանով⁶⁰⁴:

ի հայրենաց իւրեանց՝ Հայք և Տաճիկք, Շիրակվանայ մինչև գաւառս Գողթան»՝ հապճեպության պայմաններում երբեմն նույնիսկ չթողնելով ծերերին և մանուկներին վերցնել: Խոսվում է Երասխի գետանցից չտուժելու մասին, սակայն դա միայն Զուղային էր վերաբերում:

⁶⁰¹ Նույն տեղում, էջ 218:

⁶⁰² Այդուհանդերձ, մի քանի օր անց Գանձակից և Լոռիից օսմանյան բանակը հարձակվել է Գեղարքունիքի ուղղությամբ, ոմանց կոտորել են, ոմանց գերեվարել (3 անգամ): Առաքել Դավրիժեցու հաղորդումը Մագրայում շահի և մելիքի հանդիպման մասին այս հիշատակարանով հաստատվում է (տե՛ս նույն տեղում, էջ 218-219):

⁶⁰³ Տե՛ս **Ուլուքաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 370:

⁶⁰⁴ Տե՛ս **Չոբանյան Պ.**, Քարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ, էջ 214-216:

Արևելյան Հայաստանում հայ բնակչությունը տուժել է ոչ միայն բռնագաղթից, այլև շահի ռազմերթերից: Զականի Ղարամուրատ գյուղում 1610 թ. գրված հիշատակարանում գրիչ Դավիթ եպիսկոպոսը շարունակում է ներկայացնել շահի՝ Գանձակի և Վրաստանի ուղղությամբ արշավանքը՝ նշելով, որ երբ օսմանյան բանակը հասավ Գանձակի մոտերքը, Աղաբաբ և Չաթախ գյուղի բնակիչները հեռացան Ղարամուրատ գյուղ, և նախորդ գյուղը դատարկվել է⁶⁰⁵: Շարունակվել է Արևմտյան Հայաստանից գերեվարումների միտումը: Ամիդում նորոգված ձեռագրի հիշատակարանում նկարագրվում է 1609 թ. Տարոնից պարսկական զորքերի կազմակերպած գերեվարություն, օրինակ՝ ծեր կրոնավոր գերեվարվեց և զոհվեց⁶⁰⁶:

Վրաց բռնագաղթից հետո՝ 1618 թ., ըստ Առաքել Դավրիժեցու, շահ Աբասը ևս մեկ անգամ «վարեաց զազգս Հայոց յԱտրպատական աշխարհէ՝ ի Պարսկաստան... յոլով անգամ...», այնուհետև «զնացին նորին իշխանքն բազում զօրօք ի քաղաքն Երևան և ի գաւառս նորա, ի Գանջայ և ի գաւառս նորա, ի Թարվէզ և ի գաւառս նորա, յԱրտաիլ և ի գաւառս նորա, և սկսան քննութիւն և որոնումն առնել ի մէջ ազգին Հայոց, թէ որ ոք իցէ բնիկ բնական ի հարց և ի հաւուց տեղական, և որ ոք ոչ է, այլ յայլմէ աշխարհէ եկամուտ և ժողովածու. զբնիկսն թողին, և զեկամտացն զամենեցուն զանուանսն գրեցին ի քարտիսի, և կա-

⁶⁰⁵ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 367-368: Գանձակի գրավումից հետո գավառի ջեկիրլու սուննի մահմեդականների ցեղը բնացնջվել է շահ Աբասի կողմից (տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 113-114):

⁶⁰⁶ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 397: Ամիդում 1616 թ. գրված Ավետարանի հիշատակարանում գրիչ Հովհաննեսը գանգատվում է շահի քաղաքականությունից՝ ասելով, որ շահը «յառացն սակաւ մի լաւութիւն արար և յետոյ յոյժ չարացաւ, այտ շահ Ապաս թագաւորն Պարսից: Եւ այսպէս զՀայաստան երկիրս կոխան առնելով ամերեցին, զոր ոչ կարեմ զաւերումն ընդ գրով արկանել...» (նույն տեղում, էջ 595-596):

ցուցին ի վերայ նոցա յազգէն Հայոց պետս և վերակացուս և անուանեցին զնոսա Մելիք, և նոցա յանձնեալ ասանդեցին զամենայն ժողովորդսն, զի թէ ոք պակասեացի ի գրեալ ժողովորդոցն փախստեամբ կամ այլով կերպիս, նոքա գտեալ ածցեն ի գումարս ժողովորդոցն, և թէ ոչ գտցեն, ինքեանք լիցին պարտաւորք թագաւորին և արժանիս սպանանելոյ: Արդ՝ այսպիսի օրինակաւ զամենեսեան հանին ի բնակեալ տեղեացն, և վարեալ տարան ի Պարսկաստան»⁶⁰⁷: Քարագործ վարպետներին զատեցին բնակեցրին Սպահանում (գավերի՝ զրադաշտականների մեջ)՝ շինարարական աշխատանքների համար, իսկ մնացյալ ավելի քան 10 հազար տուն հայերը բնակեցվեցին Ֆահրապատ քաղաքում և նրա գյուղերում, սակայն բնակլիմայական պայմանների և արտագաղթի անթույլատրելիության պատճառով Առաքել Դավրիժեցու ժամանակ նրանցից հազիվ 400 տուն էր մնացել⁶⁰⁸: Հիմք ընդունելով 10 հազար տուն մարդկանց մասին այս հիշատակումը՝ Հ. Նաջարյանը կարծում է, որ տեղահանվել է շուրջ 50 հազար հայ, ընդ որում՝ բռնագաղթի են ենթարկվել, ըստ նրա, ոչ թե տեղաբնիկները, այլ երևան, Գանձակ, Թավրիզ, Արդաբիլ և հարևան շրջաններ այլ տարածքներից վերաբնակվածները⁶⁰⁹: Այս 50 հազարը հայագիտության մեջ մեծ տարածում ունեցող 300 հազարին գումարելով է, որ ուսումնասիրողների մի մասը հակված է բռնագաղթի ենթարկվածների թիվը 350 հազար համարել⁶¹⁰: Վերահաշվարկելով այս տվյալը մեզ համար ընդունելի 10 գործակցով՝ ստանում ենք ավելի քան 100 հազար թիվը, ուստի 350 հազար թիվը ևս չի դիմանում քննությանը:

⁶⁰⁷ Առաքել Դավրիժեցի, էջ 355-356:

⁶⁰⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 356-357:

⁶⁰⁹ Տե՛ս Նաջարյան Հ., Թուրք-իրանական հարաբերությունները..., էջ 230:

⁶¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 209; Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 368:

Ստորև ներկայացված աղյուսակում փորձել ենք ի մի բերել բռնագաղթի ենթարկված բնակչության թվաքանակի վերաբերյալ սկզբնաղբյուրներում առկա տվյալները:

Աղյուսակ 1

	<i>Սկզբնաղբյուրում նշված տարածքը (համադրմամբ համապատասխանեցված)</i>	<i>Բռնագաղթված հայ բնակիչների թվաքանակը</i>
1	Արևմտյան Հայաստան (Կարս, Շիրակ, Արծկե, Արճեշ, Բերկրի, Խնուս ևն)	300 հազ.
2	Արարատյան կուսակալություն	առնվազն 60 հազ.
3	Նախիջևանի երկրամաս	145 հազ.
4	Արարատյան կուսակալություն, Գանձակի նահանգ, Ատրպատական (Երկրորդ փուլ)	100 հազ.
	<i>Ընդհանուր</i>	<i>605 հազ.</i>

Ստացված թվի պարագայում մեզ համար լիովին ընդունելի է դառնում Ա. Մելքոնյանի կողմից հաշվարկված 420-480 հազար թիվը, որը, հիմնված լինելով Գոուվեայի տվյալների վրա, ցույց է տալիս ողջ մնացածներին: Հաշվի առնելով նաև տարբեր ուսումնասիրողների տեսակետը, որ բռնագաղթյալների մոտ մեկ երրորդը զոհվել է մինչև մշտական բնակության նոր վայր հասնելը, կարծում ենք, որ բռնագաղթյալների ընդհանուր թիվը կազմել է առնվազն 605 հազար, որից շուրջ 420 հազարը վերաբնակության սկզբնական շրջանում դեռևս ողջ է մնացել: Հետագայում բնակլիմայական պայմանների պատճառով նրանց մի մասը վախճանվել է, իսկ մի փոքր մասն էլ իսլամացման է ենթարկվել:

Թեև սկզբնաղբյուրներում բռնագաղթյալների թվում հիշատակվում են երբեմն նաև «տաճիկք», ավելի հազվադեպ՝ հրեաներ, սակայն մեր կողմից բերված ընդարձակ մեջբերումներից և եվրոպացի հեղինակների տվյալներից ակնհայտ է, որ բռնագաղթի ենթարկվածների գերակշիռ մեծամասնությունը եղել է հայ բնակչությունը: Անշուշտ, ահռելի թիվ են կազմել նաև վրա-

ցիները, սակայն նրանց բռնագաղթը Սեֆյանների ժողովրդագրական քաղաքականության հաջորդ շրջափուլում էր:

Այսպիսով, 17-րդ դարի սկզբին տեղի է ունեցել հայ բնակչության՝ նախադեպը չունեցող բռնագաղթ Հայաստանից: Բռնագաղթն ընդգրկել է Հայաստանի զգալի մասը՝ Ուրմիո լճի արևմուտքից մինչև Վանա լճի արևելյան և հյուսիսային ափեր, Գանձակից ու Սևանա լճից մինչև Կարս և Էրզրում, ընդ որում՝ բռնագաղթի մայր օջախ են եղել Բասենից ու Կաղզվանից մինչև Արարատյան ու Նախիջևանի դաշտերը, որոնք առավել տուժած շրջաններն էին: Բռնագաղթի ենթարկվեց 600 հազարից ավելի հայ, ընդ որում՝ Արարատյան կուսակալությունում մինչև բռնագաղթը կային 20 խոշոր քաղաքներ (Երևան, Նախիջևան, Շարուր, Ագուլիս և այլն) և շուրջ 1500 գյուղեր՝ շատ դեպքերում յուրաքանչյուրը 400-500 բնակչությամբ⁶¹¹: Ստացվում է, որ վարչամիավորի լոկ գյուղական բնակչության թիվը հասնում էր մինչև 600-750 հազարի, ուստի միանգամայն հնարավոր է բռնագաղթյալների թիվը շուրջ 600 հազարի շրջանակներում դիտարկելն անգամ միայն Արարատյան կուսակալության շրջանակներում հարցը քննելիս: Չմոռանանք, որ ըստ Սիդոնի եպիսկոպոսի մի գրության՝ 1587 թ. «Մեծ Հայքի» կաթողիկոսի իրավասության ներքո, առանց Աղթամարի և Գանձասարի կաթողիկոսություններին ենթակա շրջանների (Վանա լճի ավազան, Արցախ, Ու-

⁶¹¹ Տե՛ս ԷՅՈՅԵ Դ., նշվ. աշխ., էջ 467: Հետաքրքիր է, որ թուրք ուղեգիր Էվլիյա Չելեբիի հաղորդմամբ՝ Յուսուֆ փաշայի օրոք, այսինքն՝ 16-րդ դարի վերջին օսմանյան տիրապետության շրջանում Երևանի հողում յուրաքանչյուր գյուղ վեր է ածվել մի խոշոր քաղաքի (տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 82): Փաստորեն, ի տարբերություն միջազգային առևտրի ուղիներից հեռու գտնվող շրջանների, առևտրական ուղիների վրա գտնվող բնակավայրերը, օրինակ՝ Երևանը, Նախիջևանը, Ագուլիսը և Զուղան, չնայած օսմանյան հարկային քաղաքականությանը, այդուհանդերձ տնտեսական մեկ օրգանիզմի պայմաններում շատ արագ վերականգնվել են ավերածություններից և գերեվարումներից ու ձեռք են բերել իրենց նախկին մարդաշատությունը:

տիք), կար ավելի քան 260 հազար հայ ընտանիք⁶¹² (ավելի քան 2 մլն մարդ): Բացի այդ, ինչպես հաշվարկել էինք նախորդ գլխի վերջում, 16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին Հայաստանում հայ բնակչությունը պետք է լիներ առնվազն 4 մլն, ուստի բռնագաղթյալների թվաքանակը չի հակասում Հայաստանի բնակչության հնարավոր թվին՝ միաժամանակ աղետալի լինելով իր ծավալներով (բնակչության ավելի քան 15 %-ը):

2.3. Մեծ սովը (1606-1609 թթ.)

17-րդ դարի սկզբին Հայաստանում տեղի են ունենում ժողովրդագրական մի քանի աղետներ, որոնցից իրենց սոսկալի հետևանքներով առանձնանում են պարսից շահ Աբաս Ա-ի կողմից 1604 թ. կազմակերպված բռնագաղթը և 1606-1609 թթ. համատարած սովը: Սույն հատվածում սկզբնաղբյուրների քննությամբ ներկայացնում ենք սովի պատճառները, ժամանակագրական և տարածքային ընդգրկումն ու հետևանքները:

Սովի պատճառների մեջ առանձնանում են՝

1. 1596-1610 (1591-1611) թթ. ջալալիական շարժումը Օսմանյան կայսրությունում,

2. 1603-1618 թթ. թուրք-պարսկական պատերազմի ակտիվ գործողությունների առաջին փուլը (1603-1606 թթ.) Հայաստանի տարածքում, այդ թվում՝ 1604 թ. բռնագաղթի ընթացքում ցանքատարածությունների ոչնչացումը,

3. 16-17-րդ դարերի սահմանագլխին եղանակային պայմանների փոփոխությունը և մորեխների պոպուլյացիայի ակտիվացումը:

⁶¹² Տե՛ս Կարապետյան Մ., Երևանի բնակչության..., էջ 97:

ա) Զալալիական շարժման ազդեցությունը սովի առաջացման վրա: Առաքել Դավրիժեցին սովի առաջնային պատճառ է համարում ջալալիական շարժումը: Հետաքրքիր է, որ նրա երկի 7-րդ գլուխը վերնագրված է՝ «Յաղագս յայտնելոյ Զալալոցն եւ սաստիկ սովուն եւ մարդակեր գայլոցն, եւ այլ եւս ամարառութեանցն՝ որք ժամանեցին ի վերայ աշխարհի»⁶¹³: Հայ պատմագրի նմանօրինակ մոտեցումը միանգամայն ընդունելի է ժամանակակից հետազոտող Ս. Ուայթի համար, որն իր ուսումնասիրության մեջ շեշտում է հայ հեղինակի՝ առաջնային սկզբնաղբյուր լինելու հանգամանքը⁶¹⁴:

«Զալալիների» շարժումն իր անվանումն ստացել է 1519 թ. Թոխատում հակակառավարական ապստամբական ելույթ կազմակերպած ալևի քարոզիչ, շեյխ Զալալի (Ջելալի) անունից: Օսմանյան կայսրությունում հետսովյեյմանյան ժամանակաշրջանում խորացող տնտեսական ճգնաժամը (դրամի արժեզրկումը և կենտրոնացված հարկման ծանրացումը), օսմանյան էֆենդիական խավի տնտեսական և ենիչերիների քաղաքական զորեղացումը, դեշիրմեի (մանկահավաքի) համակարգի քայքայմանը գուզնթաֆ մահմեդական միջին հողատերերի ռազմական ուժի շահագործումը, ինչպես նաև հարևան պետություններում առկա հասարակական-քաղաքական խնդիրներն այնպիսի մտայնություն էին առաջացրել օսմանյան թիմարների (տարեկան 20 հազար ակչեից պակաս հարկ վճարելու պարտավորությամբ պարգևական հողերի) տեր սիպահիների շրջանում, թե իրենց նվազող դիրքերը հնարավոր է ամրապնդել ռազմական գործողություններ իրականացնելով⁶¹⁵: Սա, բնականաբար, դիտվելու էր որ-

⁶¹³ Առաքել Դավրիժեցի, էջ 103:

⁶¹⁴ Տե՛ս White S., նշվ. աշխ., էջ 183-184:

⁶¹⁵ Տե՛ս Griswold W. J., The Great Anatolian Rebellion (1000–1020/1591–1611), Islamkundliche Untersuchungen, Vol. 83, Berlin: Klaus Schwarz Verlag, 1983, էջ 27-78:

պես կենտրոնական իշխանությունների դեմ անհնազանդություն: Նման մտայնությունը համակեց նախևառաջ կայսրության փոքրասիական նահանգները, որտեղ թիմարներ ունեցող առաջնորդներին հաճախ տանում էին իրենց հողերից հեռու՝ եվրոպական երկրների դեմ պատերազմելու: Թեև Ա. Տվերիտինովան և Մ. Զուլայանը ջալալիների գործողությունները համարում են օսմանյան իշխանությունների դեմ ուղղված գյուղացիական շարժում⁶¹⁶, այդուհանդերձ Ա. Աբրահամյանն իրավացիորեն կարծում է, որ ջալալիների շարժումը գյուղացիական չէր⁶¹⁷: Եվ իսկապես, շարժումն արտահայտում էր միջին հողատերերի շահերը օսմանյան կենտրոնական իշխանության ժամանակավոր թուլացման պայմաններում՝ ծանր դրության մեջ դնելով հատկապես ոչ մահմեդականներին, այդ թվում՝ հայ բնակչությանը: Սկիզբ առած զանգվածային թալանը, հարկային լրացուցիչ պարտավորությունները, այնուհետև՝ համատարած սովը և ժանտախտի համաճարակն ստիպում են հայ բնակչությանը դիմել զանգվածային արտագաղթի:

Ջալալիական շարժումն ընդգրկում էր Փոքր Ասիան, Ռումելին, Սիրիան, Իրաքը, Արևմտյան Հայաստանը, որոնցում տընտեսական կյանքը, հատկապես՝ առևտուրը և գյուղատնտեսությունը խաթարվել էին⁶¹⁸: 17-րդ դարի թուրք պատմագիր Քյաթիբ Չելեբին «Ֆեզլեքե» աշխատության առաջին հատորում նկարագրում է ջալալիական շարժման առաջին ալիքը և Կարա Յազը-

⁶¹⁶ Տե՛ս **Тверитинова А.**, Восстание Кара Языджи – Дели Хасана в Турции, Москва-Ленинград, 1946, էջ 59, 71, 78; **Զուլայան Մ.**, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, էջ 130-131, 139, 217-218:

⁶¹⁷ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ ԺԳ (առաջաբան):

⁶¹⁸ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 75: Տե՛ս նաև **Զուլայան Մ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 135-147:

ջիհ⁶¹⁹ ապստամբությունն Ուրֆայում 1596-1601 թթ.⁶²⁰, այնուհետև՝ Դելի Հասանի ելույթը⁶²¹: Ըստ թուրք հեղինակի՝ այս ապստամբությունների հետևանքով գրեթե կրկնակի արժեզրկվել են օսմանյան ակջեն և դուրուշը⁶²²: Նրա հավաստմամբ՝ ջալալիական շարժումը 7-8 տարի է տևել՝ մինչև 1607 թ., որի հետևանքով Օսմանյան կայսրության արևելքում երթևեկությունը խանգարվել է 15 տարով⁶²³: Սա հանգեցնում էր նշված տարածքներով միջազգային առևտրի խաթարմանը:

Առաքել Դավրիժեցու բնորոշմամբ՝ Յազըջիի և Հասանի ապստամբությունների հետևանքով Ամիդից (Դիարբեքիրից) կես օրվա տարածությունից հետո մինչև Կոստանդնուպոլիս ավերակ էր⁶²⁴: Աշխատության մեկ այլ հատվածում պատմիչը ևս մեկ անգամ նշում է, որ ջալալիների ավերածությունների պատճառով Կոստանդնուպոլսից մինչև Երեվան ավերակ էր դարձել, և այս պատճառով «հողագործք և երկրագործք՝ որք յիւրաքանչիւր տեղիս գոյին, յերկիւղէ և յահէ սոցա փախուցեալք ի բերդս և ի դղեակս, և ի փապարս լեռանց ամրանային. և ոչ կարէին առնել զերկրագործութիւն, վասն որոյ սերմանել և հնձել և կալ և կուտ բարձաւ ամենևին: Եւ սկսաւ լինիլ սղութիւն հացի և ամենայն ուտելի իրաց և ո՛չ գտանիւր. և թէ ուրեք ուրեք ևս գտանիւր, և այն

⁶¹⁹ Կարա Յազըջին հայկական, օսմանյան և եվրոպական սկզբնաղբյուրներում հիշատակվում է նաև «Կարա Յագիջի», «Կարա Յագիճի», «Կարա Յագըճի», «Կարա Յագըջի», «Ղարա Յագիջի», «Ղարա Յագըջի», «Ղարա Յագիջի» և նմանատիպ այլ ձևերով: Մենք առաջնային ենք համարել թուրքական սկզբնաղբյուրներում օգտագործվող գրելաձևը, քանի որ Կարա Յազըջին օսմանյան իրականության ներկայացուցիչ էր:

⁶²⁰ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 79-81:

⁶²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 82-85:

⁶²² Տե՛ս նույն տեղում, էջ 80:

⁶²³ Տե՛ս նույն տեղում, էջ 82, 84:

⁶²⁴ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 429:

ևս ծանր գնոյ»⁶²⁵: Փաստորեն, ջալալիների շարժման պատճառով անձի ապահովությունից զրկված գյուղացիությունը դուրս չէր գալիս դաշտ, ջալալիները չէին թողել նաև անասուն և սերմացու: Այս ամենը հանգեցրել էր ապրանքների բազմակի գնաճի, հատկապես՝ հացի և աղի, ընդ որում՝ այն ընդգրկել էր թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանը⁶²⁶:

Այս իրավիճակը հանգեցրել էր և՛ միջազգային առևտրի, և՛ գյուղատնտեսական գործունեության արգելակմանը: Քանի որ մարդու սննդի առնվազն 80 %-ն ուշ միջնադարում ստացվում էր հողից⁶²⁷, հողագործական աշխատանքների խափանումը կարող էր հանգեցնել ժողովրդագրական մեծ աղետի՝ համատարած սովի: Ավելին, առևտրային կապերի խզումն իր հերթին զրկում էր սննդի և այլ ռեսուրսների այլընտրանքից, ինչը ևս սովի առաջացման նպաստավոր պայման էր:

17-րդ դարի թուրք պատմագիր Կոչի բեյը ներկայացնում է տնտեսական կյանքի վատթարացման ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների վրա՝ նշելով, որ ջալալիական շարժումն ընդգրկել է Անատոլիայի, Կարամանի, Սեբաստիայի, Մարաշի, Հալեպի, Դամասկոսի, Ուրֆայի, Դիարբեքի, Էրզրումի, Վանի և Մոսուլի նահանգների գյուղերն ու գյուղաքաղաքները, որոնք ավերվել են. «Վրանաբնակները և թուրքմեն ցեղերը, հպատակությունից դուրս գալով, աղքատ ռայաների նկատմամբ ծայրաստիճանի բռնություններ գործադրեցին, որի պատճառով բազմաթիվ գյուղեր ավերվեցին»⁶²⁸: Ռայաների, այսինքն՝ ոչ մուսուլ-

⁶²⁵ Առաքել Դավրիժեցի, էջ 108:

⁶²⁶ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, հիշատակարաններ № 166, 224, 244, 254, 345, 354, 366, 549: Վերջինս Ազարիա Սասնեցու կողմից գրված հիշատակարանն է, որ քանիցս հղվել է Մ. Զուլայանի աշխատություններում:

⁶²⁷ Տե՛ս Բալու Մ., նշվ. աշխ., էջ 18-19, 22-23:

⁶²⁸ «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 231:

ման հպատակների վիճակի մասին շարունակելով խոսել՝ նա արձանագրում է, որ նրանք հարկատու են, ուստի նրանց ապահովությունը պետք է իբր երաշխավորված լինի արդարադատությամբ, «իսկ ներկայումս աշխարհը քայքայված է, ռայաները ցրված են, գանձարանը դատարկ է...»⁶²⁹: Այսպիսով, թուրք հեղինակը ցույց է տալիս ջալալիական շարժման բացասական ազդեցությունը ոչ մուսուլման, հետևաբար և հայ բնակչության ժողովրդագրական գործընթացների վրա: Պատահական չէ 17-րդ դարի հայ մատենագիր, եկեղեցական գործիչ Գրիգոր Դարանաղցին նշում, որ ջալալիների շարժումից առանձնակի տուժել է «տառապեալ վշտատես ազգացս (ազգս – Մ.Մ.) Հայոց աշխարհին»⁶³⁰: Համանման տեղեկություններ է հաղորդում նաև Առաքել Դավրիժեցին:

Հայկական աղբյուրներում ջալալիների մասին հիշատակումներն ի հայտ են գալիս 1591 թ.: 1611 թ. մի հիշատակարանում ջալալիների շարժումը ներկայացվում է 1591-1611 թթ.⁶³¹: Ավելի ուշ շրջանի մի աղբյուրի՝ Անանուն Վանեցու տարեգրության (18-րդ դար) համաձայն՝ Քոռոլին, Գզիրոլին և շատ ուրիշներ 1591 թ. ջալալի դարձան⁶³²: Մեկ այլ, անորոշ հիշատակում կա 1596 թվին. «...ջալալնի (ջալալին – Մ. Մ.) ելաւ յիւր աշխարհն ահ և փախ ի գեղ և ի գաւառ, և թալան շատ գործեցաւ...»⁶³³: Ի սկզբանե հիշատակությունների զգալի մասն առնչվում էր Արևմտյան Հայաստանի արևմտյան վարչամիավորներին: Սակայն վերը վկայակոչված 1611 թ. հիշատակարանում նշվում է անսովոր տարածք, մասնավորապես՝ Իբրահիմ բեկը 6 տարի ավե-

⁶²⁹ «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 232:

⁶³⁰ Գրիգոր Դարանաղցի, էջ 125-126:

⁶³¹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 437-448:

⁶³² Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 355:

⁶³³ Նույն տեղում, էջ 173:

րածություններ է կատարել Մուշում, ոմն Շարաֆ թալանել է Երևանը և Մշո դաշտը⁶³⁴։ Բաբերդում ընդօրինակված ձեռագրի 1638 թ. հիշատակարանում ջալալիների շարժման սկիզբ է նշվում 1603 թ.⁶³⁵, ինչը, անշուշտ, բխում է տեղական առանձնահատկությունից։ Այսօրինակ հիշատակությունները ցույց են տալիս ջալալական շարժման ժամանակագրական ընդգրկման և ասպատակիչ գործողությունների աշխարհագրության ընդարձակումը։ Արդի ուսումնասիրություններում ջալալական շարժումը թվագրվում է 1596-1610 թթ.⁶³⁶, թեև դրանից առաջ (1591 թ.) և հետո (1611 թ.) առկա են դրվագային հիշատակություններ թե՛ օսմանյան և թե՛ հայկական սկզբնաղբյուրներում։

Պարսից շահ Աբաս Ա-ի կողմից «գրաժին արևելեայ աշխարհիս», այսինքն՝ Արևելյան Հայաստանն ավերելու, «սկսեալ ի Կոստանդնուպօլսէ մինչ ի յԵրևան քաղաք» օսմանյան ավերածությունների և ջալալիների «ի կողմանս երկրին Օսմանցոց» առավել ասպատակելու հետևանքով Առաքել Դավրիժեցին թվարկում է 1599-1605 թթ. շուրջ երկու և կես տասնյակ ջալալի հրամանատարների անուններ՝ հազարավոր մարտիկներով։ Նրանցից առաջինը խոսում է Կարա Յազըջիի մասին, որը Ուռհայից, Թոխատից, Սեբաստիայից, Պրուսայից, Անկյուրիայից և այլ վայրերից երկու տարվա խարաջի հարկ է վերցրել⁶³⁷։ 1600 թ. կառավարական բանակը՝ վեզիրի ղեկավարությամբ, Ուռհայից ուղարկվում է Ամիդ՝ Յազըջու դեմ, իսկ վերջինս, Ամիդից դուրս գալով, «ի Կոստանդնուպօլսէ մինչև Յամիթ (յԱմիդ – Մ.Մ.) գեաւղ և քաղաք շէն չեթող զամէնն աներեց»⁶³⁸։ Խաղալու գյու-

⁶³⁴ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 437-448։

⁶³⁵ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 723-724։

⁶³⁶ Տե՛ս White S., նշվ. աշխ., էջ 185։

⁶³⁷ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 107-108։

⁶³⁸ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 515։ Հմմտ. էջ 516-518։

ղում ընդօրինակված Շարակնոցի 1601 թ. հիշատակարանում Կարապետ երեցը խոսում է Կարա Յազըջիի կողմից քրիստոնյաների հալածանքների մասին⁶³⁹, իսկ Վասպուրականի Կարմրավոր վանքում ընդօրինակված ժողովածուի 1603 թ. հիշատակարանում նշվում է Խիզանի Ս. Հակոբ վանքի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոսի սպանության մասին⁶⁴⁰:

Փաստորեն, ջալալիական ապստամբական ելույթներն ուղեկցվել են թալանով և ջարդերով: 1601 թ. Կարա Յազըջին ջարդ կազմակերպեց Սեբաստիայում, 1602 թ. շարժվեց Թոխատ, Ջելա, Ամասիա, Մարզվան, թալանեց եկեղեցական սպասք, գերեվարեց պատանի տղաների, և Թոխատի բնակիչները շուրջ 3 ամսով հեռացան քաղաքից⁶⁴¹: Խիզան քաղաքում ընդօրինակված ձեռագրի 1603 թ. հիշատակարանում նշվում է, որ Կարա Յազըջին Թոխատն ավերեց, շատերին գերեց կամ սպանեց⁶⁴²: 1603 թ. Թոխատում Ստեփանոս Թոխատեցու հիշատակարանում ասվում է. «Զ (6) Է (7) տարու ի վեր տղակներն զամենն առին և հագուցին. զի մինչև ԻՌ (20000) տղայ առեր էին ի հայէ և ի տաճկէ. և բազում սարկաւագունք և տողվաթորաց տղայք տարան և զծնօղսն աղէխարշ արարին»⁶⁴³: Սեբաստիայում և Խիզանում ընդօրինակված ձեռագրի 1603 թ. հիշատակարանում նշվում է, որ Յազըջին Սեբաստիայում ավելի քան 20 հազար մարդ կոտորեց, 800 «անմեղ տղայս ի Հայոց և ի Հռոմոց գերի վարեաց»⁶⁴⁴: 1604 թ. մի հիշատակարանում էլ ասվում է, որ Կարա Յազըջին Սեբաստիայի գրավումից հետո «անխնայ

⁶³⁹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 40-41:

⁶⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 115-117:

⁶⁴¹ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 160:

⁶⁴² Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 114-115:

⁶⁴³ Նույն տեղում, էջ 125-126:

⁶⁴⁴ Նույն տեղում, հիշատակարան № 138: Հմմտ. № 354:

կոտորեաց բազում քրիստոնեայս և զմանկունս նոցա գերի տարեալ... ամայի մնաց Սեփաստիայ (Սեբաստիայ – Մ.Մ.) թեմովն և վիճակովն բազում ժամանակս, բայց գոհանամք զԱստուծոյ, զի յետ սակաւ ժամանակի եղև կրկին խաղաղութիւն, որ ցրուեալ և ճապաղեալ ժողովուրդն հաւաքեցան ի թվին ՌԾԳ (1604)»⁶⁴⁵։ Փաստորեն, Կարա Յազըջիի ելույթն ուղեկցվել է Փոքր Հայքի և Հայոց Միջագետքի հայ բնակչության թալանով, սպանություններով, գերեվարություններով, ընդ որում՝ գերեվարվել են հիմնականում պատանի տղաները, որոնց հնարավոր էր օգտագործել կառավարական ուժերի դեմ ռազմական գործողությունների ժամանակ։

Հայ հեղինակները գանգատվում են ոչ միայն Կարա Յազըջիի, այլև այլ ջալալիների գործողություններից։ 1606 թ. հիշատակարանում Կիրակոս երեցը բողոքում է ջալալի Թավուլի գործունեությունից՝ «զԴ (4) կողմանս աշխարհիս ւաւերեց և այրեց զամէն քաղաք և զգիւղս. և գերի տարաւ զամէն ազգ թէ՛ հայ, թէ՛ տաճիկ. ո՛վ կարէ պատմել զանաւրէնութիւնն սորա ի սովոյ և ամենայն իրաց»⁶⁴⁶։ 1606 թ. մեկ այլ հիշատակարանում ասվում է, որ Խարբերդի գավառում Թավուլը «Ե (5) ամիս ի դաշտըն նստաւ, զգեղորայքն այրեց, շինութիւն պակասեցաւ»⁶⁴⁷։ Ըստ Առաքել Դավրիժեցու՝ Թավուլի գործողություններից տուժել է ոչ միայն Խարբերդի գավառը, այլ նաև Բալուն⁶⁴⁸։ Տրապիզոնում 1608 թ. գրված Ավետարանի մեկնության հիշատակարանում նշվում է Թավուլի՝ նաև Երզնկա և Տարոն ներխուժելը⁶⁴⁹։ 1608 թ. մեկ այլ հիշատակարանում էլ փաստվում է ավելի քան 20 հազար մարդու կոտորած ջա-

⁶⁴⁵ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 132-133։

⁶⁴⁶ Նույն տեղում, էջ 237-238։

⁶⁴⁷ Նույն տեղում, էջ 215։

⁶⁴⁸ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 479։

⁶⁴⁹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 293-295։

լալիների կողմից⁶⁵⁰: Զալալիների գործած ապօրինությունների հետևանքներն այնքան սարսափելի էին, որ անգամ շուրջ մեկ հարյուրամյակ անց հայ մշակութային գործիչ, մատենագիր, մաթեմատիկոս և աստղագետ Ավետիք Տիգրանակերտցին (17-րդ դարի երկրորդ կես – 18-րդ դարի առաջին կես) ավարառուական կենցաղ ունեցող աֆրիկյան մի ցեղի, որ բնակվում էր Եգիպտոսից հարավ, բնութագրում է հետևյալ կերպ. «...ցանել վարել չգիտեն, արուեստ և բանել չգիտեն. այլ են որպէս վայրի գազան և անասուն... **ճալալու են** (ընդգծումը մերն է – Մ.Մ.), զայլոց վաստակ կու խլեն»⁶⁵¹:

Հետաքրքիր է, որ, ըստ Ա. Տվերիտինովայի և նրան հետևող Մ. Զուկալյանի, 1608-1610 թթ. ջալալական շարժումները ղեկավարում էին արաբ և քուրդ առաջնորդներ⁶⁵²: Ինչպես նկատել է Ա. Հովհաննիսյանը, Երևանի՝ նույնիսկ դեռևս 1604 թ. գրավմանը պարսից զորքի շարքերում մասնակցած թյուլենցի և գյոքդուվաք կոչվող 3 հազար ջալալիների մի մասը, ըստ Նայիմիի ժամանակագրության ուղղակի և Առաքել Դավրիժեցու անուղղակի (շահ Աբաս Ա-ի մոտ ապաստանած քրդերը) տեղեկության, քրդեր էին⁶⁵³: Արևմտյան ուսումնասիրողների մեծ մասը, հիմք ընդունելով օսմանյան սկզբնաղբյուրների տեղեկությունները, շարժման մասնակից զանգվածներին համարում է թյուրքալեզու, մասնավորապես՝ թուրքմենական կիսաքոչվորական ցեղերի ներկայացուցիչներ, որոնց մասին, սակայն, հիշատակություններն առավել հաճախ են Արևմտյան Հայաստանից արևմուտք

⁶⁵⁰ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, հիշ. № 388:

⁶⁵¹ «Բազմավէպ», 1897, թիվ 10, էջ 461-462: Տե՛ս նաև **Միրզոյան Հ.**, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983, էջ 40:

⁶⁵² Տե՛ս **Զուկալյան Մ.**, Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, էջ 139-140, 219-220:

⁶⁵³ Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, էջ 81:

ընկած փոքրասիական տարածքներում: Այնուամենայնիվ, ջալալիական շարժումն էթնիկականացնել հնարավոր չէ, քանի որ այն էթնիկական որևէ կոնկրետ հենարան չուներ և համալրվում էր մահմեդական այլևայլ ցեղերից:

Ջալալիական շարժման ժողովրդագրական գլխավոր հետևանքը ոչ այնքան բազմաթիվ զոհերն ու գերեվարվածներն էին, որքան սովը, որի մասին հիշատակումներն ի հայտ են գալիս դեռևս 1601 թ., երբ Կարա Յազըջին Սեբաստիայում կողոպուտ և կոտորած արեց, ինչի պատճառով էլ սով սկսվեց⁶⁵⁴: Հիշատակումները շատանում են 1604 թ., երբ ջալալիական շարժմանը գումարվում է թուրք-պարսկական հերթական պատերազմը: Խիզանում ընդօրինակված Յայսմաուրքի 1604 թ. հիշատակարանում խոսվում է երկրի վիճակի մասին՝ սով, գերություն, կոտորած, ավերածություն, գիշակերություն, մարդակերություն, և Սեբաստիայի կողմերում «բազումք սովամահ եղեն»⁶⁵⁵: Մոկսի Ծպատ անապատում ընդօրինակված Շարակնոցի 1604 թ. հիշատակարանում Գրիգոր աբեղան գրում է, որ «ներդմբ ի սովոյ և ի սղութենէ հացի և ի հարկապահանջութենէ այլազգեաց»⁶⁵⁶: Վարդան Բաղիշեցու ժամանակագրության (17-րդ դար) համաձայն ևս 1604 թ. «եղև սով սաստիկ մինչ զի կերին մարդիկ զձի և զջորի այլ և զմիմեանս ևս»⁶⁵⁷: Մոկսի գավառակում գրված և Խիզանում ծաղկեցված Ավետարանի 1605 թ. հիշատակարանում գրիչ Հովհաննես քահանան գանգատվում է ծանր հարկապահանջությունից և գրում. «Եւ է սղութին մեծ...»⁶⁵⁸: ...ի Սևաս-

⁶⁵⁴ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 477:

⁶⁵⁵ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 136-137:

⁶⁵⁶ Նույն տեղում, էջ 152-153:

⁶⁵⁷ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 394:

⁶⁵⁸ Մեր կողմից բաց թողնված հատվածում նշվում են պարենային ապրանքների գները:

տու երկիր (իմա՝ Սեբաստիայի նահանգ – Մ.Մ.) շատք զտղայք կերան, և ի մեր երկիրս և ի ծովուս բոլորն Ժ (10) օր խոտով և բաջարով (բանջարով – Մ.Մ.) անցուցանէին, և բազումք սովամահ եղեն»⁶⁵⁹: 1605 թ. մի հիշատակարանում նորոգող Թումա երեցը գրում է, որ կատարել է իր գործը «ի դառն և ի նուրբ ժամանակս՝ ի սով, և ի սուր, և ի մահտարածամատենիս, որ ուտէին զամենայն գարշելիս, և զպիղծն շուն, և զկատու, և զմիս մեռելոց ուտէին, հայր և մայր իւրեանց զաւակն ուտէին»⁶⁶⁰: Մոկսի Սեպ գյուղում 1605 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում գրիչ Մխիթարը գանգատվում է հարկապահանջությունից, հացի թանկացումից և սղոթյունից, պարսից բանակի՝ Վանի վրա հարձակումից և արյունահեղությունից⁶⁶¹: Փաստորեն, վերջին հիշատակարանի հեղինակը խոսում է սովի մեկ այլ պատճառի՝ թուրք-պարսկական պատերազմի մասին ևս:

բ) Թուրք-պարսկական պատերազմական գործողությունների ազդեցությունը սովի առաջացման վրա: Զալալիական շարժմամբ հարուցված սովն ավելի մեծ ընդգրկում է ստանում օսմանյան զորահրամանատար Ջղալօղլի Սինան փաշայի՝ պարսկական արշավանքից դեպի Վան գալուց հետո, երբ նախ իր զորաշարժը, ապա պատասխան պարսկական ներխուժումն ու Վանի նահանգի հայ բնակչության կորուստները սովի խորացման պատճառ են դառնում: Արտամետում 1605 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում գրիչ Կարապետ երեցը ներկայացնում է, որ Ջղալօղլին շահ Աբասի դեմ մարտերից հետո Վան վերադառնալիս «աւերեաց զՎանայ աշխարհն (իմա՝ Վանի նահանգը – Մ.Մ.) զամեն...: ... Զայն ժամ սովն կալաւ զարարածս, որ եղ[և] քիլայ ցորեան [ի ութ ափասի], [ապա] գնող կէր և ծախող

⁶⁵⁹ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 180:

⁶⁶⁰ Նույն տեղում, էջ 179:

⁶⁶¹ Տե՛ս նույն տեղում, էջ 191-192:

չկեր... Որ ի սովու կերան հայք գշուն և զկատու, էշ և ձի և կաշիք նոցա: Աղքատք ժողովէին զերեք չորս տարու չոր ոսկերներն և սղկէին և ուտէին և կոտուց կոտուց մեռանէին... Որ կերաւ մայր զորդին, հայրն ծախեաց զորդին Բ (2) կորեկ հաց, որ մեռան ի սովու հազարք հազարաց և բիւրք բիւրոց...»⁶⁶²: Գրիչը ներկայացնում է նաև սովի պատճառով սկիզբ առած արտագաղթի մեծ ալիքը և սովյալների զանգվածային մահացության որոշ վիճակագրություն. «Եւ այն, որ մնաց փախեան ի Զգիրէն (Զեզգիրէն – Մ.Մ.), ի Բաղդատ և յԱրաքստան, ի յԱսորեստան (իմա՝ Ասորիք – Մ.Մ.), ի Թաւրիզ, ի Ղազմին (Ղազվին – Մ.Մ.) և ի Խորասան և ի Գուռջլստան (իմա՝ Վրաստան – Մ.Մ.), և խազարէն (հազարէն – Մ.Մ.) մէկ չի դարձօ ի յետս, ամենեքեան մեռան ի դարիբութիւն: [Որ] ի Զգիրէն ի քաղաքն միայն իրեցներն [խսապ] արին ամենքն զհրեանց թաղածն՝ ԽՌ (40000) մարդ էր մեռեր, թո՛ղ զայն որ ի բուքն խեղդեցան և կամ ի գետն անկան և թո՛ղ զայլ քաղքունէքն (քաղաքսն – Մ.Մ.), որ ի Սալմաստայ մինչև ի Գուռջլստան և մինչև յԸստամբուլ և հիախսակողմով մինչև յԱմիթ (յԱմիդ – Մ.Մ.) և յԱլապ (ի Հալէպ – Մ.Մ.) եղև անմարդաբնակ, որ առջք և գայլք, խոզք և մարդակերքն ի շուռ գային»⁶⁶³: Այստեղ հիշատակվող

⁶⁶² «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 193-194: Հմմտ. «Մեղու Հայաստանի», 1876, թիվ 38, էջ 2-3; **Тер-Аветисян С.**, Город Джуга, Тбилиси, 1937, с. 48-49; **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 297-298:

⁶⁶³ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 194: Հմմտ. «Մեղու Հայաստանի», 1876, թ. 38, էջ 2-3; **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 297-298: Ի դեպ, Վ. Հակոբյանը և Ա. Հովհաննիսյանը 244 համարի ներքո հրատարակած այս հիշատակարանում մահացածների համար նշել են ՌԽ թիվը, որը չի համընկնում փակագծերում նշված 40 հազարի հետ: Քանի որ ձեռագիր Ավետարանը կորած է համարվում, ուստի անճշտության պատճառը հասկանալու համար մենք դիտարկել ենք հիշատակարանի սկզբնական հրատարակությունները: Առաջին անգամ 1876 թ. այն հրատարակել է Աղեքսանդր Արարատյանցը, որին Ավետարանը ցույց է տվել Գանձակի Փիք գյուղի հոգևորական Տ. Պողոս քին. Մամիկոնյանը: Հրատարակության մեջ նշված է ոչ թե ՌԽ, այլ՝ ԽՌ

բութը լրացուցիչ հանգամանք կարող էր լինել սովի խորացման համար: Բացի այդ, Կարապետ երեցը փաստում է, որ օսմանյան իշխանություններն անգամ այդ սոսկալի իրադրության պայմաններում աշխատում էին պարենավորման խնդիրը լուծել հայ բնակչության հաշվին. «Եւ այն անօրէն և պիղծ գազանաբարոյ ազգն Հռոմեցիքն (իմա՝ օսմանյան բանակը – Մ. Մ.) բռնէին զմարդիքն Հայոց, չարչարէին և զնոսա ամաւթն ծամէցնէին և ասէին «Մեզ հաց և զահրա տւէք». և նոքա ոչ ունէին զատ որ տային նոցա [և] չարաչար մահուամբ սպանանէին զհայս»⁶⁶⁴: Գրիչը, ինչպես ուշմիջնադարյան արևմտաեվրոպական հեղինակները Եվրոպայում բռնկված սովի և համաճարակների պարագայում, այս ամենը համարում է մեր մեղքերի համար աստվածային պատիժ և նշում, որ Աստված «յառաջ եբեր զխաշանց մահն, որ երեկ յարևելից և գնաց մինչև ի մուտս արևու, ի հիախոյ ի հարաւ...: Ամէն յիննըսէն մէկն մնայր: ...Եւ յետոյ եբեր զմարդկային պատուհասն, որ ի սովու կերան զմիմեանս..., որն մեռան կորան, որն **թուրքացան** (ընդգծումը մերն է – Մ.Մ.), և որն փախան, այլ ոչ դարձան իրենց տեղն...: Մինն ի բազմաց եղկելի գծողս էր, որ առի զընտանիքն իմ և գնացի ի Զգիրէն»⁶⁶⁵: Այս հիշատակարանից պարզ է դառնում, որ սովի և ժանտախտի տարածմանը զուգընթաց տարածում է ունեցել դրանց հետ առաջին հայացքից որևէ կապ չունեցող թուրքացման կամ մահմեդականացման գործընթացը, ինչը պայմանավորված էր ապրուստի նվազագույն միջոցների հասանելիության՝ կրոնական պատկանելությամբ տարբերակված լինե-

(տե՛ս «Մեղու Հայաստանի», 1876, թ. 38, էջ 2): ԽՌ է նշված նաև երկրորդ հրատարակությունում (տե՛ս **Քարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 297): Քանի որ առաջին երկու հրատարակիչները Ավետարանը տեսնելու հնարավորություն են ունեցել, ուստի հատվածը մեջբերելիս գրել ենք նրանց հրատարակած տվյալը:

⁶⁶⁴ Նույն տեղում:

⁶⁶⁵ Նույն տեղում: Գրիչը ներկայացնում է, որ օտարության մեջ վախճանվել են կինը, եղբայրը, հարսները, որդին և դուստրերը:

լու հետ, որը փաստվում է նաև մեր մեջքերած մյուս հիշատակարանների տվյալներով:

Սովի աշխարհագրական ընդգրկման տեսանկյունից ուշագրավ է, որ 1601 թ. այն հիշատակվում էր միայն Սեբաստիայի նահանգում, իսկ 1604-1605 թթ.՝ նույն նահանգում, ինչպես նաև ջալալիական շարժման մնացյալ օջախներում (հատկապես՝ Հարավարևմտյան Հայաստանում ու Հայոց Միջագետքում) և հատկապես թուրք-պարսկական պատերազմական գործողությունների թատերաբեմում գտնվող Վանի նահանգում:

1606 թ. սկսած՝ սովի մասին հիշատակումներն աղբյուրներում սովորական երևույթ են դառնում՝ ընդգրկելով Հայաստանի գրեթե ողջ տարածքը: 1606 թ. մի հիշատակարանում խոսվում է հայոց ազգին համակած սովի և գերեվարումների մասին. «Ահա Գ (3) ամ է որ իբրև զուռ (զուռի – Մ.Մ.) կը դողամք ի շահէն Պարսից: Եւս առաւել զայս տաին (տարին – Մ.Մ.), թէ որպիսի սով եղև ի Խարսայ (Կարսայ – Մ.Մ.) քաղաքին և իւր բոլոր գաւառքն: Հանց սով եղև որ շուն և կատու ոռտէին, բայց յետոյ մեռանէին»⁶⁶⁶: Այս հիշատակումը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ փաստում է 1555 թ. Ամասիայի հաշտությամբ Կարսի չեզոք գոտու ամայացումից և 1604 թ. շահ Աբասի կողմից նույն տարածքից շուրջ 20 հազար մարդկանց բռնագաղթից⁶⁶⁷ հետո Կարս քաղաքում և նրա գավառներում բնակչության առկայության մասին, ինչը հաճախ կասկածի տակ է դրվել թուրք պատմաբանների կողմից:

1606 թ. սովի մասին հիշատակումները ոչ թե սահմանա-

⁶⁶⁶ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 236: Մարտիրոս Խալիֆայի ժամանակագրությամբ (18-րդ դար) ևս փաստվում է, որ 1606 թ. «մեծ սով անկաւ, որ շուն և կատու կերին, նաև մարդագայլքն երևեցան» («Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 482):

⁶⁶⁷ Տե՛ս **Առաքելեան Հ.**, նշվ. աշխ., էջ 63-64:

փակվում են ջալալիական շարժման մայր օջախով կամ թուրք-պարսկական պատերազմների անմիջական թատերաբեմով, այլ աչքի են ընկնում Հայաստանի և հարակից տարածքների համընդհանուր ընդգրկմամբ: Հակոբ Կարնեցին իր ժամանակագրության մեջ գրում է. «Ի թվականութեանս մերում ՌԾԵ (1606) սով սաստիկ է եղեար, որ մարդ զմարդ, շուն և կատու կերեալ են ի վերին աշխարհս»⁶⁶⁸ բովանդակ՝ Յանկիւրու և Ղայսարու (Կեսարիոյ – Մ.Մ.) հետ մինչև ի Թարվէզ (Թարւէզ – Մ.Մ.), Վան և Բաղէշ, Համթայ սանճախն (յԱմդայ սանջակն – Մ.Մ.), բոլորն Գ (3) տարի»⁶⁶⁹: Անանուն ժամանակագրության (17-րդ դար) համաձայն՝ 1606 թ. «խիստ սով եղև ի քաղաքն Վան և Յարգըռում... և այնչափ մարդ ջարդեցաւ ի սովուն, որ ոչ կարէին թաղել...: ...Դարձեալ ի սոյն թուին սաստիկ սով եղև յԱստամպօլու մինչև ի Թավրէզ, ի Բաղդադայ մինչև ի Դամուր դափին...»⁶⁷⁰: 1606 թ. մեկ այլ հիշատակարանում պարսկա-օսմանյան արյունահեղ բախումների ընթացքում խոսվում է պարսից բանակի կողմից Վանի ուղղությամբ արշավանքի սոսկալի հետևանքների մասին, քանզի «բազում կոտորում արաց հայ ու տաճիկ, բազում քահանայք, բազում գերիք տարան, որ թին ու համարն չիմացանք», և Ջղալօղլիի՝ դեպի Ամիդ նահանջից հետո Ամիդից մինչև Թավրիզ հացահատիկի դաշտերի ոչնչացման պատճառով հացի սոսկալի գնաճ գրանցվեց, ու այնպիսի սով սկսվեց,

⁶⁶⁸ Հակոբ Կարնեցին «Վերին Աշխարհ» կամ հատկապես «Վերին Հայք» անունով է հիշատակում Էրզրումի նահանգը: Սա բխում է Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի անվանումից (առավել մանրամասն տե՛ս **Մալխասյան Մ.**, Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկը՝ պատմաաշխարհագրական հետազոտությունների սկզբնաղբյուր, էջ 110-125):

⁶⁶⁹ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 239:

⁶⁷⁰ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 283: Դամուրը քաղաք էր Միջերկրական ծովի արևելյան ափին, որն այժմ կազմում է Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի ագլոմերացիայի մի մասը:

որ, հիշատակարանի հեղինակի պատկերավոր ձևակերպմամբ, մինչև իսկ մի տեղում 15 հոգու էին թաղում⁶⁷¹:

1606 թ. սովի մասին հիշատակումներում առանձնանում է Վանի նահանգը: 1606 թ. գրված Յայսմաուրքի հիշատակարանում գրիչներ Ստեփանոսը և Կարապետը ներկայացնում են շահ Աբասի բռնագաղթից հետո թուրք զորահրամանատար Ջղալօղլի փաշայի կողմից ռազմական գործողությունների ծավալման ժամանակ հանդիպած դժվարությունները. «Եւ սարտարն գնացեալ ի վերայ աւեր տեղացն ի վեր, և խիստ նեղացեալ. զի աւուրք աշնանային էր՝ ձիւն և ցուրտ խիստ, դարձաւ յետ»⁶⁷²: Նա ստիպված ձմեռում է Վանում, իսկ նրա դեմ հաջորդ տարի ուղարկված Ալահվերդի խանը «երեք սոլթանով» պաշարում է Վանը և 1606 թ. հուլիսի 26-27-ը «քան զհազարն աւելի քրիստոնեայք սրախոհող (սրախողխող – Մ.Մ.) արարին, և կամ քանի կին և անմեղ տղայք գերի վարեցին ի քրիստոնէից»⁶⁷³: Թավրիզի մատուցներում օսմանյան բանակի պարտությունից հետո «եղև սով սաստիկ և թանգութիւն (թանկութիւն – Մ.Մ.) յերկիրն Վանայ, յԱրծկէ, յԱրճէշ, և ի Խլաթ, ի Բաղէշ, ի Հիզան (Խիզան – Մ.Մ.), ի Մոկս, ի Շատախ: Ամենեքեան բէզար եղէն ի տանց և ի բնակութեանց իւրեանց. և ցուեցան յաշխարհէ յաշխարհ, և անկաւ մահ ի վերայ նոցա՝ ընդ որ գնացին ամենեքեան մեռան»⁶⁷⁴: Այս հիշատակա-

⁶⁷¹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 205:

⁶⁷² Նույն տեղում, էջ 211:

⁶⁷³ Նույն տեղում:

⁶⁷⁴ Նույն տեղում, էջ 211-212: Գրիչները նկարագրում են հացահատիկի գնաճը և ամենուրեք վրա հասնող մահվան սոսկալի տեսարանները: Վանի եկեղեցիներին 1606 թ. նվիրաբերված մի Ավետարանի հիշատակարանում գրիչ Հովհաննես վարդապետը ներկայացնում է Ջղալօղլիի՝ Թավրիզից Վան վերադարձից հետո հացահատիկի գնաճի և սովի մասին, գրում, որ մարդիկ վաճառում էին իրենց այգիները, տները և սրբությունները, ինչպիսին 1573 թ. այդ Ավետարանն էր, որ Վանում ոմն Սմբատ գնել էր: Գրիչն ասում է, որ շահը Արարատյան երկրի, այսինքն՝ Զուխուր-Սաադի բեկլարբեկության «գժողովուրդն զամենեսեան ա-

րանի տեղեկություններից ակնհայտ է, որ սովին և ժանտախտին զուգահեռ մեծ թափ էր առել զանգվածային արտագաղթը:

1606 թ. ընդօրինակված Շարակնոցի հիշատակարանում ասվում է, որ Սեֆյանների բանակի հակահարձակման ժամանակ Վանում «զբազում կոտորեաց ի յայլազգեաց և քրիստոնեից», իսկ օսմանյան բանակի պատասխան արշավանքի ժամանակ ավերածությունների օջախ է դարձել Ադրակն իր շրջակա տարածքներով⁶⁷⁵: Խիզանում և Վանում գրված Յայսմաուրքի 1606 թ. հիշատակարանում Սարգիս գրիչը վերը նշված հիշատակագիրների պես գանգատվում է սովից, զանգվածային սպանություններից ու գերեվարություններից, գյուղերի ավերումից, բնակչության պարբերական տեղաշարժերից, Կոստանդնուպոլսից մինչև իր հայրենի գավառ ավերակ վիճակից, հացահատիկի, ալյուրի, յուղի և առաջնային սպառման այլ մթերքների գնաճից, դրա հարուցած սովից և բարձր մահացությունից՝ արձանագրելով, օրինակ՝ միայն մեկ դրվագում միանգամից 12 հոգու մահ⁶⁷⁶: Փաստորեն, թուրք-պարսկական պատերազմի ակտիվ փուլն ուղղակիորեն նպաստում էր սովի տարածմանը:

գ) Եղանակային պայմանների փոփոխությունների և մորեխների տարածման ազդեցությունը սովի ծավալման վրա: Սկզբնաղբյուրներում հաճախ տեղ են գտել վկայություններ սաստիկ շոգի և մորեխների տարածման մասին: Ս. Ուայթն Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում սովի բռնկման պատճառների մեջ կարևորում է Հայաստանից հարավ-արևելք ընկած տարածքներում ջալալիական շարժմանը նախորդող մի

ռեալ տարալ տարադէպ յարևելս՝ ի քաղաքն Ասպահան» (նույն տեղում, էջ 213):

⁶⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 226:

⁶⁷⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 201-202: Գրիչը այս ամենի համար մեղավոր է համարում պարսից և օսմանյան տիրակալներին, ընդ որում՝ նշում է, որ շահ Աբասը հասել է մինչև Խոշաբի դաշտ՝ Մահմտանքի գավառ:

քանի տարիներին նկատված չափազանց չորային եղանակը⁶⁷⁷:
Եղանակային նման միտումների առկայությունը հաստատվում է նաև վերջերս կատարված համալիր հետազոտություններով⁶⁷⁸:

Առաքել Դավրիժեցին միաժամանակ հիշատակում է, որ ջալալիական շարժմանը և թուրք-պարսկական պատերազմական գործողություններին համընթաց Միջնաշխարհում, այսինքն՝ Հայաստանի կենտրոնական նահանգներում մորեխներ հայտնվեցին, որոնք ոչնչացրին արտերը, ինչից հետո «եղև սով սաստիկ. և բնափն ոչ երևիւր հաց և կերակուր և այլ ինչ ուտելի»⁶⁷⁹: Բնակիչների մի մասը հեռացավ, մյուս մասը ստիպված ուտում էր ցանկացած կենդանի (ծի, ջորի, ավանակ, շուն, կատու), և անգամ գիշակերության ու մարդակերության դեպքեր էին լինում⁶⁸⁰:

Մորեխների մասին տեղեկությունը հաստատվում է նաև ժամանակակից մի հիշատակարանի տվյալով, ըստ որի՝ Վանում 1607 թ. մորեխներ են տարածվել⁶⁸¹: Սա 1606 թ. ցանքատարածությունների՝ անմշակ մնալու արդյունք կարող էր լինել, քանի որ հողը մեկ ամբողջ տարի անմշակ թողնելը մորեխների կտրուկ բազմացման համար նպաստավոր պայման է:

Փաստորեն, մի կողմից դեռևս դարասկզբից նկատվող երաշտը, մյուս կողմից՝ հատկապես 1607 թ. մորեխների պոպուլյացիայի ակտիվացումը լրացուցիչ պատճառ են դարձել առանց այն էլ ջալալիական շարժումների ու թուրք-պարսկական պատերազմի հետևանքով սկիզբ առած սովի տարածման:

դ) Մեծ սովի ժամանակագրական և տարածքային ընդգրկումը: 1606 թվից սովի մասին աննախադեպ քանակով հի-

⁶⁷⁷ Տե՛ս **White S.**, նշվ. աշխ., էջ 141-143:

⁶⁷⁸ Տե՛ս **Cook Ed. et al.**, նշվ. աշխ., էջ 2-3:

⁶⁷⁹ **Առաքել Դավրիժեցի**, էջ 108:

⁶⁸⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 109-112:

⁶⁸¹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 264:

շատակությունները և դրանցում (օրինակ՝ 17-րդ դարի հեղինակներ Հակոբ Կարնեցու, Զաքարիա Քանաքեռցու և Գրիգոր Դարանաղցու⁶⁸² մոտ) 3 տարի տևողության հիշատակումը ցույց են տալիս, որ ամբողջ Հայաստանը և հարակից տարածքներն ընդգրկող Մեծ սովն իսկապես տևել է 3 տարի՝ ընդգրկելով ամբողջ 1606-1608 թթ. և 1609 թ. սկիզբը: Այս մասին շատ կարևոր են Առաքել Դավրիժեցու տեղեկությունները: Նա հետևյալ կերպ է նկարագրում սովի տարածումը. 1606 թ. սաստիկ սով եղավ Վանում և Էրզրումում, մարդակերությունն ու հմակերությունը տարածվեցին, «այնչափ մարդ ջարդեցաւ ի սովուն, որ գլուխ չեւան թաղելով, խոր փորեցին և ներս լցին»: Սովը կրկնվեց Կոստանդնուպոլսից մինչև Թավրիզ, տարածվեցին գայլերի հարձակումները մարդկանց վրա, ինչն անվանվեց «մարդագայլ»⁶⁸³:

Ըստ Առաքել Դավրիժեցու հաղորդման՝ սովը դեռևս թույլ արտահայտվածությամբ սկսել է 1606 թ., 1607-1608 թթ.՝ սաստկացել, 1609 թ.՝ թուլացել, 1610 թ.՝ առհասարակ վերացել⁶⁸⁴: Ժամանակագրական այս ընդգրկումը հաստատվում է նաև այլ աղբյուրներով, օրինակ՝ մի ժամանակագրության համաձայն՝ «...եղև սկիզբն սովուս ՌԾԵ (1606) թվին, յորում ամի թոյլ էր սովն, և ի ՌԾԶ (1607) և ՌԾԷ (1608) կարի սաստկացաւ և ՌԾԸ (1609)-ին թողացաւ, ի ՌԾԹ (1610) բարձաւ ողորմութեամբն Աստուծոյ...»⁶⁸⁵: Ուտիքի Զական (Ձեգամ) գավառի Ղարամուրատ գյուղում 1610 թ. գրված հիշատակարանում գրիչ Դավիթ եպիսկոպոսը խոսում է 1606 թ. սովի սաստկացման, 2 տարի տևելու և շատ

⁶⁸² Տե՛ս **Գրիգոր Դարանաղի**, էջ 35-37:

⁶⁸³ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 478: Պատմիչը ներկայացնում է սովի դրվագներ Սեբաստիայում, Մոկսում, Էրզրում, և օրինակ՝ Բասենին մերձակա Խալիլագի գավառում փողոցներում մահացածների դիակներն հոշոտող մարդագայլերի սոսկալի տեսարանը (տե՛ս նույն տեղում, էջ 109-111):

⁶⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 112:

⁶⁸⁵ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 517-518:

գոհերի մասին⁶⁸⁶: Այդուհանդերձ, 2 տարվա հիշատակումը վերաբերում է միայն սովյալ վարչամիավորին և, բացի այդ, պայմանավորված է նրանով, որ 1609 թ. միայն առաջին ամիսներին են սովի մասին հիշատակումները:

Ինչպես տեսնում ենք վերը ներկայացված օրինակներից, 1606 թ. սովի մասին հիշատակումներ կան Հայաստանի տարբեր շրջաններում: 1606 թ. մի հիշատակարանում խոսվում է ալյուրի չափազանց թանկացման հետևանքով էրզրում քաղաքում սաստիկ սովի մասին⁶⁸⁷: 1606 թ. մեկ այլ հիշատակարանում խոսվում է հատկապես Արևմտյան Հայաստանում սաստիկ սովի մասին. «Եւ հանց սղութիւն է ի Հոռոմաց տունն (իմա՝ Օսմանյան կայսրությունում – Մ.Մ.), որ բազումք մին զմին կերան, և շատք սովամահ եղեն ի Սէաստու մինչ ի յԱրզրում, ի Քրդաց տուն, ի Վան, և մինչ ի Գանձայ, և ի Թարեզ»⁶⁸⁸: Անանուն Վանեցու ժամանակագրության (17-18-րդ դարեր) համաձայն՝ 1606 թ. «սաստիկ սով եղև ի քաղաքն Վան և յԱրզրում. մինչ զի կապիճ կորեկն դահեկան մի եղև, յորոյ պատճառէ այնչափ մարդ մեռան որ թաղել ոչ կարէին...»⁶⁸⁹: 1606 թ. գրված մի Յայսմաուրքի հիշատակարանում ասվում է. «...սուրով կոտորեցօ (կոտորեցաւ, իմա՝ կոտորեցան – Մ.Մ.) զամենայն քրիստոնեայք, և գերի անգաւ (անկաւ – Մ.Մ.) բազում խաչ և Աւետարան, և սբ. գրանք, և շատ բազում արդար մանուկ քրիստոնէից. և եղև սով սաստիկ, խիստ, որ Հայք զտղայքն վաճառէին ի ձեռն անաւրինաց վասն սովու և վասն դառնութեան ժամանակի»⁶⁹⁰:

Սովի աշխարհագրական սահմանների ընդլայնումն ակն-

⁶⁸⁶ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 368:

⁶⁸⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 214:

⁶⁸⁸ Նույն տեղում, էջ 220:

⁶⁸⁹ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 412:

⁶⁹⁰ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 233:

հայտ է դառնում 1607 թ. հիշատակությունների քննությունից: Ժամանակագրական մի հաղորդման համաձայն՝ 1607 թ. «մեծ սովն եղև և զմիմեանս կերան»⁶⁹¹: Խիզանում և Սպահանում 1607 թ. գրված Ավետարանի հիշատակարանում գրիչ Խաչատուր Խիզանցին գրում է, որ Թավրիզի մոտ Ջղալօղլիի պարտությունից հետո «ի յԱմթայ մինչ ի Թաւրէզ ճՌ (100 000) ոգի աւելի մեռան ի սովոյ, զի բազումք՝ հայրն զորդին կերաւ և մայր՝ զդուստրն..., և այլ բազում նեղութիւն եղև Հայոց ազգիս...»⁶⁹²: Այս հիշատակարանը, փաստորեն, եզակիներից է, որ հիշատակում է զոհերի թիվը: Փաստորեն, 1607 թ. Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում սովի մասին հիշատակումներ կան: Այսպես, Ախալցխայում 1607 թ. հիշատակարանում նշվում է, որ 3 տարի խիստ սով է եղել⁶⁹³: 1607 թ. Խիզանում գրիչ Գրիգոր քահանան գանգատվում է, որ օսմանյան բանակի՝ շահի դեմ արշավանքի ժամանակ և վերադարձից հետո «եղև բազում քաղաքաց և գիւղօրէից աւերումն և կործանումն. մինչ զի ամենայն աշխարհս անքնակ և անապատ դարձաւ, և շրջեցան մարդիկ յերկրէ յերկիր, և ի քաղաքէ ի քաղաք», և գանգատվում սովից՝ նկարագրելով սոսկալի տեսարաններ⁶⁹⁴:

Թեև սովը 1606-1607 թթ. ընդգրկում էր արդեն նաև Էրզրումի և Ախալցխայի նահանգները, այդուհանդերձ Արևմտյան Հայաստանում նրա հիմնական օջախը Վանի նահանգն էր: Ռըշտունյաց գավառում Պետրոս Նկարինցին 1607 թ. հիշատակարանում նկարագրում է դժբախտությունները. «...բազում պատուհաս երեկ ի վերայ ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց իմոց. [զի] բազումք սովամահ եղէն, և բազումք ի ձիւն և ի բուքն խեղ-

⁶⁹¹ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 518:

⁶⁹² «Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 260:

⁶⁹³ Տե՛ս նույն տեղում, էջ 262:

⁶⁹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 265:

դեցան, և բազումք ի գերութիւն անկան, և բազումք ի հաւատոց ելան...»⁶⁹⁵: Բաղեշի Գոմոց վանքում 1607 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում ևս խոսվում է սովի մասին⁶⁹⁶: Բաղեշի Ամիրդոլու վանքում 1607 թ. գրված հիշատակարանում գրիչ Բարսեղ վարդապետը խոսում է սովի և գերեվարությունների մասին⁶⁹⁷: 1607 թ. մի հիշատակարանում էլ նկարագրված են շահի կողմից Վանի ուղղությամբ ուղարկված զորամասերի ուճիրները. «Եւ առաքեաց զոմն Ժանդաբարոյ (Ժանտաբարոյ – Մ.Մ.) ի վերայ բերդին Վանալ], բազում զաւրաք: Եւ նա եկեալ բազում ոճիրս գործեաց, զի զծովու բոլորն զամենայն առ հասարակ ի սուր սուների մաշեաց, մինչ զի անքնակ դարձաւ ի մարդոյ և յանասնոյ: Եւ զվար և զվաստակ ձիոյ և ուղտոյ կեր ետուն և առ ոտն հարին. և ոչինչ [թողին որ] չարարին, և յետոյ գնացին ի տեղիս իւրեանց»⁶⁹⁸: Եվ երբ աշնանը սարդարը շարժվում է Թավրիզի ուղղությամբ և անհաջողություն կրելով՝ նահանջում դեպի Վան, «խիստ սաստիկ սով եղև ի քաղաք և ի գեղ և եղև Ա (1) քիլայ ցորեն և գարին Ժ (10) կարմիր», և մարդիկ սովից ուտում էին ինչ պատահի, վաճառում նույնիսկ սրբությունները, այգիներն ու տները⁶⁹⁹:

Սովի տոկոսի դրվագներն ամենից շատ հիշատակվում են 1608 թ: Այս թվականին Սեֆյան Պարսկաստանը Օսմանյան կայսրության դեմ նոր ռազմարշավներ է կազմակերպում դեպի Արևմտյան Հայաստան: Դեպքերի ականատես Ներսես Վարագեցին 1608 թ. հիշատակարանում գրում է շահի բանակի՝ Վանի ուղղությամբ 2 արշավանքների հետևանքով Վանում և Ոստա-

⁶⁹⁵ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 265-266:

⁶⁹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 272:

⁶⁹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 276:

⁶⁹⁸ Նույն տեղում, էջ 278:

⁶⁹⁹ Տե՛ս նույն տեղում:

նում հարուցած սովի, սպանությունների մասին՝ «եղև սով սաստիկ ի Վան և յՈստան՝ ի ծովու բոլորն առ հասարակ»⁷⁰⁰: Առաքել Դավրիժեցին էլ հաղորդում է, որ Սեֆյան բանակը 1608 թ. հուլիսի 30-ից օգոստոսի 1-ը Էրզրումի «երկիրս ամեն թէ գիւղ է թէ քաղաք վաստակն խիստ այրեաց»⁷⁰¹: Ավելին, 1608 թ. Ամիրգունա խանը զորք է առաքել Բզնունիք, և կոտորվել են բազմաթիվ քրիստոնյաներ, ինչի պատճառը, ըստ դեպքերին ականատես ժամանակագրի, Ջեզիրեի տեր «ազգաւ մար», այսինքն՝ քուրդ Շարաֆ խանն էր, որ «զքրիստոնեայս արար ընչաթափ և սովալլուկ»⁷⁰²: Փաստորեն, այս տեղեկություններով ևս մեկ անգամ փաստվում է, որ թուրք-պարսկական պատերազմի թեժացումը մեծապես նպաստել է սովի սաստկացմանը՝ 1608 թ. դարձնելով Մեծ սովի բարձրակետը:

1608 թ. հիշատակություններն ընդգրկում են ոչ միայն պատերազմական գործողությունների բուն թատերաբեմը, այլև ամբողջ Արևմտյան Հայաստանը և Արևելյան Հայաստանի մի մասը: Գրիչ Հակոբ Ջեյթունցին 1608 թ. Կեսարիայում գրած հիշատակարանում խոսում է Մարաշին ու Կեսարիային պատած սովի մասին⁷⁰³: Կեսարիայում 1608 թ. գրված մեկ այլ հիշատակարանում ևս գրիչը գանգատվում է ջալալիների ավերածություններից և հացի թանկացումից⁷⁰⁴: Սովորական բնույթ են կրում մարդագայլի մասին հիշատակումները, օրինակ՝ 1608 թ. «մեծ սովն անկաւ, որ շուն և կատու կերին. նաև մարդագայլն երևեցաւ»⁷⁰⁵:

⁷⁰⁰ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 303-304: Հիշատակարանում թվարկվում են Աղբակի իշխան պարոն Արագիզը, նրա եղբայր պարոն Միեը, որ «բազում խնամս տանին ի վերայ քրիստոնէից»:

⁷⁰¹ **Առաքել Դավրիժեցի**, էջ 479:

⁷⁰² «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 187:

⁷⁰³ Տե՛ս **Ալաջաճեան Ա.**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, էջ 644:

⁷⁰⁴ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 322-323:

⁷⁰⁵ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 355:

1608 թ. Ծարի Ատրենիս գյուղում գրված հիշատակարանում խոսվում է շահի՝ Շիրվան շարժվելուց հետո սովի և մարդակերության, սննդամթերքի բացակայության մասին⁷⁰⁶:

1608 թ. Խիզանում գրված Ավետարանի հիշատակարանում գրիչ Գրիգորը գանգատվում է քուրդ պարոն Միր Հասանի հարկապահանջության և բռնության պատճառով սովի սաստկացման մասին, շեշտում Ջղալօղլիի և շահի միջև բախման հետևանքները՝ անմարդաբնակ քաղաքներ և գյուղեր, տեղահանություն, թափառաշրջություն, հացահատիկի և յուղի գնաճ, սով, գիշակերություն⁷⁰⁷: 1608 թ. Վանում գրված Ավետարանի հիշատակարանում ևս ներկայացված են Ջղալօղլիի և շահի միջև բախման հետևանքները՝ անմարդաբնակ քաղաքներ և գյուղեր, տեղահանություն, թափառաշրջություն, հացահատիկի և յուղի գնաճ, սով, գարշակերություն⁷⁰⁸:

1608 թ. Էրզրումի Կան գյուղում գրված Ավետարանի հիշատակարանում գրիչ Սիմեոն երեցը գանգատվում է թուրք-պարսկական պատերազմից և դրա հարուցած սովից ու մահտարածամից, առաջնային սպառման ապրանքների սոսկալի գնաճից, ընտանիքների քայքայումից, ջրի սակավությունից: Հետաքրքիրն այն է, որ նա ներկայացնում է իր իսկ տեղահանման պատմությունը: Այսպես, նա նախկինում բնակվել է Բասենի Կնտեղի գյուղում, իր մանկության տարիներին գյուղը բավականին շեն վիճակում է եղել. գյուղում եղել է 12 օրորոց մեկ տանը, 3 եպիսկոպոս, 4 քահանա, 3 սարկավագ, 2 ջրաղաց, 1 ձիթհան և այլն, գլխահարկը գնացել է սուլթանին, սակայն հիշատակարանի շարադրումից քիչ առաջ Բասենն ավերվել է, իր գյուղում կանգուն շինություն չի մնացել, իսկ ինքը փախել և հաստատվել է Կան գյուղում՝ ոմն

⁷⁰⁶ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 291-292:

⁷⁰⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 312-313:

⁷⁰⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 301-302:

քրիստոնյա Լաջինի տանը⁷⁰⁹: Փաստորեն, այստեղ ներկայացված է Հայաստանին այդ ժամանակաշրջանում շատ բնորոշ ներքին միգրացիայի մի օրինակ:

1609 թ. սովի մասին հիշատակումները բնորոշ են միայն տարեսկզբին, իսկ հետագայում սովը նահանջում է: Գրիգոր Դարանաղցին, ներկայացնելով բնակավայրերի դատարկվածության հետևանքով ազարակների անխնամ մնալու և հետևաբար սովը շարունակվելու մասին՝ հաղորդում է, որ 1609 թ. Մուրադ փաշան հարազատ բնակավայրերից հեռացած մարդկանց վերադարձնելու թույլտվություն է ստացել սուլթանական հրովարտակով: Փաստորեն, Ահմեդ Ա-ն (1603-1617), հակառակ մայրաքաղաքից տեղահանման արգելքի մասին սուլթան Սուլեյմանի հրապարակած օրենքի, հրամայեց մայրաքաղաքից և այլ խոշոր քաղաքներից նախկին բնակավայրերը վերադարձնել գաղթականներին՝ ազատելով նրանց 3 տարվա հարկերից⁷¹⁰:

Հատկանշական է, որ ջալալիական շարժումները Արևելյան Հայաստանում ևս նպաստել են սովի տարածմանը: Այստեղ ջալալիները ներթափանցել են միայն շահ Աբասի կազմակերպած բռնագաղթին հաջորդած անիշխանության ժամանակահատվածում: Մանր ժամանակագրություններից մեկի համաձայն՝ բռնագաղթից հետո ելուզակների մի խումբ, «զոր ջալալի ասեն ի Տաճկաց կողմանէն, եկան Արարատյան երկիր, գիշերագնաց եղեալ զննէին և որոնէին, եթէ ուր ուրեք գտանի մարդ ի վերայ հասեալ կոտորէին և զտղայս գերէին, զտունս և զեկեղեցիս աւար հարկանէին մինչև զսովն ի յերկիր ձգեցին. ապա եղեն մարդակեր, կալեալ եպիսկոպոս մի ի Մօղնոյ (Մուղնոյ –

⁷⁰⁹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 314-315:

⁷¹⁰ 7 հազար մարդու հետ Կամախ է վերադարձել նաև պատմիչը (տե՛ս **Գրիգոր Դարանաղցի**, էջ 145):

Մ.Մ.) վանից խորովեցին և կերան»⁷¹¹: Առաքել Դավրիժեցին ևս հավաստում է Ջալալիական գործողությունների հետևանքով Արևելյան Հայաստանում սովի սաստկացման մասին. «Եւ այսպէս զամենայն գեղորայս գաւառացն Արարատու յաւեր և յապակա-նոսին դարձուցին. և ի կերակրելի սերմանեաց և ի բնակչաց թափուր արարին»⁷¹²: Ըստ պատմիչի՝ նույնը շարունակվել է Ախալխայի նահանգում⁷¹³:

ե) Մեծ սովի ժողովրդագրական հետևանքները: Սովի և համաճարակների պատճառով 1606-1609 թթ. Հայաստանում, ընդհանուր առմամբ, զոհվել է մի քանի հարյուր հազար մարդ, հայրենիքից հեռացել են տասնյակ հազարավոր մարդիկ, բնութագրական է եղել նաև ներքին միգրացիան: Հիշատակարաններից միայն երկուսում են ներկայացվում սովից վախճանվածների թվաքանակի մասին տվյալներ, որոնց համադրումից ստացվում է առնվազն 140 հազար զոհ, ինչը, անշուշտ, չի կարող արտահայտել զոհերի ամբողջ թիվը, քանի որ այն վերաբերում է միայն Հարավային Հայաստանին, մինչդեռ սովն ընդգրկել է ոչ միայն Հայաստանի հարավային և արևմտյան, այլև կենտրոնական, հյուսիսային և արևելյան շրջանները: Ջալալիական շարժման, շահ Աբասի բռնագաղթի, թուրք-պարսկական պատերազմի, երկարամյա երաշտի և մորեխների տարածման հետևանքով 1606-1609 թթ. տեղի ունեցած համատարած սովն անհրաժեշտ ենք համարում անվանել «Մեծ սով»⁷¹⁴, քանի որ այն իր տարածքային և ժամանակագրական ընդգրկմամբ ու

⁷¹¹ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 184:

⁷¹² Առաքել Դավրիժեցի, էջ 106:

⁷¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 107:

⁷¹⁴ Այս անվանումը մեր կողմից առաջ է քաշվել դեռևս 2016 թ. (տե՛ս Մ. Մալխասյան, Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դարի առաջին կեսին, էջ 102):

գոհերի թվով աննախադեպ է եղել հայոց պատմության մեջ:

Մեծ սովը խիստ բացասաբար է անդրադարձել բնակչության վերարտադրության բնականոն շրջափուլի վրա: Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններում (<< Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերում, ԼՂՀ-ում և Գանձակում) մեր կողմից հաշվարկված 17-րդ դարի առաջին կեսի՝ միայն հստակ թվագրում ունեցող տապանագրերի ու խաչքար-մահարձանների վիճագրերի ավելի քան մեկ երրորդը (38,2 %-ը)⁷¹⁵ վերաբերում է դարի առաջին տասնամյակին, այսինքն՝ այն ժամանակահատվածին, երբ տեղի են ունեցել շահ Աբաս Ա-ի կողմից կազմակերպված բռնագաղթը և 1606-1609 թթ. Մեծ սովը: Հատկանշական է, որ կոնկրետ Մեծ սովի շրջանին է առնչվում դրանց մոտ կեսը՝ ընդհանուրի շուրջ 17,5 %-ը, ինչն ինքնին խոսում է այդ ժողովրդագրական աղետի ծավալների մասին:

*

*

*

Ջալալիների շարժման բացասական հետևանքներից էր ոչ միայն սովը, այլ նաև արտագաղթը: Ըստ Ա. Խառատյանի՝ 1598-1609 թթ. ջալալիների շարժման պատճառով հայերի արտագաղթի առաջին խոշոր ալիքը դեպի Կոստանդնուպոլիս տեղ գտավ 1602 թ. Թոխատի գրավումից հետո, իսկ Գրիգոր Դարանաղցու հաղորդած տվյալներից երևում է, որ Էրզրումի նահանգի Երզըն-

⁷¹⁵ Տե՛ս նույն տեղում: Հաշվարկի հիմքը տե՛ս «Դիվան հայ վիճագրության», պր. II, էջ 68, 73-74, 76, 117, 122, 135; պր. III, էջ 19, 32, 43-44, 46, 47, 63, 65, 184, 200-202; պր. IV, էջ 15, 16-17, 28-29, 31-37, 42, 47-48, 105-106, 111-112, 129, 137-141, 144-145, 171-173, 178, 179-181, 192-193, 202-203, 206-207, 236-239, 244-247, 254-259, 269-275, 281-283, 285, 298-301, 312, 319-325, 329-332, 340, 342, 347-348, 351-352, 356-359, 361, 362, 369-371, 379; պր. V, էջ 18, 57, 94, 95, 98, 103-104, 147, 162-164, 172, 173, 179, 185-186, 193, 195, 233-237, 240, 244-246, 248, 250, 253-254, 255, 257-264, 265, 268, 272-274; պր. VI, էջ 30, 55; պր. IX, էջ 35, 103, 105, 106, 221, 223, 271, 275, 296-297, 320-321, 392, 421, 444-445, 448, 449, 457; «Ազգագրական հանդէս», գ. Ե, 1899, թ. 1, էջ 262-263:

կայի, Կամախի, Ակնի, Տերիկի և այլ շրջաններից հայերը զանգվածաբար տեղափոխվել են մայրաքաղաք 1603-1605 թթ.⁷¹⁶։ Խարբերդի Խուլավանքում ընդօրինակված Շարակնոցի 1602 թ. հիշատակարանում ներկայացված է հացահատիկի գնաճը, և նշվում է, որ «ի ձեռաց իսմայելացոց» ավերածությունների պատճառով «այս ամի Բ անգամ երկիրս փախըստական եղաւ»⁷¹⁷։ Տվյալ դեպքում խոսքը գնում է ժամանակավոր տեղափոխման մասին։ Կաֆայում ընդօրինակված Սաղմոսարանի 1604 թ. հիշատակարանում գրիչ Ստեփաննոս Թոխատեցին գրում է, որ ջալալի Կարա Յազըջին կրկին գրավել, այրել ու ավերել է Թոխատը, և այնտեղից գրիչն ու շատ բնակիչներ տեղափոխվել են Կաֆա⁷¹⁸։ Զալալիների և այնուհետև պարսկական զորքերի դեմ կենտրոնական իշխանությունների կողմից ուղարկված փաշաները ևս իրենց հարկային քաղաքականությամբ հայ բնակչության արտագաղթի պատճառ են դարձել։ Բաբերդում ընդօրինակված Գանձարանի 1605 թ. հիշատակարանում գրիչ Խաչատուր քահանան նշում է. «Անօրէն փաշայ մի եղաւ, նստաւ ի քաղաք Կարնոյ, բազում պակասութիւն և թալան արար քրիստոնէիցն, զոմանս փախստական արար յերկրէ ի յերկիր և ի քաղաքէ ի քաղաք, զոմանս ընդ ծովն անցեալ գնացին յաշխարհն Կաֆայի»⁷¹⁹։

Արտագաղթն ավելի մեծ թափ է ստանում սովի սաստկացման պայմաններում։ 1605 թ. մի հիշատակարանում ասվում է,

⁷¹⁶ Տե՛ս **Խառատյան Ա.**, նշվ. աշխ., էջ 61-71։ Կամախի հայ արհեստավորների գաղթը օսմանյան մայրաքաղաք, ըստ գերմանաբնակ թուրքագետ Ս. Ֆարուքի-ի, տեղի է ունեցել 16-17-րդ դարերի սահմանազլխին՝ սննդի պակասի, փակ ճանապարհների և առևտրի պակասի պատճառով։ Ըստ նրա՝ այդ մարդիկ ետ են բերվել շուրջ երեք տասնամյակ անց՝ Մուրադ Դ-ի օրոք (տե՛ս **Faroghi S.**, *Artisans of Empire: Crafts and Craftspeople Under the Ottomans*, London-New York: I.B. Tauris & Co. Ltd, 2009, էջ 65-66)։

⁷¹⁷ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 79-80։

⁷¹⁸ Նույն տեղում, էջ 151-152։

⁷¹⁹ Նույն տեղում, էջ 179։

որ սովի հետևանքով «ցրուեցաւ ազգս Հայոց» Պարսկաստան, Ասորիք, Վրաստան, Աբխազիա, Կաֆա⁷²⁰: Անանուն մի ժամանակագրության համաձայն ևս՝ ջալալիների շարժման հետևանքով 1605 թ. Օսմանյան կայսրությունում սով է սկսվել, որի պատճառով «ցրուեցաւ ազգս Հայոց յերեսաց սովուն ի Պարսկաստան, ի Յասրոբստան, ի Գուրջլստան մինչև հասին ի Ճորճէն, ի Յափխազ, ի Կաֆայ»⁷²¹: Ըստ ժամանակագրի՝ յուրաքանչյուր ընտանիքի անդամների մի մասը տարագրման է դիմել, և գործընթացն ընդգրկել է ոչ թե որևէ փոքր տարածք, այլ «բոլոր Հայաստան ամենայն ցիր և ցան եղեն»⁷²²:

Ըստ Առաքել Դավրիժեցու՝ ջալալիների ասպատակությունների և սովի հետևանքով «ամենայն ազգն Հայոց ելեալ վտարանդի, եղեն իւրաքանչիւր տեղեաց, ի հայրենի բնակութեանց և յաշխարհայ»՝ հեռանալով դեպի Կիպրոս, Կոստանդնուպոլիս և հարակից քաղաքներ, Ռումելի, Բուլղարիա, Մոլդովա, Լեհաստան, Ղրիմ, Սև ծովի առափնյա շրջաններ, Ատրպատական, Թավրիզ, Արդաբիլ և շրջակա գավառներ, ինչպես նաև նշում է ներքին միգրացիայի ուղղություններ՝ դեպի Երևան և Գանձակ⁷²³: Արտագաղթի հիմնական ուղղությունն աշխատանքային ռեսուրսների մշտական պահանջարկ ունեցող Կոստանդնուպոլիսն էր: Ըստ Սիմեոն Լեհացու՝ 1608 թ. Կոստանդնուպոլսում 40 հազար տուն հայ գաղթական կար⁷²⁴, ընդ որում՝ 1609 թ. Կոստանդնուպոլսում գրված Մաշտոցի հիշատակարանում թոխատեցի գրիչ Միքայելը գանգատվում է, որ «խեղճ քրիստոնեայքն ճալալոց համար փախեան» և հաստատվեցին օսմանյան մայրա-

⁷²⁰ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, հիշ. № 354:

⁷²¹ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 185-186:

⁷²² Նույն տեղում:

⁷²³ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 109, 147:

⁷²⁴ Տե՛ս **Սիմեոն Լեհացի**, էջ 8:

քաղաքում⁷²⁵: Ազարիա Սասնեցին 1609 թ. Կանոնագրքի ստացման հիշատակարանում հաղորդում է, որ ջալալիները 10 տարի առաջ ավերել են իր հայրենի Սասունը, հալածում են քրիստոնյաներին, «յորմէ և ես նուաստս և տառապեալ նշդեհս տարաշխարհիկ եղեալ ի հայրենի տեղոյ իմոյ և ի ժառանգութենէ, և շրջելով իմ տեղաց ի տեղ, և փոխելով գաւառէ ի գաւառ...»՝ հաստատվելով Կոստանդնուպոլսում⁷²⁶: Արտագաղթի աղյուսքում մեծ թվով հայեր հաստատվում էին նաև Կաֆայում և Մոլդովայում⁷²⁷: Փոքր Հայքի տարածքում ջալալիների պատճառով հայ բնակչության արտագաղթի հետևանքները տեսանելի են Սիմեոն Լեհացու ուղեգրական երկում: Նա գրում է, որ Կեսարիան 1617 թ. ուներ ավելի քան 500 տուն հայ բնակիչ (Ա. Ալպոյաճյա-

⁷²⁵ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 337:

⁷²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 345-346: Կոստանդնուպոլսի մերձակա քաղաքներից հայերը հաստատվում էին նաև Ադրիանապոլսում: Սիմեոն Լեհացին 17-րդ դարի սկզբին Ադրիանապոլսում հիշատակում է 300 տուն հայեր, որոնց մեծ մասը (մոտ 200 ընտանիք) 1605 թ. ջալալիական ասպատակությունների պատճառով վերաբնակվածներ էին (տե՛ս **Չերչիյան Վ.**, Ադրիանապոլսո հայ գաղութը, «ՊԲՀ», 1983, թ. 2-3, էջ 303):

⁷²⁷ Փոքր Հայքից (Թոխատ, Ամասիա), Փոքր Ասիայի տարբեր շրջաններից (Տրապիզոն, Տուրիկ), մասամբ՝ Արևմտյան Հայաստանից (Վանի նահանգ) և Արևելյան Հայաստանից (Նախիջևան, Եղվարդ, Տեղ, Ագուլիսի Տրոնիս գյուղ և այլն) 17-րդ դարի սկզբից հայեր են հաստատվել Իսմայիլում, Կիլիկիայում և Կաուշանում: Մոլդովայում հայերի հաստատման ամենախոշոր քարավաններից մեկը, հայկական և ռումինական սկզբնաղբյուրների համադրությամբ, 1606 թվին է եղել (տե՛ս **Անանյան Ժ.**, Հայերի Մոլդավիա և Բեսարաբիա գաղթելու պատմությունից, «ԼՀԳ», 1966, թ. 9, էջ 92-96): 17-րդ դարի սկզբին ստվարացել է նաև Հալեպի հայ համայնքը, որտեղ գերակշռել են կիլիկահայերը, սակայն զգալի է դարձել նաև Սասունից, հատկապես՝ Բուսանաց գավառակի՝ չքավորության մատնված բնակչության գաղթը (տե՛ս **Քեչիյան Վ.**, Էջեր Հալեպի հայ գաղթածախի պատմությունէն, «ԼՀԳ», 2000, թ. 2, էջ 101): Հայ գաղթականության աշխարհագրությունն այնքան է ընդարձակվել, որ 1608 թ. Կոպենհագենում տպագրված մի սկզբնաղբյուրում հայ բնակիչներ հիշատակվում են մինչև իսկ Գրենլանդիայում (տե՛ս **Բախչիյան Ա.**, Հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչություններ (վաղ միջնադար – XVIII դար), «ԼՀԳ», 1998, թ. 3, էջ 104):

նի կողմից ընտանիքի միջին մեծության 5 գործակցով հաշվարկով՝ 2500 մարդ), 1613 թ. Թոխատը՝ հազիվ 500 տուն, ինչն առնվազն երկու անգամ պակաս էր մինչ ջալալիական շարժումը եղած ցուցանիշներից⁷²⁸:

Ջալալիների խռովությունների հետևանքով խառնակ իրադրությունը, հայ բնակչության զանգվածային արտագաղթը և գյուղատնտեսության անկումը վտանգավոր իրավիճակ էր ստեղծում Օսմանյան կայսրության տնտեսության և արևելյան քաղաքականության համար:

Հաճախակի էին ջալալիական շարժման ներկայացուցիչների ներխուժումները Արևելյան Հայաստան: Այսօրինակ ներթափանցումների ժամանակ օտարների միջև բախումների մի դրվագ է ներկայացնում Առաքել Դավրիժեցին: Ջալալի Թոփալ Օսման փաշան Կոտայք գավառում իշխող քենգերի Մահմատի դեմ ճակատամարտել է Առինջ գյուղի մոտ և Կարբի գյուղաքաղաքն էլ հազար զինվորի ձմեռանոց է դարձրել՝ սպանություններ և թալան կազմակերպելով բնակավայրում⁷²⁹: Ջալալիների մի մասը ներխուժել է Հովհաննավանք, բնակիչները փախել են, իսկ մոտակա Օշականի գյուղի բնակիչները ստիպված փախել են Գեղարքունիք: Նույն կերպ են վարվել Կարբիի շրջակա գյուղերն ու գավառները, Ապարանի գավառը, Ղրիբուլաղի (Ծաղկունյաց ձորի) գավառը, Գառնու ձորը, Ուրծաձորը և Երասխ գետից այն կողմ «Սահաթի երկիրը»՝ Արարատյան կուսակալության Կողբի

⁷²⁸ Տե՛ս **Սիմեոն Լեհացի**, էջ 137, 154-155, 187; **Ալաօյաճեան Ա.**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, էջ 647, 695; **Նույնի**, Պատմութիւն Եվրոկիոյ Հայոց, էջ 336, 350: Թոխատի Արտովա (Արճիկովա) գավառակում Սիմեոն Լեհացին մեծ, բայց դատարկված գյուղեր է տեսել, միայն Չիֆլիկում ու Բոլուսում 10 հայ կար: Ջալալիների պատճառով հովտի բնակչությունը ցրվել էր, և միայն 17-րդ դարի վերջին են հայերը վերահաստատվել այդտեղ (տե՛ս նույն տեղում, էջ 505):

⁷²⁹ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 103-104:

և Աղջակալայի հատվածը⁷³⁰ (այսինքն՝ նահանգի՝ Երասխի աջ-ափինյա հատվածը): Գառնու գավառում ջալալիների ահից ավելի քան 500 քրիստոնյաներ պատսպարվել են քարայրներից մեկում, որը հրդեհելով հեղձամահ են արել բնակիչներին⁷³¹:

Այսպիսով, ջալալիական շարժումների ու թուրք-պարսկական ռազմական գործողությունների և դրանց հետևանքով հարուցված Մեծ սովի պատճառով 1606-1609 թթ. Հայաստանում զոհվել է մի քանի հարյուր հազար մարդ, հայրենիքից հեռացել են տասնյակ հազարավոր մարդիկ, բնութագրական է եղել նաև ներքին միգրացիան: Այս ամենը բացասաբար է անդրադարձել բնակչության վերարտադրության բնականոն շրջափուլի վրա:

2.4. 1610-1630-ական թթ. ռազմաքաղաքական իրադրության ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների վրա

1610-1630-ական թթ. շարունակվել են թուրք-պարսկական ռազմական գործողությունները, և պատերազմական պայմաններում գրեթե բոլոր հիշատակարաններում միաբերան խոսվում է օտարների ծանր հարկերի մասին: 1611 թ. մի հիշատակարա-

⁷³⁰ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 104: Անանուն մի ժամանակագիր պատմում է, որ ջալալիները փորձել են ներխուժել Գեղարքունիք, հայ մելիքներից առաջին անգամ ջարդվել են, սակայն մի քանի ամիս անց հաջողության են հասել, ավարառություն ու ջարդեր կազմակերպել (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 184-185): Առաքել Դավրիժեցին ևս հաղորդում է, որ ջալալիական խմբեր ներխուժել են նաև Գեղարքունյաց գավառ, «քանզի գիտէին թէ անդ են համբարք ցորենոյ և գարոյ», և կանանց ու երեխաներին գերելով՝ տղամարդկանց ստիպել են ձմռանը հացահատիկի պաշարներն ու անասունները տեղափոխել Կարբի, որտեղ նրանց մի մասին վաճառել են, մի մասին էլ ծառա դարձրել (տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 106-107): Փաստորեն, այս հիշատակումները հաստատում են այն փաստը, որ Գեղարքունիքը հաճախ պատսպարման վայր է հանդիսացել Արարատյան կուսակալության բնակչության համար և համեմատաբար քիչ է տուժել ջալալիական շարժումից ու բռնագաղթից:

⁷³¹ Նույն տեղում, էջ 106:

նում գրիչ Մինասը գանգատվում է ծանր հարկապահանջությունից⁷³²: Նույն կերպ Մարգվանում ընդօրինակված ձեռագրի 1625 թ. հիշատակարանում ասվում է, որ «բազմացեալ են ի վերայ մեր այլազգիքն մահմետական» և նեղում են հարկապահանջությամբ⁷³³: Բասենի Հասանկալա գյուղաքաղաքում Մարգար երեցը 1629 թ. հիշատակարանում գանգատվում է, որ մեկ տարվա մեջ 3 անգամ խարաջ են վերցրել⁷³⁴: Հարկային այս քաղաքականությունը նպաստել է հայ բնակչության արտագաղթին:

Հայ բնակչությունը մեծ վնասներ է կրել նաև օսմանյան և սեֆյան բանակների զորաշարժերից՝ հաճախ ստիպված լինելով ապահովել նրանց պարենով և կացարանով: Այսպես, 1611 թ. Ամիդում հայերի տները և եկեղեցիները 8 ամիս Մուրադ փաշայի զորքերի կեցավայր ու ծիանոց են ծառայել⁷³⁵: Նույնը կրկնվել է հաջորդ տարի և անգամ մարդկանց իրենց տներից են հանել⁷³⁶: 1617 թ. Ամիդում գրված Ավետարանի հիշատակարանում ներկայացվում է ստացող մծբինաբնակ խոջա Պողոսի՝ հայրենի Մշո Հորկնոց գյուղից դեպի Հզու և այնտեղից Մծբին փախչելու մասին՝ պատճառ նշելով նախ Զդալօղլիի բանակի զորաշարժը, ապա Միր Շարաֆ քուրդ «պարոնի» հալածանքները⁷³⁷: Մեկ այլ հիշատակարանում պարսիկների դեմ ուղարկվող օսմանյան զորքերի ռազմերթերի առնչությամբ ասվում է. «Եւ յամենայն ամի երթան գնան ի պատերազմ բազում զաւրաւք ընդ ազգն Պարսից, աւերելով զաշխարհս և զերկիրս Հայոց, զի կոխան եղաք այդ երկու չարաբարոյ ազգացն, որ գրեթէ բնաջինջ արա-

⁷³² Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 457:

⁷³³ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 178-179:

⁷³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 326-327:

⁷³⁵ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 455-456:

⁷³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 458-459:

⁷³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 628-629:

րին զազգս մեր, յորոց փրկեսցէ Քրիստոս Աստուած զհաւատա-
ցեալս անուան իւրոյ...»⁷³⁸: Ամիդում 1618 թ. հիշատակարանում
ասվում է, որ Թաթար խանի 40 հազարանոց զորքը տեղավոր-
վել է հայկական գյուղերի տներում և եկեղեցիներում⁷³⁹:

1610-ական թթ. երկրորդ կեսն աչքի է ընկնում գերեվա-
րումներով մե՛րթ օսմանյան բանակի կողմից Արևելյան Հայաս-
տանից, մե՛րթ էլ պարսից զորքերի կողմից՝ Արևմտյան Հայաս-
տանից: Երբ 1616 թ. Դիարբեքիի բեյլերբեյի Դիլավեր փաշան և
Վանի բեյլերբեյի Թեքելյու փաշան Երևանի ուղղությամբ շարժ-
վելու հրաման են ստանում, արագ վերաշինվում և վերաբնակեց-
վում է Կարսի բերդը⁷⁴⁰: Դեպքերին ժամանակակից մի հիշատա-
կարանում ներկայացված է 1616 թ. գերեվարության դրվագ Ե-
ղեգնաձորում. «...ելին զօրքն իսմայէլեան, և ասպատակեցին
զեղեգրեաց (զեղեգեաց – Մ.Մ.) ձորն և բազում գերի և աւար
առին»⁷⁴¹: Ըստ թուրք հեղինակ Իբրահիմ Փեչլիի՝ 1617 թ. օս-
մանյան զորքերին աջակցող Ղրիմի թաթարները 30 հազար հայ
գերեցին Նախիջևանից⁷⁴²: Թուրք հեղինակի այս տեղեկությունը
հաստատում է մեր այն տեսակետը, որ, չնայած ահռելի ծավա-
լներին, շահ Աբասի բռնագաղթը, այդուհանդերձ, ոչ ամբողջ
բնակչությանն է ընդգրկել:

Քննարկվող ժամանակաշրջանի հետաքրքիր դրվագներից
է Ամիրգունա խանի ժողովրդագրական քաղաքականությունը
Հայաստանում: Չմոռանալով, որ հենց նրա ղեկավարությամբ է
իրագործվել բռնագաղթի մասին շահ Աբասի հրամանը, պետք է
նկատել նաև Ամիրգունա խանի կողմից Արևմտյան Հայաստա-

⁷³⁸ «Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 629:

⁷³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 651-652:

⁷⁴⁰ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 98-99:

⁷⁴¹ «Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 588:

⁷⁴² Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Ա, էջ 56:

նից դեպի Արևելյան Հայաստան հայ բնակչության վերաբնակեցումների մասին ուղղակի և անուղղակի հիշատակություններն աղբյուրներում: Խոսելով 1603-1627 թթ. պարսկական տիրապետության շրջանի մասին՝ թուրք ուղեգիր Էվլիյա Չելեբին նշում է, որ Երևանը նախկինից ավելի բարեշեն և մարդաշատ է դարձել, քանի որ Ամիրգունա խանը Կաղզվանի, Կարսի, Ախալցխայի և Արդահանի ուղղություններով ասպատակություններ է կատարել և տեղի բնակիչներին տեղափոխել է Երևան և մոտակա բնակավայրեր⁷⁴³: Այս տեղեկության ճշգրտման ու ավելի որոշակի դարձնելու հետքերով այժմ քննարկենք հայկական սկզբնաղբյուրներում հանդիպող տեղեկությունները: Մշո Մուշեղաշեն գյուղում ընդօրինակված Ճառընտիրի 1614 թ. հիշատակարանում խոսվում է պարսից բանակի՝ Մուշ ներխուժելու, արյունահեղություն ու գերեվարություն կազմակերպելու մասին⁷⁴⁴: Մեկ այլ հիշատակարանում ներկայացված է 1617 թ. Ամիրգունա խանի 40 հազարանոց բանակի շարժը Արևմտյան Հայաստանի ուղղությամբ, և գրիչ Ղազար երեցը գանգատվում է հայ ազգի վիճակից⁷⁴⁵: 1618 թ. մի հիշատակարանում էլ թռուցիկ ներկայացվում է պարսից զորքի արշավանքը Զարիշատի և Կարինի ուղղությամբ, հայ բնակչության գերեվարությունը և ավերածությունները⁷⁴⁶: Առավել խոսուն են Զաքարիա Քանաքեռցու խոսքերը Ամիրգունա խանի գործունեության մասին. «...ի տիրելն իրում Երևանայ, իսկոյն ձեռն էարկ շինութեան և մարդաշատութեան: Նախ սկսաւ շինել գրերդն և ապա ապարանս և զայգիս և զբուրաստանս և զպարտէզս և հանել զառուս և առաւել ել զջուրսն: Այլև ի տեղիս տեղիս թեթևացոյց զհարկն և եբարձ զծանր լուծ ի

⁷⁴³ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 82:

⁷⁴⁴ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 535:

⁷⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 608:

⁷⁴⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 667:

պարանոցէ ռամկաց: Բայց զի բազմացոյց զսովորայն՝ այսինքն կոռն...: ...Բ անգամ գնաց ի գաւառն Կարնոյ, աւերեաց և գերեաց զերկիրն և էհաս մինչ ի դուռն բերդին Արգրումայ... և զգերիսն բերեալ՝ յերկիրն Երևանայ բնակեցոյց: Այլև գնաց զկողմամբն Վանայ և Մշոյ և գերեալ զնոսա երբր զգերիսն և բնակեցոյց ի նահանգսն, որ ի մէջ Երևանու ի դաշտն բնակեցոյց»⁷⁴⁷: Պատմիչի հաղորդմամբ՝ այս վերաբնակեցմամբ են վերակենդանացել Երևանի և Էջմիածնի միջև գտնվող Քալար, Գոկգըմբեթ, Կավակերտ, Փարաքար, Սապատ և այլ գյուղեր:

Սա իսկական ժողովրդագրական քաղաքականություն էր, ինչի իրագործումը ցույց է տալիս, որ մինչ այդ ծնելիության մակարդակի որոշակի նվազում և մահացության մակարդակի աճ է եղել: Ժողովրդագրական այսպիսի քաղաքականությունը միաժամանակ ուղղված էր՝ ծառայելու պետական գանձարանի մուտքերի ավելացմանը: Այլ կերպ ասած՝ Ամիրգունա խանը նպատակ ուներ իր իսկ իրագործած բռնագաղթից մի քանի տարի հետո վերակենդանացնել Արևելյան Հայաստանի դաշտային հատվածների, մասնավորապես՝ Արարատյան դաշտի տնտեսական կյանքը, ինչը անելու համար անհրաժեշտ էր օգտագործել դարավոր երկրագործական մշակույթ ունեցող հայերի արտադրողական հմտությունները, ինչպես նաև՝ նրանց միջոցով ավելացնել պետական գանձարանի հարկային մուտքերը, քանի որ քրիստոնյա հայը պետք է վճարեր նաև ջիզիե՝ գլխահարկ:

Փաստորեն, ինչպես իրավացիորեն կարծում են Հ. Նաջարյանը, Թ. Հակոբյանը և Հ. Փափազյանը, Ամիրգունա խանը կենտրոնական իշխանությունների թույլտվությամբ հատկապես 1618-1623 թթ. Կարսի, Էրզրումի, Վանի, Մուշի և այլ շրջաններ

⁷⁴⁷ **Ջաքարիա Քանաքեռցի**, էջ 64:

րից կազմակերպել է հայ բնակչության վերաբնակեցում⁷⁴⁸, ինչը նպաստեց Արարատյան դաշտում բնակչության էթնիկական կազմի ավանդական (հայեցի) պատկերի մասնակի վերականգնմանը: Սահմանամերձ արևմտահայ գավառները ամայացնելով՝ Ամիրգունա խանը փորձում էր ոչ միայն լուծել իր վարչամիավորում մարդկային ռեսուրսների պակասի խնդիրը, այլև այդ կերպ ձգտում էր անվտանգ դարձնել իր սահմանները՝ արևմտահայ գավառների մի մասը վերածելով յուրօրինակ բուֆերային գոտու:

Երևանում ընդօրինակված Ավետարանի 1625 թ. հիշատակարանում հետաքրքիր տեղեկություններ են տրվում Ամիրգունա խանի կողմից իրականացված արևմտահայության վերաբնակեցման մասին: Գրիչ Մելքիսեթ երեցը հաղորդում է, որ մի կին՝ Ղզլար անունով, որ Ավետարանի (1237 թ.) վերջին ստացողն է եղել, խլաթում էր բնակվում, և «եկեալ ազգն Պարսից և գերացուցեալ գերկիրն, ընդ նմին և զսայ գերացուցին զմայր իւր և զեղբայր իւր և զմիւս եղբայրն, որ էր քահանայ և այրի, սպանին զնա և զինքն և զմայր և զեղբայրն իւր, որ էր ամաց ԲԺ(12)-ից, տարեալ գերի ի Կոտոր. որ այժմ Երևան ասի»⁷⁴⁹: Հետաքրքիր տեղեկություններ են հետևում ընտանիքի ճակատագրի մասին՝ մայրը փրկագնվում է հայերի կողմից, իսկ ինքը, Ամիրգունա խանի տրամադրության տակ «իշխանական» դառնալով, ազատում է եղբորը, ով կրթություն է ստանում, քահանա դառնում⁷⁵⁰:

Վերաբնակեցման և բնական աճի ճանապարհով ժողովրդագրական իրավիճակի աստիճանական վերականգնման մասին են վկայում նաև կատարված շինարարական աշխատանք-

⁷⁴⁸ Տե՛ս **Նաջարյան Հ.**, Թուրք-իրանական հարաբերությունները..., էջ 230; **Հակոբյան Թ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 384; «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 103:

⁷⁴⁹ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 184-185:

⁷⁵⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 184:

ները (պատմաճարտարապետական հուշարձանների առատությունը) և գերեզմանոցների մեծացումը: Կ. Ղաֆադարյանը ուշադրություն է հրավիրել Առաքել Դավրիժեցու այն տեղեկության վրա, որ Կոզեռնի գերեզմանատունը հասարակական գերեզմանատուն է եղել, և նկատել է, որ 1633 թ. հետո մինչև 1650 թ. տապանաքարերի թիվը կտրուկ շատանում է՝ հասնելով 17-ի (թվակիր)⁷⁵¹: 1620-ական թթ. վերջից շատանում են խաչքարերը և տապանաքարերը նաև Ծաղկունյաց գավառում, օրինակ՝ Մարմարիկի հովտում⁷⁵²: Այս երևույթը պայմանավորված չէ համաճարակներով կամ սովով, քանի որ դրանց թիվը շատ մեծ չէ մեկ տարվա կտրվածքով, և աճն էլ համընթաց է բնական աճի հնարավոր ցուցանիշներին:

Հայկական և թուրքական աղբյուրների ու հնագիտական նյութի կողքին կարևոր են նաև պարսկական աղբյուրների տեղեկությունները: Իսքանդար Մունշին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում 1607-1610 թթ. Արարատյան կուսակալությունում վերականգնողական և վերաբնակեցման քաղաքականության մասին. «Երբ հաղթական զինվորները ձեռնարկեցին Երևանի բերդի նորոգումը և բերդը լցրին անհրաժեշտ պաշարով ու զինամթերքով, այդ ժամանակ Ամիր-Գունա խանին և նրա հպատակներին, որոնք մինչև այդ երբեմն Երնջակում, Օրդուբադում և երբեմն էլ Նախիջևանում էին լինում, կարգադրվեց գնալ և հաստատվել այնտեղ: Ապավինելով աստծո ողորմածությանը և արքայական անվախճան բարերարությանը, Ամիր-Գունա խա-

⁷⁵¹ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, Երևանի միջնադարյան հուշարձանները, «ԼՀԳ», 1969, թ. 1, էջ 85-86:

⁷⁵² Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» (տե՛ս ՀՀ կառ. որոշում № 1793-Ն, 24.12.2003 <http://www.arlis.am/Document-View.aspx?DocID=11757>, Հասանելի էր՝ 28.02.2016):

նը գնաց բնակություն հաստատելու այդ ավերակ ու անմարդաբնակ վայրում, որտեղ շինության ու կենդանության հետք անգամ չէր մնացել: Իր հպատակներից և ենթակա մարդկանցից նրանց, որոնց նկատմամբ նա առավել վստահություն ուներ, տեղավորեց բերդի ներսում, իսկ մյուսներին բնակեցրեց բերդից դուրս և ավերակ գյուղատեղերում: Ազերբայջանում (Ատրպատականում – Մ.Մ.) գտնվող տարբեր էլերից, ուլուսներից և թարաքամաններից շատերին նա համոզեց ու բերեց Երևան, Կաջարների Աղջա-կոյունլու օյմաղին և Մուսա-օղլի Բայաթ էլին, որոնք բարձրագույն հրամանի համաձայն Արաղից հատկապես եկել էին ծառայելու նրան, բոլորին էլ Երևանի ու Շարուրի հարմար վայրերում յուրդեր ու կըշլաղներ տվեց»⁷⁵³: Պարսիկ հեղինակի տեղեկություններից երևում է, որ վերաբնակեցվել են ոչ միայն հայեր, այլև Ատրպատականի թյուրքալեզու ցեղեր: Հետաքրքրական է, որ Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսը (1763-1780) 18-րդ դարի կեսերին Խոր Վիրապը զավթած մահմեդական ցեղի համար մատնանշում է հենց «բայատ» անվանումը, որն զբաղեցրել էր վանքի մոտակա հովտային մի փոքր հատված և վանքն էլ վերածել անասնատեղիի: Կաթողիկոսի ջանքերով նրանք ևս դուրս են շարտվել վանքից ու նրան հարակից դաշտային հատվածից, և Խոր Վիրապում վերստին հաստատվել է վանական կյանքը⁷⁵⁴: Ըստ 19-րդ դարի ռուս (ֆրանսիական ծագմամբ) ազգագրագետ-պատմաբան և հասարակական գործիչ Ի. Շոպենի հաղորդած տվյալների՝ բայատները (բայաթ, բոյաթ) թյուրքախոս ղզըբաշական ցեղերից էին, որոնք Արևելյան Հայաստանում են հաստատվել Փոքր Ասիայի թերակղզու տա-

⁷⁵³ **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 32:

⁷⁵⁴ Տե՛ս **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, Զամբո, աշխ.՝ Վ. Համբարձումյանի, Երևան, 2003, էջ 52:

րածքից 16-րդ դարից սկսած, իսկ մի փոքր մասն էլ՝ Մազանդարանից⁷⁵⁵։ 19-րդ դարի սկզբին բայատների խմբեր բնակվում էին Բայազետի շրջակայքում և Արարատյան դաշտում⁷⁵⁶։

Իսքանդար Մունշին նշում է, որ շահը չէր թույլատրում հող մշակել Արարատյան կուսակալությունում քանի դեռ պատերազմը չէր ավարտվել, և Ամիրգունա խանին մեծ դժվարությամբ է հաջողվել Երևանի բերդի շրջակայքում հողերը մշակելու թույլտվություն ստանալ։ Հ. Փափազյանի կարծիքով՝ քանի որ գյուղատնտեսությունը խիստ վատթար վիճակում էր գտնվում, Ամիրգունա խանը ռազմական գործողություններին զուգահեռ Արևմտյան Հայաստանում ասպատակում էր մինչև Վանա լճի առափնյա հայաշատ գավառները, կազմակերպում անասունների թալան և մեծ թվով հայերի վերաբնակեցնում Արարատյան կուսակալության ամայացած գյուղերում՝ ստեղծելով նրանց համար որոշ արտոնյալ պայմաններ և վերանորոգելով կուսակալության ոռոգման համակարգը⁷⁵⁷։ Այս գործողությունների առնչությամբ մեջբերենք Հ. Փափազյանի ուշագրավ դիտարկումը. «Երկրի արագ վերաբնակեցման և տնտեսության վերականգնման հարցով շահագրգռված էր ոչ միայն վիլայեթի բեկլարբեկին, որը մեծ բաժին ուներ հարկային եկամուտներից։ Ակներև էր նաև այն իրողությունը, որ ստրատեգիական նպատակով սահմանամերձ այս կարևոր երկրամասի բռնի ամայացումով վերացվել էր կարևոր մի պատնեշ և անարգել ճանապարհ բացվել ահեղ հակառակորդի առաջ։ Այնպես որ հայության վերաբնակեցումը ոչ միայն տնտեսական, այլև պետական-քաղաքական տեսակետից

⁷⁵⁵ Տե՛ս **Սիմեոն Երևանցի**, էջ 460։ Տե՛ս **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 531-532։

⁷⁵⁶ Տե՛ս **Саркисян Г.**, Население Восточной Армении в XIX – начале XX в., Ереван, 2002, էջ 52։

⁷⁵⁷ Տե՛ս **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 32։

խիստ կարևոր էր: Ինչպես գիտենք, հետագա տասնամյակներում և հատկապես XVIII դ. սկզբներին, թուրքական ներխուժման ժամանակ, դարձյալ հայերն էին, որ համառ դիմադրություն ցույց տվին օսմանցիներին»⁷⁵⁸: Հ. Փափազյանն արասյան տարեգրության ուսումնասիրմամբ դուրս է բերել, որ Արարատյան երկրի հետևողական վերաբնակեցումը Արևմտյան Հայաստանից տեղահանված հայ բնակչությամբ շարունակվել է նաև Ամիրգունա խանին հաջորդած Թահմասպկուլիի օրոք, և «...տեղի ունեցած նոր տեղաշարժերից հետո կրկին հայ ազգաբնակչությունը այնտեղ մեծամասնություն էր կազմում»⁷⁵⁹:

Կարծում ենք, որ Հ. Փափազյանի և մյուս ուսումնասիրողների այն տեսակետը, որ Ամիրգունա խանի սկզբնական անբարենպաստ քայլերից հետո վարած ժողովրդագրական քաղաքականությունն Արարատյան կուսակալությունում հայ բնակչության բնական աճի հետագա կանոնավորման վրա դրականորեն է ազդել, քանի որ «հիմնադրի էֆեկտը» համաշխարհային պատմության մեջ քանիցս ցույց է տվել տևական ժամանակահատվածում հողային ռեսուրսների առատության և տարածքի հարթ մակերևույթի (մեր դեպքում՝ Արարատյան և Նախիջևանի դաշտերի) պայմաններում շարժունության լրացուցիչ հնարավորության

⁷⁵⁸ **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 32-33:

⁷⁵⁹ Նույն տեղում, էջ 37: Ի. Պետրուշևսկին նկատում է, որ Հայաստանից արևելք ընկած մերձկասպյան տարածքներում և Սեֆյան տերության այլ մասերում զրգլբաշական ավագանու ցեղախմբերը ժառանգական ֆեոդալական իրավունքներով տիրում էին վարչամիավորներին՝ աստիճանաբար յուրացնելով ենթակայության տակ եղած տարածքները (տե՛ս **Петрушевский И.**, նշվ. աշխ., էջ 122-127): Հայ հետազոտողների մոտ համակրական վերաբերմունք է ձևավորվել Ամիրգունա խանի պաշտոնավարման երկրորդ շրջանի և նրա որդու իշխանության նկատմամբ: Նրանց տոհմի ժառանգական իշխանության չհաստատվելը Արարատյան կուսակալությունում հանգեցրել է նրան, որ այս երկրամասը չի վերածվել որևէ օտար տոհմա-ցեղային կառույցի ժառանգական սեփականության, հետևաբար տեղաբնիկ հայերի համախմբման հնարավորություն է ստեղծվել:

շնորհիվ բնակչության թվի զգալի աճի հնարավորությունը: Օրինակ՝ Սուրբ Լավրենտիոս գետի հովտում 17-րդ դարում հաստատված 15 հազար ֆրանսիացի վերաբնակիչների սերունդներն այժմ 6 մլն են, իսկ 12-14-րդ դարերում գերմանական միգրացիայի ժամանակ գյուղատնտեսական հողահանդակի հիմնադրի և վերաբնակչի միջև փոխշահավետ տնտեսական գործակցության շնորհիվ բնակչության թիվը կտրուկ աճել է, քանի որ նոր հիմնված բնակավայրում հողերի մշակման անհրաժեշտությունից տեղի էր ունենում ժողովրդագրական պայթյուն⁷⁶⁰: Ընդհանրապես, ավանդական վերարտադրությանը բնորոշ է բնակչության կրկնապատկում մոտավորապես 2 դարում, քանի որ բնակչության շուրջ 80%-ը սնունդը ստանում էր հողից, և եթե Եվրոպայում բնակչության թվի աճի միջին գործակիցը 17-րդ դարի առաջին կեսին 0,02 % էր⁷⁶¹, ապա մեր պարագայում բռնագաղթի ենթարկված Արարատյան դաշտի հողային ռեսուրսների առատության և Ամիրգունա խանի տնտեսական շահագրգռվածության պայմաններում բնական աճն անհամեմատ ավելի բարձր պետք է լիներ՝ մղելով տեղական բնույթի ժողովրդագրական պայթյունի: Մեր առաջ քաշած դրույթը հաստատվում է Վրաստանի օրինակով: Ըստ թուրք պատմիչ Նախմայի՝ վրաց բռնագաղթից մի քանի տարի անց շահը հրամայում է, որ Վրաստանում ամեն մարդ իր տունը նորոգի և արտը մշակի, սերմացու չունեցողներին այն փոխ տրվի պետական գանձարանից՝ 3 տարով ազատելով պետական տուրքերի վճարումից. «Լեռներում և դաշտերում ցրված վրացի ռայաները նորից հավաքվեցին և... երկիրը շենացրին», իսկ պարսկական վերնախավում երկ-

⁷⁶⁰ Տե՛ս **Бачи М.**, նշվ. աշխ., էջ 41-44:

⁷⁶¹ Տե՛ս նույն տեղում, էջ 18-19, 22-23:

յուղ առաջացավ «վրացիների շատությունից»⁷⁶²: Ինչպես նշել ենք սույն աշխատանքի առաջին ենթագլխում, 1631-1640 թթ. Հայաստանում ընտանիքի անդամների միջին թիվն աճել է մոտ 8 %-ով, ինչը պետք է պայմանավորված լիներ նախորդող մեկ և կես տասնամյակներին Արևելյան Հայաստանում Ամիրգունա խանի ժողովրդագրական քաղաքականությամբ և մի շարք այլ գործոններով:

Ամիրգունա խանի վարած քաղաքականության պայմաններում կարևոր է հասկանալ հայոց վերնախավի գործողությունները: Սաղմոսավանքում գրված Կոնդակի 1623 թ. հիշատակարանում Մինաս գրիչը կաթողիկոս Մովսես Տաթևացուն բնորոշում է որպես փրկության ու լույսի խորհրդանիշ՝ «ի մէջ հայկազան սեռիս» և գրում, որ Ամիրգունա խանի ծանր լծից հայ ժողովուրդը վշտագին տառապանք է տարել, սակայն Մովսես վարդապետն իր հնարամտության, համարձակության և հեղինակության շնորհիվ «նորոգէր զեկեղեցիս և ուղղէր զխանգարեալ կարգս նորա ըստ կարի իւրոյ՝ ոչ պակաս քան զաւուրս քրիստոնէութեան»⁷⁶³: Գրիչը հաղորդում է նաև ռաբունապետի՝ «ի վանորայս նահանգիս» շրջագայության և հանձնարարականներ տալու մասին⁷⁶⁴: Առաքել Դավրիժեցին ևս փաստում է Մովսես Տաթևացու՝ Ամիրգունա խանի կողմից հարգված լինելու շնորհիվ փոփոխությունների հնարավորության մասին: Եսայի Հասան-Ջալալյանը 17-րդ դարի երկրորդ քառորդը և հետագա շրջանը բնութագրում է որպես հայոց աշխարհի և էջմիածնի նորոգման ժամանակաշրջան⁷⁶⁵: Այս բնորոշումն ավելի որոշակի է դառնում

⁷⁶² Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Ա, էջ 89:

⁷⁶³ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 97:

⁷⁶⁴ Տե՛ս նույն տեղում:

⁷⁶⁵ Տե՛ս **Եսայի Հասան-Ջալալեան**, Պատմութիւն յաշխարհին Աղուանից, Յերուսաղէմ, 1868, էջ 15: Շաքիի Սաղիան գյուղում ընդօրինակված Ժամագիրք-Աղո-

Մովսես Տաթևացու կաթողիկոսության շրջանում: Լվովում գրված Ժողովածուի 1631 թ. հիշատակարանում Սիմեոն գրիչը գովերգում է Մովսես Տաթևացուն՝ նշելով, որ «բազում կարգաւորութիւնս արար սա ի սբ. Էջմիածին, և բոլոր Հայաստանս՝ աշխարհս Հայոց»⁷⁶⁶:

Հովհաննավանքում գրված Ժողովածուի 1631 թ. ընդարձակ հիշատակարանում Ղուկաս գրիչը մանրամասն ներկայացնում է Մովսես Տաթևացու գործունեությունը և գրում, որ նրան նախորդող՝ աթոռակիցներով գահակալող կաթողիկոսների օրոք «առեալ զկաշառս թոյլ տային ազգականաց ընդ իրեարս խառնիլ անաւրէն ամուսնութեամբ»⁷⁶⁷, ինչը կարող էր թելադրված լինել ժողովրդագրական իրավիճակով: Գրիչը մեկ այլ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում հայ գերիների նկատմամբ Մովսես Տաթևացու առանձնակի վերաբերմունքի մասին. «Արդարև գրեթե յորմէ հետէ մտեալ է սայ ի յիշխանանիստ քաղաքն յերևան ասելի քան հազար գերի քրիստոնէից ազատեալ է ի ձեռաց այլազգաց»⁷⁶⁸: Բուռն եկեղեցաշինություն է ծավալվել Աստապատում, Ագուլիսում, Մեղրիում, Շոռոթում, Շնհերում, Գետաթաղում, Առինջում, Բիչանակում (Բջնաղում), Բիստում և այլուր⁷⁶⁹: 1620 թ. Ս. Էջմիածինն հաջողվել է Ամիրգունա խանից

թամատույցի 1636 թ. հիշատակարանում Ձուկ տանուտերը խոսում է Աղվանից կաթողիկոսության տարածքում ևս եկեղեցիների շինարարության և դպրոցի բացման մասին (տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 859-860):

⁷⁶⁶ Նույն տեղում, էջ 409:

⁷⁶⁷ Նույն տեղում, էջ 427:

⁷⁶⁸ Նույն տեղում, էջ 429-430:

⁷⁶⁹ Տե՛ս **Հասրաթյան Մ.**, Աստապատի վանքի ճարտարապետական համալիրը, «ՊԲՀ», 1975, թ. 1, էջ 126-138; **Այվազյան Ա.**, Նյութեր Նախիջևանի պատմական գյուղերի տեղադրության և պատմական հուշարձանների վերաբերյալ, «ՊԲՀ», 1972, թ. 2, էջ 266; **Նույնի**, Գողթն գավառի Բիստ ավանի ճարտարապետական հուշարձանները, «ՊԲՀ», 1978, թ. 1, էջ 283-289; «Հայերեն ձեռա-

ետ ստանալ Վաղարշապատի հողերը: Էջմիածնի վանքին Հակոբ Դ Զուղայեցու օրոք (1655-1680) արդեն պատկանում էր 23 գյուղ Արարատյան դաշտում⁷⁷⁰: Ակտիվ աշխատանքներ են տարել նաև հայ խոջաները, որոնք Հայ առաքելական եկեղեցու միջնորդությամբ մասնակցել են գերեվարված հայերի փրկագնամանը, ինչպես նաև նպաստել են վանքապատկան հողերի ետգրնմանը և վերադարձին: Երևանցի խոջա Սեթի որդի խոջա Հակոբն ունեցել է հողեր՝ Յայջի, Նորագյուղ, Գյուլյանդ (այժմ՝ Լիճք, ՀՀ Գեղարքունիքի մարզ), որոնք 1648 թ. վերադարձվել են եկեղեցուն⁷⁷¹: Մովսես Գ Տաթևացու, Փիլիպպոս Ա Աղբակեցու

գրերի ժէ դարի հիշատակարաններ», հ. Բ, № 1000, էջ 683-684: Սյունիքի համար Առաքել Դավրիժեցին 1620-ական թթ. նշում է, որ «բուն Հայաստան է, վանօրայք, և գեղօրայք, և **ժողովուրդք քրիստոնէից բազումք գոն** (ընդգծումը մերն է – Մ.Մ.)...» (**Առաքել Դավրիժեցի**, էջ 239): 1640-1660-ական թթ. եկեղեցիների վերաշինումը նկարագրելիս պատմագիրը թվարկում է Դարաշամբ, Աստապատ, Արարք, Մեղրի, Մակու, Մուղնի, Ուշի, Օշական, Բջնի, Աշտարակ գյուղերը, Երնջակ գավառը և Երևան քաղաքը. «Կան և այլ բազում վանօրայք նորոգեալ, և բազում եկեղեցիք ի հիմանց նոր շինեալք՝ ի քաղաքն Տփխիս, և ի գաւառն Լօռուղ, և յաշխարհն Արարատու, ի գաւառն Սիսակայ, և յաշխարհն Ղափանայ, ի քաղաքն Նախչուան, և ի գեղօրայս նորա. որպէս չքնաղ և մեծաշուք և վայելուց եկեղեցին Աստապատու, և քաղաքին Նախչուանու, և Ճահկայ գեղին, և Շահկերտու գեղին և Գաղ գեղին, որք շինեցան յաւուրս տեառն Յակովբայ կաթողիկոսին. և Շօռօթու եկեղեցին, և Ագուլեաց վանքն ի գեղի չորս եկեղեցին, և Թարվիզու քաղաքի եկեղեցին, և Դարաշամբայ եկեղեցին, և Յղնոյ եկեղեցին...» (**Առաքել Դավրիժեցի**, էջ 286; տե՛ս նաև էջ 239, 287-288):

⁷⁷⁰ Տե՛ս **Փափագյան Հ.**, Վանական կալվածների սեփականատիրական իրավունքի մի քանի առանձնահատկություններ (XV-XVIII դդ.), «Բանբեր Մատենադարանի», թ. 10, Երևան, 1971, էջ 241-243:

⁷⁷¹ Տե՛ս **Փափագյան Հ.**, Շարիաթական իրավական նորմերը և հողի ֆեոդալական սեփականության հարցը Արևելքում, «ԼՀԳ», 1966, թ. 12, էջ 22-34: 1644 թ. շահ Աբաս Բ-ի և 1649 թ. Քեյխոսրով խանի հրովարտակներով ամրագրվել է Մայր Աթոռի սեփականությունը Վաղարշապատում, Օշականում, Ձորագյուղում, Նորքում և Շիրաբաղում (տե՛ս **Թորոսյան Հ.**, Էջմիածնի վանական հողատիրությունը և նրա առանձնահատկությունները (16-18-րդ դդ.), «Հայոց պատմության հարցեր», հ. 2, Երևան, 2001, էջ 41-50; **Վիրաբյան Ա.**, Երևանի խանության վանական տնտեսությունը և հարկային համակարգը Զաքարիա Քանաքեղոցու լուսաբանմամբ, «Հայոց պատմության հարցեր», հ. 12, Երևան, 2011, էջ 108-123):

և Հակոբ Դ Ջուղայեցու գործունեությունը փոխկապակցված էին ժողովրդագրական գործընթացների հետ և դրականորեն էին ներազդում դրանց վրա, սակայն դժվար է նրանց գործունեությունը ժողովրդագրական քաղաքականություն անվանելը:

Չնայած տեղի ունեցող որոշակի դրական տեղաշարժերին, ժողովրդագրական գործընթացների վրա շարունակում էր ահռելի ազդեցություն ունենալ ռազմաքաղաքական անկայուն իրադրությունը: 1620-ական թթ. երկրորդ կեսին Էրզրումի նահանգի հայ բնակչության անդորրը խաթարվել է Աբազա փաշայի ելույթով: 1627 թ. մի հիշատակարանում գրված է, որ Խալիլ փաշան Աբազա փաշային չի կարողացել գերել, Բասենն ու Էրզրումն ավերել է, և քաղաքների միջև մարդկանց երթևեկը խաթարվել է⁷⁷²: 1629 թ. Բասենի Հասան-կալա գյուղաքաղաքում գրված հիշատակարանում Մարգար երեցը նույնպես նշում է, որ Աբազա փաշայի դեմ ուղարկված Խալիլ փաշան, չկարողանալով գրավել Էրզրումը, «զաշխարհս աւերեաց ի թալան, ի սուր սոււերի, ի գերութին վարեց՝ զԵզընկան, Առգրում, Բասեն, Թորթում և այլ գաւառք, և գնաց ի Թաւխաթ»⁷⁷³: Մ. Ջուլայանը Աբազա փաշային համարում է ջալալիական շարժումները շարունակող⁷⁷⁴: Սակայն Վ. Հակոբյանն իրավացիորեն նրան չի համարում ջալալի այն իմաստով, որով բնորոշվում են 16-րդ դարի վերջի և 17-րդ դարի սկզբի ջալալիները⁷⁷⁵, քանի որ Աբազան թալանչիական և ասպատակիչ գործունեությամբ աչքի չի ընկել, և հայ հեղինակները նրա մասին դրական են խոսում՝ գոնե մինչև Էրզրումում Աբազայի վերջնական պաշարումը, երբ նա ստիպված է եղել լրացուցիչ հարկեր գանձել հայ բնակչությունից:

⁷⁷² Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 256:

⁷⁷³ Նույն տեղում, էջ 326-327:

⁷⁷⁴ Տե՛ս **Ջուլայան Մ.**, Ջալալիների շարժումը..., էջ 191-216, 220:

⁷⁷⁵ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ Է:

1630-ական թթ. ռազմական գործողությունները Հայաստանում նոր թափ են ստանում: 1630 թ. մի հիշատակարանում վկայվում է Վանի Ալի փաշայի կողմից Նախիջևանից ավարի և գերիների՝ Վան բերելու, այնուհետև, ի պատասխան, պարսից բանակի կողմից Արճեշի գավառից կրկնակի ավելի շատ գերիներ տանելու մասին⁷⁷⁶: Խիզանի Թացու գյուղում և Վարազավանքում ընդօրինակված Ոսկեփորիկի 1630 թ. հիշատակարանում գրված է. «Յանկարծ շարժեցաւ օսմանլուն, ի Վանայ գնաց ի Նաղչուանայ երկիր. քանդեցին, ափրեցին, զառ ու գերին բերին ի Վան, ի Մահմտանք. ի Բերկրի, ի յԱրճէշ, ի Պաղէշ ԴՌ (4000), ԵՌ (5000) հարիւր գերի բերին, թող ոչխար ու տաւար: Սուղ փարթալ աւաղ աւաղ զՀայոց ազգիս ի գերել Տաճկաց»⁷⁷⁷: Վարազավանքում ընդօրինակված Սաղմոսարանի 1630 թ. հիշատակարանում այս դեպքերի առնչությամբ գրված է, որ «զադէտ և զկըսկիծ տառապանաց և զտարակուսանաց ազգիս Հայոց... զի ամով մի առաջ քան զգրչութեան սորա, ելին ազգն Պարսից և դիմեցին ի վերա Վանայ և յաւար առին զերկիրն Խոշաբայ, զմարդիկք սպանանելով և զկին և զտղայ գերի վարելով, զհայ և զըքուրտ. և զթիւ արանց սպանելոց և զգերելոցն չկարացաք իմանալ և կամ ընդ գրով արկանել, զի անմարդի և անբնակ արարին ի մարդոյ և յանասնոյ, և գերեալքն ամենեքեան կորեան և ոչ դարձան ի յետ. զի **զգերիս ոչ ծախէին** (ընդգծումը մերն է – Մ.Մ.) ազգն Պարսից, այլ յազգն իւրեանց խառնելով զամենեսեան կորուսեցին»⁷⁷⁸: Ի պատասխան այս գործողություններին՝ Վանի փաշան գրչության տարում ներխուժել է Սյունիք՝ «սըպանանելով զհայս և գերի վարելով զկին և զտղայս նոցա, աւերելով

⁷⁷⁶ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 385-386:

⁷⁷⁷ Նույն տեղում, էջ 388:

⁷⁷⁸ Նույն տեղում, էջ 396:

և թալանելով դարձան ի Վան»⁷⁷⁹: Ընդգծված հատվածից կարելի է հասկանալ, որ պարսիկների կողմից գերեվարված հայ բնակչությունը վերաբնակեցման էր ենթարկվում, թեև մի շարք այլ աղբյուրներում խոսվում է նաև հայ գերիների վաճառքի մասին:

Հայ բնակչությունը տուժել է ոչ միայն 1630-1631 թթ. զանգվածային գերեվարություններից, այլև բուն պատերազմական գործողություններից: Ծարի վանքին նվիրաբերված մի Քարոզգրքի 1631 թ. հիշատակարանում ասվում է, որ Երևանի բերդի մոտ շահ Սեֆիի՝ օսմանյան բանակի դեմ մղած մարտերի ժամանակ «բարի շատ քրիստոնայք կորեցան թվին ՌՁ (1631)»⁷⁸⁰: Հայ բնակչությունը օգտագործվել է նաև որպես օսմանյան բանակի աշխատուժ: Վանում գրված Ոսկեփորիկի 1634 թ. հիշատակարանում գրիչ Գրիգոր քահանան, անձնապես մարմնական պատիժներ կրելով պատերազմական գործողությունների ժամանակ գործադրվող կտտանքներից, վկայում է Ռուստամ խանի 30 հազարանոց բանակի ասպատակությունները Վանում. «Եւ խիստ չարչարէին զտառապեալ ազգն քրիստոնէից, ի պարիսպն, ի խանդակ փորելն. և զորս ի քաղաքն գտանէին բազում չարչարանք տային: Եւ... եկեալ գտին զիս և զականջս կտրեցին...»⁷⁸¹: Դատվան գյուղաքաղաքում ձեռագրի ստացման 1635 թ. հիշատակարանում ներկայացված է, որ 1634 թ. օգոստոսի 11-ից մինչև հոկտեմբերի 14-ը «բազում քրիստոնեայք սպանեցին, բազումք գերեցին, զՎանայ երկիրն՝ զգեղորայքն և զվանորայքն զամէն քակեցին և քանդեցին, զքաղաքի այգեստարն (իմա՝ Այ-

⁷⁷⁹ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 396: Վարագավանքում և Լիմում 1631 թ. գրված հիշատակարանում գրիչ Մովսես քահանան հաղորդում է, որ ձեռագիրը գրել է «ի դառն ժամանակիս, որ Վանայ դուռ փաշէն գնացին ի Ղափանստուն, գերի բերին բազում կին և տղայ, բերին ի Վան, զամենայն Վանայ մարդն գնեաց և յետս դառնուց» (նույն տեղում, էջ 460):

⁷⁸⁰ Նույն տեղում, էջ 443:

⁷⁸¹ Նույն տեղում, էջ 569-570:

գեստանը – Մ.Մ.) զամէն կոտորեցին: Եւ զգերեզմանատուն Հայոց Ռ (1000) ճօղ նաղմ զարկին, և յոմանց լուայ թէ ԿՌ (60000) է. և բերին հասուցին զնաղմն ի տակն պարըսպին: Եւ ազգս, որ ի մէջ քաղաքին էին, բազում տանջանաց մէջ էին՝ զիշերն զբադանն պահել տային և ցերէկն զխանդակն փորէին...: Քաղց և ծարաւ, մերկ և բոկիկ կային ամենեքեան...»⁷⁸²:

1634-1635 թթ. օսմանյան սուլթան Մուրադ Դ-ն (1623-1640) վճռական արշավանք սկսեց Սեֆյանների դեմ և մահապատժի ենթարկեց խառնակ իրավիճակում հայտնված փոքրասիական վարչամիավորների մի շարք պաշտոնյաների, ինչպես նաև ավազակային գործողություններով աչքի ընկած թուրքմենական ցեղախմբերի մի քանի առաջնորդների⁷⁸³: Բաղդադ արշավելու ճանապարհին մինչև Դևելի Գարահիսարում բանակելը սուլթանը տեսնում է սակավամարդ տարածություն և հրամայում Կոստանդնուպոլսից այստեղ տեղափոխել վերաբնակիչներին, որոնց մեջ բնականաբար ամենամեծաթիվը հայերն էին⁷⁸⁴: Սուլթանի այս հրամանը գյուղատնտեսության վերականգնմանը և հարկային մուտքերի ավելացմանն էր ուղղված⁷⁸⁵: Այս հրամանի մասին հիշատակություններ կան հայկական բազմաթիվ սկրզբնաղբյուրներում: Առաքել Դավրիժեցին նշում է, որ 1635 թ. մայիսի 14-ին Մուրադ սուլթանը «սուրգուն արար... Հայոց, Հռոմոնց, և Տաճկաց»⁷⁸⁶: Կոստանդնուպոլսում 1635 թ. գրված հիշատակարանում Հակոբ դպիր Ակնցին հաղորդում է, որ սուլթան Մուրադը պարսիկների դեմ արշավելիս «տեսեալ զերկիրսն սակա-

⁷⁸² «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 613-614:

⁷⁸³ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 155-156:

⁷⁸⁴ Տե՛ս **Ալայօյաճեան Ա.**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, էջ 643:

⁷⁸⁵ Տե՛ս **Խառատյան Ա.**, նշվ. աշխ., էջ 61-71:

⁷⁸⁶ **Առաքել Դավրիժեցի**, էջ 483: Տե՛ս նաև «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 340; **Սիմէոն Լեհացի**, էջ 378-379:

ամարդս և հարցեալ տեղեկացեալ, եթէ յԸստըմպօլ են ժողովեալ, և առաքեաց հրաման ի տեսուչն Ըստըմպօլայ, որ թէ՛ հայ, թէ՛ յոյն, թէ՛ տաճիկ, որք եկեալ են յարևելից կողմանէ զամենեսեան զնոսա փութով ի տեղիս իւրեանց առաքեսցէ», սակայն արիեստավորական զանգվածի մի մասը մայրաքաղաքի պարսպի շինարարության պատրվակով մնացել է տեղում⁷⁸⁷: Բայրամ փաշան մայիսի 19-ից իրագործել է հրամանը և «զամենեսեան արտորեաց ի քաղաքէն զեկեալսն յարևելից կողմանէ և ցրուեաց ընդ երեսս երկրի...: Որ ոմանք ի լերինս և ոմանք ի գեղորէս, ոմանք ի ծերպս վիմաց և ոմանք հետիյոտս շրջելով մինչ զի դադարք գտանիցեն...»⁷⁸⁸: Այս վկայությունը ցույց է տալիս վերաբնակեցման անկանոնությունը:

Հակառակ պատկերն է գրանցվում օսմանյան բանակի՝ Արևելյան Հայաստան ներխուժելուց հետո: Մարտիրոս քահանան Օրդուբադի Փառակա գյուղում 1638 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում հաղորդում է, որ 1635 թ. օսմանյան զորքերի կողմից Երևանի պաշարման ժամանակ Արարատյան երկրից «ոմանք փախուցեալ ի լերինս և բլուրս շրջէին, ոմանք ի խորափիստ վիմաց և... այլք ի գլուխ բարձրաբերձ լեռանց ելեալ խորշակահարք և կիզեալք ի տօթոյ արեգականն, զի թերևս կարիցեն զինքեանս ապրեցուցանել»⁷⁸⁹: Գրիչը շարունակում է, որ սուլթանի նահանջող զորքերից հետո սուննի մահմեդականներին ժողոված Շապան անունով մեկը հարձակվում է Նախիջևանի գավառի վրա, «զոմանս սրախողխող արարեալ և զայլսն ձերբակալ արարեալ հանդերձ աւարօ առեալ էանց ի Կարնոյ քա-

⁷⁸⁷ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 593: Հակոբ Ակնցին 1637 թ. հիշատակարանում նույնությամբ կրկնում է այս տեղեկությունը (տե՛ս նույն տեղում, հիշ. № 1004):

⁷⁸⁸ Նույն տեղում:

⁷⁸⁹ Նույն տեղում, էջ 741-742:

ղաք...»⁷⁹⁰: Երևանի բերդի գրավումից հետո սուլթանն անցել է Երասխը և շարժվել հարավ, որտեղ դենբելլի և այլ աշիրեթներից մյուս կողմն է փոխադրել մոտ հազար օբա (քոչվորական ընտանիք)՝ հրամայելով բնակեցնել նրանց Երզնկայի, Դերջանի և Բասենի «անմարդաբնակ ու ավերված վայրերում»⁷⁹¹: Այնուհետև սուլթանը քանդել է Չորսի, Խոյի, Մարանդի բերդերը, հրամայել ծառերը կտրել և այգիները փչացնել⁷⁹²: Հատկանշական է, որ Երևանի գրավումից հետո Թավրիզ արշավելիս օսմանյան բանակը տեսել է, որ Խոյի դաշտի 10 գյուղերի բնակիչներ փախել են, և հրո ճարակ են դարձրել դրանք⁷⁹³: Քյաթիբ Չելեբին, հենվելով Շարաֆ խանի տեղեկությունների վրա, դենբելի աշիրեթը դաշտաբնակ է համարում և գրում. «Երբ 1045 (1635) թվականին... օսմանյան սուլթան Մուրադ խանը, գրավելով Երևանը, ուղղվել է դեպի Թավրիզ և իջևանել Արաս (Երասխ – Մ.Մ.) գետի ափին, Դենբելի աշիրեթից 500 տուն, Շարուրի նահիյեի բնակիչներից մոտ 300 տուն և Փեսիանի հասարակությունից որոշ քանակությամբ տներ [սուլթանից] յուրթ էին խնդրել: Այս պատճառով Դենբելի [աշիրեթը] տեղափոխվեց Երզնկայի սանջակը, Շարուրի ռայաները՝ Թերջանի կազան, իսկ Փեսյանը՝ Բասեն: Հրաման տրվեց նաև այդ աշիրեթներին տեղավորել և վերաբնակեցնել ավերակ վայրերում և անբնակ գյուղերում: Մուլքեր ունեցողներին տրվեցին սանջակ և էմիրություն, իսկ աշիրեթի երևելիներին՝ առանձին թիմարներ և զեամեթներ»⁷⁹⁴: Փաստորեն, 1635-1636 թթ. թուրք-պարսկական պատերազմական գործողություն-

⁷⁹⁰ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 742: Գրիչը տեղեկացնում է նաև, որ Երևանի հայ բնակչությունը զոհեր է ունեցել պարսկական բանակի կողմից Երևանի պաշարման և ետգրավման ժամանակ:

⁷⁹¹ «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 110-111:

⁷⁹² Տե՛ս նույն տեղում, էջ 111:

⁷⁹³ Տե՛ս նույն տեղում, էջ 161:

⁷⁹⁴ Նույն տեղում, էջ 39:

ներն ուղեկցվել են ոչ միայն հայ բնակչության միգրացիոն գործընթացներով, այլև օտար էթնիկական տարրի՝ Հայաստանի կենտրոնական շրջաններում վերաբնակեցմամբ:

1635 թ. և հաջորդող տարիներին պատերազմական գործողությունների արհավիրքների մասին հիշատակություններ կան բազմաթիվ սկզբնաղբյուրներում: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ Երևանի համար 1635-1636 թթ. մղված թուրք-պարսկական մարտերն ահավոր ավերածությունների հանգեցրին Երևանում, Էջմիածնում և Արարատյան կուսակալության գավառներում⁷⁹⁵: Հաճախակի է թալանի նկարագրությունը: Ըստ մի հիշատակարանի՝ 1636-1637 թթ. սուլթան Մուրադը «արար բազում աւար ի գաւառս Հայոց»⁷⁹⁶, իսկ Շամախիի Սադիան գյուղում 1636 թ. գրված հիշատակարանի համաձայն՝ նույն թվին Երևանի համար մարտերից հետո «Էլն որ կոչի ուլուս, դարձան ի սարերուն, և անկան ի վերայ գեօղօրէիցն և թալանեցին, և բազում աւերութիւն արարին...»⁷⁹⁷: Պատերազմական գործողություններում օգտագործվել է նաև հայ բնակչության ներուժը: Գողթան գավառում գրված Շարակնոցի հիշատակարանում ասվում է, որ 1636 թ. շահ Սեֆիի՝ Երևանի ուղղությամբ պատասխան արշավանքին մասնակցել են «բազում արս քրիստոնէից»⁷⁹⁸: Շարունակում են հանդիպել արտագաղթի և գերեվարությունների հիշատակություններ: Օտարության մեջ 1637 թ. Ավետարան նորոգող Ստեփանոս երեցը հաղորդում է, որ ինքը Թալին գյուղից է, հարազատներից զրկված է, ունեցվածքը՝ թալանված, որովհետև օսմանյան բանակը «զմեզ արմատախիլ արար ի բնական գաւառէն

⁷⁹⁵ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 260-261:

⁷⁹⁶ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 680:

⁷⁹⁷ Նույն տեղում, էջ 860:

⁷⁹⁸ Նույն տեղում:

մերմէ և ի հայրական ժառանգութենէ»⁷⁹⁹: Գրիգոր Դարանաղցին էլ ներկայացնում է զանգվածային գերեվարության մի դրվագ. «Դարձեալ յայսմ եւ թուին ՌԶԷ (1638) կրկին զԵրևան և զըջակա գաւառքն գերեցուց տաթարն, այլ յորժամ թագաւորն գնաց անհուն զօրօք դեպի կողմն Պաղտատու, հրաման արար տաթար խանին ամենայն զօրօքն գնալ ի յԱրզրումն, իսկ տէր Արզրումին Քենան փաշան զօրագլուխ լիցի ամենայն զօրաց ընդ հաւաքելոցն, զի միաբանութեամբ գնասցին ի վերայ Երևանու գաւառացն և գերեցցեն առհասարակ զամենայն հայք և զտաճկահաւատսն, և զամենայն անասունք զորս գտցեն՝ յաւարի առցեն, որպէս և արարին իսկ»⁸⁰⁰:

Ռազմական գործողությունների ժամանակ հաճախ են հանդիպում հացահատիկի թանկացման մասին հիշատակությունները: 1635 թ. Մշո Ս. Կարապետ վանքում (Գլակավանքում) գրված հիշատակարանում Կարապետ գրիչը գանգատվում է հացի թանկացումից⁸⁰¹: Նույն կերպ Բասենի Պատիժվան գյուղում 1636 թ. գրված հիշատակարանում Մկրտիչ երեցը խոսում է Վանի նահանգում գարու թանկացման մասին⁸⁰²:

Բաղդադի գրավումից հետո՝ 1639 թ. մայիսի 17-ին, Կասրե Շիրինի մոտ օսմանյան Ջեհաբ (Ջուհաբ) գլխավոր շտաբում օսմանյան մեծ վեզիր Քեմենքեշ Կարա փաշան և պարսից դես-

⁷⁹⁹ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 704:

⁸⁰⁰ Գրիգոր Դարանաղցի, էջ 578: 1630-ական թթ. Էվլիյա Չելեբին նշում է, որ Ստամբուլի Թավուք-բագար թաղամասում էսիր-բագար (ստրուկների շուկա) անունով ստրկավաճառական շուկա կար, որտեղ ստրկավաճառների թիվը մոտ 2 հազար էր (տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 36): Այս ահռելի թիվը հնարավորություն է տալիս հասկանալ, որ Օսմանյան կայսրությունում ստրկավաճառությունը, որ սնուցվում էր պատերազմների ժամանակ զանգվածային գերեվարություններից, ահռելի ծավալների էր հասել:

⁸⁰¹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 627:

⁸⁰² Տե՛ս նույն տեղում, էջ 639:

պան Սարուխանը հաշտության պայմանագիր կնքեցին⁸⁰³: Սրանով Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև տևական խաղաղություն հաստատվեց տարածաշրջանում⁸⁰⁴:

Այսպիսով, ավարտվում է թուրք-պարսկական պատերազմների շուրջ մեկ և կես դարյա ժամանակահատվածը, որն արհավիրք դարձավ Հայաստանի զարգացման ճանապարհին: 1640-ական թթ. պահպանվում է պատերազմների հետևանքների զգալի ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների վրա, որոնց առանձին դրվագներ ներկայացված են սույն աշխատանքի հաջորդ ենթագլխում:

2.5. Էթնոժողովրդագրական գործընթացները և բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը (առանձին վարչամիավորների օրինակով)

17-րդ դարի առաջին կեսին թուրք-պարսկական պատերազմների ժամանակ էթնոժողովրդագրական տարբեր հարցերի արդեն անդրադարձել ենք աշխատանքի նախորդ ենթագլուխներում: Այժմ ներկայացնենք նշված ժամանակահատվածում Հայաստանի տարբեր շրջաններում էթնիկական տեղաշարժերը

⁸⁰³ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 114; **Mantran R.**, Storia dell'impero ottomano, Lecce: Argo, 1999, էջ 256:

⁸⁰⁴ Հետաքրքիր է, որ թուրք-պարսկական պատերազմներից զատ հայ բնակչությունը 1620-ական թթ. տուժել է նաև ռուս կազակների և վրացական բանակի հարձակումներից: Այսպես, Մարզվանում ընդօրինակված Բժշկարանի 1626 թ. հիշատակարանում ստացողը նշում է, որ նախկինում բնակվել է Սամսունում, և ռուսների ավերիչ արշավանքից հետո ստիպված են եղել զանգվածներով տեղաշարժվել Մարզվան (տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 205): Դադիվանքում 1626 թ. հիշատակարանում Վարդան երեցը հաղորդում է, որ վրաց բանակը Գանձակում պարսկական կայազորի դեմ արշավելիս ասպատակել է Գետաշենը, գերեվարել «հայք և թուրք ի միասին. և զձեռն անկեալն զոմն սպանին, զոմն վիրաւորեցին և բազումս գերի տարան որ անթիւ, շատ աւերս ած ի վերայ աշխարհիս» (նույն տեղում, էջ 206):

և կրոնադավանական փոխակերպումները՝ փորձելով վերհանել Հայաստանի էթնոօրոլորդագրական ընդհանուր բնութագիրը:

Սկզբնաղբյուրներում մեծ թիվ են կազմում Հարավային Հայաստանում քրդական իշխանությունների մասին հիշատակությունները: Դրանց մեջ առանձնակի տեղ են գրավում օսմանյան կենտրոնական իշխանությունների շահերը ներկայացնող փաշաների հետ, ինչպես նաև միմյանց միջև բախումների նկարագրությունները: Խիզան քաղաքում ընդօրինակված Շարակնոցի 1601 թ. հիշատակարանում Սարգիս քահանան գրում է, որ 1600-1601 թթ. Վանի Ահմադ փաշան արշավում է Բաղեշի Շարաֆ խանի դեմ, որին օգնության է գալիս փեսան՝ Հզու քաղաքի Մահմատ բեկը: Խանի և նրա որդու սպանությունից հետո Ահմադ փաշան հեռանում է Վան, և անտերության պայմաններում «հեռացեալ բնակիչք նորա յամենայն տեղիս... և աստ ի քաղաքս Հիզան շատք և բազումք եկին յամենայն երկրէ և քաղաքէ, որ և եղև սղութիւն և պակասութիւն ամենայն իրաց», և հացահատիկի գինն էլ մի քանի անգամ բարձրացել է⁸⁰⁵: Ամիդում գրված ձեռագրի 1604 թ. հիշատակարանում գրիչ Բարսեղ վարդապետը միջքրդական բախման կապակցությամբ հաղորդում է, որ 1603 թ. «անօրէն քուրդն Բաղիշու նենգութեամբ սպանեալ զպարոն իւրեանց՝ Խալաֆ խան կոչեցեալ, որ էր յոյժ ողորմած և իրաւարար ի վերայ քրիստոնէից, որ և յայն սակս սպանաւ Բ (2) որդովն՝ Ուլուխան պեկին և Բադր պեկին: Եւ բազում սուք ածին երկրին Բաղիշու, և երկրիս Տարօնոյ»⁸⁰⁶:

Բիթլիսի քուրդ իշխողի կողմից քրդական մյուս իշխանությունների նկատմամբ գերիշխող դիրք հաստատելու ցանկությունն արտացոլվում է նաև այլ հիշատակարաններում: Ավլըն-

⁸⁰⁵ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 43-44:

⁸⁰⁶ Նույն տեղում, էջ 154-155:

դանց գյուղում և Խիզանում 1618 թ. գրված հիշատակարանում գրիչը գանգատվում է մահմեդականների միջև մարտերից. «Ջի անցեալ տարին պիղծ Միր Շարաւ առաքեաց զօրս իւր ի յերկիրս մեր, բազում չարիս գործեցին, թալան և թաղթան արարին»⁸⁰⁷: Հեղինակն ականատեսի աչքերով նկարագրում է իր հարազատ եկեղեցու թալանումն ու ավերումը, սրբությունների գերեվարումը, հոգևորականների տանջանքները, բռնի մահմեդականացման փորձը: Ի վերջո, գրիչն առանց ունեցվածքի տեղափոխվել է Խիզան⁸⁰⁸: Բաղեշի քրդերի գործողությունները երբեմն ստիպել են Վանի փաշային պատժիչ արշավանքներ կազմակերպել նրանց դեմ, ինչպես օրինակ՝ 1622 թ.⁸⁰⁹:

Քուրդ բեյերից շատերը (Սալմաստի բեյ Ղազին, նրա եղբայրներ Կոջի բեյն ու Սեյֆեդդինը, Միրփաշա օղլի շեյխ Հեյդարը, Նախիջևանում օգնած Ալաեդդին բեյի ուժերը, Մակուի տիրակալ Մուստաֆա բեյի վաշտը, Ջեյնալ բեյի վաշտը, Ալաշկերտի Կըլըջ բեյի վաշտը, Բարկուշատի բեյ Ֆերեհ Զորի վաշտը) եղել են շահ Աբաս Ա-ի՝ Երևան արշավող զորախմբի կազմում⁸¹⁰: Փաստորեն, քրդական ցեղերի ներսում քաղաքական կողմնորոշման հարցում միանշանակ մոտեցում չկար. մեծ մասը սա-

⁸⁰⁷ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 647-648:

⁸⁰⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 647: Ի դեպ, Վ. Հակոբյանը, մեջբերելով Մատենադարանի № 4126 ձեռագիրը (էջ 296բ), ծանոթագրում է, որ Միր Շարաֆը Բաղեշի քուրդ իշխողն էր, որին նախորդողի մասին 1591 թ. Գոմոց վանքում մի հիշատակարանում գրվում է. «Ի բռնակալութեան քաղաքիս Շարաֆին. բայց զնեղութիւն, զոր պայմ հասուցանեն Հայոց ազգին, ոչ կարեմք գրով արկանել»:

⁸⁰⁹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 71:

⁸¹⁰ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 86, 87: 1606 թ. մի հիշատակարանում ասվում է, որ օսմանյան բանակի կողմից Երևանի գրավումից հետո Մակուի սուլթանը բերդը կամովին հանձնել է թուրքերին, «յետոյ եկաւ քուրդն Մահմատբէկ՝ առեց աւար եւ գերի, սպանեց երէց, եպիսկոպոս, տանուտէր, կին եւ տղայ գերի վարեց, խիստ անողորմ բաներ արեց, քաշեց զամենայն ոչխար, աւեր ածեց, ... յերկրէ յերկիր եւ ջարդեցան ի դարիպոսին» («Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 216):

տարում էր օսմանյան ուժերին, թեև քիչ չէին նաև Սեֆյաններին աջակցող տարրերը:

17-րդ դարի առաջին կեսի սկզբնաղբյուրներում չեն դադարում քրդական ցեղերի տեղաշարժերի և ասպատակությունների մասին հիշատակությունները: Գրիգոր Դարանաղցին նշում է, որ 17-րդ դարի սկզբին քրդերը շարունակաբար ասպատակում էին և գերիներ տանում Բաղեշից, Արճեշից, Վանից և Ոստանից, հաճախ՝ նաև «զՊարսից տէրութեանն հայքն»⁸¹¹: Հալաճանքների և ավազակային հարձակումների մասին հիշատակումներ առկա են նաև մի շարք հիշատակարաններում: Չմշկաձագի Կարմիրվանքում ընդօրինակված Մաշտոցի 1623 թ. հիշատակարանում նշվում է, որ քուրդ աղայի հալաճանքների պայմաններում «կու կողոպտեն զազգն քրիստոնէիցն, ևս առաւել զվանականքն»՝ մինչև իսկ հարկադրելով ցրվելու⁸¹²: 1631 թ. հիշատակարանում գրիչ Գրիգոր քահանան գրում է, որ հայրը՝ Անտոնը, սպանվել է Բաբերդի գավառակում իր ուղեկից առևտրական խմբի հետ, և ավազակային հարձակումն իրականացրել է «Մարաց ազգն, որ է քուրդ»⁸¹³: 1635 թ. Երզնկայում, Դերջանում, Բասենում և Ալաշկերտում քրդական վերաբնակեցման մասին արդեն խոսել ենք նախորդ ենթագլխում: 17-րդ դարի կեսին Վանա լճի ավազանում քրդական իշխանություններում ծավալված պայքարի արդյունքում 1650 թ. «Բերկրու տէրն փախաւ առ Բաղիշու խանն»⁸¹⁴: 1651 թ. Վարազավանքի թալանի պատմությունը շարադրելիս Առաքել Դավրիժեցին նշում է, որ «մեծ իշխանն Մարաց» Եզդիշերը (Եզդանշիրը) Ջուլամերկի, Շատախի և այլ գա-

⁸¹¹ Տե՛ս Գրիգոր Դարանաղցի, էջ 298-299:

⁸¹² Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 84-85:

⁸¹³ Նույն տեղում, էջ 407:

⁸¹⁴ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 356:

վառների ու բերդերի տեր էր⁸¹⁵, իսկ Խոշաբի տերը Սուլեյման բեկն էր, ում հետ գործակցելով՝ ավագակախմբի ղեկավար Չոմարն ավիրեց վանքը⁸¹⁶: Չոմարին սպանելու դիմաց սուլթանը Սղերդի գավառը տվեց Եգդիշերին⁸¹⁷:

Ի տարբերություն քրդական տարրի, թյուրքական ցեղերի մասին հիշատակումներն ավելի սահմանափակ են, և դրանց մեծ մասն արդեն իսկ ներկայացրել ենք Ամիրգունա խանի Ժողովրդագրական քաղաքականության առաջին փուլի շրջանակներում: Թյուրքական տարրը գաղթել է, օրինակ, Լոռու գավառ շահ Աբաս Ա-ի հրամանով 1605 թ. և իր ցեղային բորչալու անունը տվել այն հարթությանը, որտեղ հաստատվել է⁸¹⁸: Շահ Աբասի բռնագաղթից հետո ղզլբաշ որոշ քոչվոր ցեղեր և շիա քրդերի փոքր ցեղախմբեր հաստատվել են ամայացած մի քանի գյուղերում և յայլաներ դրել ալայան մարգագետիններով հարուստ շրջաններում⁸¹⁹: Այդուհանդերձ, ինչպես իրավացիորեն կարծում է Պ. Չոբանյանը, սկզբնաղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ մահմեդական տարրը հիմնականում ներկայացված է եղել քաղաքային շրջաններում նախևառաջ կայազորների տեսքով⁸²⁰:

Էթնոժողովրդագրական գործընթացների հետ սերտորեն կապված էին Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի հարկային ու կրոնական քաղաքականությունները: Քրիստոնյա հպատակները, այդ թվում՝ հայերը, Սեֆյան պետության

⁸¹⁵ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 381:

⁸¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 381-387:

⁸¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 391:

⁸¹⁸ Տե՛ս Ամիրջանյան Հ., Լոռու գավառի էթնիկ պատկերը XVIII դ. վերջին և XIX դ. առաջին երեսնամյակին, «Հայոց պատմության հարցեր», հ. 10, Երևան, 2009, էջ 113:

⁸¹⁹ Տե՛ս Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 42-43:

⁸²⁰ Տե՛ս Чобанян П., Этноконфессиональные процессы в Закавказье XVII-XVIII вв., էջ 155-156:

ջիզիե գողար (գլխահարկ հատուցող) կամ զիմմի (քրիստոնյա պարտապան) համայնքներ (զիմմի ռայաթներ՝ քրիստոնյա իրավագուրկ հպատակներ) էին համարվում⁸²¹: Արևելյան Հայաստանում 1621-1622 թթ. ֆեթվայով ընդունված էր իմամ Ջաֆարի օրենքը, որի համաձայն՝ իսլամ ընդունածը տիրում էր քրիստոնյա հարազատների ունեցվածքին⁸²²: 1620-ական թթ. Երևանի Շեյխուլ-Իսլամի կողմից հրապարակված մի ֆեթվայում նկարագրվում է հայազգի Բաբայի թողած ժառանգության ճակատագրի հանգուցալուծումը: Քանզի նրա երկու եղբայրներից մեկը կրտսեր որդու՝ Շահնազարի հետ մուսուլման էր դարձել, ուստի ժառանգական բոլոր իրավունքների հարցում նրան առավելություն էր տրվում⁸²³: Դատական գործընթացի ժամանակ մուսուլմանի առավելության մասին վկայում է նաև Զաքարիա Քանաքեռցին՝ քանաքեռցի Միքայել եպիսկոպոսի և մի պարսիկի վեճը պատմելիս, երբ վերջինս կեղծ ցուցմունք է տալիս, ու վեճը հարթվում է միայն Կոտայքի մելիք Դավութի միջամտությամբ⁸²⁴: Վերջապես, 1650 թ. Փիլիպպոս Աղբակեցին շահ Աբաս Բ-ից հրովարտակ է ստացել, որով Հայ առաքելական եկեղեցուն վերապահվել է որոշումներ ընդունել հայերի միջև ծագած վեճերի պարագայում, իսկ մահմեդական շարիաթական դատարան կարելի էր դիմել այն դեպքում, երբ կողմերից մեկը մահմեդական էր⁸²⁵:

Հ. Փափազյանը, վկայակոչելով կալվածագրերում արձանագրված դեպքերը, կարծում է, որ ժառանգության համար հա-

⁸²¹ Տե՛ս **Փափազյան Հ.**, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի», թ. 3, Երևան, 1956, էջ 86-87:

⁸²² Տե՛ս «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հ. I, պր. II, վավ. 16:

⁸²³ Տե՛ս **Փափազյան Հ.**, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, էջ 89-91:

⁸²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 88-89:

⁸²⁵ Տե՛ս «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հ. I, պր. II, վավ. 41:

վատափոխության դեպքերը տարածված էին քաղաքային ունևոր խավի՝ խոջանների, առևտրա-արհեստավորական վերնախավի շրջանում⁸²⁶: Այդուհանդերձ, ինչպես նշում է Տավերնիեն, հայերն ամուր էին իրենց կրոնի նկատմամբ⁸²⁷: Նույնն է հաստատում 1654-1656 թթ. Պարսկաստանում և Օսմանյան կայսրությունում ճանապարհորդած շվեդ Մաթսոն Շիոփինգը՝ շեշտելով, որ հայերը քաջ հայտնի են իրենց մշտապես քրիստոնյա մնալով⁸²⁸: Հենց հավատի ամրության հետ են կապված նահատակությունների մի քանի դեպքերի հիշատակումները, օրինակ՝ 1617 թ. Ագուլիսում Անդրեաս քահանայի նահատակությունը շահ Աբասի կողմից⁸²⁹, 1642 թ. Նիկողայոսի սպանությունը Ամիրդում⁸³⁰, ինչպես նաև Ծոազատկի վեճերի առնչությամբ Արաբկիրի նահանգում 1634 թ. Մինաս քահանայի և Սեբաստիայի նահանգում Սեֆեր աշխարհականի գլխատումը⁸³¹:

Օսմանյան կայսրության հարկային համակարգում ևս կարևոր դեր ուներ ոչ մուսուլման հպատակներից գանձվող գլխահարկը⁸³²: Հայկական սկզբնաղբյուրները միաբերան գանգատվում են ծանր հարկապահանջությունից: Արճեշ քաղաքում ընդօրինակված Ավետարանի 1603 թ. հիշատակարանում նշվում է, որ «յամէն ամիս մի պարոն կու գայ ի Վանայ ի յԱրճեշ քաղաքիս,

⁸²⁶ Տե՛ս **Փափագյան Հ.**, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, էջ 91-92:

⁸²⁷ Տե՛ս **Դանեղյան Լ.**, Շահ-Աբբաս Ա-ի կրոնական հանդուրժողական քաղաքականության հարցի շուրջը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 4, Երևան, 1969, էջ 87:

⁸²⁸ Տե՛ս **Բախչինյան Ա.**, նշվ. աշխ., էջ 108:

⁸²⁹ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 480: Տե՛ս նաև «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 284; «Դիան պատմութեան Հայոց», գիրք Ժ, էջ 504:

⁸³⁰ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ 400-404:

⁸³¹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 540:

⁸³² Տե՛ս **Ավդալբեգյան Թ.**, Գլխահարկը Թուրքիայում XVII-XVIII դարերում հայ պատմագրության տվյալներով, «ՊԲՀ», 1959, թ. 1, էջ 175-186:

և խիստ կու նեղացուցանեն զժողովուրդս վասն հարկապահանջութեան»⁸³³: Գրիգոր Դարանաղցին մի հիշատակարանում ասում է, որ 1606 թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին խարաջի պատճառով ժողովուրդն աղետալի վիճակում հայտնվեց. «Բնաւ աշխարհքն Հայոց անբեցան, որ մեկ գեղ շէն չկայ, կալոտ կտրեցաւ, պարտատէրքն կու նեղեն և հարկառն զիր չի թողուր, յետի շունչն է հասեր վանքս Հայոց, օգնութիւնն յԱստուծոյ ժամանէ, թէ փրկէ յանհնարին նեղութեանցս այսոցիկ»⁸³⁴: Ոստանի Գաբենց վանքում 1615 թ. գրված հիշատակարանում Սահակ արքեպիսկոպոստը գրում է հետևյալ նախադասությունը. «...ի դառն և ի նեղ ժամանակիս, որ զարացեալ են այլազգիքն ի վերա քրիստոնէից հարկապահանջութեամբ»⁸³⁵: Այս ձևակերպումը կարելի է գտնել 1620-ական թթ. հիշատակարանների մեծ մասում:

1621 թ. Ամիդում Բժշկարանի հիշատակարանում նկարագրված է Ամիդի հայերի բողոքը խարաջից Մալաթիայի Ալի փաշային⁸³⁶: Ամիդի Ս. Կիրակոս եկեղեցում 1626 թ. գրված հիշատակարանում ծաղկող Մինասը նշում է, որ պարսիկների դեմ զորարշավի ժամանակ օսմանյան 100 հազարանոց բանակը կանգ է առել Ամիդում՝ «բազում նեղութիւն և հարկապահանջութիւն» հասցնելով քաղաքին⁸³⁷:

Պատերազմական արհավիրքներին հաճախ գումարվում էին սովը, երաշտը և համաճարակները: Խիզանում ընդօրինակված Մաշտոցի 1626 թ. հիշատակարանում Սարգիս գրիչը գանգատվում է ժամանակաշրջանից. «...ի դառն և ի չար ժամանակիս, զի յամէն դիմաց դառնութիւն և վիշտն պատեր է Հայոց

⁸³³ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 104-105:

⁸³⁴ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 54:

⁸³⁵ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 550-551:

⁸³⁶ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 24-25:

⁸³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 228-229, 238-239:

տառապեալ ազգս, զի յամէն դիմաց դառնութիւն, պատուհաս կուգա ի վերայ Հայոց ազգիս, սով, գերութիւն, մահ, շարժ և տապալումն, ժանկ, մարախ, թրթուր, ջորեակ, դալուկ, հեղեղ անթիւ և անհաշիւ, որ ոչ կարեմ ընդ գրով արկանել»⁸³⁸:

Հայ հեղինակների մոտ նկատելի է այն մտայնությունը, որ օտար իշխողների բոլոր հալածանքները, այդ թվում՝ հարկային քաղաքականությունը, ուղղված էին հայ բնակչության շահերի դեմ: Գրիչ Կիրակոսը Մոկաց Ավնդանց գյուղում Շարակնոցի 1627 թ. հիշատակարանում գանգատվում է՝ գրելով. «...նեղիմք ի հարկապահանջութենէ. քանզի ևս քան զևս սաստկանայ բռնութիւն և նեղութիւնս ի վերայ աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց մերոց»⁸³⁹: Նույն գյուղում Ավետիս երեցը 1631 թ. գանգատվում է ծանր հարկապահանջությունից «ի վերայ աշխարհիս ևս առաւել ազգիս Հայոց»⁸⁴⁰: Ամասիայում ընդօրինակված Շարակնոցի 1631 թ. հիշատակարանում Միքայել գրիչը գանգատվում է ծանր հարկապահանջությունից «ի վերայ ազգիս քրիստոնէից»⁸⁴¹: Շատախ գավառակի Մեյդան քաղաքում (ավելի ուշ՝ Շատխու Թաղ կամ ուղղակի Թաղ ավան) գրիչ Զաքարիան 1635 թ. Ճառընտիրի հիշատակարանում գանգատվում է՝ «բազմացան այլազգիքն և նեղեն հարկապահանջութեամբ զազգս մեր»⁸⁴²: 1639 թ. Հակոբ Կարնեցին իր ընդօրինակած Ժողովածուում ևս բողոքում է հայ ազգի նկատմամբ ծանր հարկապահանջությունից⁸⁴³:

⁸³⁸ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 233-235:

⁸³⁹ Նույն տեղում, էջ 252-253:

⁸⁴⁰ Նույն տեղում, էջ 439-440:

⁸⁴¹ Նույն տեղում, էջ 467:

⁸⁴² Նույն տեղում, էջ 620:

⁸⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 767-768:

Պատկերը չի փոխվում պատերազմի ավարտից հետո. Ավնդանց գյուղում 1642 թ. ընդօրինակված Շարակնոցի հիշատակարանում գրիչ Ավետիսը գանգատվում է հայ ժողովրդի վրա ծանրացող հարկապահանջությունից⁸⁴⁴, նույնը՝ 1649 թ. Խիզանում⁸⁴⁵: Փաստորեն, հայ բնակչության վրա դրված ծանր հարկերը քննարկվող ժամանակաշրջանում բնորոշ էին Արևմտյան Հայաստանի բոլոր վարչամիավորներին:

Օսմանյան իշխանությունների կողմից կրոնադավանական հիմքով հարկային քաղաքականության տարբերակվածությունից բացի՝ մահմեդականացման ուղի հարթելուն էին միտված նաև եկեղեցաշինության արգելակումը և եղած եկեղեցիների՝ մզկիթի վերածման դեպքերը: Վասպուրականի Շուշանից Կարմրավոր վանքում ընդօրինակված Հայսմավուրքի 1601 թ. հիշատակարանում խոսվում է Վարազա վանքի Ս. Աստվածածին եկեղեցու նորոգման ժամանակ խոջա Ատոմի վրա մի քանի տարի գործադրվող ճնշման մասին, քանզի «յայսմ ժամանակիս բազմացեալ էին անօրէնքն ի վերայ քրիստոնէից, որ ոչ թոյլ տային շինել զեկեղեցի»⁸⁴⁶: Սուլթանական ֆերմաններից պարզվում է, որ ոչ միայն նոր եկեղեցիների կառուցման, այլև վերանորոգման համար անհրաժեշտ էր կայսերական դիվանից թույլտվություն ստանալ: Էվլիա Չելեբին նույնիսկ հաղորդում է եկեղեցու՝ մզկիթի վերածման դեպք Կարսում⁸⁴⁷:

⁸⁴⁴ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Գ, էջ 74:

⁸⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 367:

⁸⁴⁶ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 25, 26-27:

⁸⁴⁷ Տե՛ս **Փափազյան Ա.**, Արևմտահայության վիճակը ըստ օսմանյան սուլթանական ֆերմանների (XVI-XVIII դդ.), էջ 126-127: Այս միտումն ավելի զգալի է դառնում միայն 17-րդ դարի երկրորդ կեսին, օրինակ՝ 1653 թ. Թոխատում եկեղեցիները փակվեցին, 2-ը՝ նույնիսկ մզկիթի վերածվեցին (տե՛ս **Երեմիա Չելչաի Քէ-օմիւրճեան**, Օրագրութիւն, հրատ.՝ Մ. արքեպս. Նշանեան, Երուսաղէմ, 1939, էջ 42), 1662 թ. Կոստանդնուպոլսում մի քանի եկեղեցիներ քանդվեցին, իսկ

Կասրե Շիրինի պայմանագրից հետո օսմանյան իշխանությունները որդեգրում են նույնիսկ զանգվածային մահմեդականացման քաղաքականությունը, ինչը հաստատվում է Հակոբ Կարնեցու վկայություններով ու Ղ. Ինճիճյանի տեղեկություններով: Բռնի մահմեդականացման արդյունքն այն էր, որ արդեն 18-րդ դարի առաջին կեսին վրաց արքայազն Վախուշտին Ճորոխի ավազանում թափուր է հիշատակում Տայքի քաղկեդոնական նշանավոր կենտրոններ Իշխանը, Փանակը, Օշքը, Խախուն⁸⁴⁸: Հակոբ Կարնեցին 1643 թ. աշխարհագրի արդյունքում Թորթումում խոսում է խարաջի պատճառով «վրացիների» (այսինքն՝ քաղկեդոնական հայերի) զանգվածային մահմեդականացման, իսկ հայերի՝ Հայ առաքելական եկեղեցուն հավատարիմ մնալու մասին⁸⁴⁹: Ինչ վերաբերում է Համշենին, ապա Խաչեքարոյի վիճակից մեզ է հասել 1630 թ. ընդօրինակված Սաղմոսարան⁸⁵⁰: Բացի այդ, Հ. Տաշյանը կարծում է, որ միայն 17-րդ դարի վերջից և 18-րդ դարի սկզբից է սկսել մահմեդականացման արագ գործընթացը Համշենում, քանի որ, ըստ նրա, շրջադարձային են եղել

Էրզրումում մի եկեղեցի մզկիթի վերածվեց (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 242): Հայերի նկատմամբ նպատակադրված-պլանային ազգայն-կրոնական հալածանքները Արևմտյան Հայաստանում լայն թափ են ստանում հենց 17-րդ դարի երկրորդ կեսից, որի ցայտուն ապացույցներից են Վանի փաշայի 1678 թ. հայերին մորուք թողնելու և 1680 թ. գղակ դնելու հրամանները՝ մի բան, որ արվել էր Կոստանդնուպոլսում դեռ մեկ հարյուրամյակ առաջ (տե՛ս նույն տեղում, էջ 357):

⁸⁴⁸ Տե՛ս **Ակոպով Ա.**, Կեսկեսներն Օսմանյան կայսրությունում XVII-XIX դարերում, «Հայկական լեռնաշխարհ. հանրապետական գիտաժողովի նյութեր», Երևան, 2015, էջ 482: «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», կազմեց՝ Լ. Մելիքսեթ-Քեկ, հ. 9 (ԺԸ-ԺԹ դդ.), Երևան, 1955, էջ 84-85:

⁸⁴⁹ Տե՛ս **Յակովբ Կարնեցի**, էջ 6, 18; **Տաշեան Յ.**, նշվ. աշխ., էջ 68:

⁸⁵⁰ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 396-398: 17-րդ դարում Էրզրումի մոտ ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանի լուսանցքային հատվածում մասնակիորեն պահպանվել է Համշենում մկրտության մի դրվագ (տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի», էջ 389):

1708-1710 թթ. Ղուռուֆ-օղլի Մեհմեդ մոլլայի կողմից 100 գյուղերի ավազների մահմեդականացումը և քրիստոնյաների մեծ զանգվածների հեռանալը Տրապիզոն ու Բաբերդ⁸⁵¹: Հ. Տաշյանը Հակոբ Կարնեցու կողմից Սպերում թուրքական իշխանությունների կողմից ավերված ու ամայացված բազում եկեղեցիների հիշատակումը համարում է վանական հողերի զավթման և բռնի մահմեդականացման քաղաքականության գլխավոր ազդակներից մեկը⁸⁵²: «Ով որ Յունաց, Հայոց եւ Վրաց մեջ իրեն կրօնին հաւատարիմ մնացած է, այսպէս ալ կը կոչուի միշտ. բայց ով որ մահմետական եղած է, Թուրքիոյ մէջ Օսմանլի հռչակեալ անունը կը կրէ», - մեջբերում է Քոխի խոսքերը Հ. Տաշյանը⁸⁵³: Ուսումնասիրողները հայ բնակչության բռնի մահմեդականացման գործընթաց են նկատել նաև Չըլդըրի (Ախալցխայի) Փերթքերք (Բերդագրակ) գավառակում⁸⁵⁴:

17-րդ դարի առաջին կեսին էթնոժողովրդագրության տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում կաթոլիկ համայնքների առկայությունը Հայաստանում: Դեռևս 14-րդ դարի երկրորդ կեսին Նախիջևանի Ճահուկ, Երնջակ և այլ գավառներում հաստատվել են կաթոլիկ քարոզիչներ, իսկ 1350 թ. Նախիջևանը դարձել է կաթոլիկական եպիսկոպոսության նստավայր: 16-րդ դարի վերջից առևտրական և քաղաքական կապերի ամրապնդման պայմաններում Պարսկաստանում և նրան ենթակա

⁸⁵¹ Տե՛ս **Տաշեան Յ.**, նշվ. աշխ., էջ 28-31, 34: Բ. Թողաքյանի կարծիքով՝ համաշենահայերի բռնի մահմեդականացման գործընթացը բուն Համշեն գավառում սկսել է 1630-ական թթ., ավելի մեծ թափով՝ 1650-1660-ական թթ., իսկ Սյուրմենե գավառակում՝ հաջորդ դարի սկզբին (տե՛ս **Թողաքյան Բ.**, էջեր համշենահայերի XVII-XVIII դարերի պատմությունից, «ՊԲՀ», 1972, թ. 4, էջ 133, 136):

⁸⁵² Տե՛ս **Տաշեան Յ.**, նշվ. աշխ., էջ 47-48:

⁸⁵³ Նույն տեղում, էջ 55-56:

⁸⁵⁴ Տե՛ս **Եսայան Ջ.**, Հայոց տեղանունները. թուրքական այլափոխումներ, Երևան, 2014, էջ 28:

Արևելյան Հայաստանում ակտիվանում է եվրոպացի կաթոլիկ միսիոներների գործունեությունը: Շահ Աբաս Ա-ն Իսպանիայից եկած քարոզիչներին գործունեության ազատություն է տվել հայերի շրջանում: Կաթոլիկ դպրոցներ են բացվել Նախիջևանի Ապարաններ, Ճահուկ և այլ գյուղերում: Հայ ազգային լեզենդի զարթոնքի պայմաններում 17-րդ դարի սկզբին Նախիջևանի, Երնջակի և Ճահուկի շրջաններում կաթոլիկական քարոզչության հետևանքով դավանափոխ եղած հայերի թիվը 19 հազար էր (1830 տուն) 3 քաղաքներում և 12 գյուղերում⁸⁵⁵ Ռիկոյի և Տավերնիեի տվյալներով ունենալով 10 գործող եկեղեցիներ⁸⁵⁶: Նախիջևանի կաթոլիկ հայերի համար կաթոլիկ եկեղեցին շահական արքունիքից արտոնություններ էր ստացել, ինչը լրացուցիչ խթան էր կաթոլիկացմանը զարկ տալու համար, սակայն 17-րդ դարի կեսերից խաս (պետական) բնակավայրերի բնակչության մի մասը, համաձայն Ք. Կոստիկյանի խմբավորած նյութերի, մահմեդականություն է ընդունում, մի մասը՝ վերադառնում Հայ առաքելական եկեղեցի, մի մասն էլ՝ արտագաղթում⁸⁵⁷: Պորտու-

⁸⁵⁵ Տե՛ս **Հակոբյան Տ.**, Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (XVII-XVIII դդ.), «Արևելագիտական ժողովածու», հ. 1, Երևան, 1960, էջ 267: 19 հազար հայ կաթոլիկների թիվը ներկայացնում է Նախիջևանի ունիթորների արքեպիսկոպոս Ազարիա Ֆրիտոնը Հռոմ ներկայացրած հաշվետվության մեջ, իսկ Սեֆյան Պարսկաստանում դիվանագիտական հանձնարարություն իրականացնող Պետրոս Պետիկը Նախիջևանի Ապարաններ գյուղում հիշատակում է 300 տուն հայ կաթոլիկներ (տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 387):

⁸⁵⁶ Տե՛ս **Բայբուրդյան Ա.**, XVII դարում Արևելյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության պատմությունից, «ՊԲՀ», 1989, թ. 2, էջ 147-157: Թեմին ենթակա գյուղերի թվում էին Քոնան, Ապարանները, Սալթաղը, Այրակունիսը, Խոշկաշենը, Ճահուկը, Շահապոնքը:

⁸⁵⁷ Երևանի նահանգում, Գանձակում, Արցախում և Պարսկահայքում համայնքների ձևավորումը տեղի է ունեցել ավելի ուշ՝ 17-րդ դարի վերջին (տե՛ս **Կոստիկյան Ք.**, Կաթոլիկական քարոզչությունը Իրանում և հայ իրականությունը, «Մեր ծավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 21, Երևան, 2002, էջ 200-218):

գալացի միսիոներ Անտոնիո դե Գոուվեայի ուղղակի և Նախիջևանի ունիթոր Ավգուստինոս Բաջեցու անուղղակի վկայությամբ՝ շահ Աբասը կաթոլիկ հայերի մի մասին ազատել է բռնի տեղահանությունից և թույլ տվել մնալ հարազատ բնակավայրերում: Հռոմից ուղարկված Անխել Մարիա Չիտտադինիի կազմած զեկուցագրի համաձայն՝ 1617 թ. Նախիջևանի գավառի կաթոլիկ 10 գյուղերում հաշվվում էր մոտ 305 կաթոլիկ ընտանիք, այդ թվում՝ Քոնայում՝ 1, Սալթաղում՝ 2, Գանձակում՝ 4 ընտանիք, և սա այն դեպքում, երբ բռնագաղթից առաջ՝ 1601 թ., Քոնայում կար 70, Սալթաղում՝ 120, Գանձակում՝ 70 տուն հայ կաթոլիկ⁸⁵⁸: Մ. Կարապետյանը չափազանցություն է համարում Չիտտադինիյի մեկ այլ զեկույցում նշված 40470 հայ կաթոլիկների թիվը⁸⁵⁹: Համաձայնվելով Մ. Կարապետյանի տեսակետի հետ՝ կարծում ենք, որ սա կարող է լինել հայ քրիստոնյաների ընդհանուր թիվը, քանի որ հենց այս թվականին է Իբրահիմ Փեչևհի հիշատակում 30 հազար հայերի գերեվարումը Նախիջևանից⁸⁶⁰:

Նախիջևանի հայ կաթոլիկական համայնքների հետագա աշխուժացումը կապվում է Օգոստինոս Բաջեցու գործունեության հետ: 1629 թ. նա ընտրվել է Նախիջևանի երկրամասի արքեպիսկոպոս, 1631 թ. եկել Նախիջևան և 1632 թ. Ապարաններում կաթոլիկ դպրոց հիմնել⁸⁶¹: Սակայն 1636 թ. Մուրթուզա փաշան

⁸⁵⁸ Տե՛ս **Կարապետեան Մ.**, Հայ կաթողիկե թեմը և էթնոդասնական գործընթացները Նախիջևանում XVII-XVIII դարերում, «Նախիջևանի Հայոց վարժարանը և Հռոմը», Վենետիկ, 2000, էջ 7-8; **Փանոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 53:

⁸⁵⁹ Տե՛ս **Կարապետեան Մ.**, Հայ կաթողիկե թեմը..., էջ 3:

⁸⁶⁰ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Ա, էջ 56:

⁸⁶¹ Տե՛ս **Բայբուրդյան Ա.**, XVII դարում Արևելյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության պատմությունից, էջ 147-157: Առաքել Դավրիժեցին Մեծ սուրբունից հետո ս. Հռիփսիմեի նշխարների գերեվարության պատմությունը ներկայացնելիս նշում է, որ նշխարները թալանած «ֆրանկ» երկու պատրիկները գնում են Ապարաններ «գիղն Ֆռանկաց» (տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, էջ

320 գերի տարավ գավառից, ներխուժեց Ապարաններ, և սպանվածների ու գերեվարվածների ընդհանուր թիվը 1500 էր⁸⁶²: Այդուհանդերձ, 1640 թ. մի հիշատակարանում «Ֆրայ» Օգոստինոս արքեպիսկոպոսը հայտնում է, որ ապրիլի 5-ին սկսել են Ճահուկի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու շինարարությունը, թվարկում ևս 49 մարդկանց, ովքեր եկեղեցու շինարարության համար գումար են ներդրել⁸⁶³: Փաստորեն, հայ կաթոլիկ համայնքի կյանքը վերակազմավորվում է 1630-1650-ական թթ. Օգոստինոս Բաջեցու շնորհիվ, թեև Իմամ Զաֆարի օրենքի գործադրումը զարկ է տալիս հայ կաթոլիկների շրջանում մահմեդականություն ընդունելու բուռն գործընթացին, ինչի մասին են վկայում կաթոլիկ հոգևորականների՝ արդեն 1630-ական թթ. և հետագա տասնամյակների զեկուցագրերը⁸⁶⁴: Գործընթացն ավելի մեծ թափ է ստացել 1650-ական թթ. երկրորդ կեսին, և 17-րդ դարի կեսերին Նախիջևանի հայ կաթոլիկների թիվը 5-7 հազար էր⁸⁶⁵: Այդուհանդերձ, Նախիջևանի կաթոլիկ հայերի մահմեդականացումը զանգվածային բնույթ սկսեց կրել միայն 17-րդ դարի վերջից մինչև 18-րդ դարի կեսերը: Այս մասին են խոսում Ղ. Ալիշանի և կաթողիկոս Ղազար Ա Զահկեցու (1737-1751) տվյալները: Վերջինս հաղորդում է, որ Նախիջևանի Սալիթաղ, Քոնա և Կեծուկ գյուղերի բնակչությունն ամբողջությամբ «դար-

172): Նա կաթոլիկական է համարում նաև Ապրակունիս գյուղը (տե՛ս նույն տեղում, էջ 178): Ապարանների մասին տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 369:

⁸⁶² Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 196: Հմմտ. «Ժամանակագրություն ընդհանուր պատմության» (ծեռ. № 7841), Համառոտ բիբլիոգրաֆիա՝ Հայկական ՍՍԴՄ Մատենադարանի գրչագիր մանր ժամանակագրությունների, հրատ.՝ Ա. Աբրահամյան, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», թ. 1, Երևան, 1941, էջ 224-225:

⁸⁶³ Տե՛ս «Հայերեն ծեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 789-790:

⁸⁶⁴ Տե՛ս **Կարապետեան Մ.**, Հայ կաթողիկե թեմը..., էջ 5-8:

⁸⁶⁵ Տե՛ս Նույն տեղում, էջ 3, 5-8:

ձան ի կրօնս պարսից», իսկ Ապրակունիս, Շահբունիս, Խոշկաշեն և Ապարաներ գյուղերում՝ բնակիչների մեծ մասը⁸⁶⁶:

18-րդ դարի իրադարձությունների համատեքստից կաթոլիկացման տարածման միտումներին նայելիս կարևոր օջախ է Ախալցխան: Կ. Ղաֆադարյանի կարծիքով՝ 17-րդ դարում հայերի մի մասը թուրքական հալածանքները մեղմելու համար կաթոլիկություն է ընդունել, դարձել վրացախոս, վրացիների մի մասն էլ մահմեդականություն է ընդունել⁸⁶⁷: Ախալցխայի Զարեհնու Ս. Նշան եկեղեցուն տրված Ավետարանի 1619 թ. հիշատակարանում թվարկված անձնանունները (Յեայլա, Սիրամարգ, Գուլբագե, Էլպագե, Գոչբագե, Նուրբագե, Յայլաբագե, Գուլբահար)⁸⁶⁸ և եկեղեցու՝ երկար ժամանակ ավերված լինելուց հետո նորոգման փաստը ցույց են տալիս, որ այստեղ երկար ժամանակ քաղկեդոնականացման միտում է եղել, սակայն անգամ վրացականացված անուններով հայերը պահպանել են հավատարմությունն իրենց եկեղեցուն: Մի Ավետարանի ստացման 1607 թ. հիշատակարանում էլ Ախալցխա քաղաքից «հայրկազանց ազգեն և զարմից քրիստոնէից» ոմն Մաքանդար թվարկում է 6 զավակներին՝ Գուլո, Գուլարդուխ, Գուլնթոբ, Գուլարխան, Եայգունդմ, հանգուցյալ Նաթ⁸⁶⁹: Այստեղ ևս նկատելի է վրացական ազդեցությունը, սակայն ստացողի էթնիկական և կրոնական բնորոշումներն ամեն ինչ ասում են: 18-րդ դարի երկրորդ կեսի հեղինակ Վախուշտին 1660-ական թթ. Սամցխե-Կլարջեթիում տեղի ունեցող իրադարձությունները նկարագրելիս գրում է, որ Ախալցխայում

⁸⁶⁶ Տե՛ս **Ղազար վրդ. Զահկեցի**, Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 334:

⁸⁶⁷ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, Նյութեր Ախալցխայի հայ համայնքի պատմության վերաբերյալ, «ՊԲՀ», 1967, թ. 1, էջ 117-118:

⁸⁶⁸ «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 687:

⁸⁶⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 262:

ապրում են մուսուլմաններ, հայեր, հրեաներ և փոքրաթիվ մես-խեր, ընդ որում՝ Սամցխեի գյուղացիները մեծ ճնշումների արդյունքում շարունակում են մահմեդականություն ընդունել⁸⁷⁰։ Պ. Չոբանյանը իրավացիորեն 18-րդ դար է տանում Ախալցխայի նահանգում մահմեդականացման գործընթացը⁸⁷¹։ Մելիքսեթ-Բեկը հրատարակել է Ախալցխայի հայ և վրաց կաթոլիկների մկրտության մի մատյան, որտեղ գրանցումները 1762-1792 թթ. միջակայքում են, ավելին՝ հավաքածուում հայ կաթոլիկներին առնչվող բոլոր ձեռագրերը 18-րդ դարի են⁸⁷², ուստիև թե՛ կաթոլիկացման և թե՛ մահմեդականացման գործընթացները տեղի են ունեցել գերազանցապես 18-րդ դարում։

Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանում իրականացվող ժողովրդագրական քաղաքականության ուղեգիծը խիստ ընդգծված ձևով տարածքի յուրացմանն է ուղղվում Կասրե Շիրինի պայմանագրից հետո։ Հենց այս ժամանակահատվածից է արմատանում ոչ միայն իսլամացման, այլև հայկական տարրը «չնկատելու» քաղաքականությունը, ինչն արտահայտվում է նաև թուրք պատմագիրների երկերում։ Ինչպես իրավացիորեն պնդում է Լ. Սահակյանը, հենվելով օսմանյան Մյունեջջիմ Բաշի և Քյաթիբ Չելեբի պատմիչների տեղեկությունների ու 16-րդ դարում «Իսլամական աշխարհացույց»-ի վրա, 17-րդ դարում Հայաստանի տարածքի համար «Արևելյան Անատոլիա» տերմինը դեռևս չի կիրառվել, և նույնիսկ պաշտոնապես գիտակցվել ու ընդունվել է «Էրմենիստան» (Հայաստան) զավթված երկրի գոյության փաստը՝ հաճախ դրա մեջ տեղավորելով ան-

⁸⁷⁰ Տե՛ս **Чобанян П.**, Этноконфессиональные процессы в Закавказье XVII-XVIII вв., էջ 154-155։

⁸⁷¹ Տե՛ս «Հայոց պատմություն», հ. III, գ. I, էջ 82-83։

⁸⁷² Տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի», էջ 402-403, 407-408։

գամ Կիլիկիան՝ որպես Փոքր Հայաստան: Քյաթիբ Չելեբին Արաս (Երասխ) գետը նկարագրելիս նույնիսկ գրում է, որ այն գտնվում է «Արմենիա երկրի արևելյան սահմանում»⁸⁷³: Սրանով նա, փաստորեն, ընդունում է, որ Արաքսից արևմուտք ընկած հողերը Հայաստանի արևմտյան մասն են: Քյաթիբ Չելեբին, որ իր «Զիհան նյումա» երկն ավարտել է հաշտության պայմանագրից ոչ շատ ուշ՝ 1648 թ.⁸⁷⁴, Հայաստանի համար նշում է, որ «այդ շրջանների մարդիկ բաժանվում են երկու խմբի. մի մասը պատկանում է Ախթամարին, մյուսը՝ հիշյալ Ուչ Քիլիսեին (իմա՝ Ս. Էջմիածնին – Մ.Մ.)»⁸⁷⁵: Փաստորեն, ի տարբերություն, օրինակ՝ Էվլիյա Չելեբին, որ իր ուղեգրություններում ամեն կերպ աշխատում էր արձանագրել մահմեդական փոքրամասնություններին՝ արդյունքում մեծամասնության տպավորություն ստեղծելով, Քյաթիբ Չելեբին անուղղակիորեն, բայց և ակնհայտորեն ընդունում է Հայաստանի տարածքում հայ բնակչության մեծամասնության փաստը: Նրա երկի 41-րդ գլուխը նույնիսկ վերնագրված է «Արմենիայի երկրի մասին»⁸⁷⁶, որտեղ փորձել է ցույց տալ Հայաստանի սահմանները՝ նշելով, որ ժամանակին հայերը պետություն են ունեցել, և զգալի անորոշությամբ հանգում է նրան, որ իր ժամանակներում Մեծ Հայաստան պետք է համարել Վանի և Էրզրումի նահանգները (մի քանի տող հետո թվարկման մեջ ավելացնելով նաև Կարսը), իսկ Փոքր Հայաստան՝ Ադանայի և Մարաշի նահանգները⁸⁷⁷: Մեր կարծիքով՝ Քյաթիբ Չելեբիի նման եզրահանգումը ոչ այնքան պատմական զեղծարարության, որքան առկա էթնոժողովրդագրական իրավիճակից է

⁸⁷³ «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 19:

⁸⁷⁴ Նույն տեղում, էջ 9:

⁸⁷⁵ Նույն տեղում, էջ 26-27:

⁸⁷⁶ Նույն տեղում, էջ 29:

⁸⁷⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 29-30:

բխել, և այս 5 նահանգները նա միանշանակորեն ընդունել է որպես Հայաստան, որովհետև այդ ժամանակ հայերն այնտեղ գերակշիռ մեծամասնություն են կազմել: Նա նաև խոսում է Վանի նահանգում գավառների սահմանների հաճախակի փոփոխությունների մասին⁸⁷⁸, ինչը պետք է պայմանավորված լիներ քրդական ցեղերի տեղաշարժերով ու միջցեղային բախումներով, որոնց մասին հաղորդում է Առաքել Դավրիժեցին: Էթնիկական խմբերի ակտիվ տեղաշարժերը բնորոշ են եղել Օսմանյան կայսրությանը և Պարսկաստանին մինչև իսկ 19-րդ դար, ընդ որում՝ 1670-ական թթ. Օսմանյան կայսրությունում վարչատարածքային վերափոխումները կայունանում են⁸⁷⁹, ինչը վկայությունն է այն հանգամանքի, որ բնակչությունն աստիճանաբար սկսել է մշտական բնակություն հաստատել իր վարչամիավորի սահմաններում, սակայն 18-րդ դարում այս ժամանակավոր անդորրը օսմանյան կենտրոնական իշխանությունների թուլացման պատճառով խաթարվել է և աչքի ընկել քրդական տարրի նոր տեղաշարժերով:

Հատկանշական է, որ Վանի նահանգի 1680-ական թթ. մի հարկացուցակում հանրագումարի են բերված 196784 ռայաթներ⁸⁸⁰: Չմոռանալով, որ օսմանյան հարկացուցակները կազմվում էին չափահաս տղամարդկանց ցուցակագրմամբ (չհաշված ծերերին՝ մոտ 5 %) ու հաշվի առնելով ուշմիջնադարյան հասարակությունում երեխաների՝ բնակչության շուրջ 40 % կազմելը, ստանում ենք, որ Վանի նահանգի ռայաթ բնակչությունը, կանայք/տղամարդիկ 1.07 հարաբերակցությամբ, պետք է ավելի

⁸⁷⁸ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 30:

⁸⁷⁹ Տե՛ս **Անասյան Հ.**, 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 12-17:

⁸⁸⁰ Տե՛ս **Փափազյան Հ.**, Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Վանի էյալեթին վերաբերող օսմանյան դիվանական վավերագրերը, էջ 276:

քան 740 հազար լինելը: Առաջին հայացքից խիստ չափազանցված թվացող այս թվի մեջ պետք է դիտարկել Բիթլիսի ապագա նահանգը ևս՝ ընդգրկելով Պարսկաստանի հետ սահմանից մինչև Դիարբեքի շահանգ ահռելի տարածությունը: Այս թվի մեջ պետք է դիտարկել ոչ միայն գերակշիռ մեծամասնությունը կազմող հայերին, այլև մի քանի տասնյակ հազար ասորիներին ու շուրջ հազար հրեաներին ու գնչուներին:

17-րդ դարի առաջին կեսին ամենահայախոճ վարչամիավորներից էր Էրզրումի նահանգը: Ա. Մելքոնյանի հաշվարկով՝ 19-րդ դարի սկզբին Էրզրումի նահանգն ունեցել է ավելի քան 400 հազար հայ բնակչություն⁸⁸¹: Քանի որ 17-րդ դարի կեսերին Հակոբ Կարնեցու տեղեկություններում Էրզրումի նահանգը շատ ավելի մեծ տարածք էր զբաղեցնում, քան 19-րդ դարի սկզբին, ուրեմն այն պետք է բնակչության ավելի մեծ թիվ ունենար: 17-րդ դարի թուրք հեղինակների վկայություններից պարզվում է, որ Էրզրումի նահանգում սկսում էր աճել օտար, հատկապես՝ քրդական էթնիկ տարրի տեսակարար կշիռը: Էվլիա Չելեբիի նկարագրությունից երևում է 1640-ական թթ. քրդական ցեղերի շարունակական տեղաշարժ հյուսիս՝ հասնելով մինչև Էրզրումի նահանգ⁸⁸²: Սակայն նրանք մշտական բնակություն չէին հաստատում, քանի որ Հակոբ Կարնեցին քրդերի համար, որպես բնորոշ, օգտագործում է «յեայլանի» (քոչվոր, ոչ մշտաբնակ) բառը⁸⁸³: 17-18-րդ դարերում շարունակվել է քրդերի ներհոսքը Էրզրումի նահանգ, ինչի հետևանքով, ըստ Ղ. Ինճիճյանի, առանձին

⁸⁸¹ Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Օսմանյան կայսրության ժողովրդագրական քաղաքականությունը որպես ցեղասպանության դրսևորում ըստ Էրզրումի և Ախալցխայի նահանգների օրինակների, էջ 44; **Նույնի**, Էրզրում, էջ 115-117:

⁸⁸² Տե՛ս **Акопов Г.**, Курды и курдский вопрос в турецкой историографии, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 5, Երևան, 1970, էջ 383-384:

⁸⁸³ Տե՛ս **Յակովբ Կարնեցի**, էջ 24:

գավառներում (Կամախ, Քդի և այլն) արդեն 18-րդ դարում քուրդ բեյեր էին իշխում: Նրանք մեծաթիվ էին հատկապես Բյուրակնյան լեռների արոտավայրային գոտում⁸⁸⁴: Չուտ հայաբնակ Հին Քդին 1616 թ. երկրաշարժից ավերվել է, և 16-րդ դարի վերջից մինչև 19-րդ դարն դատարկված բնակավայրերում աստիճանաբար բնակություն են հաստատել նաև քրդեր ու թուրքեր⁸⁸⁵:

Ըստ Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկի՝ 17-րդ դարի կեսին Էրզրումի նահանգն ընդգրկել է մի մեծ տարածք, որը, մոտավոր հաշվարկով, կազմում էր առնվազն 65 հազար քառակուսի կիլոմետր⁸⁸⁶: Հեղինակի տվյալների համաձայն՝ Էրզրումի նահանգի բնակչության գերակշիռ մեծամասնությունը հայերն էին, և սա այն դեպքում, երբ 17-րդ դարի սկզբին նահանգի արևելյան մասը ենթարկվել է շահ Աբաս Ա-ի սանձազերծած բռնագաղթին: Հակոբ Կարնեցու հիշատակած 23 վարչամիավորներից 7-ում (Ղըզըլջան, Դերջան, Դարանաղյաց երկիր, Սպեր, Իշխանանիստ ձոր, Խախտյաց երկիր, Թաքման) ապրում էին գերակշիռ մեծամասնությամբ (հեղինակի բնորոշմամբ՝ բովանդակ բնակչությունը) հայեր, 4-ում՝ հայեր և քրդեր (Լակզի ձոր, Մանազկերտ, Ապահունյաց երկիր, Վարդո), 2-ում (Ղարա-յազի, Խալիյազի)՝ միայն քրդեր, 1-ում՝ գերազանցապես հայեր,

⁸⁸⁴ Տե՛ս **Ինճիճեան Ղ.**, էջ 64, 101-102, 106-107, 109, 158: Ըստ Էվլիյա Չելեբիի՝ Բյուրակնյան յայլան 7 ամիս ազատված էր ձյունից և ուներ հարող 70 բերքառատ դաշտեր: Յայլայից օգտվում էին զազա, լոլո, իզո, եզդի, խալիթի, փիքվանի, շեկակի, քիքի, փեյանի և մորքի քուրդ աշիրեթները, որոնք լեռ էին բարձրանում մի քանի անգամ և Էրզրումի փաշային յայլայի տուրք վճարում (տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 172-173):

⁸⁸⁵ Տե՛ս **Հակոբյան Թ.**, Պատմական Հայաստանի քաղաքները, էջ 249-250: Տե՛ս նաև **Սրապեան Լ.**, Քդի (Տեղագրական եւ Ազգագրական), մատենաշար «Ապրիլեան Եղեռն», թիւ 1, Անթիլիաս, 1960:

⁸⁸⁶ Հաշվարկը կատարել ենք աշխարհագրոցյան Մեծ Հայքի աշխարհների գավառների հետ համապատասխանությամբ, որոնց գումարվել են նաև Մեծ Հայքից դուրս, բայց Էրզրումի նահանգի մեջ մտնող տարածքները:

մասամբ՝ թուրքեր (Վերին Բասեն), 1-ում՝ հայեր և թուրքեր (Գալլ գետի երկիր), 1-ում՝ հիմնականում հայեր, մասամբ՝ թուրքեր և հույներ (Շեռփանի երկիր), 1-ում՝ հույներ (Կուկվանցու ձոր), 1-ում՝ հիմնականում հայեր, մասամբ՝ հույներ (Շանախո ձոր), 1-ում՝ հայեր և «վրացիներ» (Մամրվան), իսկ 4-ում (Եկեղյաց երկիր, Ալաշկերտ, Ներքին Բասեն, Խորձյան) ընդհանրապես չի նշվում էթնիկական կազմը⁸⁸⁷, սակայն մենք, դիմելով Ղ. Ինճիճյանի հաղորդած տեղեկությունների օգնությանը, պարզել ենք, որ այդ գավառներում ևս հայերը մեծամասնություն են կազմել:

Հատկանշական է, որ Հակոբ Կարնեցին չի նշում բնակչության էթնիկական կազմը այն գավառներում, որտեղ հայերը գերակշիռ մեծամասնություն էին կազմում նույնիսկ հաջորդ դարում: Նման պարագայում ուշմիջնադարյան մտածողությամբ առաջնորդվող Հակոբ Կարնեցին հարկ չի համարել իր համար բնական իրավիճակը հատուկ շեշտել: Սկզբնաղբյուրների համադրությունից պարզ է դառնում, որ 23 գավառներից 20-ում հայկական էթնիկ տարրի գերակշռող առկայությունը հաստատուն էր: Հայերի կողքին մեծ թիվ էին սկսում կազմել ոչ մշտաբնակ քրդերը, ապրում էին նաև ավելի փոքրաթիվ թուրքեր, հույներ: Զգալի թիվ էին կազմում ուղղափառ-քաղկեդոնական դավանանքի հետևորդ հայերը, որոնց շրջանում իսլամացման գործընթաց էր սկսվել:

Հատկանշական է, որ Հակոբ Կարնեցին հստակ տարբերում է հայ քաղկեդոնականներին էթնիկ հույներից և վրացիներից, քանի որ Իշխանանիստ ձորի բնակիչների մասին խոսելիս նա նշում է, որ կեսը հայ (այսինքն՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդներ) էին, մյուս կեսը՝ կրոնով

⁸⁸⁷ Տե՛ս **Յակովբ Կարնեցի**, էջ 10, 14-24:

վրացի, բայց հայախոս⁸⁸⁸: Եվ երբ 1643 թ. Զաֆար փաշան աշխարհագիր անցկացրեց և ծանր գլխահարկ սահմանեց, «վրացիները», այսինքն՝ քաղկեդոնական հայերը, մահմեդական դարձան:

Հակոբ Կարնեցու անգնահատելի երկի կողքին տեղեկություններ են պարունակում նաև հայկական ու թուրքական այլ աղբյուրներ: Առաքել Դավրիժեցին, որ Հակոբ Կարնեցուն գրեթե զուգահեռաբար է շարադրել իր երկը, Բասենին հարևան Խալիյազի գավառի մասին խոսելիս նշում է, «որ այժմս անբնակ է»⁸⁸⁹: Փոխարենը Սիմեոն Երևանցի կաթողիկոսը 1765 թ. Էրզրումի նահանգի Բայազետի փաշայության տարածքում հիշատակում է շուրջ 140 հայաբնակ բնակավայր⁸⁹⁰: Ծռազատկի առիթով մի հիշատակարանում անուղղակիորեն խոսվում է Էրզրումում և Գյումուշխանայում փոքր թվով հունադավանների առկայության մասին⁸⁹¹, իսկ Խործյանում աստիճանաբար սկսում է հաստատվել քրդական տարր⁸⁹²: Արդեն 18-րդ դարում լրջորեն նոսրանում է Մանազկերտի հայությունը: Ըստ Ղ. Ինճիճյանի՝ 17-18-րդ դարերում Մանազկերտի (Մալազկերտի) գավառում 360 հայկական գյուղ կար, 1760-ական թթ.՝ 100, իսկ 18-րդ դարի վերջին՝ 20⁸⁹³: Նա խոսում է նաև Կամախում թուրքացած հայերի մասին⁸⁹⁴: Այդուհանդերձ, հարկ չենք համարում ներկայացնել Ղ. Ինճիճյանի

⁸⁸⁸ Տե՛ս **Յակովբ Կարնեցի**, էջ 18:

⁸⁸⁹ **Առաքել Դավրիժեցի**, էջ 90-91:

⁸⁹⁰ Տե՛ս **Սիմեոն Երևանցի**, էջ 64-65, 476-477:

⁸⁹¹ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 542: Ըստ Քյաթիբ Չելեբիի՝ Գյումուշխանի արծաթի հանքավայրերի մոտ «այժմ» (1640-ական թթ.) մեծ և բարեշեն գյուղաքաղաք է կառուցվել, որի բնակիչները խոսել են հունարեն (տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 42-43):

⁸⁹² Տե՛ս նույն տեղում, էջ 45:

⁸⁹³ Տե՛ս **Ինճիճեան Ղ.**, էջ 112:

⁸⁹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 102:

մնացյալ տվյալները, քանզի դրանք բխում են ոչ թե 17-րդ դարի, այլ 18-րդ դարի և 19-րդ դարի սկզբի իրականությունից:

Էրզրումի նահանգի մասին ժողովրդագրական տեսանկյունից հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում թուրք հեղինակներ Քյաթիբ Չելեբին և Էվլիյա Չելեբին: Քյաթիբ Չելեբին շեշտում է Դերջանի և Բաբերդի՝ ցանքատարածություններով և հացահատիկով, ինչպես նաև արոտավայրերով, բամբակով, խաղողով և պտուղներով հարուստ լինելու հանգամանքը, շեշտում մեղվապահությունը և պտղաբուծությունը Սպերում, իսկ Կարինի դաշտը, որ օսմանյան բանակի ձմեռանոց էր, այնքան բերքառատ էր, որ ոչ միայն լիովին բավարարում էր բնակչությանը և կայազորին, այլև նույնիսկ երբեմն չէին հասցնում հավաքել բերքը⁸⁹⁵: Քյաթիբ Չելեբիի այս տեղեկություններն ավելի մանրամասնորեն հաստատվում են Հակոբ Կարնեցու երկի տվյալներով: Սննդամթերքի այսօրինակ առատության հնարավորությունները բնակչության բնական աճի համար հարմար միջավայր էին ապահովում: Ուշագրավ է, որ Էվլիյա Չելեբին ևս հաղորդում է, որ Էրզրումի դաշտը բերքառատ էր և ուներ հարյուրավոր բարեշեն գյուղեր, ընդ որում՝ 7 տեսակի ցորեն կար, որ հավաքում էին 60 օրվա ընթացքում⁸⁹⁶: Հացահատիկի և պտղի առաջին շտեմարանը Երզնկայի դաշտն էր, երկրորդը՝ Թորթումը⁸⁹⁷: Բնակչությունը առողջակազմ է, եղանակի բարենպաստ լինելու շնորհիվ մարդիկ երկար են ապրում:

Քյաթիբ Չելեբին նաև անդրադառնում է քրդական ցեղերի տարածմանը Էրզրումի նահանգում: Նրա տեղեկությունները ևս հաստատում են Հակոբ Կարնեցու այն մոտեցումը, որ քրդերը մշտաբնակ չէին, այլ սեզոնային տեղաշարժեր էին կատարում:

⁸⁹⁵ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 43-45, 47:

⁸⁹⁶ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 59, 62:

⁸⁹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 128, 135:

Այսպես, նա հաղորդում է, որ Խնուսի բերդում մեծ մասը փեսյանի ցեղի քուրդ էր, և միաժամանակ նշում, որ ամռանն այստեղ էին գալիս հարյուր հազարավոր մարդիկ⁸⁹⁸: Սա, փաստորեն, քոչվոր անասնապահների սեզոնային միգրացիա էր: Թուրք հեղինակը քրդական փեսյան աշիրեթի ներկայացուցիչներ է հիշատակում Քղի և Ղուզուջան գավառներում, իսկ Բայազետի գավառն օջաքլըքի իրավունքով փեսյանի աշիրեթի քրդական ցեղից Փահլևան բեյին էր պատկանում⁸⁹⁹: Սիփան լեռան լանջին բնակվող բաթերքի քրդական աշիրեթին Քյաթիբ Չելեբին ոգևորությամբ անվանում է շատ քաջարի ցեղեր, որոնցից Սեֆյանները վախենում են⁹⁰⁰: Սա հերթական անգամ հաստատում է էթնիկական պատմեշ ստեղծելու՝ օսմանյան քաղաքականությունը:

Թուրք ուղեգիր Էվլիյա Չելեբիի տեղեկություններն ավելի շատ են պարուրված օսմանյան պետական նախակադապարներով: Այդուհանդերձ, նրա հիշատակություններում ևս կան արժեքավոր տեղեկություններ: Նա Շապին-Գարահիսարի սահմաններից սկսած հիշատակում է միջինը 150 տուն բնակչությամբ հայկական, ինչպես նաև խառը բնակչությամբ մի քանի գյուղեր⁹⁰¹: Այնուհետև Դերջանի դաշտը նկարագրելիս նա գրում է, որ հողը հերկելիս գյուղացիները գետնից մարդկանց ոսկորներ են գտնում, որովհետև այն ռազմադաշտ է եղել⁹⁰²:

Էրզրումի նահանգի հարկային համակարգի և հպատակների ռազմական պարտավորությունների նկարագրությունը Էվլիյա Չելեբիի կողմից ցույց է տալիս, որ օսմանյան իշխանություններն Արևմտյան Հայաստանում ամրացնում էին ռազմա-

⁸⁹⁸ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 45:

⁸⁹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 45-46:

⁹⁰⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 46: Արարատ լեռը նա ևս յայլա է անվանում:

⁹⁰¹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 56:

⁹⁰² Տե՛ս նույն տեղում:

ավատատիրական սեփական համակարգը: Այդ իսկ պատճառով ուղեգիրը ներկայացնում է միջնաբերդում ամրացած կայազորները, որոնց պատճառով բերդերի բնակչության մեջ շարունակաբար հիշատակում է թուրքերի կամ քրդերի:

Ըստ Էվլիյա Չելեբիի՝ Էրզրումի արևելյան հատվածը հայաբնակ էր, հայերն ունեին 13 եկեղեցի⁹⁰³: Բասենի դաշտի Հասանկալայում և Շուշիքի (Շոշիկի) բերդում քուրդ բեյեր էին իշխում⁹⁰⁴: Խնուսի բերդում մահմուդի ցեղի 1200 տուն քրդեր էին ապրում, իսկ բեյի զինվորների թիվը 2000 էր⁹⁰⁵, ուստի մեկ տան հաշվարկով մոտ 1,7 զինվոր էր բաժին ընկնում: Էվլիյա Չելեբիի հաղորդմամբ՝ մինչև թուրք-պարսկական սահմանը Երասխ գետն անցնում էր հարյուրավոր գյուղերով⁹⁰⁶, ինչը խոսում է այն մասին, որ գետի բարեբեր հովիտը հասցրել էր վերականգնվել բռնագաղթից հետո: Թուրք ուղեգիրն իր ճամփորդությունների ժամանակ անցել է տարբեր վարչամիավորներում գտնվող մի քանի տասնյակ հայկական գյուղերով՝ յուրաքանչյուրում 100-500 բնակիչ նշելով: Նա ներկայացնում է նաև քաղաքների բնակչության թվի մասին տվյալներ՝ Բաբերդում՝ պարսպից ներս՝ մոտ 300 և պարսպից դուրս՝ մոտ 1000 տներ, Թորթումում՝ համապատասխանաբար 18 և 700, Երզնկայում՝ 200 և 1800, Շապին-Գարահիսարում՝ 70 և 1600, Մարզվանում՝ 4000⁹⁰⁷: Ըստ Էվլիյա Չելեբիի՝ Սուլեյման սուլթանի հրամանով Ահմեդ փաշան Թորթումի ուղղությամբ Դատանլի նահիեի 60 գյուղերից 45-ն ավերել է, քանի որ դրանք հրաժարվել են հպատակվել⁹⁰⁸: Փաստորեն,

⁹⁰³ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 61-63:

⁹⁰⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 65-66, 68:

⁹⁰⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 68:

⁹⁰⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 67: Էրզրումի նահանգն ուներ մոտ հարյուր նահիեներ (տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 41-42):

⁹⁰⁷ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 126, 128, 135-139:

⁹⁰⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 127:

Թորթումի գավառակում բնակավայրերի ցանցի խտության նվազումը նպաստավոր պայմաններ էր ստեղծում տեղի բնակչության մասնատման և մահմեդականացման համար, ինչը մենք տեսնում ենք Հակոբ Կարնեցու հիշատակություններում:

Էվլիյա Չելեբին բավականին մանրամասն է ներկայացնում Վանի նահանգի քրդական իշխանությունները՝ Բիթլիս, Հեքարի, Մահմուդի և Փինյանիշ: Բիթլիսը Վանի նահանգում առանձին հյուքյումեթ էր⁹⁰⁹: Քաղաքում ապրող քրիստոնյաների և արաբների գլխահարկը Վանի բանակի պահպանման ծախսերին էր ուղղվում, իսկ Մշո դաշտի գլխահարկը 1635 թ. Մուրադ սուլթանի կողմից շնորհվել էր խանին⁹¹⁰: Խանին ենթակա էին 70 աշիրեթներ ու ցեղեր⁹¹¹: Ուշագրավ է Էվլիյա Չելեբիի այն տեղեկությունը, որ Վանին ենթակա Բիթլիսի նահանգի մարդահամարով 43 հազար քրիստոնյա ռայաներ կային⁹¹², ինչը միայն հարկատու տղամարդկանց թիվն է արտացոլում: Նման պարագայում քրիստոնյա բնակչությունը պետք է կազմեր առնվազն 161 հազար մարդ:

Բիթլիսի գավառակն ուներ 17 նահիեներ (Մոտկան, Գյավառ, Գավաշ, Ձիրդախան ևն)⁹¹³: Ըստ Էվլիյա Չելեբիի՝ Բիթլիսի 10 հազար այգիներից լավագույնները պատկանում էին քրիստոնյաներին, ընդ որում՝ բոլորը 8 ամիս զբաղվում էին այգեգործու-

⁹⁰⁹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 198:

⁹¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 198, 206:

⁹¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 198:

⁹¹² Տե՛ս նույն տեղում, էջ 198-199: Թուրք հեղինակը բնակչության մասին խոսելիս գրում է, որ Բիթլիսն ուներ 40 հազար բնակիչ, որոնք ռուզիկի ցեղից էին, իսկ ռայաները ներկայացվում են դրանից հետո: Ոչ մուսուլման հպատակներին մահմեդականների հետ բնակչության կազմի մեջ չներկայացնելու այսօրինակ շուլինիստական մոտեցման մեջ է նաև թաքնված շատ դեպքերում հայկական կամ վրացական տարրի անտեսումը թուրք պատմագրի կողմից:

⁹¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 199:

թյամբ⁹¹⁴: Քյաթիբ Չելեբիի հաղորդմամբ էլ՝ Բիթլիսում տաք եղանակին 6 ամիս շարունակ այգեգործական աշխատանքներ էին կատարվում, ընդ որում՝ քաղաքի բնակիչների մեծ մասը հայեր էին⁹¹⁵: Մշո դաշտը հացառատ էր, «ռայաներն» ընդարձակ արոտավայրերի շնորհիվ շատ ոչխարներ ու գոմեշներ ունեին, «գյուղերում ամենուրեք ապրում են հայեր», և ըստ սուլթանական դավթարի՝ 4 հազար զիմմի (ոչ մահմեդական հպատակ) էր գրանցված⁹¹⁶:

Թուրք հեղինակներն ուշագրավ տեղեկություններ են հայտնում Վանի նահանգի քրդական այլ ցեղերի մասին ևս: Ըստ Քյաթիբ Չելեբիի՝ Ոստան քաղաքը գյուղի է վերածվել⁹¹⁷: Ըստ նրա՝ Խոյին մերձակա Սաքմանաբադ (Սոքմանավան) նահիեում ապրում էր դենբելի աշիրեթը, որի մեծ մասը սուննի մահմեդականություն ընդունած եզդիներ էին: Նրանց բեյերից ոմանք, թուրք հեղինակի հավաստմամբ, մինչև օսմանյան ներխուժումն իշխել են բուն Խոյում, իսկ Կոթուրի հովիտը, Էբկան և Օվաջըքի նահիեն, որ Նախիջևանի մարզում էին, ենթարկվել են նրանց, երբեմն՝ նաև հարևան այլ տարածքներ, սակայն հետո հալածվել են Սեֆյանների կողմից, և թեև օսմանյան իշխանությունների կողմից Էբկան, Չալդրանը, Սուլեյման Սարայը և Սաքմանաբադը տրվել են բեյերին, Չալդրանի նահիեն, ի վերջո, գավառի է վերածվել⁹¹⁸: Խոշաբ գյուղաքաղաքն էլ մահմուդի քուրդ բեյի օջաքլըքն ու հյուլքյումեթի կենտրոնն էր⁹¹⁹: Հաքքարիի

⁹¹⁴ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 202:

⁹¹⁵ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 33-36:

⁹¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 36:

⁹¹⁷ Նույն տեղում, էջ 38:

⁹¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 38-39:

⁹¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 39: Մահմուդիի հյուլքյումեթը Վանի արևելյան մասում էր՝ մինչև Կոթուրի բերդը, և նրան ենթարկվում էին 120 աշիրեթի բեյեր (տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 244):

քրդական հյուքյումեթը Վանի նահանգի Ոստանի նահիեից արևելք էր՝ շրջապատված Բիթլիսի հյուքյումեթով, Դիարբեքիրի քրդական սանջակներով, հարավից՝ Շեիրի-Չոր նահանգով և Մեհրանի հյուքյումեթով, իսկ Պարսկաստանի հետ արևելյան սահմանն անբնակ էր, քանի որ Կոթուրի հատվածը պայմանագրով անմարդաբնակ էր դարձվել⁹²⁰:

Էվլիյա Չելեբին Վանա լճի ավազանում հիշատակում է մեկ տասնյակից ավելի հայկական բարեշեն գյուղեր՝ յուրաքանչյուրը 50-300 բնակչությամբ: Քրդական իշխանության ներքո գտնվող քաղաքների պարագայում նա նշում է, որ նախկինում ավելի մեծ ու բարեշեն են եղել, քան իր ժամանակներում⁹²¹: Այդուհանդերձ, Վանի նահանգում միայն զեամեթ և թիմար տրված բարեշեն 700 գյուղեր կային⁹²²: Վանում նա հայկական 3 թաղ է հիշատակում, նշում, որ հայերը վաճառականներ են և բարեգործ, ընդ որում՝ բերդում ծառայող հայերը խարաջի փոխարեն պարտավոր էին նորոգել այն⁹²³: Սիփան լեռը նկարագրելիս թուրք ուղեգիրն ասում է. «Ամեն տարի թուրքմեն, խալիփ, չեքվանի, զազա, լոլո, զիբարի, փեսանի, քյարքյարի ցեղերը, իրենց հարյուր հազարավոր կենդանիներով բարձրանում են այս լեռան բարձր գագաթը և ամառը այնտեղ անցկացնում»⁹²⁴: Ըստ նրա՝ Բերկրիի բնակիչները շեհբազի և ղազի-մահմուդի ցեղերի քրդեր էին⁹²⁵: Արճակ բերդը ևս մահմուդի բեյի իշխանության ներքո օջաքլըք էր⁹²⁶: Փինյանիշները ևս մահմուդի էին համարվում, ապրում էին

⁹²⁰ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 40:

⁹²¹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 215-216:

⁹²² Տե՛ս նույն տեղում, էջ 243:

⁹²³ Տե՛ս նույն տեղում, էջ 247:

⁹²⁴ Նույն տեղում, էջ 219:

⁹²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 224:

⁹²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 261:

պարսկական սահմանի երկայնքով՝ Մահմուդիից արևելք⁹²⁷: Արևելքում Բենի-Կոթուր, Բիրեդուսի (Բրադոստի, Բարադուստի), Ջոլանի, Դում-Դեմի (Ուրմիայի), Դունբուլի հյուքյումեթներն էին, որոնք Սուլեյմանի ջանքերով Վանին են հպատակվել, Թավրիզի գրավումից հետո միացվել Թավրիզի նահանգին, ապա վերադարձվել Վանի նահանգին, սակայն 1640 թ. պարսիկները Բենի-Կոթուր բերդում կայազոր են տեղակայել և հպատակեցրել սահմանակից 5 հյուքյումեթները⁹²⁸: 1654 թ. Բիթլիսի խանի և Մանազկերտի բեյի միջև վեճի ժամանակ հիշատակվում են խանին օգնող Դիարբեքիրի նահանգի Ճապաղջուրի, Չմշկաձագի և Հազոյի բեյերը, Վանի նահանգի Զրիկի (Զորկանի), Սղերդի, Կարկառի, Խիզանի և այլ բեյեր, իսկ Ադիլջևագի, Արճեշի և Մուշի բեյերը աջակցում են Մանազկերտի բեյին պաշտպանող Վանի փաշային⁹²⁹:

Քյաթիբ Չելեբին մանրամասն նկարագրում է Դիարբեքիրի նահանգի քրդական աշիրեթները, քրդական նահիեների շարքում հիշատակում Հիթեմի նահիեն, որի «բնակիչների մեծ մասը և ռայաները հայերն են», Շախի նահիեի բնակիչները ևս հայեր էին⁹³⁰: Էվլիյա Չելեբիի հաղորդմամբ՝ Արածանիի վրայի Ճապաղջրի կամրջով անցնում էին Բյուրակնյան լեռների յայլանների վրա գտնվող խալթի, չեքվանի, եզիդի, զազա, զեբարի, լուլո, իզուլի, շեքակի (շկակի) և քիքի աշիրեթները, որտեղ մոտ 200 հազար մարդ և հարյուր հազարավոր ոչխարներ կային⁹³¹: Այս տեղեկությունը հերթական անգամ հաստատում է այն փաստը, որ նշված ցեղախմբերը Արածանուց հյուսիս մշտաբնակ չեն եղել:

⁹²⁷ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 244:

⁹²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 244-245:

⁹²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 253, 255-256:

⁹³⁰ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 57:

⁹³¹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 167:

Թուրք հեղինակը նշում է, որ բեյի մարդիկ իրենց սանջակում տասանորդ էին հավաքում, իսկ յայլաներից իջնելիս դարձյալ «յայլայի նվեր» էին վերցնում⁹³², հետևաբար բնակչության աշխատավոր զանգվածը՝ քրիստոնյաները, ծանր դրության մեջ էին հայտնվում: Ըստ նրա՝ Գենճի բեյը նախկինում 3000, իսկ իր ժամանակ՝ 1000 զինվոր ուներ⁹³³, ինչը նշանակում է, որ քրդական բնակչության թիվը կրճատվել է:

Էվլիյա Չելեբին մանրամասն ներկայացնում է Դիարբեքի-րի քրդական յուրթուր-օջաքը կարգով ղեկավարվող 8 սանջակները և 5 հյուքյումեթները⁹³⁴: Ըստ նրա՝ Դիարբեքիի շրջակայքում ապրում էին քրդեր, թուրքմեններ, արաբներ, պարսիկներ, իսկ ռայաները հայեր էին⁹³⁵: Այստեղ հերթական անգամ նկատելի է թուրք հեղինակի այն շովինիստական մոտեցումը, որ հայերի թվարկումը բնակիչների շարքից դուրս է՝ ռայաների առանձին խմբում: Էվլիյա Չելեբին ընդհանուր առմամբ հաշվում է 6 հազար քուրդ աշիրեթներ և ցեղեր⁹³⁶: Սա ցույց է տալիս ոչ թե էթնիկական սկզբունքով ցեղաբաժանումը, այլ քրդերի ներէթնիկ ցեղային կառույցը քննարկվող ժամանակաշրջանում: Չնայած իր մոտեցումներին՝ Դիարբեքիի նահանգի գրեթե բոլոր վարչամիավորներում թուրք հեղինակը հայերենը թվարկում է ամենատարածված լեզուների շարքում⁹³⁷:

Ըստ Էվլիյա Չելեբիի՝ Կարսի նահանգի 10 կազաններից յուրաքանչյուրում կար 8 նահիե, իսկ Կարսի բերդում՝ մոտ 3 հազար տուն բնակչություն, և հացահատիկը առատ էր⁹³⁸: Այս տե-

⁹³² Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 167:

⁹³³ Տե՛ս նույն տեղում, էջ 167-168:

⁹³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 181-182:

⁹³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 186:

⁹³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 192:

⁹³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 264-265:

⁹³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 117-118:

ղեկությունը կարևոր է Ամասիայի պայմանագրից և շահ Աբասի բռնագաղթից խիստ տուժած այս վարչամիավորի համար:

Թոխատում, Մալաթիայում և Սեբաստիայում հայ բնակչությունը, ըստ Քյաթիր Չելեբիի և Էվլիյա Չելեբիի, զգալի թիվ էր կազմում⁹³⁹: Կըզըլ-Ըրմաքի (պատմ.՝ Հալիս) ավազանը, ըստ Քյաթիր Չելեբու նկարագրության, բավականին խիտ էր բնակեցված, և սննդի ու խմելու ջրի խնդիր չկար⁹⁴⁰: Նա նաև նշում է, որ Շահեկ լեռը (Ամասիայի, Նեոկեսարիայի և Ջանիկի միջև) թուրքմենական ցեղերի ամառային յայլանների շրջան էր⁹⁴¹: Էվլիյա Չելեբին գրում է, որ Սեբաստիայում հացահատիկն առատ է, նույնիսկ կարող է իրենից հարավ և արևմուտք ընկած նահանգները կերակրել⁹⁴²: Մալաթիան էլ աչքի էր ընկնում 7800 այգիներով, 600 բանջարանոցներով, 7 տեսակի հացահատիկով⁹⁴³:

Հետաքրքիր են թուրք հեղինակների տեղեկությունները նաև Արևելյան Հայաստանի մասին: Ըստ Էվլիյա Չելեբիի՝ Նախիջևանը Մուրադ Դ-ից հետո ավելի է բարեշինվել և 10.2 հազար տներ ուներ, իսկ Շորագյալը (պատմ.՝ Շիրակավանը կամ Երազգավորսը) հնում մեծ քաղաք է եղել, սակայն իր ժամանակ այնքան էլ չեն չէր⁹⁴⁴: Թուրք ուղեգիրն Արարատյան կուսակալության տարածքում հիշատակում է 200-800 տուն բնակչություն ունեցող մի քանի բնակավայրեր, օրինակ՝ Ապարանը (500 տուն)⁹⁴⁵: Քյաթիր Չելեբին Երևանի մոտ հիշատակում է հացահատիկի դաշտեր, պտղատու այգիներ, և նրա ձևակերպմամբ՝

⁹³⁹ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 66-67, 69-70; հ. Գ, էջ 157-158, 276-277:

⁹⁴⁰ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 68-69:

⁹⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 69:

⁹⁴² Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 154:

⁹⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 178:

⁹⁴⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 71-72, 80:

⁹⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 85-86, 123-124:

բերքառատ մի նահանգ է⁹⁴⁶: 17-րդ դարի կեսին Արարատյան կուսակալությունում սննդի մեծ հնարավորությունների և մարդաշատ բնակավայրերի հիշատակումը ցույց է տալիս, որ մեծ բռնագաղթից շուրջ կես դար անց վարչամիավորը հասցրել էր վերականգնել իր մարդկային ռեսուրսների զգալի մասը: Ինչ վերաբերում է Պարսկահայքին, ապա Խոյի և Չորսի գավառակներում կար 7 հազար տուն բնակչություն, ընդ որում՝ Խոյը 180 բարեշեն գյուղեր ուներ⁹⁴⁷:

Մի կողմ թողնելով թուրք ուղեգիրների տվյալները՝ անդրադառնանք Քաշաթաղում օտար էթնիկական ներթափանցումների խնդրին: Ա. Հակոբյանի կարծիքով՝ Քաշաթաղը մասնատվել է Քաշաթաղի և հյուսիսարևմտյան Ալբաուտ գավառների (մահալների) շահ Աբաս Ա-ի օրոք, քանի որ այդ ժամանակ լայն տարածում էր գտել քոչվոր ազնվականությանը զինվորական ծառայության դիմաց հողային տիրույթների կամ հարկային մասնակի իրավունքների շնորհումը: Բացի այդ, նա հավելում է, որ 1609 և 1620 թթ. շահական հրովարտակներով հաստատվել են Մելիք Հայկազ Բ-ի սեփականատիրական իրավունքները Քաշաթաղի և Կապանի մահալներում ունեցած կալվածքներում՝ պաշտպանելով նրան թուրք-պարսկական պատերազմում օսմանյան բանակի կողմն անցած քոչվոր ցեղերի ոտնձգություններից⁹⁴⁸: Հենվելով շահի պալատական պատմիչ Իսքանդար Մունշիի վկայությունների վրա՝ Հ. Փափագյանը ենթադրել է, որ Մելիք-Հայկազյանների թշնամիները «շահսևան» (շահին սիրող)

⁹⁴⁶ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, էջ 13, 14:

⁹⁴⁷ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 79-80:

⁹⁴⁸ Տե՛ս «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հ. I, պ. II, վավ. 15: Մելիք-Հայկազ Բ-ի օրոք աստիճանաբար զգալի են դարձել քոչվորական արշավանքները, որոնցից մեկի ժամանակ մելիքը նույնիսկ գերի է տարվել Գանձակ (տե՛ս **Հախվերդյան Ս.**, Ուրվագծեր Սյունիքի Քաշաթաղի մելիքության պատմությունից, «Հայոց պատմության հարցեր», հ. 9, Երևան, 2008, էջ 93):

հայտարարած ցեղերն էին, ուստի Ա. Հակոբյանն իր հերթին ենթադրել է, որ 1886 թ. ռուսական ծխական վիճակագրության ցուցակում Մինքենդի գյուղական հասարակության կենտրոն Շահսովարլու (արքա ձիավոր) անունը, որ չի նույնանում քրդական կամ թյուրքական որևէ ցեղանվան հետ, կարող է առաջացած լինել «շահսևան»-ի թյուրքական հորջորջումից⁹⁴⁹։ Թեև դժվար է համաձայնվել իմաստային տեսանկյունից խիստ տարբեր երկու բառերի զուգադրմամբ նման եզրահանգման հետ, սակայն ուշագրավն այն է, որ Ա. Հակոբյանը շեշտում է, թե տվյալ տարածք քոչվորները երկար ժամանակ ներթափանցում էին լոկ որպես սեզոնային արոտավայրեր⁹⁵⁰։ Այս առնչությամբ Պ. Չոբանյանը գտնում է, որ Զաքարիա Քանաքեռցու կողմից Քաշաթաղի Հոչիս գյուղի մոտ վրանային բնակություն ունեցող քրդերի հիշատակումը⁹⁵¹ (որը, ի դեպ, այդ գոտում նրանց առաջին հիշատակումն է) ցույց է տալիս, որ նրանք չէին վայելում պարսից իշխանությունների հովանավորությունը և մուտք չէին գործել Ծար⁹⁵²։ Ամիրգունա խանը խստորեն կանխել է քրդական ասպատակությունները Երևանի խանությունում, օրինակ՝ երբ Մասիսից հարավ բնակվող քրդական ցեղերը որոշել են ասպատակել Շարուրի դաշտը, նրանց սոսկալի հարված է հասցվել Թահմասպակուլիի կողմից, որը մինչ այդ անցել էր Գեղարքունիքով և Վայոց ձորով ու քրդերի չէր հանդիպել⁹⁵³։ 1691/1692 թ. Քաշաթաղի մելիք Հախնազարը մի շարք գյուղերի տանուտերերի հետ շարիաթական դատարանով կնքված համախոհական

⁹⁴⁹ Տե՛ս **Յակոբեան Ա.**, Հակարիի վերնահովտի նորայայտ վիճագրերը. Բ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 27, Երևան, 2009, էջ 238-240։

⁹⁵⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 240։

⁹⁵¹ Տե՛ս **Զաքարիա Քանաքեռցի**, էջ 95։

⁹⁵² Տե՛ս **Չոբանյան Պ.**, Քարվաճաղի էթնիկ դիմագծի հարցի շուրջ, էջ 226։

⁹⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 228։

դիմում է ներկայացրել պարսից արքունիք՝ տեղական բնակչության շահերը հողային վեճի ժամանակ պաշտպանելու համար: Այստեղ թվարկված գյուղերի (Հալաք, Բայանդուր, Վաղազաղուն (Վաղազին), Սուարանց, Ղուշչի, Մերիկ, Հարար, Աֆաթխար (Աղբաթխեր), Մինքենդ, Փուլ, Հոչաս (Հոչանց), Յալլուզդամ, Արավիս) քեդիստությաները հայեր էին (Անդրիաս, Ամիր Խաչեն, Մարտիրոս, Պողոս, Մելքում, Առաքել, Իսախան, Հակոբ, Պետրոս, Սարգիս, Գիքոր և այլք)⁹⁵⁴: 1730 թ. դեռևս հիշվում են Քաշաթաղի գավառի Եզնագոմեր, Խանածափ, Խազնավար (Խոզնավար), Հոչանց, Հակ, Միրիկ, Սպիտակաջուր, Քարագլուխ և այլ գյուղեր, իսկ Չրաղլու գյուղում, որ 19-րդ դարի վերջին հայաթափված էր, պահպանված 4 տապանաքարերից մեկը 1608 թ. է թվագրվում⁹⁵⁵: Պ. Չոբանյանի կարծիքով՝ քրդական և մահմեդական այլ տարրերի ներթափանցումը Քաշաթաղ և Արցախ զգալի չափեր է ընդունել 1730-1734 թթ. օսմանյան ռազմակալման շրջանում, ինչի մասին վկայում է Աբրահամ Կրետացին, և 19-րդ դարի առաջին քառորդում՝ միայն դարի կեսերին էթնիկական գերակշռություն ձեռք բերելով հայերի նկատմամբ⁹⁵⁶:

Օտար էթնիկական տարրի կողմից հայկական բնակավայրերի տարածքների զավթման շուրջ վեճեր տեղի են ունեցել նաև Արարատյան կուսակալությունում: Հ. Փափազյանը ներկայացնում է Կաթողիկոսական դիվանի մի խումբ վավերագրերում նկարագրված վեճեր թափառող քոչվոր ցեղերի և գյուղերի հայ բնակչության միջև, ինչպես օրինակ՝ 1650 թ. հայկական Բաթ-

⁹⁵⁴ Տե՛ս **Կոստիկյան Ք.**, Քաշաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 20, Երևան, 2001, էջ 168-175:

⁹⁵⁵ Տե՛ս **Յակոբեան Ա.**, նշվ. աշխ., էջ 240, 242:

⁹⁵⁶ Տե՛ս **Չոբանյան Պ.**, Քարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ, էջ 222, 227-228, 229:

ռինջ (այժմ՝ Ոսկեհատ, ՀՀ Արագածոտնի մարզ) գյուղի բնակիչները, օսմանյան տիրապետության շրջանում ստիպված էին եղել հեռանալ գյուղից, իսկ երբ ցանկանում էին վերադառնալ իրենց գյուղ, այստեղ հաստատված քոչվոր թարաքամաները (թուրքոման – Մ.Մ.) թույլ չէին տվել⁹⁵⁷։ Այսօրինակ փաստեր պարունակում են 17-րդ դարի վերջի և 18-րդ դարի սկզբի մի շարք վավերագրեր⁹⁵⁸։ Ըստ Հ. Փափագյանի՝ հենց այդ ժամանակ են Կարբիի, Ղրխբուլաղի, Վեդիի, Սուրմալուի և այլ մահալների գյուղերում հաստատվում ռազմավարից զրկված կիսանստակյաց տարրեր սաադլու, ալփավուֆ (ալբոուտ, ալփաուֆ), այրումլու, կազախլու (կաջար), աղջա-կոյունլու (աղկոյունլու կաջար), բալաթ, մուհամմադխանլու, հաջիկարալու (հաջիդարա) և քոչվոր այլ ցեղերից, ու հենց այդ գործընթացների արդյունքն էր Ի. Շոպենի արձանագրած էթնիկական իրավիճակը Հայկական մարզում Ռուսական կայսրության տիրապետության առաջին տարիներին (1830-ական թթ. սկզբին)⁹⁵⁹, ինչն արդեն մեր աշխատանքին չի առնչվում։ Հարկ է նշել, որ վարչամիավորի կենտրոն Երևանը 1647 թ. արդեն 2060 տուն⁹⁶⁰ (մոտ 3500 ընտանիք կամ 17-20 հազար մարդ)⁹⁶¹ բնակչություն ուներ։ Այդուհանդերձ, դեռևս նկատելի էին նաև շահ Աբասի բռնագաղթի հետևանքները։ Այսպես, Ամբերդի (Արագածոտն) գավառի Հաբենի գյուղի մասին խոսելիս Առաքել Դավրիժեցին նշում է, որ իր ժամանակներում այն ավերակ և անմարդաբնակ է, բայց «ի ժամանակս հարց մերոց էր շէն գիւղս յայս Յաբենի»⁹⁶²։

⁹⁵⁷ Տե՛ս **Փափագյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 42։

⁹⁵⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 42։

⁹⁵⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 42-43։ **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 599-602։

⁹⁶⁰ Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 85։

⁹⁶¹ Տե՛ս **Կարապետյան Մ.**, Երևանի բնակչության..., էջ 103։

⁹⁶² **Առաքել Դավրիժեցի**, էջ 249։

Արարատյան կուսակալությունում հայ բնակչության թվի մոտավոր գնահատման տեսանկյունից կարևոր է ուսումնասիրել քննվող ժամանակաշրջանին ամենից մոտ պաշտոնական որևէ վիճակագրություն: Սոֆիայում պահվող հետաքրքրական մի դավթար է ներկայացնում Հ. Փափագյանը, որտեղ ներկայացված է Օսմանյան կայսրության կողմից 1724 թ. նվաճված Երևանի նահանգում 1724-1726 թթ. անցկացված հաշվառման վիճակագրությունը⁹⁶³: Ներկայացված տվյալները հաշվարկելով՝ պարզում ենք, որ հավաքվել է ջիզիեի 28138 թուղթ, որից 14317-ը՝ Սուրմալուից, Արագածոտնից, Կոտայքից և Վայոց ձորից, իսկ մնացածը՝ Նախիջևանից և Շիրակի մի փոքր մասից⁹⁶⁴, այսինքն՝ հաշվառվել է գլխահարկ վճարող այդքան մարդ: Սա, փաստորեն, Երևանի խանության ոչ մահմեդական չափահաս տղամարդկանց թվի մի մասն է՝ առանց Գեղարքունիքի, ուր օսմանյան զորքերի արշավանքի ժամանակ փախել էր վարչամիավորի բնակչության մի մասը: Եթե հաշվի առնենք, որ երեխաները այդ ժամանակ, ինչպես նշել ենք սույն աշխատանքի նախորդ գլխում, բնակչության առնվազն 40 %-ն են կազմել, իսկ կյանքի միջին տևողությունը շատ մեծ չի եղել, ուստի ծերերին էլ խիստ մոտավոր համարենք բնակչության 5 %-ը, ապա ստացվում է, որ մեր ուշադրությանն է ներկայացված արական բնակչության կեսը: Փաստորեն, Երևանի խանության՝ վերը նշված հատվածում արական բնակչության թիվը պետք է շուրջ 51.2 հազար կազմեր,

⁹⁶³ Տե՛ս **Փափագյան Հ.**, Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը, «ՊԲՀ», 1984, թ. 3, էջ 195-214:

⁹⁶⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 199-200, 202: Հետաքրքիր է նաև լոկալ ցուցակների ուսումնասիրությունը, օրինակ՝ Վաղարշապատի 1725 և 1728 թթ. հարկացուցակներից առաջինում նշվում է 373 տուն, երկրորդում՝ 390 տուն (ամուսնացած տղամարդ), 126 ամուրի և 6 այրի, ընդհանուր՝ 522 (անվանացանկում՝ 511, տե՛ս **Փափագյան Հ.**, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի», 1960, թ. 5, էջ 439-441, 444):

ժողովրդագրական սկզբունքներից ելնելով՝ կանանց թիվն էլ մոտ 54.8 հազար, ուստի ոչ մահմեդական բնակչության առկա թիվը պետք է շուրջ 106 հազար լիներ⁹⁶⁵: Բնական է, որ կուսակալության ոչ մահմեդական բնակչության թիվը պետք է շատ ավելի մեծ լիներ՝ հաշվի առնելով հաշվառման մասնակի բնույթը և միգրացիայի հզոր ալիքը հաշվառման մեկնարկից ընդամենը մեկ տարի առաջ:

Ինչ վերաբերում է պատմագիտական գրականության մեջ երբեմն հանդիպող այն թեզին, թե իբր Աշոցքի տարածքում հայ բնակչությունը 17-րդ դարում տիրապետող չի եղել, ամբողջովին հերքվում է կրկին 1720-1730-ական թթ. սկզբնաղբյուրներով: 1723 թ. օսմանյան սերասկյարի և Ղայդուլլի նահիեի (Աշոցք գավառ) հայկական 31 գյուղերի քեդիստության միջև ստորագրվել է ինքնակամ հպատակության համաձայնագիր⁹⁶⁶: Հենց այս արարքի համար 1735 թ. Նադիր խանը դեպի Խորասան բռնագաղթի ենթարկեց Կարսի, Բայազետի և Կաղզվանի, Մամրվանի, Ջավախքի, Չըլդըրի և Ղայդուլլի 6 հազար հայերի, ընդ

⁹⁶⁵ 1725-1728 թթ. կազմվել է նաև Գանձակի նահանգի հարկացուցակը (տե՛ս **Barkan O.**, XV ve XVI inci ayarda Osmanlı İmparatorluğunda ziral ekonominin hukuki ve mali esasları, İstanbul, 1945, էջ 195-197):

⁹⁶⁶ Տե՛ս **Փափազյան Հ.**, Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային քաղաքականության վերաբերյալ, «Բանբեր Մատենադարանի», թ. 16, Երևան, 1994, էջ 197-198: Գյուղացանկը՝ Աղբուլաղ, Ջիգարաշեն, Թարքաշ, Վերին Օրթուլ, Ներքին Օրթուլ, Ղըզըլղոջ, Ղազանչի, Խանբուլաղ, Մելիք, Կուտի-չայ, Ղուկաս, Օքուսթաք, Դավազյոզ, Ալահվերդի, Ղըզըլղոջ, Քեշիշթափա, Կազանչի, Վալիքյանդ, Մըսըրքյանդ, Սարգիս, Թաթոս, Դադրասքյանդ, Վերին Ղվարզվար, Ներքին Ղվարդվար, Քուսիքյանդ, Դուրզլի, Ղազիքյանդ, Բուլաղքյանդ, Սուֆի, Բեկքյանդ, ընդ որում՝ քեդիստության անուններն ակնհայտորեն խոսում են հայկականության մասին՝ Մարտիրոս, Թորոս, Սարգիս, Գրիգոր և այլն (տե՛ս նույն տեղում, էջ 201-202):

որում Աբրահամ Կրետացին նշում է, որ Նարիմանը, Ջավախքը, Չըլդըրը և Ղալդուլին «էին բովանդակ ի մեր ազգէ»⁹⁶⁷:

Ամփոփելով քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի էթնոժողովրդագրական գործընթացների վերհանումը՝ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել 17-րդ դարի կեսերին Հայաստան ուղևորված ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեի ուշագրավ վկայությունը, որ Թոխաստից մինչև Թավրիզ ընդարձակ երկիրը բնակեցված էր հայերով ու նախկինում «Հայաստանի նահանգ» է կոչվել, և «պետք չէ զարմանալ, որ 50 հային ընկնում էր 1 մուսուլման»⁹⁶⁸:

Թուրք-պարսկական պատերազմների ժամանակաշրջանը ստիպում էր հայերին՝ կազմելու ազգային-ազատագրական պայքարի ծրագրեր, սակայն այդ ծրագրերում հստակորեն նշվում էր, որ Հայաստանի ազատագրությունը կարող է կատարվել միմիայն օտարերկրյա ռազմական միջամտությամբ: Փաստորեն, ազգային-ազատագրական պայքարի՝ ընտրված մարտավարությունը, որը չէր հենվում սեփական հնարավոր ռազմական ուժի վրա, հենց սկզբից ուտոպիական բնույթ էր կրում և, ըստ էության, ձախողված էր: Սակայն նման մարտավարության ամրագրումը կարելի է նախևառաջ համարել ժողովրդագրական գործընթացների արդյունք: Պատահական չէ, որ 17-րդ դարում Պարսկաստան այցելած պորտուգալացի հոգևորական Գոուվեան արձանագրում է հայ ազատագրական լեգենդի վերազարթոնք, ինչի համատեքստում հայերի՝ սեփական ազատագրական

⁹⁶⁷ Տե՛ս **Փափագյան Հ.**, Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային քաղաքականության վերաբերյալ, էջ 200: Բռնագաղթի ենթարկվեցին նաև թուրքալեզու ցեղեր Բարգուշատից:

⁹⁶⁸ Տե՛ս **Tavernier**, Les six voyages de Jean Baptiste Tavernier, en Turquie, en Perse et aux Indes, Paris, 1713, vol. I, էջ 39, 47-48 (հղումը տե՛ս՝ **Ալաօյաճեան Ա.**, Պատմություն հայ Կեսարիոյ, էջ 631; **Զուլալյան Մ.**, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ, էջ 104):

դերակատարության մասին խոսք չկար⁹⁶⁹, այսինքն՝ տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացները, ստեղծված էթնիկական խայտաբղետ միջավայրը և այդ ամենի արդյունքում մելիքական իշխանությունների զգալի քայքայվածությունը որոշակի փոփոխություններ են մտցրել հայերի էթնիկական հոգեբանության մեջ՝ առաջ բերելով սեփական սոցիումի համընդհանուր ներուժի նկատմամբ անվստահություն: Պատահական չէ, որ 1570-1650-ական թթ. Հայաստանի ազատագրության գաղափարը վերարձարծելու ուղղությամբ լուրջ քայլ չի կատարվել, իսկ 17-րդ դարի երրորդ քառորդին մշակված ազատագրական նախաձեռնություններում ու ծրագրերում դիտարկվում էր ոչ միայն արևմտաեվրոպական տերությունների, այլ նաև Օսմանյան կայսրության տարածքում բնակվող այլ ժողովուրդների հետ համագործակցության հնարավորությունը:

⁹⁶⁹ Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957, էջ 91:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, սույն աշխատանքի արդյունքում ակներև է, որ 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին ժողովրդագրական գործընթացները Հայաստանում աչքի են ընկել մի շարք առանձնահատկություններով: Ստորև ներկայացնում ենք մեր հետազոտության եզրակացությունները մի քանի կետերով.

1. Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին կրել են **թուրք-պարսկական պատերազմների խոր կնիքը**, և այդ գործընթացների բացասական բոլոր միտումները պայմանավորված էին նախևառաջ հենց պատերազմական իրադրությամբ: Դրանց հետևանքների ազդեցությունը զգալի էր անգամ պատերազմներին հաջորդող տասնամյակում (1640-ական թթ.):

2. 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին Հայաստանում ժողովրդագրական գործընթացներին ամենաբնորոշ գծերից էին հայ բնակչության նկատմամբ քանիցս կրկնող **գերեվարություններն և բռնագաղթերը**: Իրենց ծավալներով առանձնանում են օսմանյան զորքերի կողմից 1579-1585 թթ. կազմակերպված մի քանի հարյուր հազար մարդկանց զանգվածային գերեվարություններն ու բռնագաղթերն Արևելյան Հայաստանից և հատկապես շահ Աբաս Ա-ի կազմակերպած 1604 թ. աննախահեպ բռնագաղթը՝ Մեծ սյուրգյունը: Հաշվի առնելով Արևմտյան Հայաստանից 300 հազար, Նախիջևանի երկրամասից 145 հազար, Արարատյան դաշտից 60 հազար և երկրորդ ավիքով Արևելյան Հայաստանից ևս 100 հազար տեղահանվածների, ինչպես նաև 60 հազար ողջ մնացած բռնագաղթյալ հայ ընտանիքների մասին հիշատակումները, կարծում ենք, որ բռնագաղթի ենթարկված հայ բնակչությունը պետք է կազմեր առնվազն 605 հազար մարդ:

3. Պատերազմների ընթացքում անգամ մի փոքր տարածք կորցնելիս պարսկական կամ օսմանյան զորքերը հակառակորդի պարենավորումն արգելակելու նպատակով ամայացնում էին դրանք: Ցանքատարածությունների ոչնչացումն առնվազն մեկ տարով խաթարում էր սննդի ստացման ցիկը, իսկ քանի որ միջնադարում սննդի 80 %-ը ստացվում էր երկրագործական ուղղակի աշխատանքից, **ճգնաժամային վիճակում հայտնված գյուղատնտեսությունը** հարվածում էր Հայաստանի բնակչության՝ տվյալ տարվա բնական աճին, իսկ պատերազմներն ինքնին արգելակում էին բնականոն տնտեսական կյանքը:

4. Թուրք-պարսկական պատերազմների, ինչպես նաև ջալալիական շարժումների պատճառով գյուղատնտեսության անկման և առևտրի խաթարման սոսկալի հետևանքներից էր **սովը**, որի մասին հիշատակումներն անբաժան են 16-րդ դարի և 17-րդ դարի առաջին կեսի հայկական սկզբնաղբյուրներից: Իր տարածքային ընդգրկմամբ, տևողությամբ և մարդկային զոհերի քանակով աննախադեպ էր հատկապես 1606-1609 թթ. սովը, որը մենք առաջարկում ենք հայոց պատմության մեջ անվանել **Մեծ սով**: Վերջինս, միայն երկու տեղային հիշատակումներով, առնվազն 140 հազար մարդու կյանք է խլել: Ամբողջ Հայաստանի պարագայում այս թիվը պետք է շատ ավելի մեծ լիներ:

5. Պատերազմների և սովի անբաժան ուղեկիցներն էին համաճարակները, հատկապես՝ **ժանտախտը**: Արևելյան Հայաստանի մի քանի հարյուր տապանաքարերի և խաչքար-մահարձանների, ինչպես նաև ձեռագրերի հիշատակարանների ու մանր ժամանակագրությունների ուսումնասիրությամբ մենք դուրս ենք բերել մահացության դեպքերի վիճակագրություն, որի համաձայն՝ հենց ժանտախտի և սովի մասին գրավոր հիշատակումների տարիներն ամենաբարձր մահացության գործակիցն

են ունեցել: Ընդհանուր առմամբ՝ քննարկվող ժամանակաշրջանում **մահացության գործակիցը** կրկնվող պատերազմների, սովի և ժանտախտի պատճառով Հայաստանում բարձր է եղել:

6. **Ծնելիության գործակիցը**, չնայած անբարենպաստ ռազմաքաղաքական պայմաններին, շնորհիվ հայկական ընտանիքի ավանդական մոդելի պահպանման և Հայաստանում աշխարհագրական միջավայրի ընձեռած հնարավորությունների (արգավանդ դաշտերի), շարունակել է բարձր մնալ: Ձեռագրերի հիշատակարանների ուսումնասիրության շնորհիվ ընտանիքի անդամների թվարկման տվյալներից մենք դուրս ենք բերել **ընտանիքի միջին մեծության գործակից՝** 16-րդ դարում՝ 7.6, իսկ 17-րդ դարում՝ 7: Հատկանշական է, որ մեկ տան (ծխի) միջին մեծության գործակիցը շատ ավելի մեծ էր՝ առնվազն 10:

7. Հայաստանում արգավանդ դաշտերի մշակման հնարավորությունը ուշմիջնադարյան բնակչության ավանդական վերարտադրության պայմաններում կրկնվող պատերազմներից, բռնագաղթերից, սովից և համաճարակներից հետո նպաստավոր պայմաններ է ստեղծել երկրագործ հայ բնակչության թվի աճի համար, քանի որ սակավամարդ դարձած բերրի հողը վերայուրացման կարիք ուներ, ինչը չէին կարող անել քոչվոր անասնապահները: Մեր կողմից դուրս բերված ընտանիքի միջին մեծության գործակիցը, ուստիև ծնելիության բարձր մակարդակը 17-րդ դարի առաջին կեսին պայմանավորված է մեծ բռնագաղթից հետո «ժողովրդագրական պայթյունով», ինչին նպաստել են նաև Ամիրգունա խանի կառավարման երկրորդ շրջանում գործադրված վերաբնակեցման ժողովրդագրական քաղաքականությունը և Հայոց եկեղեցու ձեռնարկումները: Բնական աճի բարձր լինելու պայմաններում շատ արագ վերականգնվել են նախկին բնակավայրերը և **բնակչության տեղաբաշխման** բնա-

կան պատկերը: Պատահական չէ, որ բռնագաղթից մոտ մեկ դար անց գրավված Երևանի նահանգի դաշտային մասում օսմանյան հարկացուցակում գլխահարկ վճարողների թվի հիման վրա հաշվարկում ենք 106 հազարից ավելի հայ բնակչություն (առանց հաշվառմանը նախորդած օսմանյան արշավանքին զոհ գնացածների, արտագաղթածների և տեղահանվածների):

8. Օտար նվաճողների փոփոխակի տիրապետության պայմաններում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիրքերի ժամանակավոր թուլացումից, բնակչության թշվառ դրությունից և ազատագրական լեգենդի վերածննդից օգտվելով՝ Հայաստանի առանձին հատվածներում ակտիվ գործունեություն էին ծավալվում կաթոլիկ քարոզիչները: **Հայ կաթոլիկական համայնքը** քննարկվող ժամանակաշրջանում ծաղկուն էր Նախիջևանում և Պարսկահայքի որոշ շրջաններում, իսկ Արևմտյան Հայաստանում զանգվածային կաթոլիկացման միտում դեռևս չէր նկատվում:

9. Էթնոկրոնական տեսանկյունից աղետալի էր **դևշիրմեն (մանկահավաքությունը)**: 16-րդ դարում Արևմտյան Հայաստանից, հատկապես՝ Փոքր Հայքից, Բարձր Հայքից, ինչպես նաև Հայոց Միջագետքից տեղի ունեցած մանկահավաքներով ընտանիքներից կտրված տասնյակ հազարավոր մանուկներն ու պատանիները դաստիարակվում էին մահմեդական մոլեռանդությամբ՝ կտրվելով սեփական ազգային միջավայրից: Սա Օսմանյան կայսրությունում միլլեթների համակարգի շղարշի ներքո իրականում կրոնական անհանդուրժողականության արտահայտություններից է՝ անկախ օսմանյան պետության տեսանկյունից դրա հետապնդած տնտեսական կամ ռազմական շահից:

10. Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի **հարկային քաղաքականությունը** հիմնված էր կրոնադավանական տարբերակվածության վրա, ուստիև ստիպում էր հայ բնակ-

չությանը վճարել գլխահարկ և բազմաթիվ այլ հարկեր, որոնք մահմեդականները չէին վճարում: Այս քաղաքականությունն առանձին դեպքերում ստիպում էր հայ բնակչությանը արտագաղթի դիմել կամ մինչև իսկ մտածել կրոնափոխության մասին: Այդուհանդերձ, 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին հայ առաքելական բնակչությունը հիմնականում չէր դիմում կրոնափոխության, սակայն **զանգվածային իսլամացման** գործընթացն արդեն հարվածում էր հայ բնակչության քաղկեդոնական և կաթոլիկ զանգվածներին, ինչպես օրինակ՝ 1640-ական թթ. Թորթումում: Գործընթացը դեռ մեծ թափ չէր առել Նախիջևանում և Համշենում: Զալաիական շարժումներն էլ նպաստեցին իսլամացմանը Երզնկայի և Կամախի առանձին հատվածներում:

11. Թուրք-պարսկական պատերազմները և նրանց տիրապետությունը (իր նոր հարկային, վարչական և սոցիո-նորմատիվային համակարգով) սաստկացնում էին հայերի արտագաղթի գործընթացը: Այս ամենն ընթանում էր հայկական ավանդական իշխանական-ավատատիրական համակարգի փշրանքների քայքայմանը զուգընթաց, և մահմեդական հողատիրության տրամաբանության մեջ հայկական պետականության նշույլները գոյություն չէին կարող ունենալ, իսկ ինչպես երևում է թուրք և պարսիկ պատմիչների, տպագրված փաստաթղթերի տվյալներից, հարկային ու կրոնական քաղաքականությունից, հայ շինականը դիտարկվում էր սոսկ տնտեսական արդյունք կամ նյութական բարիք ստանալու միջոց: Արևմտյան Հայաստանից արտագաղթի մեծ ալիքին նպաստել է նաև ջալաիական շարժումը: Փաստորեն, հայ բնակչության **արտագաղթի** համար ստեղծվել էին բոլոր երեք պատճառները՝ քաղաքական, մշակութային-կրոնական և սոցիալ-տնտեսական: Արտագաղթի հիմնական ուղղություններն էին Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդ-

նուպոլիսը, Ղրիմի Կաֆա քաղաքը, Մոլդովան, Լեհաստանը, Արևմտյան Եվրոպան և այլն:

12.Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանին բնորոշ է եղել նաև **հայ բնակչության ներքին միգրացիան**: Պատերազմական գործողություններից կամ գերեվարումներից ու բռնագաղթներից պատսպարվելու համար հայ բնակչությունը ստիպված է եղել բնօրրանից տեղափոխվել հայրենիքի մեկ այլ օջախ: Արևելյան Հայաստանում նման դեր է կատարել Գեղարքունիքը, հատկապես՝ Ծարը, իսկ Արևմտյան Հայաստանում՝ Մոկքը, ինչի մասին են վկայում մի շարք սկզբնաղբյուրներ:

13.Մեծ ծավալներ ստացան **օտար էթնիկական ներթափանցումները** և նրանց աստիճանական ներքին միգրացիան Հայաստանի հարավային շրջաններից դեպի կենտրոնական հատվածները: Թուրք-պարսկական պատերազմների ընթացքում Հայաստանի տարբեր հատվածներում հաստատվեց օտար՝ թյուրքական և հատկապես քրդական էթնիկական տարր: Արևմտյան Հայաստանում այս գործընթացը, համաձայն հենց թուրքական աղբյուրների, խրախուսվել է պետության կողմից և եղել նրա ժողովրդագրական քաղաքականության կարևոր բաղադրիչ: Այդուհանդերձ, էթնիկական խմբերի տեղաշարժերը զգալիորեն ակտիվացել են հատկապես 18-րդ դարում, երբ օսմանյան և պարսկական կենտրոնական իշխանությունների թուլացման պատճառով խաթարվել է ու աչքի ընկել քրդական և այլ տարրերի նոր տեղաշարժերով: Հենց 18-րդ դարի էթնոկրոնական վերափոխումների հետևանքով են երբեմն ուսումնասիրողների կողմից 17-րդ դարի առաջին կես տարվել էթնոժողովրդագրական այնպիսի վերափոխումներ, որոնք բնորոշ են եղել միայն դարի երկրորդ կեսից սկսած: Սկզբնաղբյուրների ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև օտար էթնիկ տար-

րը ստվարացել է, սակայն նրա մեծ մասը քոչվորական կյանք է վարել՝ չկազմելով որևէ կոնկրետ վարչամիավորի մշտական բնակչության մի մասը: Փաստորեն, **Հայաստանում շարունակել է գերակշռող լինել հայ բնակչությունը:**

14. Ժողովրդագրական գործընթացների վրա իրենց ազդեցությունն են ունեցել նաև **բնակլիմայական պայմանները և բնական աղետները:** Շոշափելի է եղել տեղումների քանակի տատանման ազդեցությունը միգրացիոն գործընթացների և հատկապես գյուղատնտեսական աշխատանքներով սննդի ստացման վրա: Աղետալի հետևանքներ են ունեցել հաճախ տեղի ունեցող և մեծ թվով մարդկային զոհեր խլող երկրաշարժերը, ինչպես օրինակ՝ 1646 թ. Վանում կամ բազմակի կրկնվող երկրաշարժերը Երզնկայում:

15. Համադրելով տարբեր վարչամիավորների վերաբերյալ հրապարակված հարկացուցակների, ուղեգիրների հիշատակումների և ուսումնասիրողների հատվածական հաշվարկները, հաշվի առնելով բռնագաղթերը, գերեվարումները, սովը, համաճարակները և մնացյալ գործընթացները, ընդունելով նաև բնակչության բնական աճի բարձր գործակիցը, կարելի է խիստ մոտավոր հաշվարկել, որ Հայաստանի բնակչության թիվը 16-րդ դարում պետք է լիներ 5 միլիոնի սահմաններում, իսկ 17-րդ դարի առաջին կեսի եզրագծին՝ մինչև 4.5 միլիոն:

16. Հայաստանը, երկատված լինելով երկու հզոր տերությունների միջև, գրկվեց **պետականության վերականգնման** հնարավորությունից, և օտար իշխանությունների քաղաքականությունն ու բնակչության էթնիկական կազմում տեղի ունեցող փոփոխություններն ակամայից առաջ բերեցին հայ ազատագրական լեգենդի վերածնունդ, որը, սակայն, չէր կարող ճանապարհի հարթել պետականության վերականգնման համար:

Демографические процессы в Армении в XVI веке и в первой половине XVII века (РЕЗЮМЕ)

Данная монография является комплексным изучением демографических процессов в Армении позднего средневековья, когда Армения была полем постоянных войн между Османской империей и Сефевидской Персией. Отсутствие комплексного изучения демографических процессов в Армении в XVI веке и в первой половине XVII века часто вызывает споры и вопросы, которые поднимаются при изучении тенденций XVIII-XIX веков. Итак, эта работа является комплексным исследованием, которая показывает характеристики и тенденции демографических процессов в Армении в указанный период, сфокусируясь на событиях, которые привели к фатальным изменениям. Исследование базируется на сравнительном историко-демографическом макроанализе.

Войны между Османской и Сефевидской империй привели к негативным изменениям тенденций и особенностей демографических процессов в Армении. Османская политика переселения курдов в 1515-1516 гг. стала важнейшей особенностью этих изменений. Используя силы суннитских курдов, Османская империя старалась иметь защищенную границу с шиитскими Сефевидами. Несмотря на то, что часть курдских племен расселилась в южных регионах Армении еще в XIV в., масштабное переселение в XVI в. привело к формированию полукочевой системы землевладения в отдельных регионах провинций Диярбакыр и Ван, где армянское население составляло большинство.

Религиозная политика Османской империи, в составе которой была Западная Армения, была неотъемлима от демографической политики, поскольку в основе национальных вопросов стояла принадлежность религиозному направлению, и поэтому армянское население часто подвергалось социально-экономическому, общественному и культурно-религиозному угнетению в XVI в.. Очевидными признаками этой политики были сюрюны (массовые депортации населения), девширме (система принудительного набора мальчиков из немусульманских семей), налоговая политика (в частности, уплата джизии – подушной подати с иноверцев) и т. д. Многочисленные турецкие, армянские и европейские источники подтверждают, что эта политика проводилась в

отношении армянского населения Османской империи и, в частности, имела место в Западной Армении. Таким образом, этно-религиозная политика Османской империи отрицательно влияла на динамику роста численности армянского населения и его общественной жизни.

Продолжительные войны заставляли часть населения уезжать в европейские страны. Чума и голод также были важными составляющими демографических процессов. Согласно нашим наблюдениям в армянских рукописях XVI века, где обычно авторы писали имена членов своих семей, несмотря на массовые депортации и высокую смертность, рождаемость попрежнему была высокой. Это привело нас к выводу, что после массовых депортаций нужда в обработке больших сельскохозяйственных земель способствовала росту рождаемости, и численность местного населения быстро восстанавливалась. Именно поэтому османские и сефевидские войска через 20 лет находили примерно одинаковую численность населения в местности, например – в Араратской долине, откуда они депортировали часть населения в 1579-1585 гг..

Турецко-персидские войны в первой половине XVII в. также негативно повлияли на демографические процессы в Армении. Армянское население часто подвергалось массовым депортациям со стороны воюющих сторон, а из-за непрекращающихся войн голод и чума были причиной высокой смертности. Несмотря на высокий уровень смертности, сохранялся также высокий уровень рождаемости. Опираясь на данные армянских рукописей, мы пришли к выводу, что средний показатель численности членов армянской семьи (считая только супруг и их детей) в первой половине XVII в. составляло 7, а средний показатель численности жителей одного дома – как минимум 10. Это привело нас к выводу, что после массовых депортаций (как например – в 1604 г., когда было депортировано более 600 тыс. чел.) нужда в обработке больших сельскохозяйственных земель способствовала росту рождаемости, и поэтому численность местного населения быстро восстанавливалась.

В начале турецко-персидской войны 1603-1612 гг. последствия боевых действий и в особенности запланированные меры персидских властей отрицательно повлияли на демографические процессы в Армении. Тяжелейшие последствия имел «великий сургун», организованный персидским шахом Аббасом I (1587-1629 гг.). Основным этапом массовой депортации имел место в 1604 г., когда армянское население, переселен-

ное из разных частей Армении, было депортировано в Персию. На основе многочисленных армянских, персидских, турецких и европейских источников было подтверждено, что эта политика проводилась в отношении армянского населения не только Восточной, но и Западной Армении. Сначала было организовано переселение армян из разных округов Чухур-Саадского (Аратского) эялета и Гянджинского (Гандзакского) санджака на территорию между Ереваном и рекой Аракс. Затем, перед приходом основных сил войск Османской империи, шах Аббас велел проводить тактику выжженной земли на территории Западной Армении, в частности – уничтожить любые объекты сельскохозяйственного назначения с целью не допустить их использования наступающей турецкой армией. В контексте той же тактики шах велел переселить население Карсского эялета, восточных и северных округов Ванского эялета, центральных и восточных округов Эрзурумского эялета на территорию Чухур-Саадского эялета. Затем они вместе с местным и ранее передислоцированным населением были депортированы в Персию. Таким образом, эта политика отрицательно повлияла на демографическое состояние выше перечисленных территорий.

В результате восстания джелали в 1596-1610 гг., массовой депортации персидским шахом Аббасом I армянского населения и турецко-персидских войн, в Армении начался масштабный голод, который негативно повлиял на демографические процессы. Многочисленные турецкие и армянские источники подтверждают, что голод охватил все азиатские провинции Османской империи и северо-западные районы государства Сефевидов, включая практически всю Армению. Последствиями голода были многочисленные жертвы и эмиграция прежде всего местного армянского населения. После тщательного историко-сравнительного анализа источников, мы пришли к выводу, что голод был характерным для всей территории исторической Армении в 1606-1609 гг.. Учитывая масштабы этого бедствия, необходимо его назвать «Великим голодом» в истории армянского народа. Таким образом Великий голод негативно повлиял на динамику роста численности армянского населения и его повседневной жизни.

Дальнейшие боевые действия между Османской империей и Ираном не позволяли создавать условия для устойчивого демографического развития армянского населения на территории своей родины.

Demographic Processes in Armenia in the 16th Century and in the First Half of the 17th Century

(SUMMARY)

The present book is a complex research on the demographic processes in the late medieval Armenia when the country was a battlefield of wars between the Ottoman Empire and Safavid Persia. The lack of a complex research on the demographic processes in Armenia in the 16th century and in the first half of the 17th century often causes disputes and questions that come from the investigation of the trends of the 18-19th centuries. Thus, this investigation is a complex research to show the characteristics and trends of the demographic processes in Armenia in the discussed period focusing on the events that led to crucial changes. The research is based on a comparative historical-demographic macroanalysis.

The wars between the Ottoman and Safavid Empires led to some negative changes in the trends and features of the demographic processes in Armenia. One of the essential features of these changes became the Kurdish resettlement policy by the Ottoman authorities starting from 1515-1516. Using Sunni Kurdish military forces the Ottoman Empire tried to have protected borders with Shia Safavids. Although some Kurdish tribes had already settled in the southern regions of Armenia starting from the 14th century, the massive resettlement in the 16th century led to the formation of their landowning system in some regions of Diyarbakir and Van provinces where the Armenian population was still the overwhelming majority.

The religious policy of the Ottoman Empire, a part of which was Western Armenia, was inseparable from the demographic policy of the Empire, since national issues were based on religious affiliation; thus, the Armenian population was often subjected to socio-economic, social and cultural-religious oppression in the 16th century. Obvious signs of the above mentioned policy were *sürgün* (mass deportations of the population), *devşirme* (the system of forced recruitment of boys from non-Muslim families), tax policy (in particular, payment of *jizya* - a per capita tax from non-Muslim population), etc. Numerous Turkish, Armenian and European sources confirm that this policy was carried out against the Armenian population of the Ottoman Empire and, in particular, took place in Western Armenia. Thus, the ethno-religious

policy of the Ottoman Empire adversely affected the dynamics of the growth of the Armenian population and its social life.

Continues wars also made a part of the native population leave their historical settlements for the European countries. Plague and starvation were essential features of the demographic processes as well. Despite massive deportations and high mortality rate, according to the observation of the contemporary Armenian manuscripts where the authors wrote the names of their family members, fertility rate of the Armenian population was still very high. This leads us to the conclusion that after massive deportations the need of cultivating vast agricultural territories helped to have a high fertility rate, and the native population could reach the previous figures in a short period of time. That is why the Ottoman and Safavid forces found approximately the same number of population in a territory, for example, the Ararat Valley, from where they had deported a part of population about 20 years before (in 1579-1585).

The Ottoman-Persian wars in the first half of the 17th century also had a negative impact on the demographic processes in Armenia. The Armenian population faced massive deportations by fighting sides, and as a result of ongoing wars famine and plague were among the main reasons of high mortality. Despite the high mortality rate, fertility rate was high, too. Based on the data from the Armenian manuscripts, we concluded that the average number of members of an Armenian family (counting only spouses and their children) in the first half of the 17th century was 7, and the average number of people living in a house – at least 10. These calculations lead us to a conclusion that after massive deportations (for example, in 1604, when more than 600 thousand people were deported) the need of cultivating vast agricultural territories helped to have much higher fertility rate, and the native population could reach the previous figures in a short period of time.

At the beginning of the Turkish-Persian war of 1603-1612 the consequences of military operations and, in particular, planned actions by Persian authorities affected negatively the demographic processes in Armenia. “The Great Surgun”, organized by Persian Shah Abbas I (1587-1629), had the most extensive consequences. The main stage of the mass deportation took place in 1604, when the Armenian population, resettled from various parts of Armenia, was deported to Persia. On the basis of a number of Armenian, Persian, Turkish, and European sources, it was confirmed that the policy was

carried out against the Armenian population of not only Eastern, but also Western Armenia. At first, Armenians were resettled from various regions of Chukhur-Saad (Ararat) Eyalet and Gyanja (Gandzak) Sanjak to the territory between Yerevan and River Araks.

Thereafter, before the upcoming campaign of the main forces of the Ottoman army, Shah Abbas ordered to conduct the military strategy of scorched-earth policy in the territory of Western Armenia; the whole agricultural infrastructure, including any assets that could be used by the attacking Ottoman troops, were aimed to be completely destroyed. Within the context of the mentioned strategy, Shah Abbas ordered to resettle the population from Kars Eyalet, eastern and northern regions of Van Eyalet, central and eastern regions of Erzurum Eyalet, to the territory of Chukhur-Saad Eyalet. After on, they, along with the previously relocated population, were deported to Persia. Thus, this policy adversely affected the demographic situation of the above mentioned territories.

As a result of the Jelali Rebellion (1596-1610), the massive deportation of the Armenian population from Armenia into the central provinces of Iran in 1604, and the Ottoman-Persian wars in the early 17th century, a massive famine started in Armenia which negatively impacted on the demographic processes. A lot of Turkish and Armenian sources confirm that the famine covered all the Asian provinces of the Ottoman Empire and the north-eastern regions of the Sefevide state, almost entirely including Armenia. The consequences of the starvation were lots of casualties and emigration impacting first of all the native Armenian population. After a careful historical-comparative analysis of the sources, we concluded that the massive famine was characteristic for the whole territory of Armenia in 1606-1609. Taking into consideration the scale of this calamity, it must be called the Great Famine in History of Armenia. Therefore, the Great Famine negatively impacted on the population growth dynamics and the everyday life of the Armenian population.

The later military actions by the Ottomans and Safavids did not let create an environment for the sustainable demographic development of the Armenian population on the territory of their motherland.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրներ

Ա) Ձեռագիր սկզբնաղբյուրներ և փաստաթղթեր

ա) Ձեռագիր սկզբնաղբյուրներ

1. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագրեր № 3566, 4216, 4375, 4749, 4786, 5345, 5520, 5967, 6513:

բ) Փաստաթղթեր

1. «ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Լոռու մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» (տե՛ս ՀՀ կառ. որոշում N 49-Ա, 29.01.2004 <http://www.arlis.am/Document-View.aspx?DocID=37965>):
2. «ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» (տե՛ս ՀՀ կառ. որոշում N 1793-Ն, 24.12.2003 <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=11757>):

Բ) Տպագիր սկզբնաղբյուրներ

ա) հայերեն

1. **Առաքել Դավրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխ.՝ Լ. Խանլարյանի, Երևան, 1990:
2. «Աւգոստինոս Բաջեցոյ ճանապարհորդութիւն Յերուսալ», «Նշխարք մատենագրութեան հայոց», ի լոյս եած՝ Բ. Պատկանեան, Ս.-Պետերբուրգ, 1884, էջ 5-26:
3. «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց՝ Հ. Նալբանդյան, Երևան, 1965:
4. «Գանձակի գաւառ. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար», կազմեց՝ Ե. Լալայան, «Ազգագրական հանդէս», գիրք Ե, Թիֆլիս, 1899, թ. 1, էջ 213-360:
5. «Դիվան հայ վիմագրության», պր. II, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1960:
6. «Դիվան հայ վիմագրության», պր. III, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1967:
7. «Դիվան հայ վիմագրության», պր. IV, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1973:
8. «Դիվան հայ վիմագրության», պր. V, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1982:
9. «Դիվան հայ վիմագրության», պր. VI, կազմեցին՝ Ս. Ավագյան, Հ. Ջանփոլադյան, Երևան, 1977:

10. «Դիվան հայ վիմագրության», պր. IX, կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, 2012:
11. «Դիւան Հայոց պատմութեան», կազմեց՝ Գ. Աղանեանց, գիրք Ժ, Թիֆլիս, 1912:
12. **Եսայի Հասան-Ջալալեան**, Պատմութիւն յաշխարհին Աղուանից, Յերուսաղէմ, 1868:
13. **Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան**, Օրագրութիւն, հրատ.՝ Մ. արքեպս. Նշանեան, Երուսաղէմ, 1939:
14. **Ջաքարիա Քանաքեռցի**, Պատմութիւն, աշխ.՝ Ա. Վիրաբյանի, Երևան, 2015:
15. «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա, կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, Երևան, 1961:
16. «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Բ, կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, Երևան, 1964:
17. «Թուրքական աղբյուրներ», հ. Գ. Էվլիյա Չելեբի, թարգմ.՝ Ա. Սաֆրաստյանի, Երևան, 1967:
18. «Թուրքական աղբյուրներ», հ. Դ, թարգմ.՝ Ա. Սաֆրաստյանի և Գ. Սանթրոջյանի, Երևան, 1972:
19. «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեսցոյ կամ Դարանաղցոյ», հրատ.՝ Մ. վրդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915:
20. «Ժամանակագրություն (XI-XVIII դդ.)», տպագր. պատրաստեց՝ Ն. եպս. Պողարյան, «Բանբեր Մատենադարանի», թ. 9, Երևան, 1969, էջ 257-282:
21. «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց՝ Լ. Խաչիկյան, մասն Բ (1451-1480 թթ.), Երևան, 1958:
22. «ԺԵ դարի մի ձեռագիր Աւետարան», հրատ.՝ Ա. Երեմեան, «Սիոն», 1967, թիւ 7-8, էջ 328-330:
23. «Համառոտ բիբլիոգրաֆիա՝ Հայկական ՍՍՌ Մատենադարանի գրչագիր մանր ժամանակագրությունների», հրատ.՝ Ա. Աբրահամյան, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», թ. 1, Երևան, 1941, էջ 207-225:
24. «Հայերեն ձեռագրեր Հյուսիսային Ամերիկայում», կազմեց՝ Զ. ծ. վրդ. Արզումանյան, «Բանբեր Մատենադարանի», թ. 11, Երևան, 1973, էջ 377-398:
25. «Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974:
26. «Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.)», հ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978:
27. «Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.)», հ. Գ, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1984:
28. **Ղազար վրդ. Զահիկցի**, Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735:
29. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու», հ. Ա, կազմեց՝ Ա. արք. Սիրմէեան, Փարիզ, 1950:

30. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի», հ. Ա, կազմեց՝ Ա. արք. Սիրմէեան, Ս. Ղազար, 1948:
31. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի եւ Անթիլիասի ու մասնաւորաց, հ. Բ, կազմեց՝ Ա. արք. Սիրմէեան, Հալէպ, 1936:
32. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, խմբ.՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1984:
33. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, կազմեց՝ Օ. Եգանեան, Երեւան, 2009:
34. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2012:
35. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2013:
36. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Ա, կազմեց՝ Բ. վրդ. Սարգիսեան, Վենետիկ - Ս. Ղազար, 1914:
37. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Բ, կազմեց՝ Բ. վրդ. Սարգիսեան, Վենետիկ - Ս. Ղազար, 1924:
38. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Գ, կազմեցին՝ Բ. վրդ. Սարգիսեան և Գ. վրդ. Սարգիսեան, Վենետիկ - Ս. Ղազար, 1966:
39. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Դ, կազմեց՝ Ս. վրդ. Ճեմճեմյան, Վենետիկ - Ս. Ղազար, 1993:
40. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Ե, կազմեց՝ Ս. վրդ. Ճեմճեմյան, Վենետիկ - Ս. Ղազար, 1995:
41. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Զ, կազմեց՝ Ս. վրդ. Ճեմճեմյան, Վենետիկ - Ս. Ղազար, 1996:
42. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Է, կազմեց՝ Ս. վրդ. Ճեմճեմյան, Վենետիկ - Ս. Ղազար, 1996:
43. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Ը, կազմեց՝ Ս. վրդ. Ճեմճեմյան, Վենետիկ - Ս. Ղազար, 1998:
44. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան», կազմեց՝ Ա. վրդ. Դանիէլեան, Անթիլիաս, 1984:
45. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Ն. եպս. Պողարեան, հ. Ա, Երուսաղէմ, 1966:
46. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Ն. եպս. Պողարեան, հ. Բ, Երուսաղէմ, 1967:

47. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Ն. Եպս. Պողարեան, հ. Գ, Երուսաղէմ, 1968:
48. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Ն. Եպս. Պողարեան, հ. Դ, Երուսաղէմ, 1969:
49. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Ն. Եպս. Պողարեան, հ. Ե, Երուսաղէմ, 1971:
50. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Ն. Եպս. Պողարեան, հ. Զ, Երուսաղէմ, 1972:
51. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Ն. Եպս. Պողարեան, հ. Է, Երուսաղէմ, 1974:
52. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Ն. Եպս. Պողարեան, հ. Ը, Երուսաղէմ, 1977:
53. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Ն. Եպս. Պողարեան, հ. Թ, Երուսաղէմ, 1979:
54. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Ն. Եպս. Պողարեան, հ. Ժ, Երուսաղէմ, 1990:
55. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Ն. Եպս. Պողարեան, հ. ԺԱ, Երուսաղէմ, 1991:
56. «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. 1, Երևան, 1951:
57. «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. 2, Երևան, 1956:
58. «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հ. I, հրովարտականք, պր. II (1601-1650 թթ.), կազմեց՝ Հ. Փափազյան, Երևան, 1959:
59. «Մատենադարանի պարսկական վավերագրերը, հ. II, կալվածագրեր, պր. Ա (ԺԴ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Փափազյան, Երևան, 1968:
60. «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հ. I, հրովարտականք, պր. III, կազմեց՝ Բ. Կոստիկյան, Երևան, 2005:
61. «Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրությունը», հրատ.՝ Ա. Աբրահամյան, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», թ. 1, Երևան, 1941, էջ 93-100:
62. «Մի ձեռագիր Աւետարան Զարմահայի Լիվասեան գիւղում», կազմեց՝ Ա. Երեմեան, «Հանդէս Ամսօրեայ», 1948, թիւ 3-6, սյ. 293-299:
63. **Յակովբ Կարնեցի**, Տեղագիր Վերին Հայոց, աշխ.՝ Կ. Կոստանեանցի, Վաղարշապատ, 1903:
64. **Զամչեան Մ.**, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենէտիկ, 1786:
65. **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, Ժամանակագրութիւն, աշխ.՝ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014:
66. **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, Զամբո, աշխ.՝ Վ. Համբարձումյանի, պատմաաշխ. ծանոթագր.՝ Գ. Բադալյան, Երևան, 2003:
67. «Սիմեոն դարի Լեհացոյ Ուղեգրութիւն. տարեգրութիւն եւ յիշատակարանք», հրատ.՝ Ն. Ալիքեան, Վիեննա, 1936:

68. «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», կազմեց՝ Լ. Մելիք-սեթ-Բեկ, հ. Բ (ԺԳ-ԺԸ դդ.), Երևան, 1936:
69. «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», կազմեց՝ Լ. Մելիք-սեթ-Բեկ, հ. Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Երևան, 1955:
70. «Ցուցակ Թեիրանի հայերեն ձեռագիրներու», կազմեց՝ Հ. Ոսկեան, «Հանդէս Ամսօրեայ», 1953, թիւ 1-3, սյ. 95-110:
71. «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի», կազմեց՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, «Բանբեր Մատենադարանի», թ. 4, Երևան, 1958, էջ 377-423:
72. «Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի», հրատ.՝ խմբագրություն, «Էջմիածին», 1950, թ. Է-Ը, էջ 81-88:
73. «Ուղեգրություններ», կազմեց՝ Հ. Հակոբյան, հ. Ա, Երևան, 1932:
74. «Ուղեգրություններ», կազմեց՝ Հ. Հակոբյան, հ. 2, Երևան, 1934:
75. «Քաջաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ», հրատ.՝ Ք. Կոստիկյան, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 20, Երևան, 2001, էջ 168-175:
76. «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI-XVII դարերի կանոն-նամներ)», թարգմ. և ծանոթ.՝ Ա. Սաֆրաստյանի և Մ. Զուկալյանի, Երևան, 1964:
77. «XVI դ. օսմաներեն մի վավերագիր», հրատ.՝ Ս. Մուրադյան, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 22, Երևան, 2003, էջ 239-251:

ը) ողութեն

1. «Всесоюзная перепись населения 1926 г.», Таблица VI. Население по полу, национальности. Нахичеванская АССР. http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_-26.php?reg=2294 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:
2. «Всесоюзная перепись населения 1939 г.», Таблица 26. Национальный состав населения районов, районных центров, городов и крупных сельских населенных пунктов. Нахичеванская АССР. http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_39_ra.php?reg=752 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:
3. «Всесоюзная перепись населения 1959 г.», Таблица 3, 4. Распределение населения по национальности и родному языку. Нахичеванская АССР. http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_59.php?reg=66 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:
4. «Всесоюзная перепись населения 1970 г.», Таблица 7с. Распределение населения по национальности, родному и второму языку. Нахичеванская АССР. http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_70.php?reg=73 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:
5. «Всесоюзная перепись населения 1979 г.», Таблица 9с. Распределение населения по национальности и родному языку. Нахичеванская АССР. http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_79.php?reg=76 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:

6. «Всесоюзная перепись населения 1989 г.», Таблица 9с. Распределение населения по национальности и родному языку. Нахичеванская АССР.
http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_89.php?reg=70 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:
7. «Кавказский календарь на 1917 годъ: Отдель статистическій», Тифлисъ, 1916.
8. «Первая Всеобщая перепись населения Российской Имперіи 1897 г.», Таблица XIII. Распределение населения по родному языку: Губернскіе итоги. Нахичеванскій уездъ. http://www.demoscope.ru/weekly/ssp/emp_lan_97_uezd.php?reg=575 Հասանելի էր՝ 01.06.2019 թ.:
9. **Шопен И.**, Историческій памятникъ состоянія Армянской области въ эпоху ея присоединенія къ Россійской Имперіи, Санкт-Петербургъ, 1852.
10. **Эзовъ Г.**, Сношенія Петра Великого съ Армянскимъ народомъ (документы), Санкт-Петербургъ, 1898.

գ) անգլերեն

1. **Eskandar Beg Monshi**, Tarikh-e ‘Alamara-ye Abbasi (The History of Shah Abbas the Great), translated by Roger M. Savory, vol. II, Persian Heritage Series, № 28, Colorado: Wetview Press, Boulder CO, 1978.
2. “The Six Voyages of John Baptista Tavernier, A Noble Man of France now living, Through Turkey into Persia, and The East-Indies, Finished in the Year 1670. Giving an Account of the State of those Countries”, Book I, Made English by F. P., London, 1678.

2. Աշխատություններ

ա) հայերեն

1. **Ադոնց Ն.**, Երկեր, հ. 2, Երևան, 2012:
2. **Ադոնց Ն.**, Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989:
3. **Ալիշան Ղ.**, Այրարատ. Բնաշխարհի Հայաստանեայց Վենետիկ, 1890:
4. **Ալիշան Ղ.**, Արցախ, Երևան, 1993:
5. **Ալիշան Ղ.**, Սիսական. Տեղագրություն Սինեաց աշխարհի, Վենետիկ, 1893:
6. **Ալպոյաճեան Ա.**, Պատմություն Եվդոկիոյ Հայոց, Գահիրե, 1952:
7. **Ալպոյաճեան Ա.**, Պատմություն հայ Կեսարիոյ, Գահիրե, 1937:
8. **Ակոպով Ա.**, Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի I երեսնամյակը, Երևան, 2013:
9. **Այվազյան Ա.**, Ջուղա, Երևան, 1984:
10. **Անասյան Հ.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:
11. **Առաքելեան Հ.**, Պարսկաստանի հայերը. նրանց անցեալը, ներկան եւ ապագան, մաս Ա, Վիեննա, 1911:
12. **Բայբուրդյան Վ.**, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013:
13. **Բայբուրդյան Վ.**, Նոր Ջուղա, Երևան, 2007 :

14. **Բայբուրդյան Վ.**, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011:
15. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895:
16. **Եսայան Զ.**, Հայոց տեղանունները. թուրքական այլափոխումներ, Երևան, 2014:
17. **Երանյան Գ.**, Հայ ընտանիքի անդամների միջին թվաքանակն ըստ XV դ. ձեռագրերի հիշատակարանների (Վասպուրականի օրինակով), Երևան, 2015:
18. **Զուլալյան Մ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980:
19. **Զուլալյան Մ.**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990:
20. **Զուլալյան Մ.**, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Երևան, 1995:
21. **Զուլալյան Մ.**, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII դարեր), Երևան, 1966:
22. **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա. Ասիա, հ. Ա, Վենետիկ, 1806 :
23. **Լեո**, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934:
24. **Խառատյան Ա.**, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Երևան, 2007:
25. **Հակոբյան Թ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), 5-րդ հրատ., Երևան, 2007:
26. **Հակոբյան Թ.**, Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987:
27. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», կազմեցին՝ Թ. Հակոբյանը, Ստ. Մելիք-Բախշյանը, Հ. Բարսեղյանը, հ. 3, Երևան, 1991:
28. «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972:
29. «Հայոց պատմություն», հ. II, գիրք II, Երևան, 2014:
30. «Հայոց պատմություն», հ. III, գիրք I, Երևան, 2010:
31. **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957:
32. **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Երևան, 1959:
33. **Մալխասյան Մ.**, Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկը՝ որպես պատմաաշխարհագրական հետազոտությունների աղբյուր (Էրզրումի նահանգը 17-րդ դարում), Ս. Էջմիածին, 2009:
34. **Մելքոնյան Ա.**, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994:
35. **Մելքոնյան Ա.**, Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Երևան, 2011:

36. **Մելքոնյան Ա.**, Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003:
37. **Մինասյան Լ.**, Պատմություն Փերիայի հայերի (1606-1956), Անթիլիաս, 1971 :
38. **Միրզոյան Հ.**, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983:
39. **Նաջարյան Հ.**, XVII դարի սկզբի թուրք-իրանական պատերազմը և հայերի տարագրությունը, Երևան, 1959:
40. **Նաջարյան Հ.**, Թուրք-իրանական հարաբերությունները XVI դ. ու XVII դ. առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961:
41. **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Գ. մաս, Վիեննա, 1947:
42. **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007:
43. **Սրապեան Լ.**, Քղի (Տեղագրական եւ Ազգագրական), մատենաշար «Ապրիլեան եղեռն», թիւ 1, Անթիլիաս, 1960:
44. **Տաշեան Յ.**, Հայ բնակչությունը Սեւ ծովէն մինչեւ Կարին. պատմական-ազգագրական հարեւանցի ակնարկ մը, Վիեննա, 1921:
45. **Ուլուբաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975:
46. **Փափազյան Ա.**, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Երևան, 1999:
47. **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001:

բ) ողութեն

1. «Аграрный строй Османской империи XV-XVII вв.: документы и материалы», сост., пер. и ком. А. Тверитиновой, Москва, 1963.
2. **Бачи М.**, Демографическая история Европы (II тысячелетие), СПб., 2010.
3. **Зулалян М.**, Армения в первой половине XVI в., Москва, 1971.
4. **Петрушевский И.**, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв., Ленинград, 1949.
5. **Саркисян Г.**, Население Восточной Армении в XIX – начале XX в., Ереван, 2002.
6. **Тверитинова А.**, Восстание Кара Языджи – Дели Хасана в Турции, Москва-Ленинград, 1946.
7. **Тер-Аветисян С.**, Город Джуга, Тбилиси, 1937.
8. «Энциклопедический словарь Ф. Брокгауза и И. Ефрона», т. ХХА, С.-Петербург, 1897.

գ) անգլերեն

1. **Abisaab R.**, Converting Persia: Religion and Power in the Safavid Empire, London – New York, 2004.
2. **Aslanian S.**, From the Indian Ocean to the Mediterranean: the Global Networks of Armenian Merchants from New Julfa, Berkeley, 2011.

3. **Baghdiantz McCabe I.**, The Shah's Silk for Europe's Silver: The Eurasian Trade of the Julfa Armenians in Safavid Iran and India (1530-1750), "University of Pennsylvania Armenian Texts and Studies", Book 15, Atlanta: Scholars Press, 1999.
4. **Blow D.**, Shah Abbas: The Ruthless King Who Became an Iranian Legend, London-New York: I.B. Tauris, 2009.
5. **Canby Sh.**, Shah 'Abbas: The Remaking of Iran, London, 2009.
6. **Coşgel M.**, Efficiency and Continuity in Public Finance: The Ottoman System of Taxation, "University of Connecticut Department of Economics Working Paper Series", Working Paper 2004-02R.
7. **Coşgel M.**, The Fiscal Regime of an Expanding State: Political Economy of Ottoman Taxation, "University of Connecticut Department of Economics Working Paper Series", Working Paper 2013-28.
8. **Çizakça M.**, A Comparative Evolution of Business Partnerships: The Islamic World and Europe, with Specific Reference to the Ottoman Archives, Leiden – New York, 1996.
9. **Darling L.**, Revenue Raising and Legitimacy: Tax Collection and Finance Administration in the Ottoman Empire, 1560–1660, New York, 1996.
10. **Faroghi S.**, Artisans of Empire: Crafts and Craftspeople Under the Ottomans, London-New York: I.B. Tauris & Co. Ltd, 2009.
11. **Faroghi S.**, The Ottoman Empire and the World Around It, London-New York: I.B. Tauris, 2004.
12. **Galichian R.**, A Glance into the History of Armenia through Cartographic Records, London, 2015.
13. **Griswold W. J.**, The Great Anatolian Rebellion (1000–1020/1591–1611), Islamkundliche Untersuchungen, Vol. 83, Berlin: Klaus Schwarz Verlag, 1983.
14. "Handbook of Ethnic Conflict: International Perspectives", editors D. Landis & R. Albert, New York-Dordrecht-Heidelberg-London, Springer Science+Business Media, 2012.
15. **Hollingsworth T.**, Historical Demography, London: Cambridge University Press, 1976.
16. **Ivanow Wl.**, The Gabri Dialect Spoken by the Zoroastrians of Persia, Roma, G. Bardi, 1940.
17. **Kia M.**, Daily Life in the Ottoman Empire, "The Greenwood Press Daily Life Through History Series", Santa Barbra-Greenwood, 2011.
18. **Mitchel C.**, The Practice of Politics in Safavid Iran: Power, Religion and Rhetoric, "BIPS Persian Studies Book Series", vol. 1, London-New York, 2009.
19. **Newman A.**, Safavid Iran: Rebirth of a Persian Empire, London – New York, 2009.
20. **Shaw S.**, Empire of the Gazis: The Rise and Decline of the Ottoman Empire (1280–1808), "History of the Ottoman Empire and modern Turkey", Vol. 1, London: Cambridge University Press, 1976.
21. "The Cambridge History of Iran", Vol. 6, Cambridge University Press, 1986.
22. "The Cambridge History of Turkey, Vol. 2: The Ottoman Empire as a World Power, 1453-1603", New York: Cambridge University Press, 2013.
23. **White S.**, The Climate of Rebellion in the Early Modern Ottoman Empire, New York: Cambridge University Press, 2013.

դ) թուրքերեն

1. **Çark Y.**, Türk devleti hizmetinde Ermeniler, Istanbul, 1953.

2. **Danişmend I.**, İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi, h. III, İstanbul, 1950.
3. **Tuncer H.**, Osmanlı imparatorluğunda toprak hukuku, arazi kanunları ve kanun açıklamaları, Ankara, 1962.
4. **Tüzün G.**, Muhteşem Süleyman, “Tarihte Olağanüstü Kişiler”, Ana Yayıncılık, 2004.

ե) իտալերեն

1. **Barbero Al.**, Il divano di Istanbul, Palermo: Sellerio Editore, 2011.
2. **Mansel Ph.**, Constantinopoli: Splendore e declino della capitale dell’Impero Ottomano 1453-1924, Milano: Oscar Mondadori, 1997.
3. **Mantran R.**, Storia dell’impero ottomano, Lecce: Argo, 1999.
4. **Vercellin G.**, Solimano il Magnifico, Firenze: Giunti Dossier, 1997.

3. Հոդվածներ

ա) հայերեն

1. **Աբրահամյան Մ.**, Օսմանյան կայսրությունում համընտհայերի բռնի իսլամացման խնդրի շուրջ, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. VII, Երևան, 2011, էջ 180-184:
2. **Ակինեյան Ն.**, Մաղաքիա վ. Դերջանցի. տաղասաց, շինարար եւ բարեգործ, «Հանդես Ամսօրեայ», 1952, թ. 11-12, էջ 574-588:
3. **Ակոպով Ա.**, Կեսկեսներն Օսմանյան կայսրությունում XVII-XIX դարերում, «Հայկական լեռնաշխարհ. հանրապետական գիտաժողովի նյութեր», Երևան, 2015, էջ 479-491:
4. **Ամիրջանյան Հ.**, Լոռու գավառի էթնիկ պատկերը XVIII դ. վերջին և XIX դ. առաջին երեսնամյակին, «Հայոց պատմության հարցեր», հ. 10, Երևան, 2009, էջ 113-123:
5. **Այվազյան Ա.**, Գողթն գավառի Բիստ ավանի ճարտարապետական հուշարձանները, «ՊԲՀ», 1978, թ. 1, էջ 283-289:
6. **Այվազյան Ա.**, Նյութեր Նախիջևանի պատմական գյուղերի տեղադրության և պատմական հուշարձանների վերաբերյալ, «ՊԲՀ», 1972, թ. 2, էջ 258-266:
7. **Անանյան Ժ.**, Հայերի Մոլդավիա և Բեսարաբիա գաղթելու պատմությունից, «ԼՀԳ», 1966, թ. 9, էջ 90-98:
8. **Ավդալբեգյան Թ.**, Գլխահարկը Թուրքիայում XVII-XVIII դարերում հայ պատմագրության տվյալներով, «ՊԲՀ», 1959, թ. 1, էջ 175-186:
9. **Բադալյան Գ.**, Վանի էյալերի քրդական իշխանությունները (հուլյունդենը) 14-րդ դ.- 19-րդ դ. 40-ական թթ., «Իրան-Նամե», 1998, թ. 2-3, էջ 23-37:
10. **Բադալյան Գ.**, Տայքի կենտրոնական և արևելյան գավառների ազգային նկարագիրը XVI դ. վերջին. ըստ «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ հարկացուցակ»-ի, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2017, թ. 4, էջ 40-70:

11. **Բախչինյան Ա.**, Հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչություններ (վաղ միջնադար – XVIII դար), «ԼՀԳ», 1998, թ. 3, էջ 102-112:
12. **Բայբուրդյան Ա.**, XVII դարում Արևելյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության պատմությունից, «ՊԲՀ», 1989, թ. 2, էջ 147-157:
13. **Բայբուրդյան Վ.**, Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի «քրդականացման» քաղաքականությունը 16-րդ դ., «ՊԲՀ», 2006, թ. 3, էջ 67-84:
14. **Բարխուդարյան Ս.**, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի, «Բանբեր Մատենադարանի», թ. 8, Երևան, 1967, էջ 191-227:
15. **Դալայան Տ.**, Հայ իշխանական տների հետքերը Հարավարևմտյան Հայաստանում (քրդական որոշ ցեղանունների և ցեղերի ծագման հարցի շուրջ), «ՊԲՀ», 2004, թ. 2, էջ 174-196:
16. **Դանեղյան Լ.**, Հայերի բռնագաղթն Իրան 17-րդ դարում (Ա. Դավրիժեցու տվյալներով), «ԼՀԳ», 1969, թ. 8, էջ 63-75:
17. **Դանեղյան Լ.**, Շահ-Աբբաս Ա-ի կրոնական հանդուրժողական քաղաքականության հարցի շուրջը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 4, Երևան, 1969, էջ 68-92:
18. **Զուլայան Մ.**, «Դեշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, «ՊԲՀ», 1959, թ. 2-3, էջ 247-256:
19. **Զուլայան Մ.**, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1500-1555 թթ.), «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1959, թ. 3, էջ 49-60:
20. **Զուլայան Մ.**, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1555-1595 թթ.), «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1961, թ. 3, էջ 43-54:
21. **Զուլայան Մ.**, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանում և նրանց հետևանքները (1590-1639 թթ.), «ԼՀԳ», 1966, թ. 2, էջ 80-91:
22. **Թողաքյան Բ.**, Էջեր համշենահայերի XVII-XVIII դարերի պատմությունից, «ՊԲՀ», 1972, թ. 4, էջ 133-136:
23. **Թորոսյան Հ.**, Էջմիածնի վանական հողատիրությունը և նրա առանձնահատկությունները (16-18-րդ դդ.), «Հայոց պատմության հարցեր», հ. 2, Երևան, 2001, էջ 41-50:
24. **Խաչատրյան Ա.**, Հաքքարի քրդական իշխանության կազմավորման հարցի շուրջ (ԺԴ դար), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 13, Երևան, 1985, էջ 134-155:
25. **Խաչիկյան Լ.**, Էջեր համշենահայ պատմությունից, «ԲԵՀ», 1969, թ. 2, էջ 132-138:
26. **Կարապետեան Մ.**, Հայ կաթողիկե թեմը և էթնոդաւանական գործընթացները Նախիջեւանում XVII-XVIII դարերում, «Նախիջեւանի Հայոց վարժա-

րանը և Հոմը», Վենետիկ, 2000, էջ 1-14 (տե՛ս <http://www.digi-lib.am/book/1478/1782>):

27. **Կարապետյան Մ.**, Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ., «ՊԲՀ», 1986, թ. 2, էջ 95-109:
28. **Կոստիկյան Ք.**, Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունից, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 24, Երևան, 2005, էջ 303-329:
29. **Կոստիկյան Ք.**, Կաթոլիկական քարոզչությունը Իրանում և հայ իրականությունը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 21, Երևան, 2002, էջ 200-218:
30. **Հախվերդյան Ա.**, Ուրվագծեր Սյունիքի Քաջաթաղի մելիքության պատմությունից, «Հայոց պատմության հարցեր», հ. 9, Երևան, 2008, էջ 88-107:
31. **Հակոբյան Տ.**, Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (XVII-XVIII դդ.), «Արևելագիտական ժողովածու», հ. 1, Երևան, 1960, էջ 266-284:
32. **Հասրաթյան Մ.**, Աստապատի վանքի ճարտարապետական համալիրը, «ՊԲՀ», 1975, թ. 1, էջ 126-138:
33. **Հասրաթյան Մ.**, Հայկական ճարտարապետությունը և պատմաաշխարհագրական ու դեմոգրաֆիկ գործոնները, «ՊԲՀ», 1996, թ. 1-2, էջ 169-178:
34. **Հարությունյան Ա., Բարթիկյան Հ.**, «Սասնա ծռերի» արձագանքները «Շարաֆ-Նամեում», «ՊԲՀ», 1975, թ. 2, էջ 90-104:
35. **Ղաֆադարյան Կ.**, Երևանի միջնադարյան հուշարձանները, «ԼՀԳ», 1969, թ. 1, էջ 73-93:
36. **Ղաֆադարյան Կ.**, Նյութեր Ախալցխայի հայ համայնքի պատմության վերաբերյալ, «ՊԲՀ», 1967, թ. 1, էջ 117-124:
37. **Մալխասյան Մ.**, Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկը՝ պատմաաշխարհագրական հետազոտությունների սկզբնաղբյուր (վարչաքաղաքական և ժողովրդագրական ուսումնասիրություն), «Էջմիածին», 2010, թ. Է, էջ 110-125:
38. **Մալխասյան Մ.**, Օսմանյան կայսրության և Սեֆյան տերության առաջացումն ու հզորացումը. ժողովրդագրական գործընթացների ազդեցությունը 17-րդ դարի հայ ազատագրական մտքի վրա, «Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ», Երևան, 2015, էջ 9-33:
39. **Մալխասյան Մ.**, Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դարի առաջին կեսին, «Հայագիտության հարցեր», 2016, թ. 1, էջ 94-104:
40. **Մալխասյան Մ.**, Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում ԺԶ դարում, «Էջմիածին», 2016, թ. Դ, էջ 52-72:
41. **Մալխասյան Մ.**, Օտար էթնիկական ներթափանցումները Հայաստան 16-րդ դարում, «Պատմություն և մշակույթ», Երևան, 2016, էջ 167-181:

42. **Մալխասյան Մ.**, 1606-1609 թթ. Մեծ սովը Հայաստանում, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2017, թ. 2, էջ 17-34:
43. **Մալխասյան Մ.**, Օսմանյան կայսրության էթնոկրոնական քաղաքականության հիմնական առանձնահատկություններն Արևմտյան Հայաստանում XVI դարում, «Հայագիտության հարցեր», 2017, թ. 2, էջ 48-59:
44. **Մալխասյան Մ.**, Շահ Աբաս Ա-ի կազմակերպած հայ բնակչության բռնագաղթի տարածքային ընդգրկման խնդիրը, «Հայագիտության հարցեր», 2019, թ. 3, էջ 49-65:
45. **Մարգարյան Հ.**, Ջաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ, «ՊԲՀ», 1992, թ. 2-3, էջ 139-152:
46. **Մարտիրոսյան Ա.**, Գլխահարկն Օսմանյան կայսրությունում, «Մերձավոր Արևելք», հ. VI, Երևան, 2009, էջ 168-174:
47. **Մարտիրոսյան Հ.**, Հայերի տեղաբաշխումն Իրանում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 4, Երևան, 1969, էջ 150-171:
48. **Մելքոնյան Ա.**, Ախալցխայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը ըստ թուրքական հարկացուցակների (16-րդ դ. վերջ – 18-րդ դ. սկիզբ), «Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր», Երևան, 2011, էջ 134-149:
49. **Մելքոնյան Ա.**, Հայաստանի ժողովրդագրության հիմնահարցերը հայագետ Հակոբբոս Տաշյանի աշխատություններում, «Բանբեր հայագիտության», 2013, թ. 1, էջ 135-144:
50. **Մելքոնյան Ա.**, Օսմանյան կայսրության ժողովրդագրական քաղաքականությունը որպես ցեղասպանության դրսևորում ըստ Էրզրումի և Ախալցխայի նահանգների օրինակների, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. I, Երևան, 2002, էջ 39-47:
51. **Մկրտչյան Հ.**, Հայկական ձեռագրերի հիշատակարանները կանանց մեծաստանների և կուսակրոն կանանց վերաբերյալ, «Էջմիածին», 2013, թ. Բ, էջ 89-101:
52. **Մուրադյան Հ.**, Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգի Կաղզվանի գավառում (17-19-րդ դարի 1-ին երեսնամյակին), «Կանթեղ», Երևան, 2001, թ. 4, էջ 171-177:
53. **Մուրադյան Հ.**, Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում XVI-XIX դարի առաջին կեսին, «Հայոց պատմության հարցեր», թ. 5, Երևան, 2005, էջ 61-76:
54. **Յակոբեան Ա.**, Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը. Բ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 27, Երևան, 2009, էջ 224-253:
55. **Շաքարյան Ա.**, Բռնագաղթն ու մանկահավաքը որպես Օսմանյան կայսրությունում ժողովրդագրական վերադասավորման միջոցներ, «Մերձավոր Արևելք», հ. II, Երևան, 2005, էջ 59-62:

56. **Շաքարյան Ա.**, Դեշիրմե համակարգի սկզբնավորման հարցերի շուրջ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 23, Երևան, 2004, էջ 440-449:
57. **Շաքարյան Ա.**, Մանկահավաքն Օսմանյան կայսրությունում որպես աշխատուժի վերակազմակերպման միջոց, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 24, Երևան, 2005, էջ 428-443:
58. **Շաքարյան Ա.**, Օսմանյան կայսրության բնակչության խուսափումը դեշիրմեից (համաձայն օսմանյան փաստաթղթերի), «Մերձավոր Արևելք», հ. III, Երևան, 2006, էջ 29-33:
59. **Չերչիյան Վ.**, Ադրիանապոլսո հայ գաղութը, «ՊԲՀ», 1983, թ. 2-3, էջ 302-306:
60. **Չորանյան Պ.**, Քարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 20, Երևան, 2001, էջ 204-232:
61. **Սահակյան Լ.**, Համշենը հայկական ձեռագրերում, «Արևելագիտության հարցեր», հ. 12, Երևան, 2016, էջ 80-96:
62. **Սահակյան Լ.**, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. IV, Երևան, 2006, էջ 207-228:
63. **Սաֆրաստյան Ա.**, Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դարում (պատմական ակնարկ), «Արևելագիտական ժողովածու», հ. 1, Երևան, 1960, էջ 285-302:
64. **Սաֆրաստյան Ռ.**, Ցեղասպանության ակունքները միջնադարյան Թուրքիայում, «ՊԲՀ», 1998, թ. 1-2, էջ 105-112:
65. **Վիրաբյան Ա.**, Երևանի խանության վանական տնտեսությունը և հարկային համակարգը Ջաքարիա Քանաքեռցու լուսաբանմամբ, «Հայոց պատմության հարցեր», հ. 12, Երևան, 2011, էջ 108-123:
66. **Փանոսյան Հ.**, Ժողովրդագրական տեղաշարժերը Թուման-ե Նախիջևանի Ազատ-Ջիրանի ու Դարաշամբի մահալներում (XVII դ. առաջին կես), «Գիտական աշխատություններ», թ. XV, Երևան, 2013, էջ 48-56:
67. **Փափազյան Ա.**, Արևմտահայության վիճակը ըստ օսմանյան սուլթանական ֆերմանների (XVI-XVIII դդ.), «ՊԲՀ», 1988, թ. 2, էջ 124-136:
68. **Փափազյան Ա.**, Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (XVI-XVIII դդ.), «ՊԲՀ», 1992, թ. 1, էջ 101-115:
69. **Փափազյան Ա.**, Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին վերաբերող թուրքական մի շարք վավերագրեր, «ՊԲՀ», 1983, թ. 4, էջ 201-211:
70. **Փափազյան Հ.**, Գյուղերն ու ագարակները Արևելյան Հայաստանում XVI-XVII դարերում, «ՊԲՀ», 1966, թ. 4, էջ 221-228:
71. **Փափազյան Հ.**, Երևանի Մուհամադ-խան Ղաջարի՝ Միրզա-աղա Սիպկին և Ահմադ-աղա Զիլանիին շնորհած աղայության հրամանագրերը (XVIII

- դ.), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 13, Երևան, 1985, էջ 272-283:
72. **Փափազյան Հ.**, Մատենադարանի թուրքերեն վավերագրերի աղբյուրագիտական արժեքը, «ՊԲՀ», 1974, թ. 4, էջ 89-99:
 73. **Փափազյան Հ.**, Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային քաղաքականության վերաբերյալ, «Բանբեր Մատենադարանի», թ. 16, Երևան, 1994, էջ 197-213:
 74. **Փափազյան Հ.**, Շարիաթական իրավական նորմերը և հողի ֆեոդալական սեփականության հարցը Արևելքում, «ԼՀԳ», 1966, թ. 12, էջ 22-34:
 75. **Փափազյան Հ.**, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի», թ. 3, Երևան, 1956, էջ 85-99:
 76. **Փափազյան Հ.**, Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Վանի էյալեթին վերաբերող օսմանյան դիվանական վավերագրերը, «Բանբեր Մատենադարանի», թ. 15, Երևան, 1986, էջ 274-287:
 77. **Փափազյան Հ.**, Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը, «ՊԲՀ», 1984, թ. 3, էջ 195-214:
 78. **Փափազյան Հ.**, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի», թ. 5, Երևան, 1960, էջ 431-464:
 79. **Փափազյան Հ.**, Վանական կալվածների սեփականատիրական իրավունքի մի քանի առանձնահատկություններ (XV-XVIII դդ.), «Բանբեր Մատենադարանի», թ. 10, Երևան, 1971, էջ 237-250:
 80. **Փափազյան Հ.**, Քուրդ ժողովրդի պատմության մի նոր սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», թ. 8, Երևան, 1967, էջ 229-248:
 81. **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դ.), «ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների», 1960, թ. 7-8, էջ 21-40:
 82. **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԶ դ.), «ԼՀԳ», 1973, թ. 6, էջ 23-34:
 83. **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), «ԼՀԳ», 1977, թ. 1, էջ 29-44:
 84. **Փափազյան Վ.**, Առևտրաարհեստագործական հարկը Սեֆյան տերության մեջ XVI դարում և նրա վերացման հանգամանքները, «ՊԲՀ», 1984, թ. 2, էջ 113-122:
 85. **Փափազյան Վ.**, Առևտրական ճանապարհների պաշտպանությունը Սեֆյան պետությունում XVII դարում, «ՊԲՀ», 1986, թ. 4, էջ 156-162:
 86. **Փոլադյան Ա.**, Քրդերը և ռազմաքաղաքական անցքերը Ատրպատականում X դարի առաջին կեսին (ըստ արաբական աղբյուրների), «ՊԲՀ», 1984, թ. 2, էջ 87-92:
 87. **Քեշիշյան Վ.**, Էջեր Հալեպի հայ գաղթածախի պատմությունից, «ԼՀԳ», 2000, թ. 2, էջ 95-108:

բ) ուսերեն

1. **Акопов Г.**, Курды и курдский вопрос в турецкой историографии, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 5, Երևան, 1970, էջ 381-409:
2. **Саркисян Е.**, Административная и демографическая политика османского правительства в Западной Армении, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 5, Երևան, 1970, էջ 357-380:
3. **Сванидзе М.**, Первый поход Сулеймана I против Ирана 1533-1535 гг. и создание Эрзурумского пашалыка, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. V, Երևան, 2008, էջ 35-36:
4. **Троттер**, Мало-азийские курды, «Известия Кавказского отдела императорского Русского географического общества», т. VII, Тифлис, 1882-1883, с. 1-3.
5. **Чобанян П.**, Этноконфессиональные процессы в Закавказье XVII-XVIII вв., «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 18, Երևան, 1999, էջ 151-161:

գ) անգլերեն

1. **Adonz N.**, Kurdish Intrusion into Armenia, "The new Armenia", vol. 14 (1920), № 1, pp. 4-6.
2. **Agoston G.**, The Ottoman Empire and the Technological Dialogue Between Europe and Asia: The Case of Military Technology and Know-How in the Gunpowder Age, in "Science between Europe and Asia; Historical Studies on the Transmission, Adoption and Adaptation of Knowledge", edited by F. Günergun & D. Raina, Springer Science+Business Media, 2011, pp. 27-39.
3. **Balla E., Johnson N.**, Fiscal Crisis and Institutional Change in the Ottoman Empire and France, "The Journal of Economic History", № 69 (3), 2009, pp. 809-845.
4. **Bardakjian K.**, The Rise of the Armenian Patriarchate of Constantinople, in "Christians and Jews in the Ottoman Empire: The Functioning of a Plural Society", edited by B. Brande and B. Lewis, Vol. I, New York, 1982, pp. 89-100.
5. **Barrington M. Jr.**, Ethnic and Religious Hostilities in Early Modern Port Cities, "International Journal of Politics, Culture and Society", Vol. 14, № 4, 2001, pp. 687-727.
6. **Cook Ed. et al.**, Old World megadroughts and pluvials during the Common Era, "Science Adv.", Nov. 6, 2015;1:e1500561, pp. 1-9 (ներբեռնվել է <http://advances.sciencemag.org/> կայքից, հասանելի էր՝ 25.01.2016):
7. **Gerber H.**, Muslims and Zimmis in Ottoman Economy and Society: Encounters, Culture, and Knowledge, "Studies in Ottoman Social and Economic Life", edited by R. Motika, Ch. Herzog, M. Ursinus, Heidelberg, 1999, pp. 141-169.
8. **Herzig E.**, The Deportation of the Armenians in 1604-1605 and Europe's Myth of Shah 'Abbas I, "Pembroke Papers", 1990, N 1, pp. 59-71.
9. **Herzig E.**, The rise of the Julfa merchants in the late sixteenth century, In C. Melville (Ed.), "Safavid Persia", London: I. B. Tauris, 1996, pp. 305-322.
10. **Melkonyan A.**, The demography of the Province of Erzerum: Sixteenth-Twentieth Centuries, in "Armenian Karin/Erzerum", Edited by R. Hovannisian, Costa Mesa (California): Mazda Publishers Inc., 2003, pp. 134-145.

11. **Perry J.**, Forced Migration in Iran during the Seventeenth and Eighteenth Centuries, "Iranian Studies", 1975, vol. 8, N 4, pp. 199-215.
12. **Savory R.**, The Principal Offices of the Safawid State during the Reign of Ismāil I (907-30/1501-24), "Bulletin of the School of Oriental and African Studies", University of London, 23(1), pp. 91-105.
13. **Tololyan Kh.**, Armenian Diaspora, in "Encyclopedia of Diasporas: Immigrant and Refugee Cultures Around the World", Editors: M. Ember, C. Ember, I. Skoggard, New York: Springer Science+Business Media Inc., 2005, pp. 35-46.

4. Քարտեզներ

1. «Հայաստանը 16-րդ դ.: Պարսկա-օսմանյան պատերազմները», հեղինակ՝ Գ. Բադալյան, մասշտաբ՝ 1:3 600 000, տե՛ս՝ «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, Երևան, 2008, էջ 49:
2. «Հայաստանը XVII դ. առաջին կեսին», հեղինակ՝ Գ. Բադալյան, մասշտաբ՝ 1:3 600 000, «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, էջ 50:
3. «Հայերի բնագաղթը Շահ-Աբաս 1-ինի կողմից Պարսկաստան 17-րդ դ. սկզբին», հեղինակ՝ Գ. Բադալյան, մասշտաբ՝ 1:4 000 000, տե՛ս՝ «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, Երևան, 2008, էջ 51:

5. Պարբերական մամուլ

1. «Բազմավեպ», 1897, թիվ 10:
2. «Մեղու Հայաստանի», 1876, թիվ 38:

6. Համացանցային ռեսուրսներ

1. Devlet Meteoroloji İşleri Genel Müdürlüğü, տե՛ս՝ <http://www.dmi.gov.tr/veridegerlendirme/il-ve-ilceler-istatistik.aspx?m=SIVAS>, հասանելի էր՝ 28.01.2016:
2. Devlet Meteoroloji İşleri Genel Müdürlüğü, տե՛ս՝ <http://www.dmi.gov.tr/veridegerlendirme/il-ve-ilceler-istatistik.aspx?m=TOKAT>, հասանելի էր՝ 28.01.2016:

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ – 17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Գիտական խմբագիրներ՝

պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյան
պ.գ.թ., ասիստ. Գեղամ Բադալյան

Գրախոսներ՝

պ.գ.դ., պրոֆ. Վահան Բալթուրոյան
պ.գ.թ. Արման Մալոյան

Խմբագիր՝

Լենա Ասրյան

Սրբագրումը՝

Արմեն և Էվելինա Մալխասյանների

Համակարգչային շարվածքը և էջադրումը՝

Միքայել Մալխասյանի

Տեխնիկական կարգավորումները՝

Կարինե Չալաբյանի

Շապիկի ձևավորումը՝

Արմեն Պատվականյանի

Ստորագրված է տպագրության՝ 02.10.2020:

Չափը՝ 60*84: Ծավալը՝ 18.75 մամուլ:

Տպաքանակը՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում, ք. Երևան, Տիգրան Մեծի 48, քն. 43